

9(47.925)

U-20


Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԹՈՒՐԻ-ՃՐԱՆՍԻԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ

ԿԻԼԻԿԻԱՆ

1919-1921 թթ.









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Р. Г. СААКЯН

ТУРЕЦКО-ФРАНЦУЗСКИЕ  
ОТНОШЕНИЯ И КИЛИКИЯ  
в 1919—1921 гг.


ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԹՈՒՐԹ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՆ  
1919—1921 թթ.

475



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1970



Մենագրութեան մեջ լուսաբանվում են թուրք-ֆրանսիական դիվանագիտական կապերի զարգացումը 1919 թ. մինչև 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագիրը, այդ նույն ժամանակաշրջանում Ֆրանսիայի և քեմալական թուրքիայի վարած քաղաքականությունը Կիլիկիայում, Ադանայում, Մարաշում, Հաճընում, Ջնյթումում, Ալնթապում և Ուրֆայում ծավալված իրադարձությունները: Ձգալի տեղ է հատկացված կիլիկիահայերի ճակատագրին, նրանց հերոսական ինքնապաշտպանության պատմութեանը, վեր է հանվում ֆրանսիական իմպերիալիստների խարդախ և քեմալական ղեկավար շրջանների ազգայնամուլ քաղաքականությունը:

Պատասխանատու խմբագիր-  
պրոֆ. Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ,



## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

1919—1922 թթ. Թուրքիայում ծավալված ազգային պատերազմի պատմության ուսումնասիրությունը ունի գիտական ու ֆաղափական կարևորություն: Նույնֆան կարևոր խնդիր է այդ ժամանակաշրջանում թուրքական կառավարող շրջանների վարած արտաքին ֆաղափականության մարտսիստական վերլուծությունն ու արժեքավորումը:

Թուրքիայի և օտար տերությունների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը անհրաժեշտ է նաև նիշտ գնահատելու համար Թուրքիայի անկախության պայքարի տեղը Արևելքի ազգային-ազատագրական, հակափմպերիալիստական շարժումների պատմության մեջ:

Վերջապես, հարցի համակողմանի, գիտական լուսաբանումն անհրաժեշտ է Թուրքիայի հետագա տարիների և, ընդհանրապես, ամբողջ նորագույն շրջանի արտաքին ֆաղափականության ուղղությունն ու շարժառիթները խորն ըմբռնելու ու գնահատելու համար, որովհետև ֆեմալական արտաքին ֆաղափականության բոլոր հիմնական սկզբունքները ձևավորվել են հենց 1919—1922 թթ. ազգային պատերազմի ժամանակաշրջանում:

Անտանտի տերությունների և ֆեմալական Թուրքիայի փոխհարաբերություններում առաջնակարգ տեղ են գրավում թուրք-ֆրանսիական հարաբերությունները: Հայտնի է, որ 1914—1918 թթ. Թուրքիայի դեմ պատերազմած արևմտյան փմպերիալիստական տերություններից Ֆրանսիան առաջինն

էր, որ հարաբերությունների մեջ մտավ Անկարայի կառավարության հետ, դիվանագիտական կապեր հաստատեց և, իր դաշնակիցներից, առաջին հերթին, Անտանտը ոգեշնչող Անգլիայից անջատ, ֆաղափական պայմանագիր կնքեց նրա հետ:

Սույն հետազոտության առանցֆային հարցերը նիշտ լուսաբանելու համար կողմնորոշող նշանակություն ունեն Վ. Ի. Լենինի և կոմունիստական կուսակցության ու սովետական պետության ականավոր գործիչներ Մ. Վ. Ֆրունզեի, Գ. Վ. Չիչերինի, Ա. Ֆ. Մյասնիկյանի, Ս. Հ. Կասյանի, ասույթներն ու գնահատականները, ինչպես նաև Կոմինտերնի կոնգրեսների որոշումները:

Վ. Ի. Լենինը մի շարք առիթներով անդրադարձել է Թուրքիայի անկախության պայքարի հարցերին, ավել է այդ պայքարը գլխավորող ուժերի բնութագիրը. «... Թուրքիայում իշխանության գլուխ են կանգնած կաղեխները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»<sup>1</sup>: Վ. Ի. Լենինի այս բնորոշումը, որն առաջին անգամ հրատարակվեց 1963 թվականին, կարևոր է ոչ միայն այն տեսակետից, որ պարունակում է ֆեմալականների դասակարգային էության գնահատականը, այլև նրանով, որ բացահայտում է Անտանտի իմպերիալիստների հետ գործարքի մեջ մտնելու ֆեմալականների այն հակումները, որոնք ի հայտ եկան ինչպես այդ տարիներին՝ Անգլիայի ու Ֆրանսիայի հետ հակասովետական գործարքի մեջ մտնելու մի շարք փորձերում, այնպես էլ հետագայում, երբ Թուրքիան մերձեցավ ու դաշնակցեց Արևմուտքի իմպերիալիստական տերությունների այս կամ այն խմբավորմանը՝ բոլոր դեպքերում ի վնաս Սովետական Միության:

Սովետական ականավոր պետական գործիչ ու գորավար Մ. Վ. Ֆրունզեի աշխատություններում կան մի շարք կարևոր

---

<sup>1</sup> В. И. Ленин. Заключительное слово по докладу о концессиях на фракции РКП(б) VIII съезда Советов 21 декабря 1920 г., Полн. собр. соч., т. 42, М., 1964, стр. 125.



դիտողություններ, որոնք լույս են սփռում Անկարայի կառավարող շրջաններում իշխող տրամադրությունների, նրանց կողմից ձեռնարկված դիվանագիտական ֆայլերի, այդ թվում 1921 թ. հոկտեմբերի 20-ին կնքված Անկարայի պայմանագրի ստորագրման շարժառիթների վրա<sup>2</sup>:

Սովետական անվանի պետական գործիչ ու դիվանագետ Գ. Վ. Չիչերինի «Հողավածների ու նառերի» ժողովածուում<sup>3</sup> գետեղված արտաքին ֆաղափական հաշվետվությունները, օտար դիվանագետների ու թղթակիցների հետ ունեցած զրույցները արժեքավոր դիտողություններ են պարունակում ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ֆրանսիայի արտաքին ֆաղափականության մի շարք կողմերի վերաբերյալ: Գ. Վ. Չիչերինի փայլուն հողավածներն ու ելույթները ֆաղափական լայն ֆոնի վրա գծում են ժամանակի միջազգային հարաբերությունների նշարտացի պատկերը, հնարավորությունը ընձեռնելով ֆննարկվող հարցը հետազոտել բազմակողմանիորեն:

Ուսումնասիրվող թեմայի մի շարք հարցերին անդադարձել ու իր գնահատականն է տվել սովետական պետական ու կուսակցական ակնավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը: Նա մերկացրել է իմպերիալիստական մեծ տերությունների և առաջին հերթին Անգլիայի ու Ֆրանսիայի գիշատիչ ֆաղափականությունը Մերձավոր Արևելքում համաշխարհային առաջին պատերազմից հետո, բացահայտել փոքր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին, տրված նրանց մեծադորդ խոստումների ողջ սնանկությունը<sup>4</sup>: 1920-ական թվականների սկզբին սփյուռֆում գործող հայ ազգայնական կուսակցու-

---

<sup>2</sup> *Տե՛ս* *Մ. Վ. Փրունզե*, Доклад о поездке в Ангору на объединенном заседании Совнаркома и ЦИКа Украины. Собр. соч., т. 1, М.—Л., 1929; *Մ. Վ. Փրունզե*, Доклад по ближневосточному вопросу на III сессии ВУЦИК VI созыва. Стенографический отчет, Харьков, 1922.

<sup>3</sup> *Գ. Վ. Չիչերин*, Статьи и речи по вопросам международной политики, М., 1961.

<sup>4</sup> *Տե՛ս* «Դաշնակցական կառավարութան դոկումենտներից», Ալ. Մարտունու առաջարկով, Երևան, 1922:

քյուններին ու նրանց գործունեությանը տրված Ա. Մյասնիկյանի գնահատականները<sup>5</sup> օգնում են հետազոտողին խորն ըմբռնելու ու ճիշտ գնահատելու այդ կուսակցությունների ձեռնարկած ֆայլերը կիլիկիայում ֆրանսիական օկուպացիայի ժամանակաշրջանում:

Կոմունիստական կուսակցության ակնավոր գործիչ Սարգիս Կասյանի մի շարք հոդվածներ ու ելույթներ առնչվում են հետազոտվող հարցերին: Նա իր աշխատություններում մարքսիստական խորը վերլուծության է ենթարկել Արևմտաֆի իմպերիալիստական խոշոր տերությունների ֆաղափականությունը Մերձավոր Արևելքի երկրների նկատմամբ, վերհանել այդ պետությունների միջև ծավալված խուլ կամ բացահայտ մրցակցության բուն շարժառիթները, նրանց հակամարտության իսկական ակունքները: 1919 թ. վերջին գրված «Ո՞ւր է ելքը» գրքում հայտնած այն միտքը, թե «ֆրանսիական իմպերիալիստների համար ցանկալի չէ, որ ամերիկական ուժեղ կապիտալը ռոտ կոխի Տանկաստանը»<sup>6</sup>, շատ շանցած իր լիակատար հաստատումը գտավ. ֆրանսիական կառավարության ֆաղափականությունը, Անկարայի ղեկավար շրջանների հետ լեզու գտնելու նրա բազմաթիվ փորձերը վկայում էին հենց այն մասին, որ Ֆրանսիայի նպատակն էր պահպանել ֆրանսիական խոշոր դրամատերերի նախապատերազմյան դիրքերը Թուրքիայում և ձեռք բերել շահագործման ու հարստացման նոր աղբյուրներ: Խիստ արժեքավոր է նաև Ս. Կասյանի կարծիքը ֆեմալական շարժման սկզբնավորման և Անտանտի պետությունների կողմից այն խրախուսվելու պատճառների մասին: «Ազգայնական-փաշայական, ավագակային-տիրապետական այդ շարժումը, -գրում էր Կասյանը, -որ առաջ է եկել իշխելու սովորությունից, գերազանցորեն ֆաշալերվում է շահագրգռված իմպերիալիստների կողմից: Եթե մի ձեռքով նրանք հրահրում

5 Ալ. Մարտունի (Ա. Մյասնիկյան), *Կուսակցությունները գաղութալուծության մեջ, Թիֆլիս, 1924*։

6 Սարգիս Կասյան, *Հնարք երկեր, Երևան, 1967, էջ 135*։



են փաշաներին պատրաստ լինել իրենց իրավունքների մաքսիմումը պահանջելու, իսկ մյուս ձեռքով ապտակում են նրանց և բաժինը խլում, ապա դա ոչինչ՝ այդպես է թելադրում իմպերիալիստական ֆաղափականությունը...»<sup>7</sup>: Միաժամանակ, Սարգիս Կասյանը առաջիններից մեկը տվեց ֆեմալական շարժման մարքսիստական գնահատականը. «Մուստաֆա-ֆեմալյան շարժումը, որին ֆեմալականները անվանում են «ազգային»... դա տանիկ պորտաբույծ փաշաների, տգրուկ պաշտոնյաների և գանազան թալանչիների ձգտումն է պահպանել իրենց անբաժան գերիշխանությունը *այսպես կոչված* Տանկաստանում, նրանց շարժումն է դեպի Անդրկովկաս»<sup>8</sup>:

«Դիպլոմատիական պայմարը Թուրքիո շուրջը» հոդվածում Ս. Կասյանը բացահայտում է Անտանտի տերությունների «ներողամիտ» ու «վեհանձն» վարմունքի բուն դրդապատճառը՝ «Թուրքիայի նշանակությունը մահմեդական աշխարհում»<sup>9</sup>, իսկ «Անգլիան ու Ֆրանսիան» հոդվածում նա վեր է հանում իմպերիալիստական այդ երկու գիշատիչների հակամարտությունը 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումից հետո<sup>10</sup>: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև «Կարմիր աստղ» թերթում 1921—1923 թթ. տպագրված Ս. Կասյանի բազմաթիվ հոդվածները միջազգային հարաբերությունների, եվրոպական առանձին տերությունների ֆաղափականության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Մեծազվոր Արևելքում ֆրանսիական իմպերիալիզմի վարած ֆաղափականությունը իր գնահատականն է ստացել 1922 թ. կայացած Կոմիտեերի IV կոնգրեսում, որի փաստաթղթերում իրենց արտացոլումն են գտել նաև Թուրքիայի փոխ-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 153:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 229:

<sup>10</sup> «Կարմիր աստղ», 1922, № 24:



հարաբերությունները Ֆրանսիայի հետ՝ ազգային պատերազմի տարիներին<sup>11</sup>։

Սույն ուսումնասիրության առանձին հարցեր այս կամ այն չափով իրենց արտացոլումն են գտել սովետական պատմաբանների ու դիվանագետների աշխատություններում ու վավերագրական աղբյուրներում։

Ֆրանսիայի տնտեսական ու դրամական շահերը Թուրքիայում, այդ թվում՝ Կիլիկիայում, և դրանցից բխող ֆրանսիական ֆաղափականությունը հասկանալու համար կարևոր նշանակություն ունի Ա. Ադամովի խմբագրությամբ հրատարակված «Раздел Азиатской Турции» փաստաթղթերի ժողովածուն<sup>12</sup>, որտեղ գետեղված են Կիլիկիայի ապագա նակատագրի շուրջ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած անգլո-ֆրանս-ռուսական բանակցությունները, դիվանագիտական գրառությունը և այլն։ Գիտական արժեք ունի նաև հիշյալ ժողովածուին կցված Ա. Ադամովի ընդարձակ առաջաբանը<sup>13</sup>, ուր նա ընդհանուր գծերով բնորոշում է եվրոպական մեծ տերությունների տնտեսական ու ֆաղափական շահերը Օսմանյան կայսրությունում, վերհանում Մերձավոր Արևելքում նրանց միջև ծավալված հակասությունների հիմնական պատճառները։ Սակայն, հեղինակը, կոնկրետ փաստերով ու թվական տվյալներով հիմնավորելով Կիլիկիայի դերն ու տեղը ֆրանսիական դրամատերերի ծրագրերում, գերազնահատում է Կիլիկիայի ինֆնուրույն նշանակությունը և անտեսում այն հանգամանքը, որ Կիլիկիան Ֆրանսիային հարկավոր էր ամենից առաջ Սիրիայի ստրատեգիական դիրքերը պաշտպանելու և ապահովելու համար։

Թուրքագիտական ընդհանուր բնույթի գրականությունից

---

11 *Տե՛ս* «Постановления IV Всемирного конгресса Коммунистического Интернационала». Петроград-Москва, 1922, էջ 84—92։

12 «Раздел Азиатской Турции». По секретным документам 6. Министерства иностранных дел. Под ред. Е. А. Адамова. М., 1924.

13 *Նույն տեղում*, էջ 5—26։

պետք է նշել սովետական դիվանագետ Ա. Աստախովի<sup>14</sup>, Ն. Սոկոլսկու<sup>15</sup>, պրոֆ. Վ. Ա. Գուրկո-Կրյաժինի<sup>16</sup>, Ի. Բուտաեվի<sup>17</sup>, պրոֆ. Ա. Գ. Նովիչևի<sup>18</sup>, պրոֆ. Ա. Ֆ. Միլլերի, պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Շամսուտդինովի աշխատությունները: Հիշյալ և մի շարք այլ սովետական հեղինակներ նշանակալից աշխատանք են կատարել Թուրքիայի նորագույն շրջանի պատմության բազմաթիվ հանգուցային հարցերի լուսաբանման ուղղությամբ: Սակայն նրանց գործերում առկա են մի շարք սխալներ, միակույմանի ու բերի գնահատականներ, շփմնավորված տեսակետներ ու կարծիքներ: Որպես ընդհանուր բերություն պետք է նշել այն փաստը, որ գիտականորեն չի բացահայտվել երիտթուրքական ու Բնավական ազգային ֆաղափականության ընդհանրությունը, որը պայմանավորված էր այդ երկու շարժումների միջև գոյություն ունեցող մի շարք ընդհանուր գծերով՝ ծայրահեղ անհանդուրժողականություն ու թշնամանք բանվորական ու գյուղացիական ելույթների նկատմամբ, ասիմիլյատորական շարդարարական ֆաղափականություն, ցեղապաշտ ատելություն երկրի ոչ-թուրք ժողովուրդների նկատմամբ:

Պրոֆ. Վ. Ա. Գուրկո-Կրյաժինը, օրինակ, Բնավական շարժման փառաբանումը հասցրել էր այն աստիճանի, որ իր աշխատություններից մեկում ուղղակի հայտարարում է. «մարտնչող Թուրքիան... տվել է ազգային ազատագրական շարժման *ամենավառ ու ավարտուն նմուշը*»<sup>19</sup> (ընդգծումն իմն է—Ռ. Ս.): Այս և մի շարք այլ հեղինակների նման գնահատականները, հասկանալի է, խանգարել են նրանց հիմնավոր ու

14 Г. Астахов, От султаната к демократической Турции. Очерки по истории кемализма. М.—Л., 1926.

15 Н. Сокольский, Очерки современной Турции, Тифлис, 1923.

16 В. А. Гурко-Кряжин, История революции в Турции, М., 1923.

17 И. Бутаев, Проблемы Турции, Л., 1925.

18 А. Д. Новичев, Крестьянство Турции в новейшее время, М., 1959.

19 В. А. Гурко-Кряжин, Ближний Восток и Державы, М., 1925, стр. 3.



ճշմարտացի խոսք ասելու ֆեմալական կառավարության ազգային ֆաղափականության մասին, որն անաշին հերքին դրսեվորվեց 1919 թ. վերջին՝ Կիլիկիայում: Այսպես, Ա. Մ. Շամսուտդինովը, «Ազգային ազատագրական պայքարը Թուրքիայում» խորագրով գրում լուսաբանելով իրադարձությունները Կիլիկիայում 1920-1921 թթ., լուրջան է մատնում Անկարայի կառավարող շրջանների շարդարարական գործողությունները: Խոսելով 1920 թ. հունվարին ծագած Մարաշի ապստամբության մասին, նա ոչ մի խոսք չի ասում ֆաղափ հայ ազգաբնակչության կտորածի մասին: Ավելին, պատմական իրականությանը հակառակ, նա պնդում է, որ Կիլիկիայում «ոչնչացվեցին հարյուրավոր բուրֆական գյուղեր և գնդակահարվեցին Թուրքիայի՝ անկախության հազարավոր մարտիկներ»<sup>20</sup>:

Թուրք-ֆրանսիական հարաբերություններին անդրադարձել է պրոֆ. Ա. Ֆ. Միլլերը «Թուրքիայի նորագույն պատմության ուղղագծերում»: Սակայն, շարադրելով ֆրանսիական կառավարության հատուկ լիազոր Ֆրանկլեն-Բույոնի բանակցությունները Մուստաֆա Քեմալի հետ և, այնուհետև, Անկարայի պայմանագրի ստորագրումը 1921 թ. հոկտեմբերի 20-ին, նա չի մատնանշում, որ այդ պայմանագրի կենման գլխավոր շարժառիթներից մեկը ֆրանսիական իմպերիալիստների ձգտումն էր՝ ֆեմալական Թուրքիան հակադրել Սովետական Ռուսաստանին և դուրս բերել նրա դեմ<sup>21</sup>:

Կիլիկիայում ֆրանսիական կառավարության վարած ֆաղափականությանը անդրադարձել է լենինգրադցի բուրֆագետ Ա. Դ. Փելտյակովը «Թուրք գյուղացիության ազգային-ազատագրական պայքարը Հարավ-Արևելյան Անատոլիայում

---

20 А. М. Шамсутдинов, Национально-освободительная борьба в Турции. 1918—1923 гг. М., 1966, стр. 126—127. Այս գրքի մասին տե՛ս պրոֆ. Կ. Մարգարյանի ծավալուն գրախոսականը. «Բանբեր Հաստատանի արխիվների», 1967, № 1, էջ 233—251:

21 А. Ф. Миллер, Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948, стр. 116—117.

1918—1920 թթ.»<sup>22</sup> և «Հակաֆրանսիական ապստամբությունը Մարաշում 1920 թվականին»<sup>23</sup> հոդվածներում: Հեղինակը, սակայն, ֆենադատորեն չի մոտեցել բուրժական սկզբնաղբյուրներին, դեպքերի ականատեսների ու մասնակիցների հուշերին: Այսպես, առաջին հոդվածում հեղինակը Ուրֆայի 1920—21 թթ. կոիվները շարադրում է ֆաղափ պաշտպանության ռազմական խորհրդի նախագահ Ալի Սաիպի հուշերի հիման վրա, որոնք աչքի են ընկնում մի շարք դեպքերի ակնհայտ խեղաթյուրմամբ: Նույնը պետք է ասել նրա մյուս հոդվածի մասին, որտեղ նա լայնորեն օգտագործել է բուրժ հեղինակ Բադդաղլըզլուլի աշառու, փաստերը աղավաղող հուշերը 1920 թ. Մարաշի դեպքերի մասին:

Թուրք-ֆրանսիական հարաբերությունների որոշ հարցեր առավել հանգամանորեն լուսարանվել են երկու թեկնածուական դիսերտացիաներում: Դրանցից մեկը ուկրաինական պատմաբան Դ. Ն. Ֆիլիպենկոյի «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները ազգային-ազատագրական պատերազմի ժամանակաշրջանում Թուրքիայում (1918—1922)» դիսերտացիան է, որտեղ այդ տարիների բուրժ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունները բավարար չափով չեն լուսարանվել: Հեղինակի տպագրած հոդվածներից մեկը վերաբերում է սովետա-բուրժական հարաբերություններին 1920—1922 թթ., մյուսը՝ «Ֆրանսիական իմպերիալիզմի էֆսպանսիան Թուրքիայում 1918—1922 թթ.», նվիրված է Ֆրանսիայի տնտեսական շահերի լուսարանմանը Թուրքիայում, վերջինիս հետ նրա դրամական, առևտրական ու այլ կապերին առաջին համաշխարհային պատերազմից առաջ և 1919—1922 թթ.<sup>24</sup>:

<sup>22</sup> А. Д. Желтяков, Национально-освободительная борьба турецкого крестьянства Юго-восточной Анатолии в 1918—1920 гг., Вестник ЛГУ, 1957, № 8, Серия истории, языка и лит., вып. 2, стр. 202—214.

<sup>23</sup> А. Д. Желтяков, Антифранцузское восстание в Мараше в 1920 году. Ученые записки ЛГУ, серия вост. наук, вып. 14, стр. 20—42.

<sup>24</sup> Д. М. Філіпенко, Експансія французького імперіалізму в Туречині (1918—1922 гг.). Український історичний журнал, 1962, № 1, стр. 74—83.



ինչպես վերը նշված հոդվածում, այնպես էլ դիսերտացիայի ավտոռեֆերատում<sup>25</sup> Գ. Մ. Ֆիլիպենկոն ոչ մի խոսք չի ասում կիլիկիահայերի նկատմամբ կիրառված ֆեմալական ազգայնամոլ ֆաղափականության մասին, կարծես այդ հարցը չի առնչվում հեղինակի ուսումնասիրության հետ:

Մյուսը, դա Ն. Զ. Էֆենդիևայի դիսերտացիան է՝ «Թուրք ժողովրդի պայքարը ֆրանսիական զավթիչների դեմ Անատոլիայի հարավում (1919—1921 թթ.)», որը նույն խորագրի տակ լույս տեսավ առանձին գրքով 1966 թվականին<sup>26</sup>: Աշխատության ներածական բաժնում հեղինակը բնութագրում է թուրք պատմաբանների գործերը, նշում նրանցից շատերի միտումնավոր մոտեցումը հարցերին, սակայն բուն գրքում Ն. Էֆենդիևան հանդես չի բերում նույն ֆենադատական վերաբերմունքը, որի հետևանքով մի շարք հարցեր լուսաբանված են միակողմանի ու թերի, երբեմն պարունակում են հակասական ու սխալ գնահատականներ: Այսպես, ներածության մեջ, հեղինակը իրավացիորեն նշում է, որ «Օսմանյան կայսրության ննչված ժողովուրդները դարերի ընթացքում ազատագրական պայքար են մղել թուրքական լծի դեմ»<sup>27</sup>, իսկ Էրզրումի համաժողովի մասին խոսելիս, նա որպես *առաջադիմական* ֆայլ է ներկայացնում ֆեմալականների պայքարը *հետադիմական* օսմանյան պետության ամբողջականությունը ամեն գնով պահպանելու համար<sup>28</sup>: Նույն մոտեցումն է հանդես բերում հեղինակը Սրվախի համաժողովի որոշումները ֆենարկելիս<sup>29</sup>: Այնուհետև, հեղինակը ոչ միայն ֆենադատական խոսք չի ասում 1920 թ. հունվարի 28-ին ընդունված

<sup>25</sup> *Տե՛ս Դ. Մ. Филипенко, Турецко-французские отношения в период национально-освободительной войны в Турции (1918—1922). Автореферат кандидатской диссертации, Киев, 1964.*

<sup>26</sup> *Н. З. Эфендиева, Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии (1919—1921 гг.). Баку, 1966.*

<sup>27</sup> *Նույն տեղում, էջ 4:*

<sup>28</sup> *Նույն տեղում, էջ 44:*

<sup>29</sup> *Նույն տեղում, էջ 45—46:*



«Ազգային ուխտի» մասին, այլև անտեսում է նրանում առկա ազգայնամուլ, հետադիմական կողմերը: «Ազգային ուխտը», - գրում է Ն. Էֆենդիևան, - արտացոլում էր Թուրքիայի առաջադիմական ուժերի կենսական ու հուզող հարցերը: Տերիտորիալ ամբողջականություն, ազգային փոփոխմանությունների իրավունքները, վերաբերմունք իմպերիալիստական գրավման հանդեպ - ահա հիմնականում «Ազգային ուխտի» կվինտէսենցիան»<sup>30</sup>: Այնուհետև, նա խուսափում է ֆեմալական ազգային ֆաղափականության գնահատականը տալուց, շրջանցում է այն դեպքերը, որոնց լուսաբանումը անխուսափելիորեն կպահանջեր հեղինակի գնահատականը: Ն. Էֆենդիևան (ինչպես և Դ. Ֆիլիպենկոն և մյուսները) լուրջան է մատնում, օրինակ, Հանրեի հայության ֆսամենլի բնաջնջումը ֆեմալական կանոնավոր գործերի կողմից 1920 թ.: Թերի է 1920 թ. Մարաշի կոիվներին տրված գնահատականը: Հեղինակը ֆաղափի հայերի ոչնչացման մեղքը փորձում է ամբողջովին բարդել ֆրանսիացիների վրա<sup>31</sup>, շղատապարտելով ֆեմալականների ազգայնամուլ հայաջինջ գործողությունները, Կիլիկիան հայերից մաքրելու նրանց ծրագիրը: Մինչդեռ, Թուրքիայի նորագույն պատմության որոշ սկզբունքային հարցեր դժվար է ճիշտ ըմբռնել ու գնահատել առանց երիտթուրքական կառավարողների կողմից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կիրառված հայերի ցեղասպանության (գենոցիդի) քաղաքականության մերկացման ու դատապարտման, առանց երիտթուրքերի ու քեմալականների ազգային քաղաքականության նույնության վերհանման:

Սովետահայ հեղինակներից Կիլիկիայի 1919—1921 թթ. իրադարձություններին անդրադարձել են Լեոն<sup>32</sup>, պրոֆ. Գ. Գ. Միխայելյանը «Կիլիկիայի հայկական պետության պատմու-

30 Նույն տեղում, էջ 50:

31 Նույն տեղում, էջ 115—116:

32 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, Բ. հատոր, Փարիզ, 1935:

թյունը» արժեքավոր ուսումնասիրության վերջաբանում<sup>33</sup>, պրոֆ. Մ. Պ. Աղայանը<sup>34</sup>, պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանը<sup>35</sup>:

Սույն մենագրությունում օգտագործվել են թուրքական աղբյուրներն ու գրականությունը: Պետք է ասել, որ թեմայի լուսաբանումը դժվարանում է այն բանով, որ թուրքական, (ինչպես և ֆրանսիական) հրապարակված դիվանագիտական փաստաթղթեր գրեթե չկան: Չկան նաև ամբողջությամբ մեր թեմային վերաբերվող հատուկ ուսումնասիրություններ թուրքերեն: Սակայն վերջին երկու տասնամյակում Թուրքիայում լույս տեսած գրականության մեջ և, հատկապես, դեպքերի ականատեսների հուշերում զգալի փաստական նյութ է պարունակվում այդ շրջանում Թուրքիայի վարած արտաքին ֆաղափականության, Կիլիկիայի անցքերի վերաբերյալ: Սակայն թուրքական աղբյուրները, վավերագրերը, ականատեսների վկայությունները, հուշերը և այլն, ինչխոսք, չեն կարող բավարար համարվել հարցի լուսաբանման համար, որովհետև, գրեթե առանց բացառության, դրանք հարցերը ֆնում են միտումնավոր կերպով իրենց հիմքում ունենալով Քեմալ Աթաթյուրքի ասույթներն ու գնահատականները, որոնք երբեմն ուղղակի խեղաթյուրում են պատմական իրականությունը:

Այսպես, 1920 թ. ապրիլի 24-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ունեցած իր ելույթում Մուստաֆա Քեմալը, լուսթյան մատենելով թուրքական շեթեների վայրագությունները, պնդում էր, որ «Կիլիկիայում... հայկական կանոնավոր ու անկանոն զորքերը հարձակումներ են գործում մեր ցեղակիցների

---

33 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 492—493.

34 Մ. Պ. Աղայան, *Մեծ Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրումը, Հայպետհրատ, Երևան, 1957:*

35 Ջ. Ս. Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:*



ու հավատակիցների վրա և հանցագործություններ կատարում»<sup>36</sup>:

Նույն ոգով են գրված Քեմալի ղեկավարության ու անմիջական հսկողության տակ ստեղծված Թուրքիայի պաշտոնական պատմությունը՝ «Թարիհ»-ը և մի շարք պատմագիտական աշխատություններ, պատմության դասագրքեր և այլն:

Կիլիկիայի իրադարձությունները լուսաբանող բուրք հեղինակները ևս խուսափում են անաշտ կերպով վերլուծել ղեպֆերը, բուրք էլ շրջանցում են այն հարցը, թե ինչո՞ւ էր հայերից դատարկվել Կիլիկիան, ե՞րբ նրանք վերադարձան և ինչո՞ւ, ի՞նչ վերաբերմունքի հանդիպեցին տեղական իշխանությունների կողմից և այլն:

Թուրքական մեջլիսի երեսփոխան Ալի Սափյե, օրինակ. «Կիլիկիայի ողբերգությունը և Ուրֆայի ազատագրման կոնվենտները» վերնագրով իր գրքում Կիլիկիա վերադարձող հայերին անվանում է «հեռվից եկած թափառականներ, ավազակներ, հանցագործներ, որոնց միակ ցանկությունն էր ավերել, ջարդոսիչուր անել, ճգմել-սպանել...»<sup>37</sup>: Չարամտորեն կեղծիով փաստերը, հեղինակը պնդում է, որ «Ամերիկայից, Կովկասից ու Բուլղարիայից եկած հայերը հանցավոր նպատակներ էին հետապնդում»<sup>38</sup>: Հայերին ներկայացնելով որպես «կեղեփչներ», հեղինակը բնական է համարում նրանց դեմ ձեռնարկված «փոխադարձ» միջոցները, փոխհատուցման իրավունքը վերապահելով բացառապես թուրքերին<sup>39</sup>: Հեղինակը պնդում է, թե իբր ֆրանսիացիները «թողություն» էին հանդես բերում «հայերի կողմից կատարվող հանցագործությունների ու

<sup>36</sup> Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., 1966, стр. 81.

<sup>37</sup> *All Saip*, Killikya faciaları ve Urfanın millî mücadeleleri, Ankara, 1924 (*արարատառ թուրքերեն*): *Մենք օգտագործել ենք ֆրանսերեն թարգմանութունը՝ All Saip*, Les atrocités en Cilicie et les luttes pour la délivrance à Ourfa. Traduit du Turc par Ma-Yer, p. 13.

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 18:

բոնոբյունների նկատմամբ», որովհետև «թուրքական ոսկին գողացվում էր այս վերջինների կողմից և հոսում ֆրանսիացիների գրպանը»<sup>40</sup>:

Թուրքիայում բնակվող այլազգիների, հատկապես հայերի նկատմամբ ատելությանը ու բշտամանքով են ներծծված նաև Ադիլ Քադդաղլըօղլուի «Մարաշը անկախության պատերազմում»<sup>41</sup> և Ռեջեպ Դալքերի «Իզիթուրյան օրերը» խորագրով հուշերը<sup>42</sup>, որոնց հեղինակները Կիլիկիայի կոիվների առաջացման մեղքը բարդելով հայերի վրա, անվերապահորեն արդարացնում են վերջիններիս դեմ գործադրված բոնոբյունները:

Թուրք-ֆրանսիական հարաբերություններին զգալի տեղ է հատկացրել ռազմական ու ֆաղաֆական հայտերի գործիչ Ալի Ֆուատ Ջեքեսոյը իր «Ազգային-ազատագրական պայքարի հուշերում»: Առանձնապես հետաքրքիր են ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի և Մուստաֆա Քեմալի միջև տեղի ունեցած բանակցությունների վերաբերյալ փաստերը, որոնցից հայտերի է դառնում, որ ֆրանսիական դիվանագիտությունը բյուր, խիստ չափազանցված պատկերացում է ունեցել ֆեմալական «ազգային բանակների» քլի մասին և այլն<sup>43</sup>: Հեղինակը Կիլիկիայի դեպքերին հատկացրել է առանձին բաժին, որտեղ նա աղետում է տեղի ունեցած իրադարձությունների, մղված կոիվների պատկերը, պնդում, թե իբր «հայերը... հրդեհում էին թուրքական գյուղերը, սրի ֆաշում բնակչությանը»<sup>44</sup>:

Իր մի այլ գրքում՝ «Քաղաֆական հուշերում» Ջեքեսոյը,

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>41</sup> A. Bagdadlioglu, Uzun Oluk. Istiklâl harbinde Maraş. İstanbul, 1942.

<sup>42</sup> Recep Dalkir, Yigitlik günleri. Millî mücadelede Çukurova. İstanbul, 1961.

<sup>43</sup> General Ali Fuat Cebesoy, Millî mücadele hatıraları, İstanbul, 1953, s. 268—270.

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 287—288:



անդրադառնալով Մարաշի կոիվներին, դարձյալ խուսափում է դեպքերի անաչառ վերլուծությունից<sup>45</sup>:

Թուրք պատմաբաններից Կիլիկիայի 1920—1921 թթ. իրադարձություններին և, մասնավորապես, Այնթապում մղված կոիվներին հանգամանորեն անդրադարձել են Ահմեդ Բեղեվի Կուրանը «Հեղափոխական շարժումները Օսմանյան կայսրությունում և ազգային պայքարը» խորագրով իր սովորածավալ գրքում<sup>46</sup>, պրոֆ. Էնվեր Բեհնան Շասլույուն իր «Ազգային ուժերի պատմության»<sup>47</sup> մեջ: Հայտնի թուրք պատմաբան Յուսուֆ Հիֆմեթ Բայուրը<sup>48</sup>, պրոֆ. Յավուզ Աբադանը<sup>49</sup>, պրոֆ. Արմառլուուն<sup>50</sup>, պրոֆ. Ուշուկը<sup>51</sup> իրենց աշխատություններում զգալի տեղ են հատկացրել 1921 թ. հոկտեմբերի 20-ին կնկված ֆրանս-թուրքական պայմանագրի կնքման շարժառիթներին, վերլուծությանն ու գնահատականին:

Ֆրանսիայի ու Բեմալական Թուրքիայի միջև 1920—1921 թթ. տեղի ունեցած բանակցությունների ու դիվանագիտական կապերի մասին որոշ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հայտնի պանթուրքիստ կին գրող ու հասարակական գործիչ Հալիդե Էդիպն իր «Թուրքական գողգոթան»<sup>52</sup> խորագիրը կրող հուշերում և ճանաչված լրագրող-ֆալաֆական մեկնաբան Ահմետ Շյուրբյու Էսմերը «Դիվանագիտության պատմությունը 1919—1939 թթ.»<sup>53</sup> գրքում և «Թուրք դի-

<sup>45</sup> *General Ali Fuat Cebesoy*, Siyasi hatıralar, II kısım. İstanbul, 1960, s. 21.

<sup>46</sup> *Ahmet Bedevi Kuran*, Osmanlı İmparatorlugunda inkilâp hareketleri ve millî mücadele. İstanbul, 1956, ss. 644—648.

<sup>47</sup> *E. B. Şapolyo*, Kuvayı millîye tarihi. İstanbul, 1957.

<sup>48</sup> *Prof. Dr. Yusuf Hikmet Bayur*, Türkiye devletinin dış siyaseti, Ankara, 1938.

<sup>49</sup> *Prof. Dr. Yavuz Abadan*, İnkilâp tarihine giriş. Ankara, 1960.

<sup>50</sup> *Prof. Fahir H. Armaoglu*, Siyasi tarih (1789—1960). Ankara, 1964.

<sup>51</sup> *C. Uçok*, Siyasi tarih dersleri. Ankara, 1961.

<sup>52</sup> *Halide Edip*, The Turkish Ordeal. London, 1928.

<sup>53</sup> *A. S. Esmer*, Siyasi tarih (1919—1939). Ankara, 1953.



վանագիտությունը 1920—1955 թթ.»<sup>54</sup> ծավալուն հոդվածում:

Անսանտի տերությունների ֆաղափականությունը Թուրֆիայի նկատմամբ 1919—1921 թթ. մասամբ ֆենուրյան է առնված «Թուրֆիայի պատմության ընկերության» նախկին ղեկավարներից մեկի՝ Թեվֆիկ Բըլբըլբոզլուի երկու աշխատություններում<sup>55</sup>: Թեմայի հետ առնչվող առանձին հարցերին անդրադարձել են իրենց գրքերում կամ հուշերում Քըլբը Ալին<sup>56</sup>, Ալթեմուր Քըլբըլբ<sup>57</sup> և ուրիշներ:

Ոստմնասիրվող քեմալի համար կարևոր աղբյուր են ծառայել ֆրանսիական հեղինակների՝ պատմաբանների, լրագրողների, դիվանագետների ու ռազմական գործիչների հուշերն ու ոստմնասիրությունները: Սակայն սրանց գործերն էլ պետք է ֆենական լուրջ վերլուծության ենթարկել, որովհետև նրանցից շատերը իրադարձությունները լուսաբանում են ֆրանսիական իմպերիալիզմի էֆապանսիայի և տնտեսական ու դրամական շահերի տեսանկյունից:

«Ֆրանսիայի առաջնակարգ խնդիրը դա Արևելյան Միջերկրականի շրջանում տեղաբաշխված ֆրանսիական կապիտալների ետ ստանալն էր»,—խոստովանում էր իր հուշերում ֆրանսիացի դիվանագետ Ժակ Բարդուն<sup>58</sup>: «Ինչո՞ւ ենք մենք մոռանում,— գրում էր հայտնի լրագրող Ժերար Տոնգան,— որ հենց Թուրֆիայի միջոցով էր Ֆրանսիան մի ֆանի դարերի ընթացքում գերիշխող դեր խաղում և կանտում»<sup>59</sup>: Իսկ Ռընե Պյոտոն, անդրադառնալով հույների և հայերի կոտորածին Իզ-

<sup>54</sup> Prof. Ahmet Şükrü Esmer, Türk diplomasisi (1920—1955). *Şunu* Yeni Türkiye, İstanbul, 1959.

<sup>55</sup> Tevfik Bıyıklıoğlu, Trakya'da millî mücadele. Ankara, 1956; Atatürk Anadolu'da (1919—1921). Ankara, 1959.

<sup>56</sup> Killıç Ali, İstiklâl mahkemesi hatıraları. İstanbul, 1955.

<sup>57</sup> Altınur Killıç, Turkey and the World. Washington, 1959.

<sup>58</sup> J. Bardoux, De Paris à Spa. La bataille diplomatique pour la paix française (février 1919-octobre 1920). Paris, 1921, p. 311.

<sup>59</sup> Gerard Tongas, Atatürk and the true nature of modern Turkey. Translated from the French by Major F. F. Rynd, London, 1939, p. 13.

միրում 1922 թ., այն համարում է նաև «Ֆրանսիական աղետ», որովհետև, ավելացնում է նա, «մեր միսիաները ավերակների են վերածվել և ներկայումս մեր միսիոներների մեծ մասը հեռացել է Փոֆր Ասիայից»<sup>60</sup>: Հեղինակի լուրջ մտահոգության առարկան դա Ֆրանսիայի հեղինակության անկումն է, իսկ խաղաղ ազգաբնակչության կորուստը նվազ կարևոր է նրա համար:

Ֆրանսիական հեղինակների մի այլ խումբ կողմնակալ մտեցնում է հանդես բերում ֆրանսիական զորքերի կողմից Կիլիկիայի գրավման շարժառիթների հարցը բնեարկելիս: Նրանք փորձում են «ապացուցել», թե իբր հազարավոր ֆրանսիացի զինվորներ զոհվեցին Կիլիկիայում հանուն փոֆր ազգերի, նրանց թուրքական բռնությունից ու կեղեքումից «փրկելու», և ոչ թե ֆրանսիական իմպերիալիստների տեռեստական ու ֆաղափական շահերի համար:

«Անկասկած, մեր պարտականությունը (Կիլիկիայում-Ռ. Ս.) հայերին ամեն մի կոտորածից պաշտպանելն էր»<sup>61</sup>, - շեշտում է Կիլիկիայում պաշտոնավարած ֆրանսիացի զինվորական Պոլ Բեռնարը, «մոռանալով» մատնանշել, թե ինչպե՞ս կատարեց Ֆրանսիան իր այդ պարտականությունը: Մի այլ հեղինակ՝ Ժան-Պիեռ Ալեմը պնդում է, թե իբր անգո-ֆրանսիական զորքերի ափհանումը Ալեքսանդրեաում «նպատակ ուներ Կիլիկիայում ստեղծել հայկական ազգային օջախ՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո»<sup>62</sup>: Ֆրանսիացի ֆաղափական մեկնարան Տեստին գրում է, որ Ֆրանսիան Անտոնում 21 մլն ֆրանկ ծախսեց՝ հայերին պաշտպանելու համար<sup>63</sup>, իսկ

<sup>60</sup> René Puaux, La Question d'Orient devant le Parlement (Séance du 29 octobre 1922), Paris, 1922, p. 5-7.

<sup>61</sup> Paul Bernard, Six mois en Cilicie. Aix-en-Provence, 1929, p. 45.

<sup>62</sup> Jean-Pierre Alem, L'Arménie, Paris, 1962, p. 66.

<sup>63</sup> Testis, L'Oeuvre de la France au Levant (Syrie et Cilicie). Extrait de la Revue [des] deux [mondes] du 15 février et 1 er mars 1921. Paris, 1921, p. 46.



Ժակ Կայզերը, Կիլիկիայի գրավումը ֆրանսիական զորքերի կողմից համարելով «արկածախնդրություն», նույնպես ընդգծում է միայն այն հանգամանքը, որ այդ արկածախնդրությունը «կլանում էր ֆրանսիական զինվորներին ու ֆրանսիական միլիարդները»<sup>64</sup>, ոչինչ չասելով այն մասին, որ ֆրանսիական իմպերիալիստների ֆաղափականությունը կլանեց նաև տասնյակ հազարավոր կիլիկիահայերի կյանքը:

Մի շարք ֆրանսիական հեղինակներ, նպատակադրվելով արդարացնել Բրիտանի ու Միլերանի կառավարության ֆաղափականությունը Մերձավոր Արևելքում և, մասնավորապես, Կիլիկիայում, թույլ տրված դիվանագիտական ձախողումների ու սխալների ամբողջ մեղքը բարդում են Անգլիայի վրա, որն իր ֆաղափականությամբ «ամեն կերպ աշխատում էր խանգարել Ֆրանսիային խաղաղ ճանապարհով լուծելու թուրքական հարցը»<sup>65</sup>: Ոմանք էլ, նույն այդ նպատակով, մեղադրում են հենց Ֆրանսիայի խրախուսանքով Կիլիկիա վերադարձած հայերին: Այսպես, վերը հիշատակված Տեստին գրում է, որ հայերն իրենց գրաված դիրքով պատճառ էին դառնում, որ ֆրանսիացիները վատ կողմից երևան թուրքերի աչքում: «Հայերի ամբարտավանությունը, — գրում է հեղինակը, — հավասարապես օգտագործվեց մեր դեմ. ֆրանսիացիները մեղադրվում էին այն բանում, որ իբր նրանք ցանկանում էին հայերի օգտին թուրքերից խլել Օսմանյան կայսրության մարզերից ամենահարուստը՝ Կիլիկիան»<sup>66</sup>:

Հիշված խմբին իրենց տեսակետներով հակադրվում են մի քանի հեղինակներ, որոնք խիստ ֆենադատության են ենթարկում Անտանտի տերությունների, այդ թվում և Ֆրանսիայի, բռնած դիրքը Օսմանյան կայսրության ֆրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: «Ժուռնալ դե դեբա» հայտնի թերթի ֆաղափական մեկնաբան Օգյուստ Գովենը մատնանշում է, որ

<sup>64</sup> Ж. Кайзер, Европа и новая Турция, М., 1925, стр. 28.

<sup>65</sup> *See Ch. Ayoub, Les mandats orientaux. Paris, 1924, էջ 66.*

<sup>66</sup> *Testis, op. cit., p. 35.*

մինչ դաշնակիցները տատանվում էին կատարել իրենց խոստումները, բշնամական ուժերը համախմբվեցին և հարձակման անցան այն ժողովուրդների դեմ, «որոնց մեկ հանդիսավոր կերպով անկախություն էինք խոստացել»<sup>67</sup>: Իսկ հայտնի պատմաբան Էդուար Դրիոն «Արևելյան հարցը 1918—1937 թթ.» իր աշխատության մեջ ֆենեկով 1920 թ. Մարաշի աղետի պատճառները, գալիս է այն եզրակացության, որ «Փարիզի կառավարությունը, այդ արյունոտ գործը ինչ-որ ձևով շտկելու փոխարեն, Կիլիկիայից դուրս բերեց բոլոր գործերը, հայերին բողնելով թուրքերի վրեժխնդրությանը»<sup>68</sup>: Առավել հանգամանորեն ու հիմնավորված է տրվում Անտանտի և, գլխավորապես, Անգլիայի ու Ֆրանսիայի ֆաղափարկանությունը է. Նիկոլի «Դաշնակիցները և Արևելյան ճգնաժամը» աշխատության մեջ, ուր հեղինակը խիստ ֆենադատության է ենթարկում վերոհիշյալ տերությունների տակտիկան Թուրքիայի նկատմամբ, ցույց է տալիս, որ նրանք չկարողացան լուրջ երաշխիքներ ապահովել Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնություններին, հատկապես հայերին, որոնք ստիպված եղան հեռանալ Կիլիկիայից<sup>69</sup>: Նույն հեղինակի մյուս գիրքը՝ «Անգորան և Ֆրանսիան» խորագրով, ամբողջովին նվիրված է 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական պայմանագրի և այն ստորագրած Ֆրանկլին-Ռոյոնի ֆեմալասիական դիրքորոշման ֆենադատությանը<sup>70</sup>:

Ֆրանսիական հեղինակներից հատկապես ֆենադատորեն պետք է մտնենալ այսպես կոչված «թուրքասեր խմբի» ներկայացուցիչների՝ գրողների, լրագրողների ու պատմաբանների

<sup>67</sup> *Auguste Gauvain, L'Europe au jour le jour. Tome XIV. Traités 1919 (Mars 1919-janvier 1920). Paris, 1923, p. 439.*

<sup>68</sup> *Edouard Driault, La Question d'Orient 1918—1937. La paix de la Méditerranée. Paris, 1938, p. 102.*

<sup>69</sup> *E. Nicol, Les Alliés et la Crise Orientale. Paris, 1922, pp. 27, 56.*

<sup>70</sup> *E. Nicol, Angora et la France. Une réponse à M. Franklin-Bouillon. Paris, 1922.*



(Պիեռ Լոտի, Կլոդ Ֆարրեր, Բերտա Ժորժ-Գոլի, Ժերար Տոկա, Մարգարիտ Բուրգուան, Ֆիլիպ դը Զարա և այլն) գործերին: Մրանք արտահայտում էին ֆրանսիական բուրժուազիայի այն բևի շահերը, որը ձգտում էր երիտքուրբերին վերստին տեսնել իշխանության գլուխ անցած՝ իր նախապատերազմյան դրամա-տետեսական դիրբերն ու արտոնությունները պահպանելու համար: Նշված հեղինակների գրվածքներում ակներևորեն շափազանցված ու գունագարդված է ներկայանում բուրբական իրականությունը, իսկ բուրբ-ֆրանսիական «ավանդական բարեկամությունը» դասվում է հավիտենական սկզբունքների շարքը<sup>71</sup>: Այսպես, ոչ անհայտ գրող Պիեռ Լոտին, որն իր կյանքի մեծ մասը անց է կացրել Արևելքում, գլխավորապես Թուրքիայում, իր գեղարվեստական գործերում և բազմաթիվ հոդվածներում ու գրբերում անվերապահորեն արդարացնում է բուրբական հին ու նոր կարգերի բոլոր բոնությունները, բուրբերին ներկայացնելով, որպես այլազգիների, առաջին հերթին քրիստոնյաների, կողմից կեղեբված ու հարստահարված մի «խեղճ» ժողովրդի: «Մեր բանկագին Ֆրանսիայի վախճանն Արևելքում» խորագիրը կրող գրքում նա, վերլուծելով Հանրեի, Մարաշի, Ուրֆայի ու Այնթապի կոիվները, եզրակացնում է, որ բոլոր դեպբերում մեղավոր էին հայերը, որոնք Հանրեում իբր հարյուրավոր մահմեդականների «անհավատալի տանջանքների են ենթարկել», խոշտանգել, Այնթապում ու Ուրֆայում «սարսափելի հանցագործություններ են կատարել» և այլն<sup>72</sup>: Այս բոլորը, իհարկե, պատմական իրականության ամենակոպիտ խեղաթյուրումն է, սակայն, պետք է նշել, որ իր ժամանակին Պիեռ Լոտիի բուրբասիրական ողջ ժառանգությունը քիչ դեր չի խաղացել ֆրանսիական հասարակական կարծիքը ապակողմնորոշելու և բուրբական մոայլ իրականությունը վառ գույներով ներկայացնելու գործում:

<sup>71</sup> *Pierre Loti, de l'Académie française, La mort de notre chère France en Orient. Dix-neuvième édition. Paris, 1926, p. 87—88.*

<sup>72</sup> *Նույն տեղում, էջ 105—106.*

Վերը նշված խմբի ներկայացուցիչների գործերից իրենց բուրժուական ոգով աչքի են ընկնում նաև նշված լրագրող Բերտա Ժորժ-Գոլիի<sup>73</sup> և արդեն հիշատակված Ժեռար Տոնգասի աշխատությունները: Այս վերջին հեղինակը քննարկում է Թուրքիայի գովքը հասցնում է այն աստիճանի, որ Թուրքիան, Ֆրանսիայի հետ մեկտեղ, համարում է «երկու մեծ դեմոկրատիաներից մեկը»<sup>74</sup>:

Պետք է նշել, սակայն, որ վերը թվարկված հեղինակների աշխատություններում բերված է զգալի փաստական նյութ, որն օգնում է համակողմանիորեն լուսաբանելու բնմայի հետ առնչվող մի շարք կարևոր հարցեր:

Հետաքրքիր ու արժեքավոր փաստեր են բերված Մորիս Պենոնի «Թուրքական հարցը»<sup>75</sup>, Միշել Պայառեսի «Քեմալիզմը դաշնակիցների դատի առջև»<sup>76</sup>, Գյուստավ Գոթթրոյի «Ֆրանսիան Սիրիայում և Կիլիկիայում»<sup>77</sup>, Էդգար Պեշի «Դաշնակիցները և Թուրքիան»<sup>78</sup>, Ռ. դը Գոնտո-Ֆիրոնի «Ինչպես Ֆրանսիան հաստատվեց Սիրիայում»<sup>79</sup>, Մ. Բելլեի «Կիլիկյան հարցը»<sup>80</sup> աշխատություններում, թեև այս հեղինակների մոտ էլ առկա են իրարամբեծ պնդումներ, կանխակալ կարծիքներ ու հետևություններ:

Փաստական հարուստ և ստույգ տվյալների ընդգրկումով հատկապես աչքի են ընկնում Կիլիկիայում ֆրանսիական

---

<sup>73</sup> Berthe Georges-Gaultis, Le nationalisme turc. Paris, 1921.  
<sup>74</sup> նույնի Angora, Constantinople, Londres. Moustafa Kemal et la politique anglaise en Orient. Paris, 1922.

<sup>74</sup> Gerard Tongas, op. cit., p. 15.

<sup>75</sup> Maurice Pernot, La question turque. Paris, 1923.

<sup>76</sup> Michel Paillarès, Le Kémalisme devant les Alliés. Paris, 1922.

<sup>77</sup> Gustave Gautherot, La France en Syrie et en Cilicie. Courbevoie (Seine), 1920.

<sup>78</sup> Edgar Pech, Les Alliés et la Turquie. Paris, 1925.

<sup>79</sup> Comte R. de Gontaut-Blron, Comment la France s'est installée en Syrie (1918—1919). Paris, 1923.

<sup>80</sup> M. Bellet, La question de Cilicie. Extrait du Journal officiel. Paris, 1921.



վարչական վերահսկողության ղեկավար գեղապետ է. Բրեմոնի հուշերը՝ «Կիլիկիան 1919—1920 թթ.»<sup>81</sup> խորագրի տակ, Պիեռ Ռեդանի «Կիլիկիան և օտտոմանյան պրոբլեմը»<sup>82</sup> և Մարաշի ֆրանցիսկյան վանքի վանահայր Մատերն Մյուրեի «Մարաշի շարդը (1920 թիվ, փետրվար)»<sup>83</sup> գրքերը: Նշված հեղինակներն էլ, սակայն, իրենց նպատակակետից ելնելով, փառաբանում են Ֆրանսիայի «ազատարար» ու լուսավորչական դերն Արևելքում ընդհանրապես և սուլթանական Թուրքիայում մասնավորապես, այն տարբերությամբ, սակայն, որ ոմանք ֆրանսիական իմպերիալիստներին ներկայացնում են որպես «Արևելքի բոլոր ֆրիստոնյանների խնամակալների»<sup>84</sup>, իսկ մյուսները՝ որպես մահմեդականների և, առաջին հերթին, օսմանյան բուրժուազիայի «ավանդական բարեկամների»<sup>85</sup>:

Ֆրանսիացի հեղինակների վերը ֆենարկված բոլոր աշխատությունները լույս են տեսել մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, իսկ մի զգալի մասը տակավին 1920-ական թվականների սկզբին:

Ինչ վերաբերում է հետպատերազմյան տարիներին լույս տեսած գործերին, ապա պետք է ասել, որ դրանց թիվը խիստ սահմանափակ է, և մեծ մասը՝ բանափառ ընդլայն, նոր, բարձր նյութեր ու փաստաթղթեր գրեթե չեն բերվում, արված եզրակացություններն էլ նոր երանգներով ու ձևափոխումներով կրկնում են հին կարծիքներն ու տեսակետները, վերստին փորձելով Ֆրանսիան ներկայացնել բուրժուազիայի պաշտպանի դերում: Այսպես, ֆրանսիացի պատմաբան Ժ. Բենուա-

<sup>81</sup> E. Brémond, La Cilicie en 1919—1920, Paris, 1921.

<sup>82</sup> Pierre Redan, La Cilicie et le problème ottoman. Préface par René Pinon, Paris, 1921.

<sup>83</sup> Materne-Muré, Le massacre de Marache (Février 1920). Extrait du „Flambeau“, revue belge des questions politiques et littéraires, 4 e année, № 1, janvier 1921.

<sup>84</sup> E. Brémond, op. cit., p. 19.

<sup>85</sup> Philippe de Zara, Moustafa Kémal dictateur. Paris, 1936, p. 218.

Մեշենը պնդում է, թե իբր միայն Ֆրանսիայի գործուն միջամտությունը բուրժ-հունական բախմունքը ֆեմսուլական գործերին փրկեց չախջախումից Սակարիայի ճակատամարտում<sup>86</sup>, իսկ Վ. Սպերկոն գովաբանում է ֆրանսիական դիվանագիտությունը այն բանի համար, որ իբր վերջինիս ջանքերի շնորհիվ հաջողվեց վերջ դնել պատերազմին Թուրքիայում 1922 թվականին<sup>87</sup>:

Ֆրանսիական հեղինակների աշխատությունների շարքում առանձնանում է վերջերս մահացած ֆրանսիացի պատմաբան Պոլ դյու Վեռի «Կիլիկիայի տառապանքները» խորագիրը կրող ծավալուն ուսումնասիրությունը, որը հիմնականում նվիրված է Կիլիկիայի 1919—1922 թթ. իրադարձություններին<sup>88</sup>: Ի տարբերություն ֆրանսիացի մի շարք հեղինակների, դյու Վեռն. հանգամանորեն ֆենելով Ֆրանսիայի կառավարող շրջանների վարած ֆաղափականությունը Կիլիկիայում և կիլիկիահայերի նկատմամբ, իր ֆենադատական խոսքն է ասում Ֆրանսիայի կառավարողների հասցեին:

Գրքում հանգամանորեն ու հիմնականում ճիշտ են շարադրված 1920—21 թթ. իրադարձությունները՝ Մարաշի ճանաչը և հայ ազգաբնակչության զարհուրելի կոտորածը, Այն-թալի պաշտպանությունը և այլն: Գիրքն արժեքավոր է նաև հավելվածում բերված մի շարք կարևոր փաստաթղթերով, որոնք լույս են սփռում Անկարայի ղեկավար շրջանների ազգային ֆաղափականության անանձին կողմերի վրա: Դրանցից են Մուստաֆա Քեմալի հայտարարությունը Թուրքիայի Ազգային մեծ ժողովում 1921 թ. մարտին, Անկարայի պայմանագրի կնքման կապակցությամբ բրիտանական կառավարությանը ուղղված հայտարարությունը, ֆաղվածքներ Ֆրանսիայի

<sup>86</sup> J. Bénolst-Méchin. Le loup et le léopard. Moustapha Kémal ou la mort d'un Empire. Paris, 1954, pp. 262, 271.

<sup>87</sup> Willy Sperco, Moustapha Kémal Ataturk (1882—1938). Paris, 1958, pp. 86—87.

<sup>88</sup> Paul du Véou, La passion de la Cilicie. 1919—1922. Nouvelle édition revue. Paris, 1954 (առաջին անգամ լույս է տեսել Փարիզում, 1938 թ.):



Սենատի նիստերից և այլն<sup>89</sup>: Պետք է նշել, սակայն, որ այս հեղինակն էլ մի շարք հարցերի լուսաբանման ժամանակ հանդես է բերում աչառու մտացում, թույլ է տալիս վիրավորական արտահայտություններ բուրժուազիայի հասցեյին, որոնք կարող են տպավորություն ստեղծել, թե գիրքն ամբողջությամբ միտումնավոր է: Մինչդեռ, ինչպես ասվեց, «Կիլիկիայի տառապանքները» գիրքը որոշակի գիտական արժեք է ներկայացնում և կարևոր է այդ շրջանի ֆրանս-ֆեմալական ֆաղափականությունը կիլիկիայում ճիշտ գնահատելու համար:

Գրական աղբյուրների հետ մեկտեղ, սույն ուսումնասիրության մեջ օգտագործվել են նաև 1920-ական րվականների ֆրանսիական պարբերականներում զետեղված նյութերը՝ բրդակցություններ, հաղորդումներ, պաշտոնական հայտարարություններ, պետական ղեկավար գործիչների ելույթներ և այլն:

Առանձնապես հետաքրքիր փաստական նյութ են պարունակում Փարիզում լույս տեսնող «*L'Asie française*»<sup>90</sup> և «*L'Europe nouvelle*»<sup>91</sup> հանդեսները, որտեղ տպագրվում էին ֆրանսիական թղթակիցների հաղորդումները կիլիկիայից այնտեղ տիրող վիճակի, ֆեմալական գործիչների ծավալած աշխատանքի մասին և այլն:

«*L'Asie française*» ամսագրից արժեքավոր տեղեկություններ ենք փառել 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսում Ֆրանսիայի պատվիրակության գրաված դիրքի, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատվիրակության ղեկավար Բեֆիր Սամիրեյի գործունեության, 1921 թ. Անկարայի պայմանագրի ստորագրման մանրամասների վերաբերյալ:

Որոշ հետաքրքիր փաստեր ու տեղեկություններ ենք փառել 1918—1922 թթ. Պոլսում լույս տեսնող ֆրանսիական

<sup>89</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 349—432:*

<sup>90</sup> «*L'Asie française*», Bulletin mensuel du Comité de l'Asie française, 1919—1923, Paris.

<sup>91</sup> «*L'Europe nouvelle*», Revue hebdomadaire des questions extérieures, économiques et littéraires. 1920—1922, Paris.

«*Le Réveil*»<sup>92</sup> և «*Stamboul*»<sup>93</sup> օրաթերթերից, որոնց լրիվ համարները, ցավոք, մեր գրադարաններում բացակայում են: Օգտագործել ենք նաև նյութեր ֆրանսիական «*Le Temps*», «*Le petit parisien*», «*L'information*» և այլ թերթերից:

Քուրֆ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունները լուսաբանելիս օգտագործել ենք նաև անգլիական աղբյուրներն ու գրականությունը: Ինչպես վերը նշվեց, հրապարակված թուրֆական ու ֆրանսիական դիվանագիտական փաստաթղթերը աննշան են և անմիջականորեն չեն առնչվում ֆենարկվող հարցերի հետ: Այդ իսկ պատճառով առավել մեծ արժեք են ներկայացնում անգլիական փաստաթղթերը, առաջին հերթին, «Մեծ Բրիտանիայի արտաքին ֆաղափականության փաստաթղթեր (1919—1939)» բազմահատոր հրատարակությունը, որի առաջին սերիան ամբողջովին ընդգրկում է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը<sup>94</sup>: Այդ հատորներում զետեղված նյութերն ու փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում հետևելու ֆրանսիական արտաքին ֆաղափականության ելևէջներին, նիշտ հասկանալու թուրֆական հարցում Ֆրանսիայի բռնած դիրքը Սան-Ռեմոյի ու Լոնդոնի կոնֆերանսներում, անգլո-ֆրանսիական հակամարտությունը և այլն: Հատորներում առաջին անգամ հրապարակված են Լորդ Քերզոնի ու Կլեմանտյոյի զրույցները Փարիզում ու Լոնդոնում 1919 թ. դեկտեմբեր-1920 թ. հունվար ամիսներին, որոնց ժամանակ հատուկ ֆենության է առնվել Կիլիկիայի հարցը, և մի շարք ուրիշ կարևոր նյութեր: Այս հրատարակությունն էլ, հասկանալի է, տառապում է կողմնակալությամբ. նյութերն ու փաստաթղթերը ընտրված են այն հաշվով, որպեսզի ամենադրական կող-

<sup>92</sup> „*Le Réveil*“, quotidien politique, littéraire, économique et sociale, Constantinople.

<sup>93</sup> „*Stamboul*“, Journal quotidien, politique et littéraire, organe des intérêts français dans le Levant. Constantinople.

<sup>94</sup> „*Documents on British Foreign Policy 1919—1939*“, Edited by E. L. Woodward and Cohan Butler. First series, vol. I—XIII. London, 1947—1963.



մերից ներկայացվի անգլիական ֆաղափականությունը և, միաժամանակ, ընդգծվի նրա մրցակցի՝ Ֆրանսիայի «հարձակո՞ղական» դիրքը:

Նշված բերությունը հատուկ է նաև անգլիական պատմաբանների ու արևելագետների աշխատություններին, որոնցում հաճախ կարելի է հանդիպել ֆենադատության՝ Ֆրանսիայի հասցեին, որև իր անջատ ֆաղափականությամբ «ղավանանում էր» դաշնակիցների ընդհանուր գործին:

Անգլիայում լույս տեսած բուրժուական գրականությունը, պետք է ասել, մեծ թիվ չի կազմում: 1920-ական թվականների կեսերին տպագրվեցին Թուրքիայում երկար տարիներ ծառայած կապիտան Հարոլդ Արմստրոնգի «Թուրքիան շարժման մեջ» գիրքը (որը հետագայում մի ֆունի անգամ վերահրատարակվեց՝ «Գորշ գայլը» վերնագրի տակ)<sup>95</sup> և հայտնի պատմաբան ու փիլիսոփա Առնոլդ Թոյնբիի ու Քենեթ Քրեֆվուդի «Թուրքիա» ծավալուն աշխատությունը<sup>96</sup>: Հիշյալ գործերը աչֆի են ընկնում իրենց ընդգրկած հարուստ փաստական նյութով, բայց և միտումնավոր լուսաբանությամբ: Այսպես, առաջին հեղինակը պնդում էր, որ հունական ներխուժման դեմ թուրք ժողովրդի մղած պայքարի ընթացքում Անտանտի տերությունները «չհզո՞ւթյուն էին պահպանում»: Ինչպես և մյուս անգլիական հեղինակները, Արմստրոնգը ևս չէր բաժնորդում իր դժգոհությունը ֆրանսիական կստավարությունից. այն բանի համար, որ նա գաղտնի բանակցությունների մեջ էր մտել Քեմալի հետ և առանց Անգլիային տեղյակ պահելու ստորագրել Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը<sup>97</sup>:

Այս շրջանում լույս տեսած առանձին գործերում Ֆրանսիայի հետ մեկտեղ ֆենադատվում է նաև Անգլիան՝ իր մերձավորարևելյան ֆաղափականության համար:

<sup>95</sup> H. C. Armstrong, Grey Wolf. Mustafa Kemal. An intimate study of a Dictator, London, 1938.

<sup>96</sup> Toynbee Arnold J. and Kirkwood Kenneth P., Turkey. London, 1926.

<sup>97</sup> H. C. Armstrong, op. cit., pp. 143—144, 159.

Լեոնարդ Լիգբ, օրինակ, գրում էր, որ «Անգլիայի և, ավելի փոքր չափով, Ֆրանսիայի վրա է ընկնում պատասխանատվությունը Օսմանյան կայսրության ոչ-թուրք ժողովուրդներին բաժին ընկած նակատագրի համար»<sup>98</sup>: Իսկ Ժոզեֆ Բրբրը ընդգծում է այն հանգամանքը, որ հենց այս երկու մեծ տերությունների մեղքով էր, որ հայերը վերադարձան Կիլիկիա և խաբվեցին նրանց կողմից, ինչը «մի սև բիծ է արևմտյան ֆալաֆակրության վրա»<sup>99</sup>:

Ավելի ուշ լույս տեսած գրքերից պետք է նշել Հենրի Քամինգի «Ֆրանս-բրիտանական մրցակցությունը հետպատերազմյան Մերձավոր Արևելքում» աշխատությունը<sup>100</sup>, որն ամբողջությամբ նվիրված է նախկինում դաշնակից այդ երկու մեծ տերությունների հակամարտությանը, որը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, ավարտվեց ֆրանսիական ազդեցության անկումով և Անգլիայի ազդեցության ու դիրքերի ուժեղացմամբ:

Առավել արժեքավոր են հետպատերազմյան տարիներին լույս տեսած անգլիական հեղինակների աշխատությունները, որոնց թվում պատմաբան Էդվարդ Վեր-Հոջի «Թուրքիայի արտաքին ֆալաֆականությունը 1918—1948 թթ.» գիրքը<sup>101</sup> և Վերջերս կրկնակի հրատարակված Լորդ Կինրոսի «Արաբյուրք» մեծածավալ հետազոտությունը<sup>102</sup>: Վերջին գիրքը, թեև գրված է թուրքասիրական ոգով, սակայն արժեքավոր է այն տեսակետից, որ հեղինակին առաջինը հաջողվել է «թափանցել» Քեմալի անձնական արխիվը, ինչպես նաև օգտագործել Քեմալի հետ երկարատև հանդիպումներ ու զրույցներ ունեցած ամերիկյան ծովակալ Բրիստոլի անձնական փաստաթղթերն ու նյութերը և, այդպիսով, գիտական շրջանառության մեջ դնել մի

<sup>98</sup> C. Leonard Leese, *Armenia and the Allies*. London, 1920, p. 5.

<sup>99</sup> Joseph Burt, *The people of Ararat*. London, 1926, p. 86—87.

<sup>100</sup> Henry H. Cumming, *Franco-British rivalry in the postwar Near East. The decline of french influence*. London, 1938.

<sup>101</sup> Edward Reginald Vere-Hodge, *Turkish foreign policy, 1918—1948*. Genève, 1950.

<sup>102</sup> Lord Kinross, *Atatürk. The rebirth of a nation*. London, 1965.



շարժ նոր, քառմ փաստեր, որոնք միտք են շարժում և առիթ ծառայում արդեն իսկ լուծված համարվող մի ֆանի հանգուցային հարցեր նոր կողմերից լուսաբանելու ու գնահատելու համար<sup>103</sup>: Որոշակի արժեք են ներկայացնում նաև ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ-Պիկոյի ու Քեմպի միջև 1919 թ. Սվասում տեղի ունեցած հանդիպմանը և 1921 թ. Անկարայի պայմանագրին նվիրված գլուխները, ուր բերված են մի շարժ հետաքրքիր ու կարևոր մանրամասներ:

Թուրքագիտական ընդհանուր բնույթի գրականությունից օգտագործել ենք անգլիական պատմաբան-արևելագետներ Հարրի Լյուիսի «Հին և նոր Թուրքիան»<sup>104</sup>, Գոթարդ Լյուիսի «Թուրքիա»<sup>105</sup> և էլի Քեդուրիի «Անգլիան ու Միջին Արևելքը» գրքերը<sup>106</sup>: Վերջին հեղինակն իր գրքում զգալի տեղ է հատկացրել Ֆրանսիայի վարած ֆաղափականության վերլուծությանը և անգլո-ֆրանսիական հարաբերություններին:

Խիստ սահմանափակ է թեմայի հետ անմիջականորեն առնչվող ամերիկյան պատմագիտական գրականությունը: Ճիշտ է, ԱՄՆ-ում, հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում, լույս են տեսել Թուրքիային նվիրված տասնյակ ուսումնասիրություններ, սակայն, գրեթե առանց բացառության, դրանք բոլորն էլ հիմնականում նվիրված են թուրքամերիկյան և թուրք-սովետական հարաբերություններին. մյուս տերությունների ֆաղափականությունը հատուկ ֆենոթյան չի ենթարկվում:

1920—30-ական թվականներին ԱՄՆ-ում հրատարակված թուրքագիտական աշխատությունների շարքում իրենց ընդգրկած փաստական նյութով արժեքավոր են է. Միքսի խմբագրությամբ լույս տեսած ժողովածուն՝ «Ժամանակակից Թուր-

<sup>103</sup> Գրքի մասին մանրամասն տե՛ս մեր գրախոսականը՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 3, էջ 94—98:

<sup>104</sup> H. Luke, The old Turkey and the new. From Byzantium to Ankara, London, 1955.

<sup>105</sup> G. L. Lewis, Turkey. London, 1955.

<sup>106</sup> Elie Kedourie, England and Middle East. London, 1956.

Բիան»<sup>107</sup> վերնագրով, Կ. Փրայսի «Թուրքիայի վերածնունդը»<sup>108</sup> և, առանձնապես, թուրքագետ-պատմաբան, պրոֆեսոր Հարրի Հովարդի «Թուրքիայի մասնատումը» ծավալուն հետազոտությունը, որն, ըստ էության, «թուրքական ժառանգության» շուրջ ծավալված տասը տարվա դիվանագիտական պայքարի պատմությունն է: Հիշյալ գիրքը, աննշան փոփոխություններով, վերահրատարակվեց 1966 թվականին<sup>109</sup>: 1920 թ. Մարաշի դեպքերի լուսաբանման համար կարևոր և հավաստի աղբյուր են Մարաշի ամերիկյան հիվանդանոցի բժշկապետուհի Մեյբլ Էվրլին Էլիոտի հուշերը<sup>110</sup>, որտեղ օր-օրի գրանցված են ֆաղափում տեղի ունեցած դեպքերը: Հեղինակը մանրամասն նկարագրում է ֆրանսիացիների նահանջը և դրա հետևանքով ֆաղափ հայ ազգաբնակչության աղետալի վիճակը, նահանջի նախապարհին նրա կրած կորուստները և այլն:

Կիլիկիայի իրադարձություններին անդրադառնում է իբրև գրում Ստամբուլի «Ռոբերտ ֆոլեջի» նախկին տնօրեն Գեյրսը: Սակայն հեղինակը, խոսելով թուրքերի կողմից Մարաշի, Ուրֆայի ու Հանրեի գրավման մասին, եզրակացնում է, որ «դա ավելի շատ տարբեր բնակչության (թուրքերի ու հայերի-Ն. Ս.) պատերազմն էր, քան բանակների պատերազմը»<sup>111</sup>, անտեսելով, այդպիսով, ֆեմալական կանոնավոր զորքերի հարձակումը խաղաղ հայ ազգաբնակչության վրա:

Հետպատերազմյան տարիներին լույս տեսած գործերից օգտագործել ենք Ջորջ Հորթրնի<sup>112</sup>, Սիդնեյ Ֆիշերի և Լոուրենս

<sup>107</sup> E. G. Mears, *Modern Turkey. A politico-economic interpretation 1908—1923*, New York, 1924.

<sup>108</sup> Price Clair, *The rebirth of Turkey*. New York, 1923.

<sup>109</sup> Harry N. Howard, *The partition of Turkey. A diplomatic history 1913—1923*. New York, 1966.

<sup>110</sup> Mabel Evelyn Elliott, *Beginning again at Ararat*. New York, 1924.

<sup>111</sup> Galeb Frank Gates, *Not to me only*. Princeton, 1940.

<sup>112</sup> George Horton, *The Blight of Asia*. Indianapolis, 1953.



էվանսի աշխատությունները: Վերջին հեղինակի գիրքը՝ «ԱՄՆ-ի ֆաղմփականությունը և Թուրքիայի մասնատումը 1914—1924 թթ.»<sup>113</sup> փաստալից և հետաքրքիր ուսումնասիրություն է, հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում մի շարք նոր փաստաթղթեր ու նյութեր:

Մեր բեմային վերաբերող որևէ ուսումնասիրություն չեն գրել նաև գերմանական հեղինակները և, ընդհանրապես, խիստ սահմանափակ են Թուրքիայի վերաբերյալ նրանց գրքերը: Երկու համաշխարհային պատերազմների միջև բնկած ժամանակաշրջանում լույս է տեսել ընդամենը մի ֆանի աշխատություն: Տակավին 1924 թ. ռուսերեն թարգմանությամբ լույս տեսավ Վալտեր Լիրաուի «Նոր Թուրքիան» գիրքը<sup>114</sup>, որն ինֆեռուսյն գործ չէ և գուրկ է վերլուծությունից, 1935 թվականին՝ Ավգուստ ֆոն Կրալի «Քեմալ Արաքյուրֆի երկիրը» խորագրով գիրքը, որը 1938 թ. թարգմանվեց անգլերեն<sup>115</sup>, իսկ 1936 թ.՝ Հանս Ֆրեմբգենի գիրքը, որը նույնպես թարգմանվեց անգլերեն<sup>116</sup>: Գերմանական հեղինակներից որպես Թուրքիայի նորագույն շրջանի պատմաբան հայտնի է միայն մեկը՝ Բոննի համալսարանի պրոֆեսոր Գոտհարդ Եշկեն, որը նախքան պատերազմը հրատարակել էր մի ֆանի ոչ մեծ աշխատություններ՝ «Թուրքիան 1929—33 թթ.», «Թուրքիան 1934—35 թթ.» և «Թուրքիան 1935—41 թթ.», իսկ հետպատերազմյան տարիներին հիմնականում զբաղվել է սովետա-թուրքական հարաբերությունների տարբեր ժամանակաշրջանների պատմության հարցերով:

Ամփոփելով արևմտաեվրոպական և ամերիկյան բուրժուական պատմաբանների աշխատությունների համառոտ տեսու-

<sup>113</sup> *Laurence Evans*, United States policy and partition of Turkey 1914—1924. Baltimore, 1965.

<sup>114</sup> *Вальтер Лирау*, Новая Турция, ее экономическое состояние и виды на будущее. Перевод с немецкого, Л.—М., 1924.

<sup>115</sup> *Kral August von*, Kamal Atatürk's Land. The evolution of modern Turkey. Translated by Kenneth Benton. Wien, 1938.

<sup>116</sup> *Frembgen Hanns*, Kemal Ataturk. A biography. Translated from german by Kenneth Kirkness, London, 1936.

թյունը, անհրաժեշտ է նշել մի ընդհանուր բերություն, որը նրանց գրկել է գիտական հետազոտության հնարավորությունից. դա այն է, որ նրանցից յուրաքանչյուրը հենց սկզբից նպատակադրվել է ամեն կերպ արդարացնել իր երկրի ֆաղափականությունը Թուրքիայի նկատմամբ և բացասական կողմերից ներկայացնել մյուս մեծ տերությունների ֆաղափականությունը:

Մեր աշխատության կարևոր աղբյուրներից մեկն էլ սփյուռֆահայ մամուլն ու գրականությունն է: 1919—1923 թթ. Ադանայում, Իզմիրում, Պոլսում և այլուր հրատարակվող հայ պարբերականներում փաստական զգալի նյութ է պարունակվում Թուրքիայի ներքին կյանքի, քննադատական շարժման սկզբնավորման, Կիլիկիայում ստեղծված դրության, առանձին ֆաղափների ինֆենապաշտպանական կոնվենտների և այլ հարցերի վերաբերյալ: Պոլսահայ թերթերը, միաժամանակ, հետաքրքիր տեղեկություններ ու հաղորդումներ էին արտատպում թուրքական մամուլից, որն առավել արժեքավոր է դառնում այն պատճառով, որ մեզ մոտ այդ տարիների թուրքական թերթեր չկան:

Ինչ վերաբերում է սփյուռֆահայ գրականությանը, ապա պետք է ասել, որ Կիլիկիայի 1919—1921 թթ. իրադարձություններին նվիրված ամփոփ ուսումնասիրություններ հրատարակի վրա չկան: Սակայն լույս են տեսել մի շարք արժեքավոր գրքեր և հավաստի փաստերով լեցուն հուշեր, որոնցում հանգամանորեն շարադրված է Կիլիկիայի հայաշատ առանձին ֆաղափներում՝ Ադանայում, Հանընում, Մարաշում, Ստում, Այնըապում և այլուր ծավալված իրադարձությունների պատմությունը: Դրանցից առավել կարևորություն են ներկայացնում Սուրատ Թերզյանի գիրքը<sup>117</sup> ու Հակոբ Պողոսյանի երկասիրությունը<sup>118</sup> Հանընի վերաբերյալ, Նազարեթ Զեյթունցյա-

117 Սուրատ Յ. Թերզյան, Հանընի ու թամսյա դժուր շրջանամարտը, Պոլս-Նու-Այրես, 1956:

118 Հանընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գօզան-տաղի հայ դիպերը: Երկասիրեց՝ Յ. Պ. Պողոսյան, Լոս Անճելես, Գալիֆորնիա, 1942:



նի<sup>119</sup> ու Վարդ Մեխակի<sup>120</sup> գրքերը Զեյթունի 1919—1921 քրանցքերի մասին, Գր. Գալուստյանի Մարաշի պատմությանը նվիրված ծավալուն երկասիրությունը<sup>121</sup>, ինչպես նաև Հովսեփ Տեր-Վարդանյանի «Մարաշի շարդը 1920-ին» գիրքը<sup>122</sup>, պրոֆ. Գևորգ Սարաֆյանի խմբագրությամբ լույս տեսած երկհատորանոց ուսումնասիրությունը Այնթապի վերաբերյալ<sup>123</sup>, և այլն:

Մի շարք տեղեկություններ ենք փառել Ա. Արամասյանի<sup>124</sup>, Տիգրան Պոյանյանի<sup>125</sup>, Արամ Սահակյանի<sup>126</sup> և սփյուռֆահայ ուրիշ հեղինակների գրքերից:

Թվարկված և մյուս հեղինակները, ինչ խոսք, փաստական հարուստ նյութ են մեջբերում կիրիկիայում ֆրանս-թուրքական ֆաղափականության, կիրիկիահայերի հերոսական ինֆանտաշտպանական կոիվների, կիրիկիայի տնտեսական դրության, հայ ազգայնական կուսակցությունների գործունեության և այլ հարցերի վերաբերյալ: Սակայն դրանք բոլորն էլ, գրեթե առանց բացառության, զուրկ են գիտական հետևություններից ու ընդհանրացումներից, շեն տալիս հարցի սխտեմատիկ, կապակցված և համակողմանի շարադրանքը, աչֆի են ընկնում այս կամ այն գործչին տրված միակողմանի կամ կանխակալ գնահատականներով: Ուստի մենք նրանց գործերը

---

119 Նագարեթ Զեյթունցեան, *Զեյթունի վերջին դէպքերը (1919—1921)*, Ադեբասնդրիա, 1922:

120 Վարդ Մեխակ, *Զեյթունի նահանջը*: Կ. Պոլիս, 1922:

121 Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն: Երկասիրից Գր. Հ. Գալուստեան (Կիրիկեցի). Նիւ-Նորք, 1934:

122 Հովսեփ Տեր-Վարդանեան, *Մարաշի շարդը 1920-ին և պատմական համառոտ ակնարկ մը անցեալին վրայ*: Երուսաղէմ, 1927:

123 Գևորգ Սարաֆյան, *Պատմութիւն Անթիպի հայոց (2 հատորով)*, Լոս-Անջելոս, 1953: Հրատարակիչ է նաև անգլերէն. Kevoork A. Sarafian, A Briefer history of Aintab. San-Francisco, 1957.

124 Ա. Արամասեան, *Կիրիկիոյ մօտաւոր անցեալէն (պատմական ակնարկ)*. առաջաբան և նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի Փարիզ, 1937:

125 Տիգրան Յ. Պոյանեան, *Հայկական լէգէոնը: Պատմական յուշագրութիւն: Ուօթըրթառն, Մէս.*, 1965:

126 Արամ Սահակեան, *Գիւցազնական Ուրֆան և իր հայորդիները*: Պէյրուս, 1955:

ևս օգտագործել ենք նույն ֆենադատական մտեցումով. ինչ որ մյուս հեղինակների աշխատությունները, հանախ համադրելով ստուգել ենք տարբեր ֆաղափական սուղությունների պատկանող հեղինակների բերած փաստերը:

Վերջապես, օգտագործել ենք Մոսկվայի ու Երևանի արխիվներում պահվող փաստաթղթերը, ինչպես նաև մամուլի տեսությունները:

Հայկական ՍՍՀ Պետական Պատմական արխիվի փաստաթղթերից որոշակի արժեք է ներկայացնում №200 ֆոնդի 546 գործը, որը պարունակում է պաշտոնական նամակագրություն Կիլիկիայում Միացյալ Հայաստանի պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանի ու գեղապետ Բրեմոնի, այս վերջինի ու գորավար Դյուֆիոյի միջև, և մի շարք այլ նյութեր ֆրանսերեն: Հետաքրքրություն են ներկայացնում նաև № 408 ֆոնդում պահվող հնչակյան կուսակցության Աղանայի մասնաճյուղի արխիվի նյութերը, որոնք բնութագրում են Աղանայում և, ընդհանրապես, ամբողջ Կիլիկիայում այդ ժամանակ ստեղծված զինվորական կացությունը, կուսակցության գործունեությունը, եղած դժվարությունները և այլն:

Եզակի նյութերի կարելի է հանդիպել ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության Չարենցի անվան գրականության ու արվեստի քանգարանում գտնվող անվանի գրողներ ու հայրենասեր գործիչներ Արշակ Չոպանյանի ու Ջապել Եսայանի արխիվներում: Կիլիկիայում 1920 թ. կեսերին ստեղծված իրավիճակը լավ պատկերացնելու ու ըմբռնելու, հայ ազգայնական կուսակցությունների գործելակերպը նիշտ գնահատելու համար որոշակի արժեք ունի Ջապել Եսայանի ընդարձակ հաշվետվությունը Միացյալ Հայաստանի պատվիրակության նախագահ Պողոս Նուպարին<sup>127</sup>, ինչպես նաև Կիլիկիայից գրած նրա նամակները գեղապետ Բրեմոնին, գորավար Դյուֆիոյին և ֆրան-

<sup>127</sup> Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ջապել Եսայանի ֆոնդ, № 289:



սիացի մյուս զինվորականներին՝ փախստական հայ որբերի  
հակատագրի վերաբերյալ<sup>128</sup>:

Հանրեում, Մարաշում և Կիլիկիայի մյուս ֆաղափներում  
ծավալված իրադարձությունների վերաբերյալ առանձին ար-  
ժեքավոր փաստաթղթեր ու նյութեր ենք հայտնաբերել Մաշ-  
տոցի անվան Մատենադարանում պահվող եզրպատահայ բազ-  
մաբեղուն պատմաբան Արշակ Ալպոյանյանի արխիվում:

---

128 ՏՆ՝ Ռ. Գ. Սահակյան, *Զապիլ Եսայանի նամակները Կիլիկիայից՝*  
*«Բանբեր Հայաստանի արխիվներին», 1968, № 2, էջ 47—54.*

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի մեջ ներգրավված ժողովուրդների սպանող տակալին շարունակվում էր, երբ Օսմանյան կայսրությունը դադարեց գոյութիւն ունենալուց: Բալկանյան ու Պաղեստինյան ճակատներում կրած մի շարք կործանիչ պարտութիւններից հետո սուլթանական կառավարութիւնը ստիպված էր հաշտութիւն խնդրել Անտանտի տերութիւններից:

1918 թ. հոկտեմբերի 30-ին, Մուդրոսի նավահանգստում խարխիսի ձգած անգլիական «Ազամեմնոն» հաժանալի վրա ստորագրվեց պայմանագիր զինադադարի մասին: Մերձավոր Արևելքում Անգլիայի գերիշխող դիրքը, որը պայմանավորված էր անգլիական զորքերի բացահայտ գերակշռութեամբ, բրիտանական կառավարութիւնն օգտագործեց՝ առանց դաշնակիցների հետ հաշվի նստելու իր սեփական պայմանները թելադրելու թուրքական ներկայացուցիչներին:

Մուդրոսի պայմանագրով Անտանտի տերութիւնների ոսլմանավերին իրավունք էր վերապահվում ազատ անցնելու նեղուցներով Սև ծովը և գրավելու Բոսֆորի ու Դարդանելի ողմական ամրութիւնները (հոդված 1), սուլթանական կառավարութիւնը պարտավորվում էր անհապաղ զորացրել թուրքական բանակը (հոդված 5), դաշնակիցներին հանձնել



արաբական երկրներում՝ Իրաքում, Սիրիայում, Հեջազում ու Յմենում տեղաբաշխված կայազորները և թուրքական զորքերը դուրս բերել Կիլիկիայից (հոդված 16), 20-րդ հոդվածով Թուրքիան պետք է իր բանակի ողջ սպառազինությունն ու զինամթերքները հանձներ դաշնակիցներին, իսկ 22-րդ հոդվածով նրանց բոլոր ռազմագերիներին, այդ թվում ռուսներին, ինչպես և երկրի խորքը քշված հայերին: Պայմանագրի 15-րդ հոդվածով անգլիական զորքերին իրավունք էր արվում գրավելու Բաթումը, Բաքուն և Անդրկովկասի մյուս բաղաբները, 24-րդ հոդվածով՝ հայկական վեց վիլայեթները՝ նրանցից որևէ մեկում անկարգություններ ծագելու դեպքում: Մուղրոսի պայմանագրով Անտանտի պետությունների վերահսկողության տակ էին դրվում ռադիոն, հեռագրային միջոցները և երկրի բոլոր երկաթուղիները, նավահանգիստներն ու նավամատույցները<sup>1</sup>:

Զինադադարի կնքումից անմիջապես հետո Անտանտի գերիշխող տերությունը՝ Անգլիան ձեռնամուխ եղավ պայմանագրով նախատեսված և շնախատեսված տերիտորիաների ռազմական գրավմանը: Այսպես, Մուղրոսի զինադադարից երեք օր հետո, 1918 թ. նոյեմբերի 2-ին, անգլիական զորքերը, Միջագետքում իրենց հաղորդակցության միջոցները պաշտպանելու պատրվակով գրավեցին նավթի հսկայական պաշարներ ունեցող Մոսսուլի շրջանը, ինչպես նաև Միջերկրական ծովի կարևորագույն նավահանգիստներից մեկը՝ Ալեքսանդրետը:

Անգլիան իր գերիշխանությունն ամրապնդեց նաև Նեղուցների գոտում՝ Իջերկրածովյան իր նավատորմի մեծ մասը ուղարկելով այդ շրջանը և գրավելով բոլոր կարևոր ռազմա-ծովային ամրությունները: Նոյեմբերի 13-ին անգլիական զորքերը ասի հանվեցին Ստամբուլում, իսկ հաջորդ երկու օրվա ընթացքում դաշնակից մյուս զորքերի հետ գրավեցին Նեղուցները<sup>2</sup>:

<sup>1</sup> «Дипломатический словарь в трех томах», т. 2, М., 1961, стр. 57.

<sup>2</sup> Tevfik Bıyıklıoğlu, Birinci dünya harbinde ve Mondros müta-

1918 թ. վերջին, 1919 թ. սկզբին անգլիական զորքերը իրենց վերահսկողութիւնը ենթարկեցին ոչ միայն Նեղուցներին գոտին, Հարավային ու Հարավ-Արեւմտյան Անատոլիան, այլև ամբողջ Կիլիկիան, որը 1916 թ. կնքված Սայքս-Պիկոյի պայմանագրով տրվում էր Ֆրանսիային: Դա բացատրվում էր Մերձավոր Արևելքում ֆրանսիական զորքերի նվազութիւնով: Բեյրութում տեղաբաշխված ֆրանսիական բրիգադը շատ թույլ էր Կիլիկիայի գրավումն իրականացնելու համար<sup>3</sup>:

Օսմանյան կայսրութիւնն գրավված տերիտորիաների վերաբաժանման հարցը բննարկման առարկա դարձավ 1919 թ. հունվարին Փարիզում բացված Հաշտութիւնն համաժողովում: Մինչ այդ, 1918 թ. դեկտեմբերին, կոնդոնում կայացած Կլեմանսո-Լյուդ-Ջորջ տեսակցութիւնն ժամանակ վերջինս հասել էր այն բանին, որ ի փոփոխումն Սայքս-Պիկոյի համաձայնագրի, Ֆրանսիան համաձայնվել էր Մոսուլի մարզը ճանաչել անգլիական ազդեցութիւնն գոտում, պայմանով, որ Մոսուլի նավթի մի մասը կապահովվի Ֆրանսիային և կճանաչվի վերջինիս մանդատը Սիրիայի վրա<sup>4</sup>:

Նույն 1919 թ. հունվարի վերջին, Փարիզի համաժողովի բացումից անմիջապես հետո, Անտանտի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Արաբիան և Միջագետքը Օսմանյան կայսրութիւնից անջատելու վերաբերյալ: Փետրվարին Հունաստանի կառավարութիւնն ղեկավար Վենիզելոսը պաշտոնապես դիմեց Հաշտութիւնն համաժողովին՝ պահանջելով Իզմիրի մարզը հանձնել Հունաստանին<sup>5</sup>: Դաշնակից տերութիւնները այդ մասին որո-

---

rekesti sıralarında bogazlar problemi. „Belleten“, cilt XXV, Sayı 97, s. 92.

<sup>3</sup> E. Brémond, op. cit., p. 10.

<sup>4</sup> H. Temperley, History of the Peace Conference of Paris, Vol. VI, London, 1924, p. 182.

<sup>5</sup> Bernard Lewis, The emergence of modern Turkey. London, 1965, p. 236.



շում կայացրին և հունական զորքերը 1919 թ. մայիսի 15-ին Կիւի իջնելով Իզմիրում, գրավեցին քաղաքը և մերձակա ամբողջ շրջանը:

Մուրթոսի պայմանագրի ստորագրումը և, հատկապես, Իզմիրի գրավումը հունական բանակի կողմից, հուժկու բողոք առաջացրին երկրում: Մինչ այդ ստեղծված գլուղացիական պարտիզանական ջոկատները իրենց հիմնական հարվածն ուղղեցին օտարերկրյա զավթիչների դեմ:

Թուրքիայի ազգային պատերազմի հետագա ընթացքի համար խոշորագույն նշանակութուն ունեցավ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխութունը, որի հաղթանակը և քաղաքացիական պատերազմի ճակատներում մղված հերոսական պայքարը ոգևորող օրինակ էին ծառայում Արևելքի ժողովուրդների, այդ թվում և թուրք ժողովրդի համար: Հոկտեմբերյան հեղափոխությամբ կյանքի կոչված Սովետական Ռուսաստանի գոյության փաստն իսկ հսկայական, անգնահատելի դեր էր խաղում բոլոր այն ժողովուրդների համար, որոնք պայքարի էին ելել իմպերիալիստական խոշոր տերութունների դեմ՝ հանուն իրենց անկախության ու պետական ինքնուրույնության: Ասիական երկրներից առավել կարևոր հետևյալանքներ ունեցավ Սովետական Ռուսաստանի զգալի օգնությունը Թուրքիայի համար:

Թուրքիայի ազգային պատերազմի ծրագիրը մշակվել ու հաստատվել էր 1919 թ. հուլիս-սեպտեմբերին կայացած էրզրումի ու Սըվասի համաժողովներում:

էրզրումի համաժողովը հրավիրվեց «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» կողմից. այն ընթացավ 1919 թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 7-ը:

Մեզ հետաքրքրում է համաժողովի ընդունած որոշումների քաղաքական մասը, որն ամբողջությամբ հայերեն լեզվով շի հրապարակվել, ուստի նպատակահարմար է մեջբերել այն լրիվ:

«Հոգված 1.—Փոքր Ասիայի արևելյան վիլայիթները,

Տրապիզոնի վիլայեթը և Ջանիկի սանջաքը կազմում են մի միասնական, անբաժանելի ամբողջութիւն և մտնում Օսմանյան կայսրութեան մեջ, որպէս նրա անբաժանելի մասը:

Տրապիզոնի վիլայեթը Ջանիկի սանջաքի հետ միասին, ինչպէս և էրզրումի, Սըվասի, Գիարբեքիւրի, Մամուրեթ-ուլ-Ադիզի, Վանի, Բիթլիսի վիլայեթները, որոնք անվանվում են Արևելյան Փոքր Ասիայի վիլայեթներ, և այս վիլայեթների մեջ մտնող բոլոր անկախ սանջաքները, շեն կարող ոչ մի ձեւով, ոչ մի պատրվակով և ոչ մի պատճառաբանութեամբ անջատվել մեկը մյուսից: Դրանք բոլորը միասին կազմում են մի ամբողջութիւն, որի բոլոր մասերը կատարյալ համերաշխութեան մեջ են իրար նկատմամբ՝ ինչպէս ուրախութեան, ասնպէս էլ դժբախտութեան պահին, և իրենց ապագա ճակատագրի անսակեռից բոլորը ձգտում են միեւնույն նպատակին: Այս շրջանում բնակվող մահմեդական տարրերը բնականորեն սկզբնապէս են պատկառանքի ու ղոհաբերութեան միեւնույն զգացումներով և իրենց դիտում են, որպէս միեւնույն ծնողներից սերած հղբայրական խմբեր, հարգելով յուրաքանչյուրի էթնիկական ու սոցիալական վիճակը և այն յուրահատուկ պայմանները, որոնցում նրանք ապրում են:

Հ ո դ վ ա ծ 2.— Մեր տերիտորիայի ամեն մի գրավում և ամեն կարգի միջամտութիւն մեր գործերին դիտելով որպէս ձգտում ուղղված հունական կամ հայկական համայնքի ըստնողմանը, մենք առաջ ենք քաշում ինքնապաշտպանութեան ու փոխադարձ աջակցութեան սկզբունքը:

Մենք ամբողջութեամբ ճանաչում և հարգում ենք քրիստոնյա տարրերի կողմից ձեռք բերված իրավունքները, որոնց հետ մեկտեղ երկար ժամանակ ապրել ենք մեր հայրերի հոգում, իրավունքներ, որոնք արդեն հաստատվել են Օսմանյան կայսրութեան օրենքներով: Այդ տարրերին պատկանող անձանց ունեցվածքը, պատիվն ու կյանքը ներկայումս էլ կատարյալ անվտանգութեան մեջ են համաձայն մեր կրօնի հիմունքների և մեր ավանդույթների: Համաժողովը, իր սեփական



համոզմունքով, մի անգամ ևս հաստատում է այդ սկզբունքի գործունեությունը:

Միաժամանակ, մենք երբեք թույլ չենք տա, որ հույներն ու հայերը մեր նկատմամբ գրավեն այնպիսի մի դիրք, որը կարող է սպառնալ մեր գոյությունը, մահմեդականների իրավունքներին և օսմանյան սուլթանությունը՝ ուղղակի կամ անուղղակի, քողարկված թե բացահայտ, կամ որևէ այլ հնարավոր ձևով:

Ուստի մեր ազգը իրեն իրավասու և կարող է համարում պաշտպանելիլու իր տրամադրություն տակ գտնվելիք հնարավոր բոլոր միջոցներով՝ լինեն դրանք նյութական թե բարոյական, նպատակ ունենալով ձեռք առնել բոլոր միջոցները կանխելու համար այն փորձերը, որ հույներն ու հայերը կարող են ձեռնարկել մեր հայրենիքին վնասելու նպատակով: Նման պաշտպանում, մենք Անտանտի մեծ տերությունների ամեն մի միջամտություն կդիտենք, որպես օժանդակություն այն պլանների ու ծրագրերի իրականացմանը, որոնք մենք մերժում ենք: Հետևաբար, մենք ոչ մի պահ չենք տատանվի՝ պաշտպանելու համար մեր իրավունքները և այն ամենը, ինչ մեզ համար թանկ է, այդ նպատակով օգտագործելով մեր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները: Այս կապակցությամբ մենք ստիպված ենք պաշտպանական քայլերի դիմելու՝ համապատասխան միջոցներ նախապատրաստելով այդ պաշտպանություն համար:

Հ ո դ վ ա ծ 3.— Օսմանյան պետության գոյությանն իսկ սպառնացող վտանգի առկայության պայմաններում, մեր հիմնական նպատակն է պահպանել սուլթանությունն ու խալիֆայթը, և այն դեպքում, երբ հնարավոր չի լինի համագործակցել Օսմանյան կայսրության մյուս վիլայիթների հետ, Արևելյան Փոքր Ասիայի վիլայիթները առաջ են քաշում ինքնուրույն պաշտպանության ու դիմադրության սկզբունքը: Մեր ցանկությունն է բոլոր պարագաներում ապահովել Արևելյան Փոքր Ասիայի վիլայիթների և Օսմանյան կայսրության մյուս վիլայիթների համագործակցությունը՝ իրականացնելու

համար այն սրբազան նպատակը, որ մենք մեր առջև դրել ենք:

Սակայն, եթե ստեղծվի մի այնպիսի իրադրություն, որը բացառի այս վերջին վիլայեթների գործուն մասնակցությունը հնարավորությունը այդ գործին, մեր հիմնական խնդիրը միշտ կմնա նույնը՝ Արևելյան Անատոլիայի վիլայեթները, որպես մի անբախտելի ամբողջություն, կշարունակեն իրենց համատեղ գործունեությունը՝ մեր սրբազան խնդիրները իրագործելու համար:

Մենք ներում ենք օտարերկրացիների կողմից գրավված շրջաններում բնակվող մեր հավատակիցներին այն բանի համար, որ զրկված լինելով իրենց կարողությունն ու իրենց ձայնը ազատ տնօրինելու իրավունքից, նրանք չեն կարողանա մասնակցել մեր պայքարին այնքան ժամանակ, մինչև վերջ շտրվի ստրկական այն պայմաններին, որոնցում նրանք գտնվում են:

Հ ո ղ Վ ա ծ 4.— Այն դեպքում, եթե Օսմանյան կայսերական կառավարությունը օտարերկրյա տերությունների հրամանով պարտադրված լինի լքել այդ շրջանները և շհետաքրքրվել նրանց ճակատագրով, մենք ինքներս կորոշենք, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկել և քաղաքական ու ռազմական ինչպիսի դիրք է նպատակահարմար գրավել:

Եթե Օսմանյան կայսրությունը իրեն պարտադրված զգալ (Աստված շանի) լքել այդ շրջանները և շհետաքրքրվել նրանց ճակատագրով, մի վիճակ, որը կարող է ստեղծվել այն պահին, երբ մեր ողջ հայրենիքը կանգնի անկման վտանգի առջև, և եթե ստույգ կերպով հաստատվի, որ կայսերական կառավարությունը, տեղի տալով Անտանտի տերությունների կողմից գործադրված քաղաքական ճնշմանը, ստիպված է եղել կնքել պայմանագրեր, փոխանակել նոտաներ ու հուշագրեր, կամ նման այլ կարգի դիվանագիտական փաստաթղթեր, որոնք կարող են հանգեցնել կապերի խզմանը Անատոլիայի արևելյան վիլայեթների ու Օսմանյան կայսերական կառավարության միջև, ինչպես սուլթանի ու խալիֆի կայսերական գահի հետ, այդ դեպքում արևելյան վիլայեթներում, որոնց սահ-



մանները մենք արդեն որոշել ենք, անմիջապես կատեղծվի ու կհռչակվի ժամանակավոր կառավարութուն: Այդ կառավարութունը նպատակ կունենա ապահովել կապերի պահպանումը սրբազան խալիֆաթի ու Օսմանյան սուլթանի գահի հետ, և խանգարել հուլյներին ու հայերին իրենց ոտքի առկ տրորելու մեր հայրերի հողը:

Առժամանակ գործերը կշարունակվեն տարվել համաձայն Օսմանյան կայսրութւյան մեջ գոյութւյուն ունեցող և գործող օրենքների: Զինվորական ու քաղաքացիական բոլոր զեկավարները, ինչպես և պետական պաշտոնյաները կղեկավարվեն և հաշվի կնստեն այդ ժամանակավոր կարգերի հետ:

Ժամանակավոր վարչութւյունը պատշաճ ձևով և պաշտոնական եղանակով ինչ որ անհրաժեշտ է կանի, այդ նոր իրավիճակի հետ օտարերկրյա բոլոր տերութւյուններին ծանոթացնելու համար:

Ժամանակավոր վարչութւյունը կընտրվի մեր ազգային կազմակերպութւյան ծնունդը հանդիսացող համաժողովի կողմից: Եթե վերը նախատեսված իրավիճակը ստեղծվի այնպիսի մի պահին, երբ համաժողովը չի հավաքվել, ներկայացուցչական հանձնաժողովը լիազորված կլինի ընտրելու ժամանակավոր կառավարութւյուն և այդ մասին տեղյակ կպահի բոլոր վիլայեթներին՝ անհապաղ ձեռնարկելով համաժողով հրավիրելու գործին:

Էրզրումի համաժողովի 5-րդ հոդվածով ներկայացուցչական հանձնաժողովը պարտավորվում էր անհապաղ մշակել տեղական ազգաբնակչութւյան պաշտպանութւյան ծրագիր և անհրաժեշտութւյան դեպքում նրանց փոխադրել ապահով վայրեր:

6-րդ հոդվածում վերստին շեշտվում էր, որ արևելյան յոթ վիլայեթները մի անբակտելի ամբողջութւյուն են կազմում և որ այդ բանը պետք է հայտնի դառնա համաշխարհային հասարակական կարծիքին: Միաժամանակ նշվում էր, որ համաժողովի սկզբունքներն ու որոշումները արտացոլում են ազգի ձայնը և դրանց դեմ ուղղված ամեն մի ելույթ, պրոպագանդա կամ նման այլ երևույթներ կդիտվեն որպես դավաճանութւյուն և հանցագործութւյուն հայրենիքի ու ազգի հանդեպ:

7-րդ հոդվածով համաժողովի կողմից ընդունված բոլոր որոշումների իրականացումը դրվում էր «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» վրա:

8-րդ հոդվածը ներկայացուցչական հանձնաժողովին ու ընկերության տեղական կոմիտեներին իրավունք էր վերապահում կոոպտացիայի կարգով իրենց կազմում ընդգրկելու մասնադեմոստրի և այն անձանց, որոնք կարող են պետքական լինել այս կամ այն հարցի լուծման համար:

9-րդ հոդվածում նշվում էր, որ տեղական կոմիտեները կարող են ազատ գործել՝ իրենց իրավասության և ծրագրի սահմաններում, իսկ 10-րդ հոդվածը նվիրված էր ընկերության եկամուտների աղբյուրներին, մատնանշվում էր, որ դրանք ստացվելու են ազգարնակչության կամավոր նվիրատվություններից ու մուծումներից:

Վերջապես, 11-րդ հոդվածում ասվում էր այն մասին, որ ընկերության նպատակներն ու խնդիրները հնարավոր կլինի իրագործել այն դեպքում, եթե հրավիրվի ազգային ժողով, որն օժտված լինի գործողությունների բացարձակ ազատությամբ և գործի կատարյալ անվտանգության պայմաններում<sup>5</sup>:

Բացի բերված որոշումներից, էրզրումի համաժողովը 1919 թ. օգոստոսի 7-ին ընդունեց Մանիֆեստ, որտեղ ասվում էր.

«Զինադադարի կնքումից անմիջապես հետո մեր ազգը վերապրեց հետևյալ դեպքերը.

Աստիճանաբար աճող ու զարգացող մի տենդենց, որը հանդում է պայմանագրերի ու համաձայնագրերի բոլոր պայմանները խախտելուն.

Կայսրության կարևոր տերիտորիաների, ինչպես օրինակ, Իզմիրի, Ադալիայի, Ադանայի և շրջակայքի գրավում.

Նույնների կողմից Այդընում գործադրված անթիվ ծայրահեղություններ ու բռնություններ.

Հայերի կողմից Կովկասում ձեռնարկված ջարդեր. մահ-մեղապաններին բնաջնջելու նրանց քաղաքականության բա-

<sup>5</sup> Maurice Pernot, op. cit., pp. 282—295.



ցահայտում, ըստ որում հայերը պատրաստ են ներխուժելու մեր տերիտորիան.

Սև ծովի ափին երևակայական «Պոնտոս—էգզեն» համապետութիւն ստեղծելու փորձեր...»<sup>7</sup>:

Այնուհետև, Մանիֆեստում թվարկվում էին էրզրումի համաժողովի կողմից ընդունված որոշումները<sup>8</sup>:

Քննենք, ըստ էութան, էրզրումի համաժողովի ընդունած որոշումներն ու Մանիֆեստը: Դրանց բովանդակութիւնը վկայում էր ամենից առաջ այն մասին, որ Թուրքիայի անկախութեան սկզբունքները հռչակելով, այդ համաժողովը հենց ըսկզբից բացառում, մերժում էր Օսմանյան կայսրութեան ոչ-թուրք ժողովուրդների անկախութեան ու ազգային ինքնորոշման իրավունքը, օսմանյան դարավոր լծից ազատագրվելու նրանց արդարացի ու բուն ձգտումը: Դեռ ավելին: Համաժողովը, որը հանդես էր գալիս ամբողջ թուրք ազգի անունից, փաստորեն որդեգրում էր քաղաքական սնանկութիւն ապրած նախկին կառավարողների՝ իթթիհատականների տիրապետող գիծը ազգային հարցում: Այսպես, 1-ին հոգվածում տեղ գտած այն թեզը, որ իբր արևելյան յոթ վիլայեթներում բնակվող մահմեդական տարրերը «իրենց դիտում են, որպես միևնույն ծնողներից սերած եղբայրական խմբեր», դա, ըստ էութան, Օսմանյան կայսրութիւնում մահմեդական այլ ժողովուրդների և, մասնավորապես, քուրդ ժողովրդի գոյութեան իթթիհատական բացասման կրկնութիւնն էր, իսկ 2-րդ հոգվածի այն պնդումը, թե «քրիստոնյա տարրերին պատկանող անձանց ունեցվածքը, պատիվն ու կյանքը ներկայումս էլ կատարյալ անվտանգութեան մեջ են համաձայն մահմեդական կրոնի ու ավանդույթների», վկայում էր, որ թուրքական ազգային շարժման ղեկավարները պաշտպանում ու արդարացնում են կայսրութեան քրիստոնյա ժողովուրդների հալածանքների ու հետապնդման, բռնութիւնների ու ջարդերի սուլթանական ար-

7 Նույն տեղում, էջ 296—297:

8 Նույն տեղում, էջ 297—300:

յունոտ քաղաքականութիւնը: Նույն 2-րդ հոդովածով հռչակվող պայքարը «հուլյնների ու հայերի կողմից արևելյան վիլայեթներին սպառնացող վտանգի դեմ», նշանակում էր, որ քեմալականները իրենց առաջին իսկ քայլերով որոշակիորեն հասկացնել են տալիս, որ իրենք ամենևին մտադիր չեն հրաժարվել Արևմտյան Հայաստանում դարերով կիրառվող օսմանյան հայաչինջ քաղաքականութիւնից, այլ, ընդհակառակը, լցված են վճռականութեամբ՝ հավերժացնելու թուրքական լուծը հայ ժողովրդի բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, որտեղ հայերը, օսմանյան թուրքիայի կողմից նվաճվելուց հետո, XVII դարում կազմում էին ազգաբնակչության 98 տոկոսը<sup>9</sup>:

Այնուհետև, 3-րդ հոդովածով թուրքական ազգային շարժման ղեկավարները պարզորոշ կերպով ընդունում էին, որ իրենց նպատակն է պահպանել թուրքիայի ամբողջականութիւնը, այսինքն պահպանել երկու տասնյակ ժողովուրդների համար բանտ հանդիսացող, փտած ու նեխած Օսմանյան կայսրութիւնը:

Ինչ վերաբերում է էրզրումի համաժողովի հռչակած Մանիֆեստին, այն ևս նպատակ էր հետապնդում անձեռնմխելի թողնել արևելյան վիլայեթները, այսինքն թուրքիայի կազմում պահպանել Արևմտյան Հայաստանը՝ Մեծ եղեռնը վերապրած հայ ժողովրդին զրկելով համախմբվելու, վերամիավորվելու ու իր վաղեմի պետականութիւնը վերականգնելու հնարավորութիւնից: Մանիֆեստում առկա «նոր» կետը՝ «մահմեդականներին բնաջնջելու հայկական քաղաքականութեան» մասին, կոչված էր ծառայելու այդ նույն նպատակին՝ շփոթութեան մեջ զցելով համաշխարհային հասարակական կարծիքը:

էրզրումի համաժողովը, ինչպես տեսանք, ընթացավ հուլյնների ու հայերի դեմ պայքարելու նշանաբանով:

«Թուրքական ազգային շարժումը առաջ եկավ Մեծ Հայաստանի և Պոնտոսի հունական թագավորութիւն ստեղծելու:

---

<sup>9</sup> Տե՛ս Վահան Տերյանի զեկուցագիրը Արևմտյան Հայաստանի մասին. «Жизнь национальностей», М., 1920, № 18. 15 июня.



դեմ», — գրում էր ֆրանսիական թուրքասեր հրապարակախոսուհի Բերտա Ժորժ-Գոլին<sup>10</sup>։

Ամփոփելով համաժողովի աշխատանքները, նրա նախագահն ու կազմակերպիչը՝ Մուստաֆա Քեմալը ընդգծում էր հենց այդ կողմը. «Մեր երկիրը գտնվում է երկու վտանգի միջև՝ հունական վտանգը և հայկական վտանգը»<sup>11</sup>, կրկնելով այն, ինչ ինքը հիմնականն էր համարում էրզրումի համաժողովի նախօրյակին սուլթանին հասցեագրված հեռագրում։ «Ազգային շարժումը, — գրում էր Քեմալը, — ծայր առավ նվիրական հայրենիքն ու ազգը մասնատելու վտանգից փրկելու և հույների ու հայերի մտադրություններին շոճհարերելու նպատակով...»<sup>12</sup>։ «Քեմալը, — գրում է Պ. դյու Վեոն, — թուրքերին կոչում էր ազգային սրբազան պատերազմի՝ հայրենիքը հույներից ու հայերից փրկելու համար»<sup>13</sup>։

Էրզրումի համաժողովի որոշումներն առավել ընդգծված լինույթ ստացան և զարգացվեցին 1919 թ. սեպտեմբերի 4—11-ը կայացած Սըվասի համաժողովում, որը հրավիրվել էր «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության» ընկերության կողմից։ Ի տարբերություն էրզրումի համաժողովի, Սըվասի համաժողովը հանդես էր գալիս ոչ միայն արևելյան վիլայեթների, այլև ընդհանրապես Օսմանյան կայսրության ողջ տերիտորիայի անձեռնմխելիության ու միասնականության նշանաբանով։ Իսկ հիմնականում Սըվասի համաժողովի ընդունած որոշումները կրկնում էին էրզրումի համաժողովի բոլոր գլխավոր սկզբունքները։ Այսպես Սըվասի համաժողովի կողմից հաստատված «հիմնական դրույթների» առաջին շորս կետերը գրեթե առանց փոփոխության կրկնում էին էրզրումի համաժողովի բանաձևի առաջին շորս հոդվածները այն տարբերությամբ, սակայն, որ հակահունական ու

<sup>10</sup> Berthe George-Gaultis, Le nationalisme turc, p. 94.

<sup>11</sup> Edgar Pech, op. cit., p. 80.

<sup>12</sup> Ali Fuat Cebesoy, Millî mücadele hatıraları, s. 97.

<sup>13</sup> Paul du Vêou, op. cit., p. 105.

հակահայկական տրամադրութիւնները արտահայտված էին այստեղ առավել որոշակի և վճռական ձևով:

«Մենք որոշել ենք հնարավոր բոլոր ուժերով մինչև արյան վերջին կաթիլը համատեղ պաշտպանել մեր հայրենիքը ամենկարգի ներխուժումներից և, հատկապես, նրա տերիտորիայի վրա հունական կամ հայկական պետութիւն ստեղծելու ձրգտումներից»,— ազդարարվում էր Սըվասի համաժողովի բանաձևի 2-րդ կետում<sup>14</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

«Աստված մի արասցե, որ օտարերկրյա պետութիւնների ճնշման ներքո մենք ստիպված լինենք զիջելու մեր հայրենիքի գեթ մի թիւրը, որովհետև դա կնշանակեր նրա բաժանման սկիզբը: Իսկ եթե քաղաքական ինչ-որ նկատառումներով կամ միջազգային համաձայնագրերի հիման վրա մեր տերիտորիայի մի մասը խլվի հօգուտ դաշնակիցների՝ մենք այնուհետև կշարունակենք մեր գործունեութիւնը և անհապաղ կստեղծենք նոր կառավարութիւն՝ երկիրը հունական և հայկական կրունկից պաշտպանելու համար»,— հաստատում էր նույն բանաձևի 4-րդ կետը<sup>15</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Սըվասի համաժողովը, ինչպես էրզրումինը, ընդունեց նաև Մանիֆեստ, որը նույնպես սկզբունքորեն կրկնում էր էրզրումի համաժողովի Մանիֆեստը<sup>16</sup>:

Վերջապես, Սըվասի համաժողովը ընդունել է մի փաստաթուղթ, որը խիստ կարևոր է քեմալական շարժման սկզբնավորման դրդապատճառները ճիշտ հասկանալու համար: Դա համաժողովի հանձնախմբի անունից Մուստաֆա Քեմալի՝ 1919 թ. սեպտեմբերի 10-ի թվակիր հեռագիրն էր, ուղղված սուլթանին:

«Մենք խիստ հուզված ենք,— ասվում էր հիշյալ հեռագրում,— և մեր սրտերը, տակավին արյունաքամ երեկվա վերքերից, և ներթափանցված կրոնական ու շղգային շերմ զգացումներով, վերստին խորապես խոցված են հետևյալ դեպքերից.

<sup>14</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 1, стр. 414.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 415:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 418—420:



1. Մեր Թանկագին վիլայեթների տերիտորիայի, որի ազգաբնակչության 75—90 տոկոսը թուրքական է, առանց փոխհատուցման, ձրի հանձնումը նոր պետություններին, որոնք դեռ երեկ մեր տիրապետության տակ էին գտնվում:

2. Այն սարսափելի հալածանքները և դժբախտությունները, որոնց ենթարկվում են մեր եղբայրները և կրոնակիցները, որոնց պատերազմական վերքերը տակավին չեն ապաքինվել»<sup>17</sup>:

Այնուհետև հեռագրում նշվում էր, որ երկրի ոչ-մահմեդական հայրենակիցներին կապահովվեն հավասար իրավունքներ՝ համաձայն Ղուրանի պահանջների, սակայն անհնար է «մեր վիլայեթների հողերի գեթ մեկ քիզը հանձնել Հայաստանին կամ ուրե է այլ պետության»<sup>18</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Սըվասի համաժողովի կողմից հաստատված այս փաստաթուղթը ևս, ինչպես տեսնում ենք, բացառում էր Թուրքիայում բնակվող այլազգիների ինքնբերական իրավունքը, թեև նույն համաժողովի ընդունած Մանիֆեստում շեշտվում էր, որ վրա է հասել «պատմական այն ժամը, երբ ժողովուրդներն իրենք են որոշում իրենց բախտը»<sup>19</sup>: Ինչ վերաբերում է վերը նշված այն պնդմանը, թե իբր 75-ից մինչև 90 տոկոս բուրժուական ազգաբնակչություն ունեցող մարդերը խլվում էին Թուրքիայից՝ հօգուտ օսմանյան նախկին հպատակ ժողովուրդների, ապա դա հեռու էր իրականությունից. ոչ մեկը այն վիլայեթներից, որոնք պետք է անջատվեին Թուրքիայից, չունեին թուրքական մեծամասնություն, ընդհակառակը, թուրքերի ընդհանուր թիվն այնտեղ, նախքան հայերի զանգվածային տեղահանությունն ու ջարդերը, զիջում էր այս վերջինների թվին: Նույնիսկ մահմեդական ազգաբնակչությունն ամբողջությամբ վերցրած, որը ներկայացվում էր, որպես զուտ թուրքական, չի կազմել բնակչության 75—90 տոկոսը: Հայտնի է, որ նախքան I համաշխարհային պատերազմը, Կ. Պոլսի հայ

<sup>17</sup> Maurice Pernot, op. cit., p. 313.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 314:

<sup>19</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 1, стр. 419.

նակների կողմից, պետք է որոշել տեղական ազգաբնակչության ազատ արտահայտված կամքի համաձայն: Մնացած տերիտորիայի բոլոր մասերը, լինեն դրանք զինադադարով դժված սահմանի այս թի այն կողմը, որոնք բնակեցված են օսմանյան մահմեդական մեծամասնությամբ, որը կապված է կրոնական ու ցեղային կապերով, ոգեշնչված է փոխադարձ հարգանքի ու զոհաբերությունների ձգտումներով և լցված է իր ազգային ու սոցիալական իրավունքները, ինչպես և տեղական պայմանները հարգելու վճռականությամբ, կազմում են մի ամբողջություն, որը ոչ փաստական, ոչ էլ իրավական տեսակետից երբեք բաժանման ենթակա լինել չի կարող:

2. Ինչ վերաբերում է երեք լիվաներին (Բաթումի, Կարսի և Արդահանի նահանգներին — Ռ. Ս.), որոնք իրենց ազատագրումից հետո հանրաքվեի միջոցով արդեն արտահայտվել են մայր հայրենիքին միանալու օգտին, անհրաժեշտության դեպքում կարելի է այդ վայրերում նոր ազատ հանրաքվե անցկացնել:

3. Արևմտյան Թրակիայի իրավական վիճակի որոշումը, որի կարգավորումը կապվում էր Թուրքիայի հետ հաշտության կնքման հետ, պետք է հիմնվի բնակչության ազատ արտահայտված ցանկության վրա:

4. Կոստանդնուպոլսի՝ խալիֆի նստավայրի, սուլթանի մայրաքաղաքի և Օսմանյան կայսրության կենտրոնի, ինչպես նաև Մարմարա ծովի, անվտանգությունը պետք է ապահովվի ամեն տեսակի ոտնձգություններից: Այս սկզբունքի պահպանման դեպքում, հնարավոր կլինի մեր և շահագրգռված մյուս տերությունների միջև ընդունել որոշում նեղուցները՝ Բոսֆորը և Դարդանեղը միջազգային առևտրի և հաղորդակցության համար բաց անելու վերաբերյալ:

5. Փոքրամասնությունների իրավունքները՝ Անտանտի տերությունների, նրանց հակառակորդների և շահագրգռված այլ տերությունների միջև կնքված համաձայնագրերի սահմաններում կճանաչվեն և կապահովվեն՝ պայմանով, որ նույնպիսի իրավունքներ տրվեն հարևան երկրների մահմեդական ազգաբնակչությանը:



6. Մեր ազգային ու տնտեսական զարգացումը հնարավոր դարձնելու, առավել կարգավորված ու ժամանակակից վարչակարգի ստեղծումն սուպահովելու, ինչպես նաև մեր առաջադիմությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է, որ մյուս պետութայինների նման, անկախությունն ու լիարժեք ազատությունը դառնան մեր կյանքի և մեր գոյության գլխավոր հիմքերը: Ուստի մենք դեմ ենք արտահայտվում բոլոր այն որոշումներին, որոնք կաշկանդում են մեր քաղաքական, իրավական, ֆինանսական և այլ զարգացումը:

Մեր պարտքերի կարգավորման պայմանները չպետք է հակասեն վերոհիշյալ սկզբունքներին»<sup>21</sup>:

Քննենք «Ազգային ուխտի» մեջ ամփոփված քեմալական ծրագիրն ըստ էության: Իրականու՞մ ի՞նչ էին նշանակում այն «զոհաբերութայինները», որոնց մասին խոսվում է հիշյալ փաստաթղթում:

Արարների ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչումը ամենևին չէր վկայում այն մասին, որ Թուրքիայի ազգային-ազատագրական շարժման ղեկավարները հռչակել էին ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը և առաջնորդվում էին այդ սկզբունքով: «Ազգային ուխտի» առաջին կետում ուղղակի ասված է, որ ինքնորոշման հնարավորութային կտրվի բացառապես արաբական մեծամասնությամբ բնակեցված այն տեքստորիաներին, որոնք զինադադարի կնքման ժամանակ գրավված էին քննամական բանակների կողմից: Այդ թշնամական բանակները, ինչպես հայտնի է, անգլիական զորքերն էին, որոնք հիշյալ շրջանները գրավել էին՝ օգտագործելով պատերազմի տարիներին հուժկու թափ ստացած արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնատիրական լծի դեմ: Հենց այս երկու կարևորագույն իրադարձութայինները, այսինքն արաբական թերակղզում բնակվող ցեղերի ու ժողովուրդների համընդհանուր զինված ապստամբութայունը և անգլիական հաղթական զորքերի առկայութայունը

<sup>21</sup> A. Mandelstam, La Société des Nations et les Puissances devant le problème arménien. Paris, 1926, p. 126—127.

հաշվի առնելով էր, որ հեռատես ու զգաստ քաղաքագետ Մուսատաֆա Քեմալը «Ազգային ուխտի» մեջ մտցրեց արաբների ինքնորոշման կետը, ավելի ճիշտ՝ համաձայնվեց արաբական երկրների «կորստյանը», գիտակցելով, որ չկար թուրքական այն ուժը, որը կարողանար հիշյալ հողամասերը պահել թուրքիայի կազմում: Քեմալական ղեկավարութայն այս քայլը միաժամանակ պատրանք էր ստեղծում, որ այդ շարժումը սկզբունքորեն դեմ չէ ազգերի ինքնորոշման իրավունքին, այլ ընդհակառակը, ճանաչում ու հարգում է այդ իրավունքը:

Արաբական երկրների ազատագրումը օսմանյան դարավոր լծից առաջադիմական երևույթ էր: Ճիշտ է, այդ երկրները, անջատվելով թուրքիայից, ընկան իմպերիալիստական տերությունների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի մանդատային սիստեմի տակ, սակայն այդ պայմաններում էլ նրանք զարգացման որոշ հնարավորություն ստացան և ի վերջո հասան ազգային անկախության և ինքնուրույն պետականության հաստատմանը, մինչդեռ թուրքիայի կազմում մնացած ժողովուրդները, ինչպես օրինակ, 3 միլիոնանոց բուրգ ժողովուրդը զրկված է մարդկային ամենատարրական իրավունքներից, չի ճանաչվում որպես ինքնուրույն ժողովուրդ և կանգնած է բռնի ասիմիլյացիայի ու ֆիզիկական ոչնչացման իրական վտանգի սուղև:

«Ազգային ուխտի» 2-րդ կետը երեք սանջակների վերաբերյալ ուղղված էր հայ և վրաց ժողովուրդների պատմական անառարկելի իրավունքների դեմ: Այս կետի առկայությունը «անկախության պայքարի» ծրագրում վկայում էր քեմալական շարժման հետադիմական ազգային դիրքորոշման մասին, այն մասին, որ թուրքիայի նոր ղեկավարները փորձում էին հենվել Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերում քաղաքական հանցագործ էնվեր փաշայի կազմակերպած «հանրաքվեի» վրա, որի իսկական իմաստն ու անցկացման մեթոդները մերկացվել էին Սովետական Ռուսաստանի կառավարության 1918 թ. սեպտեմբերի 20-ի նոտայում<sup>22</sup>:

<sup>22</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», т. I, էջ 490—492:



«Ազգային ուխտի» 5-րդ կետը ևս վկայում էր, որ քեմալական դեկավարները ազգային հարցում մտադիր են հետևել իրենց նախորդների վարած ազգային քաղաքականությանը՝ Թուրքիայի կազմում մնացած փոքրամասնությունների իրավունքների ճանաչումն ու ապահովումը ենթարկելով հարևան երկրների մահմեդական ազգաբնակչության իրավունքների ճանաչմանը:

«Ազգային ուխտի» հետադիմական այս կողմերը իրենց կնիքը դրեցին քեմալականների կողմից գլխավորվող շարժման ամբողջ ընթացքի վրա: Եվ դա միանգամայն օրինաչափ էր, եթե նկատի ունենանք, որ էրզրումի ու Սըվասի համաժողովների և «Ազգային ուխտը» հռչակած Օսմանյան պառլամենտի պատգամավորների ճնշող մասը նախկին իթթիհատական գործիչներ էին, բարձրաստիճան պաշտոնյաներ, խոշոր հողատեր-ավատատերեր, մահմեդական բարձր հոգևորականության ներկայացուցիչներ՝ և այլն, որոնք թեև երզում էին սովել շլեիբակենդանացնել «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը<sup>23</sup>, սակայն իրենց գործելակերպով մի շարք հանգուցային հարցերում՝ բանվորական, ազգային և այլն, հավատարիմ մնացին իթթիհատականների քաղաքական գծին և նոր ձևերով շարունակեցին նրանց քաղաքականությունը: «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության մնացորդները խմբովին գնում էին միանալու Քեմալին, որը խելացիորեն օգտագործեց նրանց կազմակերպությունները»<sup>24</sup>, — գրում էր վերը հիշատակված Բերտա Ժորժ-Գոլին «Թուրքական նացիոնալիզմը» վերնագրով իր գրքում:

Այս վերջին՝ ազգային հարցում քեմալական և երիտթուրքական քաղաքականության ներքին կապն ու նույնությունը իր դրսևորումը գտավ Կիլիկիայում 1919—1921 թթ. Անկարայի կառավարող շրջանների վարած քաղաքականության մեջ:

<sup>23</sup> Lord Kinross, op. cit., p. 187.

<sup>24</sup> Berthe Georges-Gaulis, Le nationalisme turc, p. 62.

**ԹՈՒՐԲ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1919—1921 ԹԹ.**

Թուրքիայի ազգային պատերազմի տարիներին Անկարայի կառավարության վարած արտաքին քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում նրա փոխհարաբերությունները Անտանտի երկրորդ խոշոր տերության՝ Ֆրանսիայի հետ: Վերջինիս քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ խիստ տարբերվում էր Անտանտը ոգեշնչող տերության՝ Անգլիայի քաղաքականությունից: Այն ժամանակ, երբ անգլիական իմպերիալիզմը Մուղղոսի պայմանագրով Օսմանյան կայսրությունը ծնկի բերելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ նրա բաժանման գործին, ֆրանսիական իմպերիալիզմը, ընդհակառակը, հանդես էր գալիս Թուրքիայի մասնատման և պետական ինքնուրույնության վերացման դեմ: Դրա պատճառը ֆրանսիական մոնոպոլիստների ու զրամատերերի կենսական շահագրգռվածությունն էր թուրքական գործերում: Ֆրանսիական կապիտալը գերիշխող դիրք էր զբաղում թուրքական տնտեսության մեջ: Օտոմանյան պարտքի 60,31 տոկոսը (2.454.417.377 ֆրանկ) բաժին էր ընկնում Ֆրանսիային, մինչդեռ Անգլիային՝ միայն 14,19 տոկոսը (577.499.281 ֆրանկ) և Գերմանիային՝ 21,31 տոկոսը (867.583.506 ֆրանկ)<sup>1</sup>: Օտոմանյան պարտքի վարչությունում, որը ներկա-

<sup>1</sup> „L'Asie française“, № 175, février-juillet 1919, p. 180; Maurice Pernot, op. cit., p. 239.



յացնում էր վեց տերութիւններ՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի ու Հոլանդիայի շահերը, ֆրանսիական ներկայացուցիչները գրավում էին գերիշխող դիրք<sup>2</sup>: Հիշյալ վարչութիւնը Կայսերական Օտոմանյան բանկի հետ համատեղ ստեղծել էր հզոր մի ընկերութիւն՝ Օսմանյան կայսրութեան ծխախոտի ձեռնարկութիւնները վարչութիւնը (Régie des tabacs de l'Empire Ottoman), որի կապիտալի կեսը՝ 20 մլն ֆրանկ, գտնվում էր ֆրանսիական դրամատերերի ձեռքում: Միախոտի մենաշնորհը փաստորեն պատկանում էր ֆրանսիական կապիտալիստներին: Պատերազմին նախորդող տասնամյակում Ֆրանսիան, գործակցելով Գերմանիայի հետ, ձեռք էր բերել մի շարք երկաթուղիներ կառուցելու կոնցեսիաներ. Դամասկոս—Համա (683 կմ), Յաֆա—Նրուսադեմ (87 կմ), Մուզանյա—Բրուսա (41 կմ), Իզմիր—Կասաբա (701 կմ), Սալոնիկ—Կոստանդնուպոլիս (510 կմ) և դեպի Սև ծով ձգվող երկաթգծի մի հատվածը (35 կմ)՝ 2.057 կմ ընդհանուր երկարությամբ: Հիշյալ երկաթուղիների շինարարութեան ու շահագործման մեջ ֆրանսիական կապիտալիստները ներդրել էին 550 մլն ֆրանկ<sup>3</sup>: Ֆրանսիան զգալի առավելութիւն ունեւր իր գլխավոր մրցակիցների՝ Անգլիայի ու Գերմանիայի նկատմամբ մասնավոր ձեռնարկութիւններում ներդրած իր կապիտալներով, որոնք կազմում էին 830.856.000 ֆրանկ կամ 50,58 տոկոսը: Անգլիայինը և Գերմանիայինը համապատասխանորեն կազմում էին 235.818.675 ֆրանկ (14,36 տոկոս) և 575.903.000 (35,06 տոկոս)<sup>4</sup>: Օտարերկրյա մասնավոր ընկերութիւնների ներդրումները թուրքական ձեռնարկութիւնների մեջ պատերազմի նախօրյակին բաշխվում էին հետևյալ կերպ.

<sup>2</sup> Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Բերտելոյի տվյալներով օտոմանյան պարտքի 80 տոկոսն էր գտնվում ֆրանսիական ավանդատուների ձեռքում: Տե՛ս *Ллойд Джордж*, *Правда о мирных договорах*, том второй, М., 1957, էջ 402:

<sup>3</sup> Տե՛ս «Французские интересы в Турции», «Новый Восток», 1923, № 3, էջ 475—476:

<sup>4</sup> «L'Asie française», № 175, p. 180.

	Ֆրանսիա		Անգլիա		Քեթանիա	
	Ֆրանկ	%	Ֆրանկ	%	Ֆրանկ	%
Բանկեր	85.000.000	37,77	75.000.000	33,33	65.000.000	28,9
Երկաթուղիներ	512.784.000	46,83	114.693.675	10,49	466.078.000	42,61
Նավահանգիստներ և նավամատուցներ	55.375.000	67,97	10.000.000	12,27	16.100.000	19,76
Ջրային տնտեսություններ	33.000.000	88,65	—	—	4.225.000	11,35
Հանքեր	42.297.000	100	—	—	—	—
Այլ ձեռնարկություններ	102.400.000	62,82	36.125.000	22,15	24.500.000	13,03
Ընդամենը . . . . .	830.856.000	50,58	235.818.675	14,36	575.703.000	35,06 <sup>5</sup>



Ինչպես երևում է բերված աղյուսակից, Ֆրանսիան բոլոր բնագավառներում էլ գերազանցում էր Անգլիային ու Գերմանիային, ըստ որում երկաթուղիների ու նավահանգիստների կառուցման մեջ ներդրած իր կապիտալներով նա բացահայտ գերակշռություն ուներ Անգլիայի նկատմամբ, իսկ հանքարդյունաբերությունը ամբողջովին կենտրոնացած էր նրա ձեռքում: Եթե նկատի ունենանք, որ կայդերական Գերմանիան համաշխարհային պատերազմում պարտություն կրելով, զրկվել էր իր բոլոր գաղութներից, ազդեցության ոլորտներից ու արտոնություններից, առավել հասկանալի կդառնա այն հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը, որ հանդես էին բերում ֆրանսիական կապիտալի ներկայացուցիչները թուրքական գործերում: Իրավացի էր Մուխթար փաշան (թուրքական նախկին դեսպանը Բեռլինում), գրելով, որ «Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր նրա դրամատիկների բուռն ցանկություններով»<sup>6</sup>:

Ֆրանսիական կապիտալիստների տնտեսական շահերի տեսակետից առանձին հետաքրքրություն էր ներկայացնում Կիլիկիան: Այս հարուստ երկրամասը մեծ հեռանկարներ էր խոստանում ֆրանսիական արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման համար: Արտակարգ բերրությամբ աչքի ընկնող Կիլիկիայի հողը խիստ բարենպաստ էր գյուղատնտեսական բարձր կուլտուրաների աճեցման և, հատկապես, բամբակագործության զարգացման համար: Համաշխարհային պատերազմից առաջ մշակվող հողատարածությունները Կիլիկիայում կազմում էին 2.600.000 հեկտար<sup>7</sup>: Բամբակի մշակման և արտահանման շահավետության վրա առաջինը ուշադրություն էին դարձրել գերմանական ձեռնարկատերերը՝ 1903 թ. հիմնելով Գերմանա-լեանտական բամբակի ընկերությունը, որը կարճ ժամանակում իր ձեռքում էր կենտրոնացրել բամբակի ամբողջ արտահանությունը և հիմնել բամբա-

<sup>6</sup> Տե՛ս Ю. А. Боев, Ближний Восток во внешней политике Франции (1898—1914), Киев, 1964, էջ 50—51:

<sup>7</sup> *Testis*, op. cit., p. 81.

Այսպիսի մի քանի խոշոր գործարաններ<sup>8</sup>: Պատերազմից առաջ Ֆրանսիային շահողվելից կայուն դիրքեր գրավել այս բնագավառում և ընդհանրապես Կիլիկիայի տնտեսության մեջ: Այժմ, Գերմանիայի պարտութամբ, այդ վտանգավոր մրցակիցը դուրս էր գալիս հաշվից և իրական հնարավորություն էր բացառվում Ֆրանսիայի հաստատման համար: Կիլիկիայի տնտեսության ճանաչված մասնագետ ֆրանսիացի Աշարի հաշվումներով, միայն Կիլիկիայի բամբակը բավական էր ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը անհրաժեշտ հումքով ապահովելու համար: Նույն հեղինակի հեռանկարային ծրագրերով, հացահատիկային կուլտուրաների արտադրանքը Կիլիկիայում 150 հազար տոննայից (1914 թ.) կարելի էր հասցընել 1.800.000 տոննայի<sup>9</sup>: Ֆրանսիական մի այլ տնտեսագետ՝ Ժորժ Դեբոնը պետական գործիչների ու գործարար շրջանների ուշադրությունն էր հրավիրում Կիլիկիայի տնտեսական մեծ հեռանկարների վրա:

«Կիլիկիայում ջերմաշափը ցույց է տալիս ձմռանը 13 աստիճան, գարնանը՝ 21, ամռանը՝ 23 և աշնանը՝ 20 աստիճան, ինչպես Կորսիկայում:

Նվ մենք չպետք է զարմանանք, տեսնելով ամենուր ամենաօգտակար կուլտուրաների մշակումը՝ հացահատիկ, բամբակ, ծխախոտ, ձիթենի, անուշահոտ բույսեր, բուժիչ բույսերի տեսակներ, քունջութ, վալոնեա և այլն և այլն»<sup>10</sup>:

Ֆրանսիայի շահերը Թուրքիայում և, մասնավորապես, Կիլիկիայում, չէին սահմանափակվում, սակայն, սոսկ տնտեսական ու դրամական ոլորտներով, այլ ընդգրկում էին նաև քաղաքական ու մշակութային ազդեցության ոլորտները: Ֆրանսիան եվրոպական առաջին տերությունն էր, որը տա-

<sup>8</sup> Տե՛ս «Раздел Азиатской Турции», էջ 20:

<sup>9</sup> *Testis*, op. cit., p. 81.

<sup>10</sup> *Georges Désbons*, L'Avenir économique de la France dans le bassin méditerranéen oriental. „Le monde industriel, commercial et agricole“, série no. 1, 25 février 1920, p. 7. Կիլիկիայի տնտեսական նշանակության մասին տե՛ս նաև *P. Redan*, op. cit., p. 114—128.



կալիւն 1535 թ. Բ. Դոան հետ կնքեց այն պայմանագրերը, որոնք հիմք դրեցին կապիտուլյացիաների ռեժիմին: Սկսած այդ ժամանակներից, Ֆրանսիան հանդես գալով որպէս Արևելքի բոլոր կաթոլիկների «խնամակալ ու պաշտպան», հետզհետե իր ազդեցութիւնն էր տարածում Օսմանյան կայսրութիւնում, հատկապէս գրականութեան, գիտութեան ու մշակութիւնագալառներում: Ֆրանսերենը դարձել էր երկրորդ լեզուն մտավորականութեան համար: Ֆրանսիան ուսումնական հաստատութիւնների լայն ցանց էր ստեղծել Թուրքիայում: 1914 թ. վիճակագրական տվյալներով, Թուրքիայում ֆրանսիական դպրոցների ընդհանուր թիւը հասնում էր 500-ի, որոնցում սովորում էր 59.414 աշակերտ<sup>11</sup>:

Զգալի թիւ էին կազմում ֆրանսիական հաստատութիւնները Կիլիկիայում: Թեև համաշխարհային պատերազմի տարիներին փակված ֆրանսիական ոչ բոլոր դպրոցներն էին բացվել պատերազմից հետո, այնուհանդերձ, 1920 թ. մայիսին այստեղ գործում էին ֆրանսիական իշխանութիւնների պաշտոնական հովանավորութեան տակ գտնվող 90 դպրոց և 106 մասնավոր դպրոցներ<sup>12</sup>:

Ֆրանսիան իր ազդեցութիւնն էր տարածում նաև բարեգործական մի շարք հաստատութիւնների՝ հիվանդանոցների, պանսիոնատների, ծերանոցների, որբանոցների, դիսպանսերների և այլ հիմնարկների միջոցով, որոնք տարածված էին Կոստանդնուպոլսում և Անատոլիայի ու Կիլիկիայի գրեթե բոլոր խոշոր քաղաքներում<sup>13</sup>:

Թուրքիայի հանդէպ ֆրանսիական կառավարող շրջանների վարած քաղաքականութեան մեջ, տնտեսական, դրամական ու մշակութային գործոնների հետ մեկտեղ, ոչ նվազ կարևոր նշանակութիւն ունի կրոնական գործոնը: Որքան էլ արտաքուստ տարօրինակ թվա, անժխտելի է, սակայն, որ քրիստո-

<sup>11</sup> *Sh'» Mustafa Kemаль, Путь новой Турции, т. 1, Примечания, էջ 393:*

<sup>12</sup> *Testis, op. cit., p. 80.*

<sup>13</sup> *Sh'» A. Mandelstam, Նշվ. աշխ., էջ 145—146:*

Նեական Ֆրանսիան հանդես էր գալիս ոչ թե Արևելքի քրիստոնյաների պաշտպանությամբ, ինչպես հաճախ փորձում են ներկայացնել ֆրանսիական իմպերիալիզմի ջատագովները, այլ ընդհակառակը, ելնելով իր մերձավորարևելյան շահերից, նա որպես կանոն պաշտպանում էր մահմեդական բռնապետական կարգերը, տվյալ դեպքում՝ օսմանյան բռնատիրությունը՝ ընդդեմ հպատակ քրիստոնյա ժողովուրդների: Ուստի պատահական չպետք է համարել Ֆրանսիայի թուրքասիրական քաղաքականությունը և, միաժամանակ, սուլթանական կառավարության ու տիրապետող վերնախավի առանձնահատուկ վերաբերմունքը Ֆրանսիայի նկատմամբ:

Հայտնի է, որ 400 տարվա ընթացքում, չհաշված նապոլեոն Բոնապարտի շրջանում առաջ եկած կարճատև հակամարտությունը, մինչև I համաշխարհային պատերազմը Թուրքիայի ու Ֆրանսիայի միջև գրեթե ոչ մի լուրջ բախում չի եղել և թուրք-ֆրանսիական հարաբերությունները ընթացել են բավականին խաղաղ, առանց քաղաքական խոր ճգնաժամերի, և այն բազմապիսի արտոնությունները, որոնցից օգտվում էին ֆրանսիացիները Օսմանյան կայսրությունում, վերջիններս ձեռք էին բերել ոչ թե ուժի, այլ հմուտ դիվանագիտության և թուրքասիրական ճկուն քաղաքականության շնորհիվ: 19-րդ դարի վերջին, օրինակ, այդ թուրքասիրական քաղաքականությունը այնպիսի բնույթ ընդունեց, որ ֆրանսիական կառավարությունը բացահայտորեն հանդես եկավ «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդի հայասպան ոճիրների պաշտպանությամբ, իսկ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Գաբրիել Հանոտուն վաստակեց «Հանոտո փաշա» տիտղոսը: Ճիշտ է, առաջին համաշխարհային պատերազմում Ֆրանսիան և Թուրքիան հանդես եկան թշնամական բանակներում, սակայն վերջին հանգամանքը մեծ դեր չխաղաց նրանց հարաբերությունների վատթարացման գործում: Եվ պատերազմի ավարտից հետո ֆրանսիական ազդեցիկ շրջաններում հաճախակի էին լսվում ձայներ հօգուտ թուրք-ֆրանսիական «վաղեմի բարեկամության» վերականգնման ու ամրապնդման:



«Ֆրանսիական մահամեղականների կողմնակիցն է,— գրում էր հայտնի հրապարակախոս Ժակ Կայզերը:—Նա այդպիսին է ըստ ավանդույթյան, իր մեծահոգի ձգտումներով և հանուն իր շահերի պաշտպանութան...»

1914—1918 թթ. պատերազմը շխարիսից այդ խորը և կայուն համերաշխության հիմքերը. Ֆրանսիական, առժամանակ թերվելով դեպի անգլո-սաքսոնական իմպերիալիզմի ուղին, պարտավոր էր վերադառնալու Թուրքիայի հետ բարեկամությանը»<sup>14</sup>:

Ֆրանսիական հայտնի լրագրող Միշել Պայառեսը, որը Պոլսում ֆրանսերեն հրատարակվող «Բոսֆոր» թերթի խմբագիրն էր, իր գրքում վերարտադրում է Ֆրանսիայի բարձրաստիճան ղինվորականների հետ ունեցած զրույցները, որոնք արտացոլում էին Ֆրանսիայի թուրքասիրական շրջանների տրամադրությունները: Ահա նրանցից մեկի աներկիմաստ խոստովանությունը.

«...Մենք պետք է լինենք ամբողջովին և բացարձակորեն թուրքասեր, ես կասեի ավելին՝ թուրքամու... Լինենք խոհեմ և գործարար... Երաշխավորենք այդ մարդկանց ազգային անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը և մենք կդառնանք նրանց ամենահավատարիմ ու ամենանվիրական ընկերակիցները: Ի՞նչ ենք փնտրում այստեղ: Մի պատվա՛ր ուսական ու բրիտանական իմպերիալիզմի դեմ: Մեր հեղինակություն պահպանո՛ւմ: Մեր առևտրի ազատ զարգացո՛ւմ: Մեր լեզվի տարածո՛ւմ: Մեր եկեղեցիների ու դպրոցների ճանաչո՛ւմ: Մեր դրամական շահերի ապահովո՛ւմ: Մենք այդ բոլորը կունենանք ֆրանս-թուրքական համագործակցության շնորհիվ...»<sup>15</sup>:

«Այս երկրում միայն թուրքերն են հետաքրքիր,— փորձում էր հավատացնել ֆրանսիացի մեկ ուրիշ ղինվորական:— Հենվենք նրանց վրա և մենք կվերադարձնենք գերմանացիների կողմից հափշտակված մեր նախկին տեղը: Մենք կվարժեց-

<sup>14</sup> Ж. Кайзер, Европа и новая Турция, стр. 55.

<sup>15</sup> M. Pailarès, op. cit., p. 77—78.

նենք բանակը, կղեկավարենք վարչական գործը, դպրոցները, կվերահսկենք ֆինանսները: Մենք կներթափանցենք ու կըհիմնվենք բոլոր ասպարեզներում: Մենք ոչ միայն կկայունացնենք մեր բարոյական ազդեցությունը, այլև հսկայական նյութական օգուտներ կքաղենք: Անատոլիան իր ընդերքում հեքիաթային հարստություններ է պարունակում, որոնք ոչ ոք չի օգտագործել: Մենք հանքերի ու անտառների շահագործման կոնցեսիաներ կստանանք, և լիովին կփոխհատուցենք այն կորուստները, որ ունեցանք Արևելքում: Մենք կկառուցենք երկաթուղիներ, տրամվայի գծեր, նավահանգիստներ, ճանապարհներ՝ հանրային աշխատանքների մեջ ընտրելով այնպիսիները, որոնք առավել շահավետ են մեր արդյունաբերության համար: Մենք ոչ մի գնով չպետք է վտանգենք մեր շահերը՝ հայերի ու հույների գեղեցիկ աչքերի համար...»<sup>16</sup>:

Թուրքասիրական վաղեմի քաղաքականությանը վերադառնալու հարցը այդ տարիներին բազմիցս քննության առարկա է դարձել ֆրանսիական պառլամենտում: «Հաճախ են կըրկընում, որ Ֆրանսիան մահմեդական տերություն է: Եվ դա ճշմարիտ է,— հայտարարում էր քաղաքական հայտնի գործիչ էդուար Սուլիեն: — Ֆրանսիան աշխարհի շորրորդ մահմեդական պետությունն է. Բրիտանական կայսրության կազմում կան 92 միլիոն մահմեդականներ, Հոլանդիան հաշվում է 36 միլիոն, Չինաստանը՝ 30 միլիոն, իսկ Ֆրանսիան՝ 23 միլիոն: Նա առաջ է Ռուսաստանից, որտեղ կան 19,1 միլիոն մահմեդականներ, և Թուրքիայից, որի կազմում աշխարհի 240 միլիոն մահմեդականներից ընդգրկված են ընդամենը 14 միլիոն 600 հազարը: Ֆրանսիան մահմեդական ազգ է...», Ֆրանսիան մահմեդական մի երկիր է»<sup>17</sup>:

Նույն դիրքերից էր ելնում Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Արիստիդ Բրիանը, երբ նա Ազգային ժողովի ամբիոնից կոչ էր անում վերադառնալ ֆրանս-թուրքական բարեկամությանը. «Ֆրանսիան մահմեդական տերություն է, և նա պետք է վերա-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>17</sup> René Puaux, op. cit., p. 17—18.



կանգնի իր հին ավանդական քաղաքականութիւնը Թուրքիայի հանդեպ...»<sup>18</sup>։ Ֆրանսիական հանրապետութեան պրեզիդենտ Ռ. Պուանկարեն նույնպէս գտնում էր, որ «Ֆրանսիան մահմեդական մի մեծ պետութիւն է»<sup>19</sup>։

Ֆրանսիայի տիրապետող շրջանները Թուրքասիրութիւնը, որը, ինչպէս ցույց տրվեց, խարսխվում էր նրանց աներկբա տնտեսական, դրամական ու բարոյական շահերի վրա Թուրքիայում, կարևորագույն գործոններից մեկը դարձավ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, արդեն 1919 թ. վերջին սկիզբ առած ֆրանսիական Թուրքանպաստ անջատ քաղաքականութեան, թեև այն կիրառելիս, Ֆրանսիան միշտ էլ հանդիպում էր իր հզոր դաշնակցի, իսկ իրականում ախոջանի՝ Անգլիայի դիմադրութեանը։

Բանը նրանումն է, որ առաջին համաշխարհային պատերազմի հաղթական վախճանից հետո Ֆրանսիային առավել զրազեցնում էին եվրոպական գործերը՝ պարտված գերմանացիներից պատերազմական տուգանքը ստանալու հարցը, Սաարի ավազանի հարցը, Հռենոսի հարցը և այլն։ Սրանց համեմատութեամբ մերձավորարևելյան հարցը ստորադաս դիրք էր զբաղում։ Բացի այդ, Ֆրանսիան, իր ռազմական բոլոր կարողութիւնները կենտրոնացնելով կայզերական Գերմանիայի դեմ, մերձավորարևելյան ճակատներում փաստորեն պատերազմ չէր մղել Թուրքիայի դեմ, և համաշխարհային պատերազմի վերջին նա Մերձավոր Արևելքում Անգլիայի համեմատ չնչին թվով զորք ուներ, իսկ Միջերկրականի ջրերում ու նեղուցներում իշխում էր անգլիական նավատորմը։ 1919 թ. նոյեմբերին ձեռնարկում Անգլիան ուներ 34 հետևակային գումարտակ, 15 և կես հեծյալ գունդ, 13 հրետանային մարտկոց և ինժեներական զորքերի հինգ և կես գումարտակ։

Ֆրանսիական զորքերի ընդհանուր թիվը այդ նույն շրջա-

<sup>18</sup> A. Mandelstam, op. cit., p. 195. Տե՛ս նաև „L'Aste française“, № 195, septembre-octobre 1921, էջ 380—384.

<sup>19</sup> Տե՛ս Jules Laroche, Ambassadeur de France, Au Quai d'Orsay avec Briand et Poincaré 1913—1926. Paris, 1957, էջ 160.

նում կազմում էր 13 հետևակային գումարտակ, հեծյալ 3 գունդ և հրետանային 4 մարտկոց<sup>20</sup>;

Նշված երկու գլխավոր պատճառներով, այն է՝ եվրոպական գործերում Անգլիայի աջակցությունը ստանալու պահանջով և Մերձավոր Արևելքում անգլիական զորքերի բացահայտ գերակշռությամբ պետք է բացատրել այն փաստը, որ Ֆրանսիան հաճախ ստիպված էր լինում նկատելի զիջումներ անել Անգլիային, ի վնաս իր շահերի համաձայնվել վերանայելու պատերազմի տարիներին կնքված գաղտնի պայմանագրերը Թուրքիայի բաժանման վերաբերյալ, և նույնիսկ մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ ձեռնարկված ռազմական գործողություններին:

Ինչպես ասվեց, ի տարբերություն Անգլիայի, Ֆրանսիան ամենևին շահագրգռված չէր Օսմանյան կայսրության փլուզմամբ և Թուրքական պետականության վերացմամբ, որովհետև վերջին պարագայում նա կզրկվեր իր դրամական ու տնտեսական արտոնություններից: «Միջերկրական ծովի շրջանում մեր ազգային բոլոր շահերից ես չգիտեմ առավել կարևորը, քան Օսմանյան կայսրության տերիտորիալ անձեռնմխելիության պահպանումը»<sup>21</sup>, — գրել է հայտնի արևելագետ Վ. Բերարը:

«Թուրքիայի մասնատումը, — գրել է հայտնի լրագրող է. Բերնիեն, — հավասարազոր է Մերձավոր Արևելքում Ֆրանսիական ազդեցության ոչնչացմանը»<sup>22</sup>:

Եվ եթե Ֆրանսիան, այնուհանդերձ, մասնակցում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող երկրների ու հողամասերի բաժանմանը, ապա սոսկ այն պատճառով, որ այդ բաժանումն անխուսափելի էր դառնում և նա, որպես իմպերիալիստական և գաղութային խոշոր տերություն, չէր կարող իր «բաժինը» չպահանջել: Իսկ այդ բաժինը պահանջելիս Ֆրանսիան հանդիպում էր առավել հզոր իմպերիալիստական

<sup>20</sup> Testis, op. cit., p. 19.

<sup>21</sup> *Sté» Mustafa Kemal, Путь новой Турции, г. I. Предисловие, էջ XL.*

<sup>22</sup> „L'Europe nouvelle“, № 9, 28 février 1920, p. 342.



տերութեան՝ Անգլիայի դիմադրութեանը, որը համաշխարհային պատերազմի ավարտից հետո, իր հզորութիւնից ու դիրքից օգտւելով, իր նախկին դաշնակցին հասկացնել էր տալիս, որ մտադիր չէ սրբութեամբ պահպանել պատերազմի տարիներին կնքված գաղտնի պայմանագրերի տառն ու ոգին: Խախտումները սկիզբը դրվեց պատերազմից անմիջապէս հետո, երբ Անգլիան, առաջինը գնահատելով Մոսուլի շրջանի ահռելի պոտենցիալ հնարավորութիւնները, 1918 թ. նոյեմբերի 2-ին իր զորքերը մտցրեց այդ շրջանը, որը Սայքս-Պիկոյի գաղտնի պայմանագրով կազմելու էր Ֆրանսիայի ազդեցութեան գոտին: Իսկ դեկտեմբերին Լոյդ Ջորջը հայտարարեց Կլեմանտոյին, որ Սայքս-Պիկոյի պայմանագիրը չի կարող ուժի մեջ մնալ, քանի որ նրա «մասնակիցներից» մեկը՝ Ռուսաստանը դուրս է եկել հաշվից: Ու թեև Կլեմանտոն պնդում էր, որ այդ պայմանագիրը կնքվել է միայն Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, ուստի այն ուժի մեջ է, ի վերջո նա, կատարված փաստից ելնելով, ստիպված էր հօգուտ Անգլիայի հրաժարվել Մոսուլի վիլայեթից և Պաղեստինի կառավարմանը մասնակցելուց: Հետագայում, Կլեմանտոն, պաշտպանվելով այն հակառակորդներից, որոնք իրեն մեղադրում էին Մոսուլի նման հարուստ շրջանը ձեռքից բաց թողնելու մեջ, արդարանում էր ասելով.

«Այո, ես զիջեցի Մոսուլը, բայց նրանք մոռանում են, որ ես այն օգտագործեցի որպէս խայծ՝ Կիլիկիան ստանալու համար, թեև մեր շատ լավ դաշնակիցներից ոմանք չէին ուզում, որ այն մեզ տրվի... Կիլիկիան եղել է և վերստին կարող է շատ հաճելի երկիր դառնալ... Կիլիկիան ու Ալեքսանդրետը այնքան էլ վատ բաներ չեն»<sup>23</sup>:

<sup>23</sup> *Տե՛ս* *Мустафа Кемаль, Путь новой Турции*, т. III, Примечания, էջ 291: Այս հայտարարութիւնը, իհարկե, չէր արտացոլում իրական պատկերը: Տակավին Փարիզի հաշտութեան համաժողովում, Լոյդ Ջորջի հետ ունեցած երկու հանդիպումների ժամանակ (1919 թ. մայիսի 21—22-ին) Կլեմանտոն խոստովանել էր, որ ինքը անգիտանալով էր համաձայնվել զիջել Մոսուլի վիլայեթը. «Եթե ես պատկերացում ունենայի Մոսուլի և Միջա-

Սակայն Ֆրանսիային խոստացած տերիտորիաներն էլ Անգլիան հեշտությամբ չէր զիջում իր դաշնակցին: Հետպատերազմյան տարիներին հրապարակված անգլիական պաշտոնական փաստաթղթերից երևում է, թե ինչպիսի սուր կամ խուլ պայքար է ծավալվել այդ հարցում Անտանտի զույգ դաշնակիցների միջև: Այսպես, Փարիզի հաշտության համաժողովում, հինգ մեծ տերությունների պատվիրակությունների ղեկավարների հանդիպման ժամանակ (1919 թ. հուլիսի 18-ին) Կլեմանսոն բողոքում էր այն բանի դեմ, որ զորավար Ալենբիքն, առաջնորդվելով իր կառավարությունից ստացած հրահանգներով, «հանդես է գալիս Թուրքիայում, որպես անգլիական զինվորական, և ոչ թե որպես դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար: Նրա գործողություններն իրենց հետևանքներով ուղղված են ֆրանսիական շահերի դեմ... Նա հրաժարվում է թույլ տալ ֆրանսիական զորքերին մտնել Սիրիա...»<sup>24</sup>, Իսկ Սիրիան ֆրանսիական իմպերիալիստների ծրագրերում գրավում էր առավել կարևոր տեղ, քան Կիլիկիան: Ճիշտ է, իր տնտեսական նշանակությամբ և զարգացման հեռանկարներով Սիրիան զիջում էր Կիլիկիային, սակայն նա չափազանց կարևոր ստրատեգիական դիրք էր գրավում, գտնվելով եվրոպական խոշոր տերությունները իրենց արևելյան գաղութներին կապող ճանապարհների կենտրոնում: Միաժամանակ, Սիրիան իր աշխարհագրական դիրքով միջնորդ առևտրի դեր էր կատարում Եգիպտոսի, Արաբիայի, Միջագետքի ու Փոքր Ասիայի միջև: Ֆրանսիան տակավին 19-րդ դ. 40-ական թվականներից առանձնահատուկ շահեր էր ձեռք բերել Սիրիայում: Ֆրանսիական ներթափանցման կարևորագույն միջոցներից մեկը երկաթուղային շինարարությունն էր: Համաշխարհային պատերազմի նախօրյակին Ֆրանսիան իր

գետքի կարևորության մասին, ես չէի համաձայնվի դրանք զիջել ձեզ: Եթե դուք ինձ ասեիք, որ Միջագետքի զիջումը կհանգեցնի հսկայական տերիտորիայի կորուստին, ես կմերժեի ձեզ այդ հարցում: Տե՛ս՝ *Ж. Кайзер*, Европа и новая Турция, էջ 125:

<sup>24</sup> „Documents on British Foreign Policy 1919—1939“, First Series, vol. I, London, 1947, p. 134.



ձեռքում էր պահում 788 կմ երկարության երկաթուղային ցանց, երկրի բոլոր երկաթուղիների մոտ 40 տոկոսը: Ֆինանսավորում էր այդ երկաթուղիները Փարիզի հայտնի «Régie Générale des chemins de fer» ընկերությունը: Ֆրանսիական երկաթգծերը իրար էին կապում Սիրիայի գլխավոր կենտրոնները՝ Հալեպը, Համան, Հոմսը և Դամասկոսը՝ Բեյրութում ու Տրիպոլիում դուրս գալով դեպի ծով: Այդ գծերը կարևոր էին նաև այն տեսակետից, որ նրանք Բաղդադի երկաթուղու մի ճյուղը կապում էին Եգիպտոսի երկաթուղիների հետ: Ֆրանսիայի շահագրգռվածությունը այս հարցում այնքան մեծ էր, որ նա պատերազմի նախօրյակին, 1914 թ. փետրվարին, Գերմանիայի հետ կնքեց պայմանագիր, որով նա հրաժարվում էր երկաթուղային շինարարությունից Կիլիկիայում, ինչպես նաև «Deutsche Bank»-ին վաճառեց Բաղդադի երկաթուղու իր ակցիաները (հիմնական կապիտալի 30 տոկոսը), միայն այն բանի դիմաց, որ Գերմանիան հրաժարվեր երկաթուղային շինարարությունից Սիրիայում<sup>25</sup>:

Մեծ էր նաև Ֆրանսիայի քաղաքական ու մշակութային ազդեցությունը Սիրիայում:

Եվ ահա, պատերազմի ավարտից հետ, երբ թվում էր, որ ֆրանսիական կապիտալիստներին կհաջողվի առավել ամրապնդել իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերը այլ երկրում, անգլիական իմպերիալիզմն այստեղ էլ հնարավոր բոլոր միջոցներով պայքարում էր իր դաշնակից-մրցակցի անմիջական շահերի դեմ:

Սակայն անգլո-ֆրանսիական իմպերիալիստական հակամարտությամբ չէր սահմանափակվում «Օսմանյան ժառանգության» շուրջ ծավալված կատաղի պայքարը: Ցարական Ռուսաստանի, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի փոխարեն այդ պայքարի մեջ պատերազմից հետո ներգրավվել էին Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնք իրենց քաղաքականությամբ նույնպես լուրջ անհանգստություն էին պատճա-

25 «Раздел Азиатской Турции», Предисловие, стр. 19—20.

ռում ֆրանսիական կապիտալի շահերին: ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների կողմից ստեղծված Քինգի-Քրեյնի հանձնաժողովը, 1919 թ. հունիս-հուլիսին պաշտոնապես հետազոտելով Սիրիան, Փարիզի հաշտության համաժողովին ներկայացրած իր զեկուցագրում առաջարկում էր Ստամբուլի ու Անատոլիայի (Կիլիկիայի հետ միասին) հետ մեկտեղ Սիրիայի մանդատը ևս հանձնել Միացյալ Նահանգներին:

Ֆրանսիական շահերի դեմ ուղղված այս ծրագրերը մեծ դժգոհություն առաջացրին Ֆրանսիայի գաղութատիրական քաղաքականության պաշտպանների մոտ և նրանց լսափողը հանդիսացող մամուլի էջերում: Հայտնի լրագրող Պերտինաքսը «Echo de Paris» թերթում պահանջում էր, որ «Ֆրանսիան իր ավանդական ազդեցությունը հնարավորին չափ պահպանելու համար իր ջանքերը կենտրոնացնի Սիրիայի ու Կիլիկիայի վրա, որտեղ ֆրանսիական իրավունքները ճանաչվել են Անգլիայի հետ 1916 թ. կնքված պայմանագրով»<sup>26</sup>:

Կլեմանսոյի կառավարության կողմից թույլ տրված «զիջումների» քննադատությամբ հանդես էին գալիս մի շարք այլ երևելի լրագրողներ ու քաղաքական մեկնաբաններ՝ Օգյուստ Գովենը, Հ. Ռ. Սավարին և այլն: Վերջինս «Կպահպանե՞նք մենք մեր ժառանգությունն Արևելքում» խորագրով հոդվածում գրել է. «Ֆրանսիան, որն այնքան նշանակալից նյութական ու բարոյական շահեր ունի Արևելքում, և որի լեզուն օգտագործվում էր ամենուրեք՝ Օսմանյան կայսրությունում, շուտով կիմանա շափն այն կորուստների, որ նա ունեցել է՝ մնալով անտարբեր, այն դեպքում, երբ մյուսները գործել են խելքով ու մեթոդով... Ֆրանսիական փորձառու հասարակական կարծիքը, — զգուշացնում էր նա, — չի հրաժարվի այն ամենից, ինչը մասն է կազմել մեր փառավոր ու թանկագին ժառանգության: Ֆրանսիան չի բավարարվի Սիրիայի ծովեզրյա մասով: Նա

---

<sup>26</sup> Տե՛ս «Documents on British Foreign Policy 1919-1939», First Series, vol. IV. London, 1952, էջ 300:



չի ընդունում ընկույզն առանց կճեպի, նա ուզում է Դամասկոսն ու Հալեպը»<sup>27</sup>։

Սակայն հեշտ չէր «կճեպով ընկույզ» ստանալ Անգլիայի նման մի ախոյանից, թեև Ֆրանսիան համառորեն շարունակում էր պայքարը։ Իրավացի է պրոֆ. Ի. Մ. Լեմինը, Մերձավոր Արևելքի բաժանման համար մղված անգլո-ֆրանսիական պայքարը դասելով «հետպատերազմյան պատմության ամենակեղտոտ էջերի» շարքը<sup>28</sup>։ Այդ պայքարում բրիտանական իմպերիալիզմի հետապնդած հիմնական նպատակն էր Ֆրանսիային կանգնեցնել կատարված փաստի առջև նեղուցների զոտում և Անատոլիայում։ Այդ էր պատճառը, որ անգլիական ներկայացուցիչները Փարիզի հաշտության համաժողովում ամեն կերպ ձգձգում էին թուրքական հարցի քննարկումը։ «Շաբաթների ու ամիսների ընթացքում, — գրել է Անգլիայի արտաքին գործերի մինիստրության աշխատակից լորդ Ե. Պերսին, — մենք արգելակում էինք թուրքական հարցի ոչ միայն լուծումը, այլև նրա քննարկումը հաշտության համաժողովում։ Թեև այդ հարցը համաժողովում քննարկվող հարցերից առավել ինտենսիվ մշակված հարցն էր, դա միակն էր, որի մասին բրիտանական պատվիրակությանը նույնիսկ արգելված էր հիշատակել համաժողովի առաջին 4—5 ամիսներին...»<sup>29</sup>։

Ֆրանսիական դիվանագիտությունը, իր հերթին, 1919 թ. վերջին առաջին լուրջ փորձն արեց իր «թուրքական գործերը» կարգավորել Անգլիայից անջատ համաձայնության գալով Սրվասում ստեղծված ներկայացուցչական կոմիտեի հետ։ Այդ նպատակով Սիրիայում և Կիլիկիայում ֆրանսիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոն 1919 թ. դեկտեմբերին երկու սպաների ուղեկցությամբ ուղևորվում է Սրվաս և հանդի-

<sup>27</sup> „Démocratie nouvelle“, 15.4. 1919.

<sup>28</sup> И. М. Лемин, Внешняя политика Великобритании от Версаля до Локарно, 1919—1925, М., 1947, стр. 184.

<sup>29</sup> SK «Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, Предисловие, էջ XLVII.

պումներ ունենում հիշյալ կոմիտեի նախագահ Մուստաֆա Քեմալի հետ: Պիկոյի ուղևորութան նպատակներից մեկն էր «հենց ազգայնականների պարագլուխ Մուստաֆա Քեմալ փաշայի բերանից ստույգ տեղեկություն ստանալ Կիլիկիայի, Փոքր Հայքի ու Քուրդստանի նկատմամբ նրանց ունեցած հավակնությունների մասին»<sup>30</sup>:

Ֆրանսիական դիվանագետի այցը Քեմալին ժամանակին մեծ աղմուկ հանեց եվրոպական մամուլում: Անգլիական թերթերը մեղադրում էին «գաշնակից Ֆրանսիային» նրա ուխտադրուժ, անշատ քայլերի համար, իսկ ֆրանսիական մամուլը քննարկման առարկա էր դարձրել այն հարցը, թե արդյո՞ք ժորժ Պիկոն իր անձնական նախաձեռնություններ էր կատարել այդ ուղևորությունը, թե՞ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության հանձնարարություններ: Այս հարցին հակասական և իրարամերձ պատասխաններ են տալիս նաև ֆրանսիական պատմաբաններն ու նախկին զինվորական գործիչները: Այսպես, Միշել Պայառեսը անուղղակի ձևով գտնում է, որ ժորժ Պիկոյի ուղևորությունը Սըվաս համաձայնեցված չէր Քե դ'Օրսեի (Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության—Ռ. Ս.) հետ, որովհետև Կոստանդնուպոլսում ֆրանսիական դերագույն կոմիսար Դեֆրանսը հավանություն չէր տվել այդ քայլին, դիտելով այն որպես մի ձեռնարկում, որը «կարող էր ֆրանսիացիներին արատավորել սուլթանի աչքում, ինչպես նաև դուր չգալ անգլիացիներին, որոնք հայտարարել էին, որ ճանաչում են միայն կայսերական (սուլթանի—Ռ. Ս.) կառավարությունը»<sup>31</sup>:

Ըստ էության նույն կարծիքն է հայտնում գնդապետ Բրեմոնը, շեշտելով միայն այն հանգամանքը, որ Պիկոյի տեսակցությունը Քեմալի հետ «հավանության շարժանցալ ո՛չ Բեյրութում, ո՛չ էլ Կոստանդնուպոլսում»<sup>32</sup>:

<sup>30</sup> R. de Gontaut-Biron, op. cit., p. 333.

<sup>31</sup> M. Paillarès, op. cit., pp. 108—109.

<sup>32</sup> E. Brémond, op. cit., p. 36.



Ֆրանսիական պատմաբան Ժան Պիշոնը ևս գրեթե նման մի գնահատական է տալիս, գրելով հետևյալը. «Պ. Ֆրանսուա Ժորժ Պիկոն, որին Բեյրութում փոխարինել էր զորավար Գուրոն, ցանկացավ փորձ անել բանակցելու քեմալականների հետ: Նա ուղևորվեց Սըվաս և այնտեղ դեկտեմբերի 5-ին ու 6-ին հանդիպումներ ունեցավ Մուստաֆա Քեմալի հետ»<sup>33</sup> (ընդգծումն իմն է — Ռ. Ս.): Սակայն, հեղինակը փաստորեն հերքում է իր վերոհիշյալ գնահատականը, Պիկոյի բանակցությունները համարելով «մի պատասխան Կոստանդնուպոլսի օրինական կառավարության հետ անգլիացիների կնքած սեպտեմբերի 12-ի գաղտնի համաձայնագրին և այն զրույցներին, որ ամերիկյան զեներալ Հարբորդը ունեցել էր Մուստաֆա Քեմալի հետ Սըվասում, սեպտեմբերի 20-ին»<sup>34</sup>: Նման պարագայում, հասկանալի է, Ժորժ Պիկոն չէր կարող գործել միանգամայն ինքնուրույն, առանց իր քայլերը կառավարության հետ համաձայնեցնելու, ինչպես որ անձնական նախաձեռնության արդյունք չէին վերը հիշատակված Հարբորդի բանակցությունները և անգլիական զեներալ Ալենբիի բանակցությունները սուլթանական կառավարության հետ:

Ֆրանսիական հեղինակներից Գոնտո-Քիրոնը ևս Սըվասի բանակցությունները կապում է Պիկոյի անձնական նախաձեռնության հետ, այն տարբերությամբ, սակայն, որ նա մի փոքր այլ մեկնաբանություն է տալիս վերջինիս հետապնդած նպատակներին, գրելով, որ Ժորժ Պիկոն մտադրություն ուներ ֆրանսիական կառավարությանը պատկերացում տալ քեմալականների ծրագրերի մասին և ջանալ «կնքել մի համաձայնագիր, որը վերջ կտար սիրիական հուզումներին»<sup>35</sup>:

Անգլիական հեղինակներից այս հարցին անդրադարձել է լորդ Կիրոսը, որը, ի տարբերություն ֆրանսիական հեղինակների, մատնանշում է այն հանգամանքը, որ Ժորժ Պիկոն Քե-

<sup>33</sup> J. Pichon, op. cit., p. 203.

<sup>34</sup> Նույն տեղում:

<sup>35</sup> R. de Gontaut-Biron, op. cit., p. 333.

մալին ներկայանում է որպես «Ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ», և որ «վերջինս նրան ընդունել է որպես հենց այդպիսին», և նրանք հանգամանորեն քննարկել են իրենց համատեղ ցանկությունը՝ վերադառնալ ֆրանս-թուրքական բարեկամությանը<sup>36</sup>:

Պիկոյի ուղևորության շարժառիթներին և Քեմալի հետ ունեցած նրա հանդիպումներին առավել հանգամանորեն անդրադարձել է թուրք հայտնի գործիչ, Մոսկվայում քեմալական կառավարության առաջին դեսպան Ալի Ֆուաթ Ջեբեսոյը՝ «Ազգային-ազատագրական պայքարի հուշերում»: Վերջինիս բերած փաստերը վկայում են, որ Մուստաֆա Քեմալը և իր համախոհները նախօրոք տեղյակ են եղել Պիկոյի Սըվաս գալու մտադրությանը: Այդ ժամանակ Կեսարիայում գտնվող Ալի Ֆուաթ փաշան Սըվասից՝ ներկայացուցչական խորհրդից ըստանում է մի հեռագիր, որտեղ ասված էր, որ Սիրիայի ֆրանսիական ներկայացուցիչ ժորժ Պիկոն Բեքիր Սամի բեյի<sup>37</sup> միջոցով ցանկություն է հայտնել շփման մեջ մտնել ներկայացուցչական խորհրդի հետ և վերջինիս կողմից հավաստիանալով, որ Սըվասում իրեն գոհունակությամբ կընդունեն, ինքնաշարժով մեկնել է Սըվաս: «Խնդրվում է,— ասված է հիշյալ հեռագրում,— դյուրին դարձնել նրա ուղևորությունը և հնարավորության դեպքում իմանալ ուղևորության պատճառը և այդ մասին տեղեկացնել ներկայացուցչական խորհրդին նրա ժամանելուց առաջ<sup>38</sup>:

Գեկտեմբերի 6-ին<sup>39</sup> Պիկոն հասնում է Կեսարիա և անմիջապես հանդիպում ու «անկեղծ զրույցներ» ունենում Ալի

<sup>36</sup> Lord Kinross, op. cit., p. 203.

<sup>37</sup> Բեքիր Սամի բեյը Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստրն էր: Մինչ այդ նա մի քանի տարի Բեյրութի կոնսակալն էր և հենց այնտեղ էր մտերմացել ֆրանսիական հյուպատոս ժորժ Պիկոյի հետ: Տե՛ս *All Fuat Cebesoy, Milli mücadele hatıraları*, էջ 268:

<sup>38</sup> *Alli Fuat Cebesoy*, op. cit., p. 268.

<sup>39</sup> Ֆրանսիական հեղինակների տեղեկության համաձայն, ժորժ Պիկոն արդեն գեկտեմբերի 5-ին Սըվասում էր: *R. de Gontaut-Biron*, op. cit., p. 338; *J. Pichon*, op. cit., p. 203.



Յուլի փաշայի հետ: Պիկոն վերջինիս հայտնում է, որ Յրանսիայում շուտով տեղի է ունենալու միջխտրնների կազմի փոփոխություն, որի հետևանքով պրեմիեր մինիստրի պաշտոնը դրավելու է Բրիանը և որ «ամեն ինչ փոխվելու է»: Ապա ավելացնում է. «Ինչպես պարոն Բրիանի, այնպես էլ Ֆրանսիական ազգի քաղաքականությունն է՝ հնարավորություն ստեղծել, որպեսզի Միջին Արևելքում, թուրքական մեծամասնություն կազմող հատվածում, հիմնվի ուժեղ և անկախ թուրքական պետություն»<sup>40</sup>: Այնուհետև, Ֆրանսիական դիվանագետը հավաստիացնում է Ալի Յուլիին, որ այդ նպատակի համար Յրանսիան կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները: Միաժամանակ Պիկոն հույս է հայտնում, որ Կիլիկիայում սկսված արյունահեղ ընդհարումները կկասեցվեն, քանի որ այդ են պահանջում երկու կողմերի շահերը: «Անկախ թուրքիայի ու Յրանսիայի ապագա քաղաքականությունը, — հայտարարում է նա, — չպետք է վտանգի ենթարկվի նման շարժումների պատճառով»<sup>41</sup>:

Պիկոյի հետ ունեցած իր զրույցների ամփոփումը Ալի Յուլիթը ծածկագրով հաղորդում է Սըվաս՝ Ներկայացուցչական խորհրդին<sup>42</sup>:

Յրանսիական դիվանագետի հայտնած կարծիքներից դժվար չէ եզրակացնել, որ դրանք մասնավոր անձի հայտարարություններ չէին, այլ այս կամ այն կերպ արտացոլում էին Ֆրանսիական դեկավար շրջանների ձգտումը՝ անջատ համաձայնության հասնել թուրքիայում իրական իշխանությանը օժտված միակ կառավարության՝ քեմալականների կողմից գլխավորվող Ներկայացուցչական խորհրդի հետ: Այդ բանը հաստատեցին նաև Պիկոյի հանդիպումները անձամբ Մուստաֆա Քեմալի հետ:

Ինչպես տեսանք, Քեմալը դիվանագիտական հմտություն հանդես բերելով, նախապես տեղեկացել էր Ֆրանսիական

<sup>40</sup> Ali Fuat Cebesoy, op cit., pp. 268—269.

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>42</sup> Նույն տեղում:

ներկայացուցի հետամտած նպատակներին և վերջինիս Սը-  
վասում դիմավորեց «կազմ-պատրաստ»։ Քեմալի ու Պիկոյի  
միջև տեղի ունեցած զրույցներին, որոնք տեեցին երկու օր,  
ներկա էին՝ Բեքիր Սամի բեյը, նախկին ծովային մինիստր  
Հուսեին Ռուսֆ բեյը և ԱՄՆ-ում թուրքական նախկին դեսպան  
Ահմեդ Ռուստեմ բեյը<sup>43</sup>։ Ալի Ֆուաթը, վկայակոչելով հիշյալ  
գործիչների պատմածները, հետևյալ հետաքրքիր մանրա-  
մասներն է հաղորդում այդ հանդիպման մասին։

Ժամանելով Սըվաս, Ժորժ Պիկոն ներկայացուցչական  
խորհրդին թողնում է իր այցետոմսը, որն անմիջապես  
հանձնվում է Քեմալին։ Վերջինս տեսնելով, որ այցետոմսի  
վրա գրված է՝ «Ֆրանսիական կառավարության ներկայացու-  
ցիչ Միրիայում և Հայաստանում», լուր է ուղարկում Պիկոյին,  
որ ինքը աչի կարող ընդունել մի անձնավորության, որը եկել  
է, որպես Ֆրանսիայի հայաստանյան ներկայացուցիչ»։ Տեղե-  
կանալով այդ մասին, Պիկոն անձամբ գնում է ներկայացուց-  
չական խորհրդի շենքը և հայտնում, որ ինքը հանդիսանում է  
Երևանում հաստատված հայկական կառավարության ներկա-  
յացուցիչը, և «որևէ կապ կամ հարաբերություն չունի այն պե-  
տության հետ, որը մտադրվում են հիմնել այդ կառավարու-  
թյան սահմաններից դուրս»<sup>44</sup>։ Միայն Պիկոյի լիազորություն-  
ների այս «ճշգրտումից» հետո է, որ Մուստաֆա Քեմալը ըն-  
դունում է նրան։

Հանդիպման սկզբում Պիկոն Քեմալին հայտնում է Ալի  
Ֆուաթի հետ զրույցի ժամանակ արտահայտած այն կարծիքը,  
որ շուտով Ֆրանսիայի կառավարության կազմում տեղի կու-  
նենան փոփոխություններ, մասնավորապես, նոր կառավա-  
րությունը կզլխավորի Բրիանը, և որ «նոր կառավարության  
քաղաքականությունը ամբողջովին կպաշտպանի թուրքական  
ազգային քաղաքականությունը»<sup>45</sup>։

43 Ali Fuat Cebesoy, op. cit., p. 269.

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում։



Քեմալ-Պիկո հանդիպման, նրանց երկօրյա խոսակցությունների մանրամասները մեզ չեն հասել, սակայն Ֆրանսիական պատմաբան Գոնտո-Բիրոնը նշում է, որ «Ֆրանսիային ու Թուրքիային հետաքրքրող բոլոր հիմնական հարցերը քննարկվել և որոշվել են»<sup>46</sup> նրանց կողմից, իսկ Ալի Ֆուատը տեղեկացնում է, որ «երկար վիճաբանություններից հետո փաշայի (Քեմալի— Ռ. Ս.) և Պիկոյի միջև գոյացել է կատարյալ համաձայնություն Թուրքական, արաբական և հայկական հարցերի շուրջ»<sup>47</sup>:

Առավել հանգամանալից քննարկման առարկա է դարձել Կիլիկիայի սահմանների հարցը: Քեմալը հենց սկզբից վճռականորեն հայտարարել է, որ Թուրքիան ճանաչելու է Մուդրոսի զինադադարով գծված սահմանները միայն, հետևաբար նա չի ճանաչելու Կիլիկիայի այն իրավիճակը, որ հատուկ հոգվածով համաձայնվել էին նախատեսել օսմանյան պատվիրակները՝ անգլիական ծովակալ Կալտորպի թելադրանքով: «Եթե օսմանյան կառավարությունները, ամբողջովին կախման մեջ գրտնրվելով Անգլիայից, չեն բողոքել Կիլիկիայի գրավման դեմ,— հայտարարել է Մ. Քեմալը,— ազգայնականները դրան հակառակ, երբեք չեն դադարել դրա դեմ բողոքելուց»: Նա ասել է Պիկոյին, որ ազգայնականները կհամաձայնվին «զիջել» միայն Ջեզիրեն, Իրաքը և Սիրիան, բայց երբեք չեն հրաժարվի Կիլիկիայից՝ «իրենց մարմնի մի մասից»<sup>48</sup>:

«Սըվասում ունեցած զրույցների ժամանակ,— գրում էր

<sup>46</sup> R. de Gontaut-Biron, op. cit., p. 338. Իր մի այլ գրքում հիշյալ հեղինակը նշում է, որ Քեմալը Պիկոյին խոստացել էր Կիլիկիան պարպելու դիմաց «Ֆրանսիային, միայն Ֆրանսիային Թուրքիայում տալ մի տեսակ տեսեսական մանդատ»: *Sé'n Comte R. de Gontaut-Biron et Le Révérend. D'Angora à Lausanne. Les étapes d'une déchéance. Paris, 1924, էջ. 12:*

<sup>47</sup> Ali Fuat Cebesoy, op. cit., pp. 269—270.

<sup>48</sup> R. de Gontaut-Biron, op. cit., p. 338. Այս առիթով Ռաուֆը բելը հայտարարում է, որ «Բարձր Դուան կողմից ճանաչված Երևանյան հանրապետութունը բավարար մի հանգրվան է հայերի համար»: *Sé'n նույն տեղում:*

վերը հիշատակված ֆրանսիական լրագրող է. Բերնիեն,—  
պ. Պիկոյին մատնանշվեցին այն լուրջ դժվարությունները,  
որոնց մենք կհանդիպեինք, եթե ցանկանայինք հետևել մեր  
նախկին վարվելակերպին»<sup>49</sup>:

Մյուս հարցը, որը վիճարանությունների նյութ է եղել  
հիշյալ բանակցությունների ժամանակ, դա ազգային փոքրա-  
մասնությունների հարցն էր: Մուստաֆա Քեմալը համառորեն  
պաշտպանել է այդ առթիվ էրզրումի համաժողովի կողմից ըն-  
դունված որոշումները, մինչդեռ ժորժ Պիկոն փոքրամասնու-  
թյունների անվտանգության ու ապահովության նոր երաշխիք-  
ներ է պահանջել՝ վկայակոչելով Կիլիկիայի բնակչության,  
հատկապես փոքրամասնությունների հանդեպ Ֆրանսիայի  
պարտավորությունները: Այդ հարցի քննարկման ժամանակ  
Քեմալը վերստին հանդես բերելով դիվանագիտական հմտու-  
թյուն, կարողանում է շփոթության մեջ գցել ֆրանսիացի դիվա-  
նագետին, նրա մոտ ստեղծելով պատրանք «Թուրքական ազգա-  
յին բանակների» առկայության մասին: Հավատարիվ երեակա-  
յական այդ բանակների գոյությանը, Պիկոն խնդրում է Քեմա-  
լին «անհապաղ հրամայել դեպի Կիլիկիա առաջացող ազգային  
բանակներին կանգ առնել իրենց գտնված վայրում»: Պիկոյի  
այս պահանջը Քեմալը մերժում է այնպիսի մի տեսքով, որ  
նույնիսկ նրա զինակիցները (Ռաուֆ բեյը, Բեքիր Սամի բեյը,  
Ահմեդ Ռուստեմ բեյը) մի պահ հավատում են այդ բանին և  
անգամ զարմանում Քեմալի զաղտնապահության վրա, որն  
իրենցից թաքցրել էր «Թուրքական ազգային բանակների» առ-  
կայության փաստը<sup>50</sup>:

Քեմալ-Պիկո տեսակցության ժամանակ մշակվում է հա-  
մաձայնության նախագիծ, որով Ֆրանսիան.

1. «Վերադարձնում էր Կիլիկիան Թուրքիային, որը, սա-  
կայն, ճանաչում էր Ֆրանսիայի իրավունքը տեղական վար-  
չության և փոքրամասնությունների հովանավորության հար-  
ցերում:

<sup>49</sup> „L'Europe nouvelle“, № 9, 28 février 1920, p. 342.

<sup>50</sup> *Ali Fuat Cebesoy*, op. cit., p. 270; *Lord Kinross*, op. cit., p. 203.



2. Երաշխավորում էր Թուրքիայի անբաժանելիութունը՝  
ընդդեմ Անգլիայի, Հունաստանի և Իտալիայի»<sup>51</sup>։

Ամփոփելով Քեմալի ու Պիկոյի հանդիպման արդյունքները, պետք է ասել, որ թեև Ֆրանսիական դիվանագետը իր կառավարության կողմից լիազորված չէր պաշտոնական բանակցություններ վարելու, սակայն այդ հանդիպումը իր դրական հետևանքներն ունեցավ քեմալականների համար և բացասական հետևանքներ Ֆրանսիայի քաղաքականության, ավելի ճիշտ՝ Կիլիկիայի հայ ազգաբնակչության համար։ Ֆրանսիական պատմաբանների մեծ մասը, Պիկոյի ուղևորությանը մոտենալով բացառապես Ֆրանսիայի շահերը Թուրքիայում ապահովելու տեսանկյունից, դրական գնահատական է տալիս դրան և ավստոսանքով նշում, որ համաձայնություն չկայացավ։ «Պայմանագրի նախագիծը, — գրում է Ժակ Կայզերը, — Ֆրանսիային ապահովում էր զգալի իրավունքներ Կիլիկիայում ու Անատոլիայի որոշ նահանգներում և խաղաղություն հաստատում Կիլիկիայի սահմաններին»<sup>52</sup>։

«Միանգամայն որոշակի է, — գրում է Ժան Պիշոնը, — որ եթե Ժորժ Պիկոյի բանակցությունները արդյունքի հասնեին, մենք անօգուտ կերպով չէինք ղոհաբերի Կիլիկիայում մեր զինվորներին և մեր դրամը»<sup>53</sup>։ Միայն Պիեռ Ռըդանն է իրավացիորեն նշում, որ «Ժորժ Պիկոյի ուղևորությունը Սըվաս՝ Մուստաֆա Քեմալի մոտ, բարձրացրեց վերջինիս արժեքը։ Գյուղերում լուր տարածվեց, որ Ֆրանսիացիները քեմալականների ահից ստիպված են լքել Կիլիկիան և հունվարի 21-ին Մարաշը հարձակման ենթարկվեց»<sup>54</sup>։

Ժորժ Պիկոյի ուղևորությունը, ինչպես նշվեց, անհանգրստություն ու դժգոհություն առաջ բերեց անգլիական ղեկավար շրջաններում, որպես անմիջականորեն անգլիական քաղաքականությանը հակադրվող անջատ մի քայլ՝ «Այդ գործողու-

<sup>51</sup> P. du Véou, op. cit., p. 107.

<sup>52</sup> Ж. Кайзер, Европа и новая Турция, стр. 27.

<sup>53</sup> J. Pichon, op. cit., p. 203.

<sup>54</sup> P. Redan, op. cit., p. 93. Տե՛ս նաև Lord Kinross, նշվ. աշխ., էջ 103.

Թյունը, — գրում էր անգլիական գործակալը լորդ Քերզոնին, —  
 լույս է սփռում այն հաղորդման վրա, որ ֆրանսիական քաղա-  
 քականությունը Մերձավոր Արևելքում ներկայումս ուղղված է  
 բրիտանական ազդեցության ու շահերի դեմ»<sup>55</sup>։ Իսկ անգլիա-  
 կան գերագույն կոմիսար Ռոբեկը նույն Քերզոնին ուղարկած  
 1919 թ. դեկտեմբերի 12-ի թվակիր նամակում ընդգծում էր,  
 որ ֆրանսիացիներից շատերը, այդ թվում պաշտոնական դիրք  
 գրավող անձինք, համակրում են ազգայնական շարժմանը և  
 ցանկանում, որ Թուրքական հարցը լուծվի բարեհաջող, «այն  
 հիմքի վրա, որը կազմում է ազգայնականների ծրագրի գլխա-  
 վոր կետը, այսինքն՝ անբաժան Թուրքիայի պահպանումը»<sup>56</sup>։  
 Ու թեև Պիկոյի հանդիպումները Քեմալի հետ հավանություն  
 չգտան Ֆրանսիայի կառավարական շրջաններում, որոնք տա-  
 կավին շահագրգռված լինելով գերմանական ռեպարացիանե-  
 րում, չէին կարող վերջնականապես գծովել իրենց նախկին  
 դաշնակցի՝ Անգլիայի հետ, վերջինս որոշում է վճռական  
 քայլի դիմել Թուրքիայի բաժանման հարցը արագ վախճանի  
 հասցնելու համար։ 1920 թ. մարտի 16-ի գիշերը անգլիական  
 ղորքերը ափ հանվեցին Ստամբուլում։ Քաղաքը պաշտոնապես  
 հայտարարվեց գրավված անգլիացիների կողմից, որոնք ցրե-  
 ցին օսմանյան պառլամենտը, պատգամավորների մեծ մասին  
 աքսորեցին Մալթա կղզին, իսկ սուլթանին ու նրա կառավա-  
 րությանը, որը նորից գլխավորեց անգլիասեր Դամադ Ֆերիդ  
 փաշան, ստիպեցին բացահայտորեն հանդես գալ անատոլիա-  
 կան շարժման դեմ։ Շեյխ ուլ—Իսլամը քեմալական շարժումը  
 հայտարարեց խոռովություն սուլթանի դեմ», իսկ ինքը՝ Քե-  
 մալ փաշան համարվեց հանցագործ։

Անգլիայի այս գործողությունները նոր թափ հաղորդեցին  
 քեմալական շարժմանը, իսկ օսմանյան պառլամենտի ցրումը  
 արագացրեց Քեմալի մտահղացման իրականացումը՝ Անա-  
 տոլիայում նոր պառլամենտի հրավիրումը։ 1920 թ. ապրիլի

<sup>55</sup> „Documents on British Foreign Policy 1919—1939“, First se-  
 ries, vol. IV, p. 560.

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 587։



23-ին Անկարայում բացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, որի մի ղզալի մասը կազմեցին օսմանյան պառլամենտի այն պատգամավորները, որոնց հաջողվել էր խույս տալ ձերբակալութունից կամ փախչել Մալթայի աքսորից: Ազգային ժողովն իր ձեռքում կենտրոնացրեց ինչպես օրենսդրական, այնպես էլ գործադիր իշխանութունները, իր գործողութունների հիմքում դնելով 1920 թ. հունվարի 28-ին օսմանյան պառլամենտի կողմից ընդունված «Ազգային ուխտը»: Միաժամանակ ժողովը որոշում կայացրեց, որ Ստամբուլի գրավման օրից՝ մարտի 16-ից հետո սուլթանի և կառավարության արձակած հրամանները ենթակա չեն կատարման Անկարայի կառավարության կողմից:

Մինչ Անկարայում ստեղծված նոր կառավարությունը համախմբում էր երկրի բոլոր ուժերը Անտանտի տերութունների դեմ պայքարն առավել կազմակերպված մղելու համար, այս վերջինները հենց այդ օրերին որոշում էին Օսմանյան կայսրության մեջ մտնող երկրամասերի «վերջնական» բաժանման հարցը: 1920 թ. ապրիլի 19—26-ը Սան-Ռեմոյում հրավիրված դաշնակիցների կոնֆերանսը մշակեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը<sup>57</sup>. Անգլիան ստանում էր Պաղեստինի և Իրաքի կառավարման մանդատը, իսկ Ֆրանսիան՝ Սիրիայի և Լիբանանի մանդատը: Միաժամանակ Անգլիան համաձայնվում էր, որ Կիլիկիան միացվեր Սիրիային: Այս վերջին «զիջումը» Անգլիայի կողմից իրական ոչ մի արժեք չունեի, որովհետև նրան քաջ հայտնի էր, որ Ֆրանսիական զորքերը չեն կարողանա իրենց ձեռքում պահել Կիլիկիան, մինչդեռ Ֆրանսիան Անգլիային էր զիջում ստրատեգիական մեծ կարևորություն ունեցող և նավթի պաշարներով հարուստ Մոսուլի շրջանը, որի դիմաց ապրիլի 24-ին ստորագրված անգլո-ֆրանսիական համաձայնագրով նա

<sup>57</sup> Կոնֆերանսի նիստերի սղագրությունը և պայմանագրի նախագիծը լրիվ տեքստը տես «Documents on British Foreign Policy 1919—1939» First series, vol. VIII, London, 1958, pp. 20—26, 35—113.

ապագայում ստանալու էր Մոսուլի նավթի հանույթի 25 տոկոսը:

Սան-Ռեմոյի կոնֆերանսը նշանավորում էր անգլիական դիվանագիտության հաղթանակը Յրանսիայի նկատմամբ Մերձավոր Արևելքում: Դրա պատճառը, ինչպես նախկինում, Յրանսիայի կախվածությունն էր Անգլիայից հվրոպական գործերում: Վերը հիշատակված ժակ Կայզերը նշում է, որ այդ շրջանում ֆրանսիական ամբողջ արտաքին քաղաքականությունը դեմ էր առել հետևյալ տանջալից երկրնորանքին. Անգլիային գործողությունների ազատություն տալ Արևելքում՝ Հոննոսի վրա աջակցություն ստանալու հույսով կամ հակադեմ Անգլիային Արևելքում և այդպիսով մեկուսացված մնալ Գերմանիային դեմ-հանդիման: Յրանսիայի առաջին ներկայացուցիչ Միլերանը գերադասեց զիջել անգլիական պահանջներին Արևելքում՝ Հոննոսի վրա անգլիական դաշնակիցների հնարավոր աջակցությունը ձեռք բերելու համար»<sup>58</sup>:

Դաշնակիցների կողմից Սան-Ռեմոյում մշակված պայմանագրի նախագիծը, սակայն, չընդունվեց սուլթանական կառավարության կողմից: Նախագծի «քննարկմանը» մասնակցելու նպատակով 1920 թ. մայիսի 11-ին Փարիզ ժամանած Թուրքական պատվիրակությանը, Թեվֆիկ փաշայի ղիսավորությամբ, առաջարկվեց առանց քննարկման ստորագրել պայմանագիրը: Պատվիրակությունը հրաժարվեց պայմանագիր կնքել վերը թվարկված պայմաններով և մեկնեց Կ. Պոլիս՝ իր հետ տանելով պայմանագրի նախագիծը:

Տեսնելով, որ անգամ Անտանտից կախված Կ. Պոլսի կառավարությունը չի համարձակվում տերիտորիալ զիջումներ նախատեսող պայմանագիր կնքել դաշնակից պետությունների հետ, ֆրանսիական դիվանագիտությունը Անկարայի կառավարության հետ համաձայնության զալու և Կիլիկիայում ռազմական գործողությունները դադարեցնելու նոր փորձարեց: Քեմալականների հետ «լեզու գտնելու» մյուս պատճառն

<sup>58</sup> Ж. Кайзер, Европа и новая Турция, стр. 29.



այն էր, որ Ֆրանսիան այդ ժամանակ լուրջ դժվարութիւններ չէր հանդիպել իրեն «հանձնված» երկրում՝ Սիրիայում, որի բնակչութիւնը, տակաւին շաղատագրված օսմանյան լծից, չէր ցանկանում մի նոր լծի տակ ընկնել<sup>59</sup>:

Վերջապէս քեմալականների հետ «հաշտվելու» անհրաժեշտութիւնը թելադրվում էր Կիլիկիայի մի շարք քաղաքներում նրանց ձեռք բերած որոշակի ռազմական հաջողութիւններով<sup>60</sup>: Պէսք է ավելացնել նաև, որ քեմալականների կողմից մղված պրոպագանդի շնորհիվ «թրքական ուժին առասպելական շափ տված ու մինչև կես միլիոն կանոնավոր զինվորի քանակին բարձրացրած էին»<sup>61</sup>: Գրեթե բոլոր ֆրանսիական թերթերն այդ ժամանակ պահանջում էին անմիջապէս պարպել Կիլիկիան<sup>62</sup>:

1920 թ. մայիսի սկզբին ֆրանսիացիները փորձ են անում կապեր հաստատելու և բանակցութիւնների մեջ մտնելու Անկարայի ղեկավար շրջանների հետ: Այդ նպատակով Ստամբուլից Անկարա է մեկնում մի բարձրաստիճան զինվորական և մի քաղաքական գործիչ: Բանակցութիւնները, որոնցում որպէս միջնորդ հանդես էր գալիս Վանի նախկին երեսփոխան Հայդար բեյը, այդ ժամանակ շոշափելի արդյունքի չհանգեցրին<sup>63</sup>: Ավելի ուշ Փարիզում անգլիական դեսպան Գրեհեմը հեռագրում էր Քերզոնին, որ պրեմիեր-մինիստրի հետ իր ունեցած տեսակցութեան ժամանակ վերջինս խոստովանել էր, որ «ֆրանսիական զորքերը վերին աստիճանի վտանգավոր դրութեան մեջ էին գտնվում. մի գումարտակ Բիրեջիկում լրիվ

<sup>59</sup> Ֆրանսիական հեղինակներից Ժան-Պիեռ Ալեմը գտնում է, որ ժամանակավոր զինադադարի հիմնական շարժառիթն էր ֆրանսիական ուժերն ազդել էմիր Ֆեյսալի դեմ և ջախջախել նրան: Տե՛ս J. P. Alem, նշվ. աշխ., էջ 64:

<sup>60</sup> Lord Kinross, op. cit., p. 204.

<sup>61</sup> Տե՛ս Վ. Լ. Խապետեան, Օրագրութիւն ուղևորութեան Եվրոպա Սահակ Բ. Կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալեպ, 1928, էջ 13:

<sup>62</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>63</sup> M. Кемаль, Путь новой Турции, т. 3, стр. 87.

շրջապատման մեջ էր ընկել, և Գուրոն հայտնել էր, որ չի կարող օգնություն հասցնել... Ստեղծված իրադրության պայմաններում որևէ այլ ընտրություն հնարավոր չէր անել»<sup>64</sup>, Մալխի վերջերին Անկարա է գալիս Բեյրութում ֆրանսիական գերագույն կոմիսարիատի գլխավոր քարտուղար Ռոբեր դը Քեի գլխավորած միսիան, որի հետ Մուստաֆա Քեմալը «երկար ու ծանր բանակցություններից հետո» մալխի 30-ին կլնքում է զինադադար 20 օրով<sup>65</sup>:

Անկարայում ստորագրված զինադադարի պայմանագիրը նախատեսնում էր.

1. Առաջին 10 օրվա ընթացքում ֆրանսիական և մահմեդական բոլոր բանտարկյալների, ռազմական թե քաղաքական, փոխանակում:

2. Ֆրանսիական զորքերի նահանջը մինչև Մերսին—Ադանա—Իսլահիե երկաթգիծը. Սսի, Պոզանթիի, Այնթապի, ինչպես նաև երկաթգծից հյուսիս ընկած քաղաքների պարպում:

3. Թշնամական բոլոր գործողությունների դադարեցում՝ մալխի 30-ի կեսգիշերից հաշված<sup>66</sup>:

Վերևում ասվեց քեմալականների հետ համաձայնություն հասնելու ֆրանսիացիների զրդապատճառների մասին: Ինչ վերաբերում է Անկարայի կառավարության հետապնդած նպատակներին, այդ մասին Քեմալը իր 1927 թ. հայտնի ճառում հետևյալն է ասել. «Ամենից առաջ ես ուզում էի Ադանայի գոտում և Ադանայի ճակատում գտնվող ազգային ուժերի վերակառուցում անցկացնել... Բացի դրանից, ես ի նկատի ունեի քաղաքական շահը, որն այդ պահին մեզ համար խիստ կարևոր էր. Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը չէին ճանաչվել Անտանտի տերությունների կողմից, ընդհակառա-

<sup>64</sup> „Documents on British Foreign Policy 1919—1939“, First series, vol. XIII, London, 1963, p. 80.

<sup>65</sup> E. Brémond, op. cit., p. 53; Paul Bernard, Six mois en Cilicie, p. 40.

<sup>66</sup> P. du Vêou, op. cit., p. 219; P. Redan, op. cit., p. 101.



կը, երկրի ու ազգի ապագային վերաբերող հարցերի շուրջ այդ տերութիւնները բանակցում էին Դամադ Ֆերիդ փաշայի կառավարութեան հետ Ստամբուլում: Եւ այն փաստը, որ Ֆրանսիացիները շրջանցելով Ստամբուլի կառավարութիւնը, մեզ հետ բանակցութիւնների մեջ են մտնում և համաձայնագիր ստորագրում, ինչ հարցի վերաբերյալ էլ դա լինի, այդ ժամանակ մեզ համար քաղաքական խիստ հաջողութիւն էր... Այս բանակցութիւններից ես այն տպավորութիւնը ստացա, որ Ֆրանսիացիները պատրաստ են իրենց զորքերը հանել Ադանայի մարդից»<sup>67</sup>:

Մայիսի 30-ի զինադադարը, իսկապես, նշանակալից հաջողութիւն էր քեմալականների համար, մինչդեռ Ֆրանսիացիները ոչ միայն որևէ շոշափելի օգուտ չքաղեցին դրանից, այլև կրեցին բարոյական մեծ պարտութիւն, որն իր հերթին Ֆրանսիային ռազմական նոր անհաջողութիւններ բերեց Կիլիկիայում: «Զինադադարի հրապարակումը, — խոստովանում է Պիեռ Ռըդանը, — կատարյալ հեղաբեկում առաջ բերեց Կիլիկիայի ազգաբնակչութեան մեջ: Մինչ այդ մենք կողմնակիցներ ունեինք, իսկ մայիսի վերջից սկսած մի համընդհանուր զայրույթ ու դժգոհութիւն ծայր առավ, տատանվողները, որոնք տակավին կարծում էին, թե Ֆրանսիական ուժերը կգան հզորացնելու վիլայեթում առկա զորքերը, լրիվ կորցրեցին վստահութիւնը մեր զենքի հանդեպ...»<sup>68</sup>:

Կիլիկիայում Ֆրանսիական վարչական վերահսկողութեան ղեկավար գնդապետ Բրեմոնը ևս խոստովանում է, որ զինադադարը «հիասթափութիւն առաջ բերեց», Ֆրանսիացիներից վանեց և քեմալականներին հարել պարտադրեց այն թուրքերին, որոնք հսկատ էին ընծայում Ֆրանս-թուրքական բարեկամութեանը: Միաժամանակ, նա մատնանշում է, որ Մուստաֆա Քեմալի լայն խոստումները՝ վերջ դնելու թշնամանքին, նույնպես չիրականացան<sup>69</sup>:

<sup>67</sup> M. Kemal, *Путь новой Турции*, т. 3, стр. 87—88.

<sup>68</sup> P. Redan, *op. cit.*, p. 101.

<sup>69</sup> E. Brémond, *op. cit.*, pp. 54—55.

Սակայն ֆրանս-քեմալական զինադադարից առավել տուժեցին կիլիկիահայերը: Եթե ժորժ Պիկոյի ուղևորութունը Սրվաս հանգեցրեց քեմալական ուժերի համախմբմանը, ֆրանսիական զորքերի նահանջին և դրա հետևանքով Մարաշի շուրջ 12 հազար հայերի զարհուրելի կոտորածին (այդ մասին հաջորդ գլխում), ապա Ռոբեր դը Քեի առաքելութունը Անկարա, վերստին դրսևորելով Ֆրանսիայի զիբբերի թուլութունը Կիլիկիայում և ֆրանսիական դիվանագիտության տատանումները, խրախուսեց ազգայնական այն ուժերին Կիլիկիայում, որոնք, ղեկավարվելով Անկարայից եկող հրահանգներով, հարմար պահի էին սպասում հայերի դեմ խժժություններ ձեռնարկելու համար: Հասկանալի է, որ ֆրանսիացիների հեռանալուց հետո հայերն այլևս չէին կարող մնալ իրենց հարազատ վայրերում, ստիպված էին նահանջելու ֆրանսիական զորքի հետ մեկտեղ: Այդ ձևով հայությունից դատարկվեց հինավուրց Սիսը՝ Կիլիկիայի հայ կաթողիկոսի աթոռանիստ քաղաքը: Զինադադարի համաձայն ֆրանսիական կայազորը 1920 թ. հունիսի սկզբին թողեց քաղաքը իր հետ տանելով 7500 հայ փախստականների, որոնք հունիսի 7-ին ժամանեցին Ադանա կապիտան Քայարդայի զորասյան ուղեկցությամբ<sup>70</sup>: «Այդ մարդիկ, — գրում է գնդապետ Բրեմոնը, — ավերված, խաբված, զայրացած այն բանից, որ ստիպված են լքել Փոքր Հայքի մայրաքաղաքը, կաթողիկոսի նստավայրը, գալիս էին անկարգության տարր դառնալու Ադանա քաղաքում, որտեղ տեղավորվում էին մեծ դժվարությամբ, և բազմապատկում օրեցօր սաստկացող սովը»<sup>71</sup>:

Ֆրանս-քեմալական զինադադարը նոր դժգոհություն առաջ բերեց ոչ միայն Կիլիկիայում, այլև Ֆրանսիայում: Պառլամենտում սուր բանավեճեր էին գնում ֆրանսիական զորքերի Կիլիկիայում մնալու նպատակահարմարության և հե-

<sup>70</sup> P. du Vésou, op. cit., p. 222. Մանրամասն տե՛ս Միսաֆ Քելեշեան, Սիս-Մատեան, Պեյրուֆ, 1949, էջ 622—627.

<sup>71</sup> E. Brémond, op. cit., p. 55.



ոանկարները շուրջ: Կառավարական շրջաններում նույնպես լուրջ տարածայնութուններ կային «Թուրքական հարցում» Ֆրանսիայի վարած քաղաքականության շուրջ: Զինվորական կուսակցությունը մարշալ Ֆոշի պիսավորությամբ պահանջում էր առավել խիստ «միջոցների դիմել» Ֆրանսիայի հեղինակությունը փրկելու համար: Միլերանի կառավարությունը «առժամանակ» ստիպված էր հաշվի նստել «աջերի» գրաված դիրքի հետ: Ի վերջո Ֆրանսիան 1920 թ. հունիսի 21-ին Բուլոնում կայացած Անտանտի Գերագույն խորհրդի նիստին հանդես գալով Անգլիայի հետ համատեղ, միացավ Անատոլիայում հունական հարձակում ձեռնարկելու վերաբերյալ որոշմանը, իսկ 1920 թ. օգոստոսի 10-ին դաշնակից մյուս պետությունների հետ մեկտեղ Սևրում հաշտության պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ:

Սևրի պայմանագիրը ստորագրվեց մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հեջազի, Լեհաստանի, Հունաստանի, Ռումինիայի, Պորտուգալիայի, Զեխտսլովակիայի, Հարավսլավիայի, մյուս կողմից Թուրքիայի միջև:

Սևրի պայմանագրով Արևելյան Թրակիան Ազրիանապոլսի հետ, Գալիպոլիի ամբողջ թերակղզին, ինչպես և Իզմիր քաղաքը իր մերձակայքով տրվում էին Հունաստանին: Կոստանդնուպոլիսը մնում էր թուրքերի ձեռքում, սակայն, 36-րդ հոդվածի համաձայն, եթե Թուրքիան հրաժարվեր պայմանագրի որոշումները կատարելուց, մասնավորապես փոքրամասնությունների էթնիկական, կրոնական ու լեզվական իրավունքները հարգելուց, դաշնակից տերություններին իրավունք էր վերապահվում փոփոխել իրենց նախորդ որոշումը: Նեղուցների գոտին նույնպես մնում էր թուրքական իրավասության ներքո, սակայն լրիվ ապառազմականացվում էր և դրվում հատուկ միջազգային կազմակերպության՝ «Նեղուցների հանձնաժողովի» վերահսկողության տակ:

Սիրիան, Լիբանանը, Իրաքը և Պաղեստինը անջատվում էին Օսմանյան կայսրությունից և հանձնվում մանդատային

կառավարմանը (հոդված 94—95): Թուրքիան պարտավորվում էր ճանաչել որպես ինքնուրույն պետություններ Հեջազի թագավորությունը (հոդված 98) և Հայաստանը՝ Տրապիզոնի, էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայիթների սահմաններում: Թուրքիայի ու Հայաստանի սահմանը հիշյալ տերիտորիայի շրջանակներում որոշվելու էր համաձայն ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի միջնորդ վճռի (հոդված 88—89):

62-րդ հոդվածով նախատեսվում էր տեղական ինքնավարություն քրդաբնակ այն շրջանների համար, որոնք կընկնեին ապագա Հայաստանի հարավային սահմաններից հարավ և Թուրքիայի ու Սիրիայի և Իրաքի սահմանից հյուսիս: Վերջնական տերիտորիան որոշելու էր բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների կողմից նշանակված ներկայացուցիչների հանձնաժողովը, որի որոշումները պարտադիր էին լինելու Թուրքիայի համար (հոդված 63): Եթե պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո, 62-րդ հոդվածում նշված մարզերի քուրդ ազգաբնակչությունը դիմեր Ազգերի Լիգայի խորհրդին, և եթե խորհուրդը գտներ, որ այդ բնակչությունը ընդունակ է անկախության, Թուրքիան պարտավորվում էր հրաժարվել այդ մարզերի նկատմամբ ունեցած բոլոր իրավունքներից (հոդված 64):

Պայմանագրի առանձին բաժնում խոսվում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին: 141-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր ապահովել երկրի «բոլոր բնակիչների կյանքի ու ազատության լիակատար պաշտպանությունը, անկախ ծագումից, ազգությունից, լեզվից, ցեղից կամ կրոնից»: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեւ հաջորդ, 142-րդ հոդվածը, որտեղ ասված էր հետևյալը.

«Ի նկատի ունենալով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում իշխող տեռորիստական ռեժիմի պայմաններում իսլամի դավանանքի ընդունումը շէր կարող տեղի ունենալ նորմալ կարգով, այդ ժամանակից ի վեր կատարված դավանափոխությունը չի ճանաչվում, իսկ յուրաքանչյուր անձ,



որը մինչև 1914 թ. նոյեմբերի 1-ը մահմեդական շի եղել, դիտվելու է, որպես այդպիսին մնացած...

Պատերազմի ժամանակ Թուրքիայում կատարվող զազանությունների հետևանքով մարդկանց պատճառած շարիքը առավել լայն շափով ուղղելու համար, օսմանյան կառավարությունը պարտավորվում է ամեն կերպ տրամադրել իր և օսմանյան իշխանությունների օժանդակությունը՝ փնտրելու և ազատելու ամեն ցեղի ու կրոնի բոլոր մարդկանց, ովքեր անհայտացել, առևանգվել, երկրի խորքն են քշվել կամ ազատությունից զրկվել 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո...»<sup>72</sup>։

Սերի պայմանագիրը ստրկացուցիչ պայմանագիր էր Թուրքիայի համար, որը, առանց հանրաքվեի, կորցնում էր Իզմիրի մարզը, զրկվում Արևելյան Թրակիայից՝ Ադրիանապոլսի հետ մեկտեղ, Դարդանեղի եվրոպական ափից և Գալիպոլիական ամբողջ թերակղզուց։ Կապիտուլյացիաների ուժիմբ ոչ միայն վերականգնվում էր Անտանտի տերությունների կողմից, այլև տարածվում դաշնակից այն տերությունների վրա, որոնք մինչև համաշխարհային պատերազմը շէին օգտորվում այդ իրավունքից (հոդված 261)։ Թուրքական Ֆինանսների կարգավորման համար ստեղծված Ֆինանսական հանձնաժողովում, որի կազմի մեջ մտնում էին Ֆրանսիայի, Բրիտանական կայսրության, Իտալիայի և Թուրքիայի ներկայացուցիչները, վերջինս խորհրդակցական ձայն ուներ միայն (հոդված 231)։ Այդ նույն հանձնաժողովին իրավունք էր վերապահվում իր լիակատար վերահսկողությանը ենթարկել Թուրքիայի ամբողջ տնտեսությունը և այլն։

Պետք է նշել, սակայն, որ Օսմանյան կայսրության կեղեքված ժողովուրդների՝ արաբների, հայերի, քրդերի ազգային ինքնուրույնության ու անկախ պետականության հարցի արժարժումը Սերի պայմանագրում մի քայլ առաջ էր այդ ժո-

<sup>72</sup> Մանրամասն տե՛ս «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне». Полный перевод с французского текста под ред. проф. Ю. В. Ключникова и проф. А. В. Сабанина, М., 1927, էջ 15—45։

ղովուրդների ազատագրութեան և ինքնուրույն պետութեան ստեղծման ճանապարհին: Ընդհատ է, ազատագրվելով թուրքական դարավոր լծից, այդ ժողովուրդները ընկնելու էին կախման մեջ Արևմուտքի իմպերիալիստական խոշոր տերութիւններին, սակայն պատմութեան ընթացքը և, մասնավորապես, Օսմանյան կայսրութիւնից անջատված արաբական երկրներին պատմական զարգացումը ցույց տվեցին, որ առավել դյուրին է և իրական ազատագրվել Արևմուտքի իմպերիալիստական տերութիւններին լծից, քան թուրքական (լինի դա սուլթանական, իթթիհատական, թե քեմալական) դարավոր լծից:

Դառնանք Ֆրանսիայի առնչութեանը Սևրի հաշտութեան պայմանագրին: Ինչպես երևում է պայմանագրի հոդվածներին, Ֆրանսիան առանձնապես մեծ բան չէր շահում: Ֆինանսական վերահսկողութիւնը, որտեղ Ֆրանսիան մինչ պատերազմը գերակշռող դիրք ուներ, նա այժմ պետք է իրականացնէր Անգլիայի և Իտալիայի հետ համատեղ, Նեղուցներում Ֆրանսիան ստորագրած դիրք էր զրավելու Անգլիայի համեմատ, իսկ Արևմտյան Հայաստանի, Քուրդստանի ու Իզմիրի անջատումով զրկվելու էր տնտեսական ու դրամական հսկայական շահութեան: Եթե այս բոլորին ավելացնենք Ֆրանսիայի պարտավորութիւնը՝ Կիլիկիան վերագարձնելու թուրքիային, ապա լիովին հասկանալի կդառնա այն դժգոհութիւնը, որ Սևրի պայմանագրի ստորագրումը առաջ բերեց Ֆրանսիայի ազդեցիկ քաղաքական շրջաններում ու ֆրանսիական մամուլում:

«Ֆրանսիայում Սևրի պայմանագիրը ուժեղ դիմադրութեան հանդիպեց այն շրջաններում,— գրել է Պայառեսը,— որոնք այն տարօրինակ կարծիքին են, թե հանրապետութիւնը (Ֆրանսիան— Ռ. Ս.) մահմեդական մի տերութիւն է»<sup>73</sup>, Պայմանագրի տակ ֆրանսիական ներկայացուցիչների ստորագրութեան թանաքը դեռ չզորացած, այդ նույն մարդիկ սկսեցին հանդես գալ Սևրից հրաժարվելու այլազան առաջարկներով, իսկ արտաքին գործերի մինիստրութեան լսափողը հանդիսա-

<sup>73</sup> M. Paillarès, op. cit., p. 190.



ցող «Տան» թերթը «չէր դադարում կոչ անելուց շեղյալ հայտա-  
րարել պայմանագիրը»<sup>74</sup>։

«Թուրքական պայմանագիրը, — գրել է Պուանկարեն, —  
ստորագրվեց Սևրում՝ ճենապակու գործարանի գտնվելու վայ-  
րում... Եվ նա ինքը փխրուն իր է, գուցե և ջարդված սափոր։  
Մի դիպչեք նրան։ Արդեն վերջին բոպեին Հոռոս կղզու ապա-  
գա ճակատագրի հարցում Հունաստանի ու Իտալիայի հակա-  
դիր տեսակետները քիչ մնաց խափանելին ամբողջ գործը։  
Բաղմիցս հայտարարված ստորագրության արարողությունը  
անընդհատ հետաձգվում էր։ Այն վերջապես տեղի ունեցավ  
հոգնածության ու անտարբերության միջնորոտում, և ուշադիր  
դիտորդներից մի քանիսը միայն, ոչ առանց մեղամադձության,  
նկատեցին, որ դրանով սրբագործվում էր ֆրանսիական ազ-  
դեցության խիստ թուլացումը Արևելքում»<sup>75</sup>։

Պայմանագրի վավերացումը լուրջ դիմադրության հան-  
դիպեց Ֆրանսիայի Ազգային ժողովում և Սենատում։

«Առաջին իսկ ժամից, — խոստովանում էր մինիստրների  
խորհրդի նախագահ Ա. Բրիանը, — պառլամենտը հանդես բե-  
րեց իր բացասական վերաբերմունքը Սևրի պայմանագրի վա-  
վերացման հարցում։ Եվ ես մեր դաշնակիցներին պարզորոշ  
ասացի, որ չպետք է հույս դնել ֆրանսիական պառլամենտի  
վրա՝ վավերացնելու համար Սևրի պայմանագիրը այն տես-  
քով, ինչպիսին որ նա կա, որովհետև նա ուժեղ կերպով ոտ-  
նահարում է ֆրանսիական ավանդույթները, խիստ հակազդը-  
վում է մեր շահերին ինչպես ներկա պահին, այնպես էլ ապա-  
գայի տեսանկյունից, և որ անհրաժեշտ է վերստին ուսումնա-  
սիրել և փոփոխել այն...»<sup>76</sup>։

Սևրի պայմանագիրը վերանայելու կողմնակիցները ել-  
նում էին քեմալականներին ոչ մեծ դիշուաներ անելու գնով

74 Նույն տեղում։

75 Տե՛ս «Севрский мирный договор и акты, подписанные в Ло-  
занне», էջ XVIII։

76 „L'Asie française“, № 194, juillet-août 1921, p. 312—313.

Նրանց հակասովետական խմբավորման մեջ ընդգրկելու ձրգտումներին: 1920 թ. ամռան ամիսներին Անկարայի կառավարութեան արտաքին քաղաքական դիրքերը զգալիորեն ամրապնդվել էին շնորհիվ Սովետական Ռուսաստանի հետ հաստատված դիվանագիտական հարաբերութիւնների: Սկրի պայմանագրի ստորագրման ժամանակ և դրանից հետո Մոսկվայում էր գտնվում թուրքական պատվիրակութունը Բեքիր Սամի բեյի գլխավորութեամբ, որը օգոստոսի 24-ին նախնական պայմանագիր ստորագրեց ՌՍՖՍՀ կառավարութեան հետ: Ֆրանսիական դիվանագիտութիւնը, սովետա-թուրքական հետագա մերձեցումը կանխելու համար, փորձ է անում քեմալական թուրքիային դուրս բերել Սովետական Ռուսաստանի դեմ՝ օգտագործելով տերիտորիալ հարցերում նրանց միջև ծագած տարաձայնութիւնները: Ֆրանսիական զորավար դը Բուրգոնը, Կոստանդնուպոլսի գրավման կորպուսի նախկին հրամանատարը, առաջարկում էր թուրքիային վերադարձնել Իզմիրը ու Թրակիան՝ նրան Ֆրանսիայի կողմը գրավելու համար:

«Ես կարծում եմ, — գրել է նա, — որ դա այնքան էլ թանկ վճար չէր լինի աշխարհի միակ բանակին, որը ներկայումս կարող է հանդես գալ բոլշևիկների դեմ»<sup>77</sup>:

Սկրից հրաժարվելու անհրաժեշտութեան մասին գրում էին բոլոր ազդեցիկ ֆրանսիական թերթերը: Սովետա-լեհական պատերազմում և Վրանդելի դեմ երիտասարդ Սովետական Ռուսաստանի տարած վճռական հաղթանակներից հետո ֆրանսիական մամուլն առավել մեծ անհանգստութեամբ էր գրում այն մասին, որ Անտանտի տերութիւնների անհեռատես քաղաքականութիւնը քեմալականներին նետում է բոլշևիկների գիրկը՝ նրանց դեմ դուրս բերելու փոխարեն: «Անհրաժեշտ է, — գրել է «Տան» թերթը 1921 թ. հունվարի 24-ին, — որ Անատոլիան դադարի բոլշևիկացման ենթարկվելուց, իսկ այդ բանը հնարավոր կդառնա Սկրի պայմանագիրը վերանայելուց հետո միայն»<sup>78</sup>: Իսկ «Վիկտուար» թերթը առաջարկում

<sup>77</sup> «Вестник НКВД», 1921, № 1—2, стр. 23.

<sup>78</sup> „Le Temps“, 24.1. 1921.



էր ընդունել Քեմալի բոլոր պայմանները, որովհետև «Ասիայում ուսական բոլշևիզմի լավագույն պատվարը ազգայնական Թուրքիայի հետ համաձայնության գալն է»: «Թուրքական բանակը, — ասված է նույն հոդվածում, — կկասեցնի բոլշևիզմը ամբողջ Ասիայում և որպես դրա սկիզբը կազատագրի Բաքվի նավթաբեր հորերը»<sup>79</sup>:

Միաժամանակ, Ֆրանսիական դիվանագիտութունը ծրագրում էր քեմալականների հետ մերձեցումն օգտագործել Մերձավոր Արևելքում Անգլիայի դիրքերը և ազդեցութունը թուլացնելու նպատակով, օգտագործելով նաև Սևրից հետո հատկապես անգլիական իմպերիալիզմի դեմ ծայր առած դժոճութունն ու զայրույթը: Ֆրանսիական պատմաբան Տեստին մատնանշում է, որ Սևրից հետո քեմալականների վերաբերմունքը Ֆրանսիացիների հանդեպ միանգամայն խաղաղասիրական էր, որովհետև Կիլիկիան թողնվում էր Թուրքիային և վերջինիս հիմնական երկյուղը Ֆրանսիայի մտադրութունների հանդեպ ցրվել էր, մինչդեռ Անգլիան շարունակում էր տեր ու տնօրինութուն անել Կոստանդնուպոլսում՝ առավել գրգռելով թուրքերին<sup>80</sup>:

1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին կայացած Լոնդոնի երկրորդ կոնֆերանսում և 1921 թ. հունվարին Փարիզում գումարված Անտանտի Կերպույն խորհրդի նիստում Սևրի պայմանագիրը հետագա քննարկման առարկա դարձավ: Ֆրանսիան վերստին հանդես եկավ այն մասնակի փոփոխութունների ենթարկելու պահանջով: Մասնավորապես, Լոնդոնում, երևք տնօրնութունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարության ղեկավարների հանդիպման ժամանակ, 1920 թ. դեկտեմբերի 2-ին, Լեյզը բացորոշ հայտարարեց, որ Մերձավոր Արևելքում ստեղծված նոր իրադրության պայմաններում լավագույն կուրսը պայմանագիրն իր ամբողջության

79 Տե՛ս «Известия», 19. 2. 1921.

80 Testis, op. cit., p. 45.

մեջ պահպանելով հանդերձ նրա առանձին կողմերի «բարեփոխումն է»<sup>81</sup>։

Դրա տակ, Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրը ամենից առաջ հասկանում էր Իզմիրի շրջանի վերադարձը Թուրքիային. «Սևրի պայմանագրի այն հոդվածները, որոնցով Թուրքիայից վերցվում են նրա առավել գեղեցիկ տիրույթներից մի քանիսը, խորապես վիրավորել են Թուրքերի ազգային հպարտությունը, և քանի դեռ Իզմիրը մնում է հույների ձեռքում, չի կարող խաղաղություն լինել Փոքր Ասիայում»<sup>82</sup>։

Ի վերջո, Ֆրանսիային հաջողվում է հասնել այն բանին, որ ընդունվում է որոշում Սևրի պայմանագիրը մասնակի փոփոխությունների ենթարկելու և այդ նպատակով լոնդոնում դաշնակից տերությունների կոնֆերանս հրավիրելու մասին։

Կոնֆերանսին հրավիրվում էին Հունաստանի և Թուրքիայի ներկայացուցիչները, ըստ որում վերջինիս թույլատրվում էր հանդես գալ երկու պատվիրակութայնով՝ Կ. Պոլսի կառավարության և Անկարայի կառավարության։ Մեծ վեզիր Թեվֆիկ փաշայի բոլոր ջանքերը՝ միացյալ մի պատվիրակութայն ուղարկելու լոնդոն, ապարդյուն անցան։ Այդ առթիվ նրա և Մուստաֆա Քեմալի միջև տեղի ունեցած նամակագրության լրնթացքում<sup>83</sup> վերջինս վճռականորեն պահանջում էր, որ միայն Անկարայի Ազգային մեծ ժողովի պատվիրակները մեկնեն լոնդոն, որպես ամբողջ Թուրքիայի միակ օրինական ներկայացուցիչներ<sup>84</sup>։ Համաձայնություն չկայացավ և Անկարայի կառավարությունը կազմեց առանձին պատվիրակութայն՝ ար-

<sup>81</sup> „Documents on British Foreign Policy 1919—1930“, First series, vol. VIII, p. 842. Տե՛ս նաև M. S. Anderson, The Eastern Question 1777—1923. A study in international relations, London, 1966, էջ 369։

<sup>82</sup> „Documents on British Foreign Policy 1919—1930“, First series, vol. VIII, p. 843.

<sup>83</sup> Տե՛ս M. Кемаль, Путь новой Турции, т. 3, էջ 177—199։

<sup>84</sup> Տե՛ս La guerre de l'indépendance turque. Publié par la Direction Générale de la presse au Ministère de l'intérieur. Ankara, 1937, էջ 52—53։



ոտարին գործերի մինիստր Բեքիր Սամի-բեյի գլխավորութ-  
վամբ, որը պետք է մեկնե՞ր Լոնդոն և մասնակցե՞ր կոնֆերանս-  
սին՝ հատուկ հրավեր ստանալու դեպքում միայն<sup>85</sup>: Քեմալա-  
կանները վստահ էին, որ նման հրավեր կստացվի, ուստի և,  
ժամանակ շահելու նպատակով, պատվիրակութունը Ադալիա  
քաղաքի վրայով ուղևորվում է Հոտմ, որտեղ և Իտալիայի ար-  
տարին գործերի մինիստր Սֆորցան պաշտոնապես հայտնում  
է, որ Անկարայի կառավարութան պատվիրակութունը հրա-  
վիրվում է Լոնդոնի կոնֆերանսին:

1921 թ. փետրվարի 21-ին բացված Լոնդոնի կոնֆերանս-  
ում սուլթանի ներկայացուցիչները, որոնք «անխոս դերա-  
սաններն դեր էին կատարում»<sup>86</sup>, ձուլվեցին քեմալական պատ-  
վիրակութանը և Ռեշիդ փաշան Կ. Պոլսի պատվիրակութան  
անունից պաշտոնապես հայտարարեց, որ Բեքիր Սամի բեյը  
լիազորվում է արտահայտելու թուրքական տեսակետը<sup>87</sup>: Փե-  
տրվարի 27-ին թուրքական միացյալ պատվիրակութունը  
ներկայացրեց իր պահանջները.

1. Եվրոպական մասում 1913 թ. սեպտեմբերի 16-ի  
Թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերա-  
կանգնում, այսինքն ամբողջ Արևելյան Թրակիան վերադարձ-  
նել Թուրքիային:

2. Թուրքիայի հարավային սահմանները պետք է անցնեն  
այն գծով, որը բաժանում է նրան արաբական մեծամասնու-  
թյամբ բնակեցված շրջաններից: Այդ գիծը կորոշվի Թուրքիա-  
յի և շահագրգռված կողմի միջև կնքված համաձայնագրով:  
Այդ գծից հյուսիս ընկած վայրերը, որոնք բնակեցված են  
թուրքերով, ինչպես և Կիլիկիան, պետք է պարզվեն օտար  
գործերից և վերադարձվեն Թուրքիային:

3. Թուրքիայի արևելյան սահմանը պետք է անցնի Թուրք-  
պարսկական սահմանագծով և Թուրքիայի ու Հայաստանի  
միջև կնքված պայմանագրի (Ալեքսանդրապոլի—Ռ. Ս.) հա-  
մաձայն:

<sup>85</sup> М. Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 200.

<sup>86</sup> М. Paillarès, op. cit., p. 206.

<sup>87</sup> „L'Aste française“, Mars 1921, p. 90.

4. Իզմիրը և Փոքր Ասիայի բոլոր այն տերիտորիաները, որոնք գրավված են հույների կողմից, պետք է վերադարձվեն Թուրքիային:

5. Նեղուցներում ազատ նավարկության սկզբունքի հաստատում, այն հաշվով, սակայն, որ ապահովվի Կ. Պոլսի կատարյալ անվտանգությունը և Թուրքիայի սուլթանությունը:

6. Փոքրամասնությունների, նրանց կրոնի և լեզվի պաշտպանությունը կապահովվի նույն կարգով, ինչ-որ նախատեսված է Սին-ժերմենի, Նեյիի և Տրիանոնի պայմանագրերով:

7. Օսմանյան սուլթանության հարգումը:

8. Ռազմական և ծովային ուժերի չափը որոշելիս հաշվի առնել երկրի սահմանների տարածվածությունը, ինչպես և հարևան երկրների քաղաքական վիճակը, դրան համապատասխանորեն ապահովելու համար ներքին կարգ ու կանոնը և սահմանների անվտանգությունը:

9. Թուրքիայի ֆինանսական ու տնտեսական անկախության ճանաչում՝ կապիտուլյացիաների ռեժիմը լրիվ վերացնելու և երկրի համակողմանի զարգացումն ապահովելու միջոցով<sup>88</sup>:

Թուրքական, իսկ ավելի ճիշտ Անկարայի պատվիրակության կողմից ներկայացված հաշտության ծրագիրը ըստ էության արտահայտում էր «Ազգային ուխտի» բոլոր հիմնական սկզբունքները, այսինքն այն շէր ճանաչում հայերի ու քրդերի ինքնորոշման իրավունքը, օրինականացնում էր Կարսի մարզի և Ալեքսանդրապոլի նահանգի դավթումը քեմալականների կողմից և ոչ մի լուրջ երաշխիքներ չէր ապահովում Թուրքիայի ազգային փոքրամասնություններին:

Փետրվարի 26-ի նիստում դաշնակից տերությունները մերժեցին թուրքական առաջարկները և անցան կոնֆերանսի մյուս՝ ռեպարացիոն հարցի քննարկմանը: Միաժամանակ, Անտանտի գլխավոր տերությունները՝ Անգլիան ու Ֆրանսիան

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 90—91:



ստեղծված ընդմիջումը օգտագործեցին թուրքական պատվիրակութիւնի ղեկավար Բեքիր Սամի բեյի հետ անշատ բանակցութիւններ վարելու համար:

Անգլիական դիվանագիտութիւնի հետապնդած նպատակն էր բեմալականներին աննշան զիջումներ անելով համաձայնութիւն գալ նրանց հետ և օգտագործել իրենց հակասովետական ծրագրերում: Բեքիր Սամի բեյը ընդառաջ էր գնացել Լյուզ Ջորջին, և նրա հետ ունեցած գաղտնի զրույցների ժամանակ առաջարկել էր Թուրքիան ընդգրկել հակասովետական խմբավորման մեջ՝ նրան միացնելով Հյուսիսային Կովկասի լեռնականներին և այդպիսով ստեղծելով բուֆերային ֆեղերալ պետութիւն Արևմուտքի և Սովետական Ռուսաստանի միջև<sup>90</sup>: Սակայն բանակցութիւնների գաղտնիքը անսպասելիորեն հայտնի դարձավ և հրապարակվեց մամուլում, և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ստիպված էր Բեքիր Սամի բեյին ազատել արտաքին գործերի մինիստրի պաշտոնից<sup>90</sup>:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի քաղաքականութիւնը, այն Լոնդոնի կոնֆերանսում երկու հիմնական նպատակ էր հետապնդում. 1. ամեն կերպ խանդարել սովետա-թուրքական քա-

<sup>90</sup> *Մանրամասն տե՛ս Halide Edip, The Turkish Ordeal, London, 1928, էջ 255:*

<sup>90</sup> Մեր կարծիքով, սխալվում են այն թուրքագետները, որոնք Լյուզ-Ջորջի հետ ունեցած Բեքիր Սամի բեյի գաղտնի զրույցները դիտում են սոսկ որպէս վերջինիս անձնական նախաձեռնութիւն հետևանք: Իրականում, սակայն, գործը մի փոքր այլ բնույթ էր կրում: Բեքիր Սամի բեյի պատվիրակութիւնը Անկարա վերադարձավ Ինոնյու գյուլի մոտ 1921 թ. մարտի 31-ին բեմալական զորքերի տարած երկրորդ հաղթանակից հետո և հենց այդ հանգամանքը փոփոխութիւն առաջ բերեց Անկարայի կառավարութիւնի դիրքում՝ նրան դարձնելով առավել անհանդուրժող: Հայտնի է, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը Բեքիր Սամիին լիազորութիւններից զրկեց այդ հաղթանակից, և միաժամանակ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ Անտանտի տերութիւնները չեն համաձայնվում բավարարել թուրքերի հիմնական պահանջները: Ուշադրութիւն արժանի է նաև այն փաստը, որ մի քանի ամիս հետո, 1921 թ. օգոստոսին, Բեքիր Սամի բեյը Քեմալի կողմից նորից ուղարկվեց Եվրոպա՝ Անտանտի պետութիւնների հետ համաձայնութիւն գալու համար հոյ նախապատրաստելու նպատակով:

դաքական մերձեցմանը, 2. անչափ համաձայնության գալ քե-  
մալականների հետ, նրանց օգտագործելով միաժամանակ  
Անգլիայի դեմ: Վերջին խնդրում ֆրանսիական դիվանագի-  
տությունը որոշակի հաջողության հասավ. 1921 թ. մարտի 9-ին  
Բեքիր Սամի բեյը և Բրիանը ստորագրեցին ֆրանս-թուրքա-  
կան քաղաքական, ռազմական ու տնտեսական համաձայնա-  
գիր հետևյալ պայմաններով.

1. Թշնամական գործողությունների դադարեցում և ռազ-  
մագերիների փոխանակում.

2. Զինված բնակչության և հրոսակների զինաթափում՝  
ֆրանսիական և թուրքական հրամանատարության համա-  
ձայնությամբ.

3. Ոստիկանական ուժերի ստեղծում (արդեն ստեղծված  
ժանդարմերիայի օգտագործմամբ)՝ թուրքական հրամանա-  
տարության ներքո, ընդգրկելով նաև թուրքական կառավարու-  
թյան տրամադրության տակ դրված ֆրանսիական սպաներին.

4. Ֆրանսիական ու թուրքական հրամանատարության  
համաձայնությամբ մեկ ամսվա ընթացքում (թշնամական  
գործողությունները դադարեցնելուց հետո) աղատել պատե-  
րազմող կողմերի գրաված այն տերիտորիան, որն ընկած էր  
Սևրի պայմանագրով գծված սահմանից հյուսիս: Թուրքական  
զորքերը հեռանում են առաջինը և 6 օր հետո դրավում են  
ֆրանսիական զորքերի կողմից էվակուացված տերիտորիան:

Ժամանակավոր բնույթի միջոցներ կձեռնարկվեն կապ-  
ված այն տերիտորիաների էվակուացման հետ, որոնք Սևրի  
պայմանագրով տրվել էին Սիրիային և որոնք ներկա համա-  
ձայնագրով, նրանց էթնիկական բնույթից ելնելով, վերստին  
մտցվում են թուրքական պետության կազմի մեջ:

Երկարատև պատերազմական վիճակի և դրանից առաջա-  
ցած խորը ցնցումների հետևանքով ֆրանսիական զորքերը  
աստիճանաբար հեռանում են՝ ֆրանսիական ու թուրքական  
իշխանությունների կողմից սահմանված պայմանների համա-  
ձայն: Այդ նպատակով նրանք ստեղծում են հանձնաժողով  
հետևյալ ընդհանուր հիմքերի վրա. իսկական խաղաղեցում,



նփրատի և Ալեքսանդրեոսի ծոցի երկաթուղային հաղորդակցության պահպանումը՝ ներառյալ Ամանոսի արհեստական կառույցների և Զարարլուսի կամրջի վերականգնումը, հրոսակների կողմից ոտնձգությունների առկայության դեպքում պահակախմբի պահպանում, Ուրֆայի միջադեպի<sup>91</sup> մեղավոր անձանց պատժում:

5. Լիակատար քաղաքական ներում և Կիլիկիայի վարչական կազմի պահպանում իրենց պաշտոններում:

6. Պարտավորություն՝ պաշտպանել էթնիկական փոքրամասնությունները, նրանց երաշխավորել բացարձակ իրավահավասարություն ամեն տեսակետից և արդարացի կերպով հաշվի առնել բնակչության թվական հարաբերությունը խառը ազգաբնակչություն ունեցող մարզերում ժանդարմերիայի ու տեղական վարչության կազմավորման ժամանակ հավասարակշռությունը պահպանելու համար:

7. Ֆրանս-թուրքական տնտեսական համագործակցություն՝ առաջնության իրավունք տալով այն կոնցեսիաներին, որոնք տրվելու են Կիլիկիայի ֆրանսիական զորքերի կողմից պարպված շրջանների, ինչպես նաև Մամուրեթ-ուլ-Ազիզի, Գիարբեբի և Սըվասի վիլայեթների տնտեսական օգտագործման նպատակով, այն շափով, սակայն, որքան որ այդ բանը չէր իրագործվի անմիջականորեն օսմանյան կառավարության կամ օսմանյան քաղաքացիների կողմից ազգային կապիտալների օգնությամբ:

Կոնցեսիա ֆրանսիական խմբին Արգանա-Մադենի հանքերը շահագործելու համար:

Կոնցեսիաները, որոնք նախատեսվում են մենաշնորհ կամ արտոնություն, շահագործվելու են օսմանյան օրենքի համաձայն ստեղծված ընկերությունների կողմից:

Օսմանյան և ֆրանսիական կապիտալների առավելագույնս հնարավոր միավորում (որոնք կարող են հասնել օսմանյան կապիտալի 50 տոկոսին):

<sup>91</sup> Խոսքը ֆրանսիական կայազորի ոչնչացման մասին է: Այդ մասին տե՛ս հաջորդ գլխում:

8. Թուրքական ու սիրիական մարզերի միջև մաքսային պատշաճ կարգի հաստատում:

9. Ֆրանսիական դպրոցական ու բժշկական հաստատու-թյունների ու բարեգործական հիմնարկների պահպանում:

10. Ֆրանսիական կառավարութունը հատուկ վարչական տեժիմ կհաստատի Ալեքսանդրետի նահանգի համար, որտեղ բնակչութունը խառը կազմ ունի. նա պարտավորվում է թուրքական ցեղին պատկանող բնակիչներին հատկացնել ամեն տեսակի արտոնություններ իրենց մշակույթը զարգացնելու և թուրքերեն խոսելու, որն այստեղ պաշտոնական բնույթ կկրի, այն շափով, ինչ շափով արաբերենը և ֆրանսերենը.

11. Կիլիկյան դարպասների և սիրիական սահմանի միջև ընկած Բաղդադի երկաթուղու հատվածի հանձնումը ֆրանսիական խմբին.

12. Թուրքիայի ու Սիրիայի միջև սահմանը կսկսվի Ալեքսանդրետի ծոցում, Պարամից անմիջապես հարավ ընկած մասում ընտրված կետից, այնուհետև կընթանա հիմնականում ուղիղ գծով դեպի Մեյդան էկբսը (երկաթուղային կայարանն ու վայրը մնում են Սիրիայի կազմում): Այնտեղից սահմանը կթեքվի դեպի հարավ-արևելք այն հաշվով, որ Մարսովա վայրը թողնվի Սիրիային, իսկ Կարծաբա վայրը, ինչպես և Քիլիս քաղաքը՝ Թուրքիային: Այնուհետև սահմանագիծը կհասնի երկաթուղուն Չորանբեյ կայարանի մոտ, կանցնի Բաղդադի երկաթուղագծով մինչև Նիսիբին և կհասնի երկաթգծի ոլորանին Ազեկիսից դեպի հյուսիս և կանցնի Եփրատ գետով մինչև Ջեղիրե իբն-Օմար:

Թուրքական մաքսատների գիծը կսահմանվի ճանապարհից դեպի հյուսիս, իսկ ֆրանսիական մաքսատներինը՝ ճանապարհից հարավ»:

Համաձայնագրին կցված հավելվածում ասված է, որ մինչև պայմանավորվող կողմերի միջև ընդհանուր համաձայնագիր կնքելը ռազմական գործողությունները կդադարեցվին Կիլիկիայի ճակատում և Թուրքիայի ու Սիրիայի սահմանների վրա՝ հենց որ համապատասխան հրամաններ տրվեն զորքե-



րին ֆրանսիական ու Անկարայի իշխանությունների կողմից, սակայն ոչ ուշ քան մեկ շաբաթվա ընթացքում:

Համաձայնագիրը կնքվում էր, առանց նրա տևականությունը որոշելու. ռազմական գործողությունները կարող էին վերսկսվել թե՛ այս թե՛ այն կողմից՝ մեկ ամիս շուտ պաշտոնապես տեղեկացնելով համաձայնագրից հրաժարվելու մասին<sup>92</sup>:

Ֆրանս-թուրքական համաձայնագիրը, ինչպես երևում է նրա բովանդակությունից, Սևրի պայմանագրի համեմատությամբ, նախատեսնում էր տերիտորիալ զգալի փոփոխություններ հօգուտ Թուրքիայի, սակայն, միաժամանակ մի շարք տնտեսական արտոնություններ Ֆրանսիային, արտոնություններ, որոնք, անկասկած, խախտելու էին թուրքական սուվերենությունը: «Համաձայնագիրը ճանաչում էր Ֆրանսիայի ազդեցության գոտի, մինչդեռ «Ազգային ուխտը» նման ոչ մի բան չէր հանդուրժում»<sup>93</sup>, այդ պատճառով էլ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հրաժարվեց վավերացնել Բեքիր Սամիրեյի ստորագրած փաստաթուղթը, և վերջինիս ստիպեց հրաժարական տալ:

Սակայն անկախ դրանից, Ֆրանսիան ինքը, ռեպարացիոն հարցում Անգլիայի աջակցությունն ստանալու համար, ստիպված եղավ վերջինիս հետ մեկտեղ մարտի 12-ին թուրքական ու հունական պատվիրակությանն առաջարկել նոր պայմաններ, որոնք նկատելիորեն տարբերվում էին հենց նոր ստորագրված ֆրանս-թուրքական համաձայնագրի հոդվածներից:

1. Նեղուցների ապառազմականացում.

2. Կ. Պոլսի էվակուացիա դաշնակիցների կողմից.

3. Թուրքերի մասնակցությունը Նեղուցների վերահսկողությանը, Թուրքիան, ինչպես գլխավոր տերությունները, կուսնեա երկու ներկայացուցիչ Նեղուցների հանձնաժողովում.

<sup>92</sup> «Международная политика новейшего времени в договорах, нотях и декларациях», ч. III, вып. 1, М., 1929, стр. 82—84; M. Paillassès, op. cit., pp. 348—352.

<sup>93</sup> «La guerre de l'indépendance turque», p. 60.

4. Ֆինանսական հանձնաժողովում Թուրքիան կունենա ոչ թե խորհրդակցական, այլ վճռական ձայն.

5. Թուրքական ղինված ուժերը կարող են ունենալ 75.000 մարդ, որից 30.000 ղինվորներ և 45.000 ժանդարմներ.

6. Իզմիրի ամբողջ շրջանը, բացի բուն քաղաքից, կազատվի հունական զորքերից: Իզմիրի նավահանգիստը ազատ կհայտարարվի բոլոր երկրների առևտրի համար: Սուլթանի սուվերենությունը ամբողջ վիլայեթի նկատմամբ կպահպանվի, սակայն այն կկարգավորվի ինքնավարության ռեժիմի համաձայն, Աղզերի Լիգայի կողմից նշանակված քրիստոնյա նահանգապետի կողմից: Հինգ տարի հետո ստեղծված վարչակարգը կարող է վերափոխության ենթարկվել, եթե կողմերից մեկը դիմի Աղզերի Լիգային.

7. Թրակիայի ստատուսը չի փոփոխվում. հույները մնում են այն տերիտորիայում, որը նրանց է անցել Սևրի պայմանագրի համաձայն.

8. Թուրքիայի արևելյան սահմաններում հայերին ապահովվում է «Աղզային օջախ», որի սահմանները կորոշի Աղզերի Լիգայի կողմից նշանակված հանձնաժողովը.

9. Քուրդստանը կօգտվի տեղական ինքնավարության ռեժիմից որոշակի հրաշխիքներով քրդերին ու ասորա-քաղղեսացիներին.

10. Թուրքիան կընդունվի Աղզերի Լիգա<sup>94</sup>:

Դաշնակից տերությունների այս նոր առաջարկները Սևրի համեմատությամբ մի շարք զիջումներ էին պարունակում, ուստի և չէին կարող բավարարել հույներին, իսկ թուրքերին այդ առաջարկները՝ հտու չէին այն պատճառով, որ դրանք հակասում էին «Ալեքսանդրիա ուխտին», մինչդեռ Անկարայի պատվիրակությունը Լոնդոնի կոնֆերանսին մասնակցություն ունեցավ միայն «Աղզային ուխտի» սկզբունքների վրա հիմնված պայմանագիր ստորագրելու նպատակով<sup>95</sup>: Մարտի 12-ին

<sup>94</sup> A. Mandelstam, op. cit., p. 184—185.

<sup>95</sup> Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, стр. 227.



երկու պատվիրակութիւններն էլ՝ հունական և թուրքական, մերժեցին վերը թվարկված պայմանները: Լոնդոնի կոնֆերանսը անփառունակ վախճան ունեցավ:

Լոնդոնի կոնֆերանսից հետո թուրք-ֆրանսիական հարարերութիւնները «սառնութիւն» մի կարճատե շրջան ապրեցին, երբ Անկարայի Ազգային ժողովը 1921 թ. մայիսի 3-ին շեղյալ հայտարարեց ֆրանս-թուրքական համաձայնագիրը: Այնուհետև սկսվում է փոխադարձ այցելութիւնների և դիվանագիտական զոնդաժի մի շրջան, որն ի վերջո հանգեցրեց 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրին:

Ամփոփելով թուրք-ֆրանսիական դիվանագիտական հարարերութիւնների զարգացումը 1919 թ. վերջից մինչև 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսը, կարելի է հետևյալ եղրակացութիւններն անել.

Ֆրանսիայի քաղաքականութիւնը թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր նրա տնտեսական, դրամական ու քաղաքական առանձնահատուկ շահերով, որոնք պահանջում էին թուրքիայի պետական ինքնուրույնութիւն և տերիտորիալ ամբողջականութիւն պահպանում: Ուտի Ֆրանսիայի քաղաքականութիւնն ուղղված էր թուրքիայի հետ անջատ համաձայնութիւն գալուն՝ այդ շահերն ապահովելու համար:

Ֆրանսիական դիվանագիտութիւնը թուրքիայի հետ մերձեցումը ձգտում էր օգտագործել նաև հակասովետակօն նուազանքով, որպեսզի քեմալականներին դուրս բերի Սովետական Ռուսաստանի դեմ և թուրքական ղեկի միջոցով խանգարի սովետական կարգերի հաստատմանը Անդրկովկասում:

Ֆրանսիական կառավարող շրջանների թուրքասիրական քաղաքականութիւնը, սակայն, հանդիպում էր Ֆրանսիայի դաշնակցի, իսկ իրականում ախոյանի՝ Անգլիայի դիմադրութիւնը, որն ամենևին շահագրգռված չէր Օսմանյան կայսրութիւն պահպանմամբ, այլ, ընդհակառակը, ձգտում էր բաժանբաժան անել այն՝ առավել հարուստ հողամասերը իր ազդեցութիւնը ենթարկելու համար:

Մերձավոր Արևելքում գերիշխելու համար ծավալված

պայքարում Ֆրանսիան հաճախ ստիպված էր լինում իր դիրքերը զիջել Անգլիային: Դրա պատճառը Ֆրանսիայի կախվածությունն էր Անգլիայից հվրոպական գործերում և վերջինիս ռազմական բացահայտ գերակշռությունը՝ Մերձավոր Արևելքի շրջանում:

Ստիպված լինելով իր քաղաքականությունը համաձայնեցնել, իսկ հաճախ ենթարկել Անգլիայի քաղաքականությանը, Ֆրանսիան Սան-Ռեմոյում և ապա Սերում հանդես է գալիս նրա հետ համատեղ, դրանով իսկ կրելով դիվանագիտական խոշոր պարտություն իր մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Ֆրանսիական դիվանագիտության տատանումները շատ թանկ նստեցին Կիլիկիայի ազգաբնակչությանը և, հատկապես, Մեծ եղեռնը վերապրած հայերին, որոնք, Ֆրանսիայի հովանավորությանը ապավինելով, վերադարձել էին Կիլիկիա՝ իրենց հայրենի օջախները:

Օգտագործելով Ֆրանսիայի անկայուն դիրքը, անգլոֆրանսիական սուր հակասությունները, Անկարայի ղեկավար շրջանները, հաստատուն և վճռական քաղաքականություն կիրառելով ձեռք բերեցին ռազմական ու դիվանագիտական հաջողություններ, որոնք հող նախապատրաստեցին 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական պայմանագրի ստորագրման համար:



ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 1919—1921 թթ.

Կիլիկիան ընկած է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափերին, զբաղեցնելով մի տարածություն, որի բնական սահմաններն են՝ հյուսիսից և արևմուտքից Տավրոսի լեռները, հարավից՝ Միջերկրական ծովը, իսկ արևելքից՝ Ամանոսի լեռնաշղթան: Կիլիկիան սովորաբար բաժանում են երկու մասի՝ Լեոնային Կիլիկիա, որն ընդգրկում է հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանները և Դաշտային Կիլիկիա, որի մեջ մտնում են հարավային շրջանները: Որպես երկրամաս Կիլիկիան հիշատակվում է մեր թվականից շատ առաջ: Հազարամյակների ընթացքում նրա տերիտորիայով անցել են եգիպտական, ասորական, պարսիկ, մակեդոնացի, հռոմեացի, մոնղոլ, սելջուկ և արաբ նվաճողները: Մ. թ. XI դարի ընթացքում, երբ Կիլիկիան դանվում էր Բյուզանդական կայսրության տիրապետության տակ, պատմական Հայաստանից հարյուր հազարավոր հայեր տեղափոխվում են Կիլիկիա և բյուզանդացիների դեմ մաքառելով 1080 թվականին հաստատում այնտեղ իրենց տիրապետությունը իշխան Ռուբենի գլխավորությամբ: Կիլիկիայի հայկական թագավորությունը իր գոյությունը պահպանեց շուրջ 300 տարի՝ 1080-ից մինչև 1375 թվականը<sup>1</sup>: 1487 թվականին Կիլիկիան նվաճվեց օսմանյան թուրքերի կողմից, որոնց տի-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս պրոֆ. Գ. Միֆայելյանի «История Киликийского армянского государства» մեծարժեք աշխատությունը:

ճապետութիւնը, սակայն, կայուն ու տևական չէր: 1640—1865 թթ. ամբողջ Կիլիկիայում իշխանութիւնը գտնվում էր ավշարական ծագում ունեցող գողան-օղլուների ձեռքում, որոնց կախումը սուլթանական կառավարութիւնից սրակ անվանական էր<sup>2</sup>: Միայն 1865 թ. վերջինիս հաջողվում է բնաջնջել կամ Կիլիկիայից վտարել Գողան-օղլու ցեղապետներին:

Օսմանյան կայսրութիւն 1864 թ. վարչական բաժանման համաձայն Կիլիկիան կազմում էր Ադանայի կուսակալութիւնը՝ Ադանա, Մերսին, Զեբել-Բերեքեթ, Գոզան (Սիս) և Իշլի (Սեւեւքե) հինգ գավառներով: Կիլիկիայի անբաժան մասը կազմող Մարաշի սանջաքը 1880 թվականից մտնում էր Հալեպի նահանգի մեջ<sup>3</sup>:

Կիլիկիայի ազգաբնակչութիւնը, Օսմանյան կայսրութիւն մյուս երկրամասերի համեմատութիւամբ, առավել բազմազգ ու խայտաբղետ էր: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Կիլիկիայում բնակվում էին հայեր, հույներ, թուրքեր, ասորիներ, քրդեր, թուրքմեններ<sup>4</sup>, արաբներ, պարսիկներ, չերքեզներ, քրիստոնյա սիրիացիներ, թաթարներ, շեշեններ, կըզըլըաշներ, անսարիներ, գնչուներ, մարոնիտներ և այլն: Թվարկված ժողովուրդներն ու ցեղերը, ինչ խոսք, ներկայացված էին իրարից խիստ տարբեր թվական կազմով: Հայերն, օրինակ, 1880-ական թվականներից սկսած, միշտ էլ հարաքերական մեծամասնութիւն են կազմել Կիլիկիայում: 1894—96 թթ. սուլթանական կառավարութիւն, իսկ 1909 թ. ապրիլին երիտթուրքերի կողմից կազմակերպված ջարդերից հետո էլ հայերի թիվը Կիլիկիայում ավելի էր, քան թուրքերինը, արաբներինը կամ քրդերինը, առանձին վերցրած: Նա-

2 Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Պ. Պողոսյան, Եշվ. աշխ., էջ 507—524:

3 Գր. Հ. Գալուստյան, Եշվ. աշխ., էջ 4:

4 Հիմնականում վաշկատուն ցեղեր, որոնցից մի քանիսը, օրինակ, Պողան և Հայուկ ցեղերը, հայկական ծագում ունենին: Տե՛ս Վ. Մ. Քիւրճեան, Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 32:



խապատերազմյան տարիներին հայոց թվի վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից բերված տվյալներից առավել համողիչ և իրականությունը մոտ է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. պատրաստած վիճակագրությունը, որի համաձայն հայ աղգարնակչությունը Ադանայի վիլայեթում, Մարաշի սանջարում, ինչպես նաև Այնթապի կազայում կազմում էր 407 հազար<sup>5</sup>: Եթե այս թվից հանենք Այնթապում բնակվող հայերի թիվը՝ 30 հազար<sup>6</sup>, ապա կստացվի, որ հայերի ընդհանուր թիվը Կիլիկիայում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին անցնում էր 350 հազարից: Կ. Բասմաջյանի տվյալներով, 1914 թ. հայերի թիվը Կիլիկիայում հասնում էր 380 հազարի, այսինքն ամբողջ աղգարնակչության (875.604 մարդ) 43,4 տոկոսը<sup>7</sup>:

Մեծ եղեռնի տարիներին Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև Անատոլիայի տարբեր վայրերից բշված հայության հետ մեկտեղ տարագրություն ու շարժերի միջով անցան նաև կիլիկիահայերը՝ Սիրիայի ու Միջագետքի անապատներում թողնելով տասնյակ հազարավոր անմեղ զոհերի ոսկորները: Իրենց ազգայնամուլ ու ցեղասպան քաղաքականությամբ երիտթուրքական կառավարողներին հաջողվեց կիսով չափ նվազեցնել Կիլիկիայի հայության թիվը, սակայն այդ շրջանում նրանք չհասան իրենց նպատակին՝ Կիլիկիան մաքրել հայ աղգարնակչությունից և ստեղծել թուրքական կայուն մեծամասնություն: Պատերազմից հետո էլ հայերն իրենց թվով գերազանցում էին թուրքերին:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո իթթիհատական վայրագություններից զերծ մնացած տասնյակ հազարավոր կիլիկիահայեր վերադարձան իրենց հայրենի օջախները:

1919 թ. վերջին Կիլիկիայում, ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավար գնդապետ Բրեմոնի տվյալներով,

<sup>5</sup> St' n Marcel Léart, նշվ. աշխ., էջ 62:

<sup>6</sup> Kevoork A. Sarafian, A briefer history of Aintab. San-Francisco, California, 1957, p. 11.

<sup>7</sup> K. J. Basmadjian, La Cilicie. Son passé et son avenir. Paris, 1919, p. 6.

հայերի թիվը կազմում էր 120 հազար<sup>8</sup>: Փարիզի Հայ Ազգային պատվիրակության տվյալներով, այդ նույն ժամանակ Կիլիկիայում կային 130 հազար հայեր<sup>9</sup>:

Ֆրանսիացի պատմաբան Պոլ դյու Վեռն, հիմնվելով Սիրիայում ու Կիլիկիայում ֆրանսիական Գերագույն կոմիսարիատի 1920 թ. տվյալների վրա, տալիս է Կիլիկիայի ազգաբնակչության հետևյալ պատկերը<sup>10</sup>.

հայեր	120.000
արաբ-անսարիներ	100.000
քրդեր և կըզըլբաշներ	30.000
հույներ	28.000
թուրքեր	20.000
չերքեզներ	15.000
ասորիներ և քաղղեացիներ	5.000

Ինչպես տեսնում ենք, թուրքերը բնակչության տասը տոկոսին էլ չէին հասնում: Սակայն այս թվերը, ինչպես և վերը բերված Բրեմոնի տվյալները, վերաբերում էին միայն Ադանայի վիլայեթին, որը ֆրանսիական հեղինակները, հետևելով Օսմանյան կառավարության կողմից անցկացված արհեստական վարչական բաժանմանը, նույնացնում են Կիլիկիայի հետ: Մինչդեռ, ինչպես նշվեց, Մարաշի սանջաքը ևս կազմում է Կիլիկիայի անբաժան մասը: Մարաշի սանջաքի բնակչության ընդհանուր թիվը գրականության մեջ բերվում է ըստ կրոնական պատկանելության, ավելի ճիշտ ըստ երկու դավանանքի՝ մահմեդականներ և քրիստոնյաներ: Սովետական, ֆրանսիական, թուրք կամ սփյուռքահայ հեղինակներից և ոչ մեկի մոտ չենք հանդիպում ամփոփ տեղեկությունների Մարաշի սանջաքի ազգաբնակչության կազմի վերաբերյալ, ըստ

<sup>8</sup> E. Brémond, op. cit., p. 12.

<sup>9</sup> The Pre-War population of Cilicia, London, 1920, p. 4.

<sup>10</sup> Paul du Vêou, op. cit., p. 47.



ազգային պատկանելության: Թուրք հեղինակները, հասկանալի պատճառներով, շրջանցում են Կիլիկիայի ազգաբնակչության թվի հարցը, կամ, հետևելով բնակչությունը բացառապես կրոնական սկզբունքով բաժանելու օսմանյան հին քաղաքականությունը, հարցը քննում են մահմեդականներ-քրիստոնյաներ կամ նույնիսկ մահմեդականներ-հայեր սկզբունքով: Սակայն անհասկանալի է, երբ սովետական որոշ թուրքագետներ (Ֆիլիպենկո, էֆենդիևա, Ժելտյակով) նույնպես շրջանցում են հարցը, խուսափում այն ըստ էության քննելուց: Վերջին հեղինակն, օրինակ, օգտագործելով հանդերձ Պոլ դյու Վեուի վերը բերված թվերը, չի մեջբերում դրանք, այլ նշում է միայն այն փաստը, որ «1920 թ. Կիլիկիան (ի նկատի ունի միայն Ադանայի վիլայեթը—Ռ. Ս.) ուներ 315 հազար բնակիչ, ըստ որում քրիստոնյաները կազմում էին 150 հազար, իսկ մահմեդականները՝ 165 հազար»<sup>11</sup>, կարծես հիշեցնելու համար, որ մահմեդականները թվական գերակշռություն ունեին քրիստոնյաների նկատմամբ:

Ինչ վերաբերում է Մարաշի սանջաքի հայ ազգաբնակչության թվին, ապա այն հասնում էր մոտ 30 հազարի: Այսպիսով, 1920 թ. սկզբին, Մարաշի ջարդի նախօրյակին, հայերի թիվն էր՝ Ադանայի վիլայեթում՝ 120 հազար, Մարաշի սանջաքում՝ մոտ 30 հազար, ընդամենը ամբողջ Կիլիկիայում՝ 150 հազար<sup>12</sup>:

Ինչ վերաբերում է թուրքերի թվին Մարաշի սանջաքում, ապա, ինչպես ասվեց, այդ մասին գրականության մեջ տեղեկություններ չեն բերվում: Պիեռ Ռեդանի տվյալները՝ 136 հազար մահմեդականներ (30 հազար Մարաշում, 106 հազար սանջաքի մնացած մասերում)<sup>13</sup>, թուրքերի թվում հաշվում են նաև քրդերին, արաբ-անսարիներին, շերքեզներին և այլն: Այսպիսով, Մարաշի սանջաքում թուրքերի թիվը առավելա-

<sup>11</sup> Տե՛ս «Ученые записки ЛГУ», серия вост. наук, вып. 14, էջ 33:

<sup>12</sup> Մ. Դավիթ-բեկի տվյալներով հայերի թիվը անցնում էր 160 հազարից: Տե՛ս «La question de Cilicie...», էջ 110:

<sup>13</sup> Pierre Redan, op. cit., p. 16.

գույնը կարող էր լինել 80 հազար, իսկ Ադանայի վիլայեթում բնակավոզներին հետ միասին՝ 100 հազար:

Այսպիսով, ի մի բերելով բոլոր տվյալները, կարելի է եզրակացնել, որ 1920 թ. սկզբին Կիլիկիայի ազգաբնակչության թիվը հասնում էր մոտ 500 հազարի,<sup>14</sup> որից.

հայեր	150—160,000
արաբ-անասարիներ	120,000
թուրքեր	100,000

մնացած 120 հազարը՝ քրդեր, թուրքմեններ, հույներ, ասորիներ, քրիստոնյա սիրիացիներ և այլն:

Ինչ վերաբերում է Կիլիկիայի ազգաբնակչության կազմին՝ կրոնական պատկանելության տեսակետից, ապա մահմեդականների թիվը հասնում էր մոտ 260 հազարի (50 տոկոսից ավելի), իսկ քրիստոնյաներինը՝ 220 հազարի (40—42 տոկոս), մինչդեռ նույնիսկ սուլթանական պաշտոնական վիճակագրության տվյալներով I համաշխարհային պատերազմից առաջ, նախքան հայերի տեղահանությունն ու զանգվածային ջարդերը, քրիստոնյաները գերակշռություն ունեին մահմեդականների նկատմամբ: Այսպես, օսմանյան կառավարության հսկողությամբ հրատարակվող «Արևելյան տարեգրքի» (Annuaire oriental) 1912 թ. տվյալների համաձայն Ադանայի վիլայեթում հաշվվում էին քրիստոնյաներ՝ 215 հազար, մահմեդականներ՝ 185 հազար<sup>15</sup>:

Ահա այդպիսին էր Կիլիկիան իր ազգաբնակչության կազմով 1919 թվականին, երբ նա գրավվեց անգլիական, ապա ֆրանսիական զորքերի կողմից:

Ինչպես վերը նշվեց, Սայքս-Պիկոյի պայմանագրով Կիլիկիան մտնում էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ, սա-

<sup>14</sup> Տե՛ս նաև E. Jung, La révolte arabe, II, Paris, 1925, էջ 152:

<sup>15</sup> Տե՛ս նաև «Вестник НКВД», 1921, № 3—4, стр. 47.

<sup>16</sup> Տե՛ս Pierre Redan, նշվ. աշխ., էջ 15: E. Brémond, նշվ. աշխ., էջ 4: „La question de Cilicie...“, էջ 100: Paul du Vêou, նշվ. աշխ., էջ 47:



կայն Մուդրոսի զինադադարի ստորագրման պահին վերջինս՝ Մերձավոր Արևելքում բավարար չափով զորքեր շունքեր Կիլիկիայի ռազմական գրավումն իրականացնելու համար: Բեյրութում տեղաբաշխված ֆրանսիական բրիգադը, ինչպես խոստովանում է գնդապետ Բրեմոնը, «շատ թույլ էր և նրան ֆրանսիայից որևէ համալրում չէր սպասում»<sup>17</sup>, թեև անգլիական 21-րդ կորպուսի հրամանատարը 1918 թ. դեկտեմբերի 5-ին ֆրանսիական զենքերով Համըլինին իրավունք էր վերապահել «գրավել Կիլիկիան, եթե զորքերի թիվը և վիճակը նրան թույլ են տալիս այդ բանն անելու»<sup>18</sup>: Այդ էր պատճառը, որ առաջինը Կիլիկիա մտնելու առաջադրանքը հանձնարարվեց երեք հայկական զուամրտակից բաղկացած Արևելյան լեգեոնին, որն ափ էր իջել Ալեքսանդրետում 1918 թ. նոյեմբերի 28-ին<sup>19</sup>:

Արևելյան լեգեոնը, որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեգեոնի<sup>20</sup>, կազմավորվել էր 1916 թ. նոյեմբերի 26-ին, որպես օսմանյան հպատակներից կամավոր սկզբունքներով հավաքագրված օժանդակ զորք<sup>21</sup>: Հայ կամավորներից Լեգեոն ստեղծելու գաղափարը տվել էր Հայ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուպար փաշան, 1916 թ. հոկտեմբերին Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը հանդիպում ունենալով արդեն հիշատակված Ժորժ Պիկոյի հետ, նա վերջինիս Մարկ Սալքսի ներկայությամբ առաջարկել էր հայ կամավորներ ընդգրկել որևէ առանձին միավորման մեջ, բացառապես հայկական հողամասերը թուրքական տիրա-

<sup>17</sup> E. Brémond, op. cit., p. 10.

<sup>18</sup> Pierre Redan, op. cit., p. 74.

<sup>19</sup> H. Torossian, Histoire de l'Arménie et du peuple arménien. Paris, 1957, p. 153.

<sup>20</sup> Մանրամասն տե՛ս Տիգրան Յ. Պոյանեան, Հայկական լեգեոնը, Ուոթթերթաուն, Մէս., 1965, էջ 174—177:

<sup>21</sup> Commandant Benoist d'Azy, L'Origine de la Légion d'Orient. Extrait de la Revue Diplomatique, Janvier-mars 1939, p. 11.

պետութիւնից ազատագրելու նպատակով<sup>22</sup>: Պիկոն գտնում է այդ առաջարկը միանգամայն հասկանալի ու բնական, և կողմերը համաձայնութեան են գալիս հետևյալում.

1. Կամավորները չեն մասնակցի պատերազմին ոչ Ֆրանսիայում, ոչ էլ Եվրոպայի որևէ այլ ճակատում, այլ կօգտագործվեն բացառապէս Ասիական Թուրքիայում ափ հանվելու նպատակով: Նրանք կկուլեն իրենց դարավոր թշնամու դիմ՝ հայրենի հողերը ազատագրելու համար.

2. Ֆրանսիան պարտավորվում է, դաշնակիցների հաղթանակից հետո, ինքնավարութիւն տալ Կիլիկիային, որը կդրվի նրա հովանավորութեան տակ.

3. Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրութեան միջոցով Պողոս Նուպար փաշան Եգիպտոս՝ իր որդուն ուղարկելու է հետևյալ ծածկագիր հեռագիրը.

«Առաքել բեյ Նուպարին. Կահիրե, 27 հոկտեմբերի 1916 թ.

Հաստատում եմ կամավորների հարցի վերաբերյալ հոկտեմբերի 6-ին ուղարկած նամակս, որից հետո ստացել եմ պաշտոնական երաշխավորութիւն այն մասին, որ դաշնակիցների հաղթանակից հետո մեր ազգային բաղձանքները բավարարութիւն կստանան: Հանձնարարում եմ քեզ միջոցներ ձեռնարկել՝ հնարավորին չափ մեծ թվով կամավորներ քաջալերելու և հավաքագրելը դյուրացնելու համար, ղեկավարվե-

22 Սփյուռքահայ հեղինակներից Արամ Թյուրպայանը վիճարկում է գրականութեան մեջ գերիշխող այս կարծիքը, գտնելով, որ Լեզոնի ստեղծման գաղափարը բխում էր ոչ թէ Փարիզի Հայ Ազգային պատվիրակութիւնից, այլ Եգիպտոսի հայ ազգային շրջանակներից: «Եգիպտոսի ազգային գործիչները,—գրում է նա,—երբ կլան թէ Ֆրանսա Կիլիկիան գրավելու նպատակ ունի, կդիմեն տեղիւն Ֆրանսական հյուպատոսին և հայ կամավորական խումբերը կազմելու առաջարկը մեջտեղ կդնեն իրր Ֆրանսական զինվորական ուժերու օժանդակ: Բնականաբար հյուպատոսը անմիջապէս կհաղորդի այս կարևոր առաջարկը Փարիզ արտաքին գործոց նախարարութեան: Պողոս Փաշա Նուպար կկանչվի արտաքին գործոց նախարարութիւնը և միայն այն ժամանակ տեղյակ կլլա այսպիսի առաջարկի մը գոյութեան...»: Արամ Թիւրպեան, Հայ ժողովուրդի դատաստանին առջև, Մարտի, 1925, էջ 8:



յով իմ վերոհիշյալ նամակում մատնանշված զգուշավորութ-  
յամբ և ուրիշ զգուշ բայլերով, որոնք անհրաժեշտ կհամար-  
վեն: Վերադառնում եմ Փարիզ:

Նուպար<sup>23</sup>:

Այնուհետև, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրու-  
թյան և Հայ Ազգային պատվիրակության միջև գոյացած որոշ-  
ման համաձայն, ֆրանսիական շորս սպաներից բաղկացած  
մի առաքելություն է ուղարկվում Եգիպտոս գնդապետ Ռոմի-  
ոյի գլխավորությամբ: Վերջինս 1916 թ. նոյեմբերին ժամանե-  
լով Կահիրե, հանդիպումներ ու զրույցներ է ունենում հայ ազ-  
գայնական տարրեր կազմակերպությունների ու առանձին  
գործիչների հետ՝ Լեզեոնի հավաքագրման ու կազմակերպչա-  
կան ձևավորման հարցերի շուրջ: Ի վերջո, Ռոմիոյի և Եգիպ-  
տոսի Հայ Ազգային Միության միջև համաձայնություն է կա-  
յացվում այն մասին, որ

1. Արևելյան լեզեոնը նպատակ է ունենալու աջակցել  
հայերին, ազատագրելու Կիլիկիան և այդպիսով նոր հնարա-  
վորություն ստեղծելու ազգային ձգտումների իրականացման  
համար.

2. Հայ լեզեոնականները կովելու են միայն թուրքերի դեմ  
և միմիայն Կիլիկիայում.

3. Հայկական լեզեոնը կկազմի ապագա հայկական բա-  
նակի կորիզը Կիլիկիայում<sup>24</sup>:

Այս համաձայնության հիման վրա ֆրանսիական կառա-  
վարության 1916 թ. նոյեմբերի 26-ի հրահանգով ստեղծվում  
է Արևելյան լեզեոնը<sup>25</sup>:

Պետք է ասել, որ հայ կամավորների հավաքագրումը, լե-  
զեոն ստեղծելու նպատակով, մեծ խանդավառություն առաջ  
բերեց Եգիպտոսում, Եվրոպայի ու Ամերիկայի հայաշատ գա-

<sup>23</sup> Michel Paillarès, op. cit., p. 322; Paul du Véou, op. cit.,  
p. 59—60.

<sup>24</sup> V. V., Pour mieux connaître les Arméniens du Liban et de la  
Syrie, Beyrouth, 1931, p. 23; Michel Paillarès, op. cit., p. 323.

<sup>25</sup> Տե՛ս Commandant Benoist-d'Azy, նշվ. աշխ., էջ 11—12.

գլուխներում: Մեծ եղեռնից մազապուրծ հայ գաղթականները պատերազմին նախորդող տարիներին իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը թողած հազարավոր հայ վտարանդիներ, հայրենի հողը օսմանյան դարավոր լծից ազատագրելու բուռն ձգտումով տարված եկան լրացնելու լեզեոնական շարքերը: Հատկանշական է, որ Արևելյան լեզեոնի կորիզը կազմեցին Պորտ-Սաիդում ժամանակավոր ապաստան գտած քաջարի մուսալիուցիները (այդ թվում նաև Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ Եսայի Յաղուբյանը), որոնցից մոտ 600 հոգի շտապեցին զինվորագրվել լեզեոնին՝ ստեղծելով մի առանձին վաշտ: Սրանց հետևեցին մոտ 300 եգիպտահայեր, թուրքական բանակում ծառայած 236 հայ գերիները<sup>26</sup>: Երկրորդ վաշտը կազմեցին ամերիկահայ կամավորական խմբերը<sup>27</sup>: Վեց-յոթ ամիս հետո հայ լեզեոնականներին թիվը հասավ արդեն հազարի<sup>28</sup>, իսկ դրանից էլ մեկ տարի հետո՝ 1918 թ. կեսերին Արևելյան լեզեոնն իր շարքերում հաշվում էր 5500 զինվոր, որից միայն 400 հոգի սիրիացիներ էին, մնացած 5100-ը՝ հայեր<sup>29</sup>: Արևելյան լեզեոնի ղեկավարներից մեկի՝ Ֆրանսիական սպա Բընուա դ'Ալիի տրվյալներով, լեզեոնի զինվորների ընդհանուր թիվն էր 5.662 մարդ<sup>30</sup>: Իր կազմավորման օրից մինչև 1918 թ. մայիսը Արևելյան լեզեոնը տեղաբաշխված էր Կիպրոս կղզում, որը լեզեոնականների մարզադաշտն էր դարձել: 1918 թ. մայիսին լեզեոնը փոխադրվում է Իսմաիլիա, ուր մնում է մինչև հուլիսի 12-ը, այնուհետև մեկնում Մեշդել, որտեղ նրան միանում են

<sup>26</sup> *Aram Turabian*, L'eternelle victime de la diplomatie européenne. Paris, 1928, p. 88.

<sup>27</sup> Օ. Թ. Մալխազուհի, Ամերիկահայ կամավորները և իրենց հաղթանակը. «Արագած», թիվ 12, 12 ապրիլ 1919, էջ 172:

<sup>28</sup> Տիգրան Պոյանեան, նշվ. աշխ., էջ 26: *Michel Paillarès*, op. cit., p. 323.

<sup>29</sup> Սարգիս Պողոսեան, Թրքահայ սպայի մը օրագիրը, Բ. հատոր, Փարիզ, 1947, էջ 133:

<sup>30</sup> *Commandant Benoist d'Azy*, op. cit., p. 10—11.



մոտ 250 սիրիացի կամավորներ՝ Պաղեստինի ռազմաճակատի ընդհանուր հրամանատար Ալենբրիի կողմից նախապատրաստ-վող հարձակմանը մասնակցելու համար<sup>31</sup>։

Համաշխարհային պատերազմը մոտենում էր իր վախ-ճանին, երբ հայ լեզեոնականները, շուրջ երկամյա սպասում-ներից հետո, Պաղեստինում կռվի մեջ մտան թուրքական բա-նակի դեմ<sup>32</sup>։ 1918 թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած Արա-րալի (Պաղեստին) հայտնի ճակատամարտում հայ զինվոր-ները փառքով պսակեցին իրենց՝ հերոսական դիմադրությամբ մեծապես նպաստելով թշնամու դեմ տարած հաղթանակին։ Երկու տասնյակից ավելի հայ լեզեոնականներ հերոսի մահով ընկան Արարալի բարձունքում։

«Հայկական լեզեոնը ապացուցեց,— հեռագրում էր Փա-րիզ ֆրանսիացի կապիտան Կուլոնդրը,— որ նա ընդունակ է արիարար կանգնել ամենամահացու կրակի տակ անգամ»<sup>33</sup>։

Հայ լեզեոնականների դերը Արարալի ճակատամարտում ձևոր բերած հաղթանակի գործում ըստ արժանվույն գնահա-տեց նաև մարշալ Ալենբրին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին Հայ Ազգային պատվիրակությանը ուղարկած հեռագրում նշելով հետևյալը.

«Հպարտ եմ հրամանատարությանս տակ հայկական զո-րամաս ունենալուս համար։ Նրանք կռվեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան հաղթանակում»<sup>34</sup>։

Արարալի ճակատամարտից հետո Արևելյան լեզեոնը Ալենբրիի բանակի կազմում առաջանալով դեպի հյուսիս, հոկ-տեմբերի 20-ին մտնում է Բեյրութ, ուր նրան միանում է Կիպ-րոսից ժամանած պահեստի 4-րդ վաշտը։ Լեզեոնին են զինվո-րագրվում նաև Սիրիա տարագրված հայերը, կազմելով

31 Տե՛ս Տիգրան Պոյանեան, նշվ. աշխ., էջ 103—107։

32 Սխալվում է ն. էֆենդիեան գրելով, թե «Հայկական լեզեոնը շօգ-տագործվեց պատերազմի ժամանակ»։ Տես Ռ. Յ. Յփենդիեա, նշվ. աշխ., էջ 79։

33 *Commandant Benoist d'Azy*, op. cit., p. 17.

34 Տե՛ս *The Lausanne Treaty, Turkey and Armenta*, New York, 1926, էջ 141—142։

առանձին 3-րդ վաշտը<sup>35</sup>։ Նոր կամավորների հոսքը լեզեոն ընդհատվեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի հետ կնքված դինադադարով։ Նոյեմբերի վերջին հայ լեզեոնականների մի մասը Բեյրութից ֆրանսիական նավերով փոխադրվում է Ալեքսանդրետ, իսկ մյուս մասը անգլիական նավերով դեկտեմբերի կեսերին մեկնում է Մերսին։ 1918 թ. դեկտեմբերի 17—19-ին Հայկական լեզեոնի զինվորները ոտք դրեցին իրենց բաղձալի Կիլիկիան<sup>36</sup>։

Ինչպիսի՞ն էր իրադրությունը Կիլիկիայում։

Հիմնվելով Մուղրոսի պայմանագրի 16-րդ հոդվածի վրա, որի համաձայն Թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Կիլիկիայից, անգլիական զլխավոր շտաբը սահմանել էր Կիլիկիայի էվակուացման հետևյալ ժամկետները.

Դեկտեմբերի 13-ին Թուրքական զորքերը պետք է պարպեին Ջեյհունից արևելք ընկած տարածությունը. դեկտեմբերի 17-ին՝ Սեյհունից արևելք և Ադանա—Տարսոն գծից հյուսիս ընկած տարածությունը. դեկտեմբերի 21-ին՝ մինչև Բողանթի ընկած տարածությունը<sup>37</sup>։

Թուրքական 2-րդ և 7-րդ բանակների մնացորդները նահանջում էին Ադանայի ուղղությամբ՝ իրենց հետ տանելով ամբողջ զենքն ու ռազմամթերքը, որը Ադանայում նրանք վաճառում էին մահմեդական ազգաբնակչությանը։ Այդպիսով, մոտ 25 հազար հրացան անցնում է Ադանայի և շրջակա գյուղերի մահմեդականների ձեռքը<sup>38</sup>։ Թուրքական զորքերի նահանջը վերահսկում էր Մերձավոր Արևելքում ֆրանսիական զորքերի հրամանատար գեներալ Համըլենը՝ երեք գումարտակ հայ լեզեոնականների զուխն անցած։ Հայկական լեզեոնի առաջին գումարտակը, որը, ինչպես ասվեց, ափ էր իջել Ալեքսանդրե-

<sup>35</sup> Մարգիս Պողոսեան, Թրքահայ սպայի մը օրագիրը, Բ հատոր, էջ 134։

<sup>36</sup> Թորոս Լուսինեան (Կամաուր) Հայկական լեզեոնի Կիլիկիա մուտքը. Տե՛ս Սուրէն Պարեհեան, Արարաւ, Հայկական լեզեոնը, Բ տպագրութիւն, Իզմիր, 1919, էջ 108—109։

<sup>37</sup> E. Brémond, op. cit., p. 6.

<sup>38</sup> R. de Gontaut-Byron, op. cit., p. 215; Paul du Vélou, op. cit., p. 64.



տում, գրավում է Իսլահիեն (1 վաշտ), Թոփրակ Կալեն (1 վաշտ) և Դորթ-Յուլը (գումարտակի մնացած մասը): Մյուս երկու գումարտակները, որոնք Բեյրութից ժամանել էին Մերսին, տեղաբաշխվում են Ադանայում (2-րդ գումարտակը, զնդապետ Ռոմիոյի հրամանատարութիւնով), Մերսինում (1 վաշտ), Բողանթիում (1 վաշտ) և Տարսոնում (3-րդ գումարտակի մնացած մասը)<sup>39</sup>: Հայկական այս ուժերը, հասկանալի է, խիստ անբավարար էին Կիլիկիայի ռազմական գրավումն իրականացնելու համար, և Ֆրանսիական հրամանատարութիւնը ստիպված է լինում համաձայնվել, որ անգլիական զորքեր ուղարկվեն Կիլիկիա: Դաշնակից զորքերի ընդհանուր հրամանատար Ալենքին ցամաքային 19-րդ բրիգադը (հնդկական) գեներալ Լեսլիի հրամանատարութիւնով ուղարկում է Կիլիկիա: 1919 թ. փետրվարի 15-ին Լեսլին ժամանում է Ադանա: Նրա ղյտավորած զորամասի կազմում կային 3 հնդկական գունդ, 1 անգլիական գունդ և հնդկական 6-րդ հեծյալ գունդը զնդացրային մի շոկատով: Բացի դրանից, մոտ 6 հազար հնդիկներ, դինված և աշխատանքային գումարտակներում համախմբված, գրավում են Տավրոսի և Ամանոսի թունելները<sup>40</sup>: Այսպիսով, դինվորական ամբողջ իշխանութիւնը Կիլիկիայում կենտրոնացվում է անգլիական հրամանատարութիւն ձեռքում, որը շարունակվում է մինչև 1919 թ. նոյեմբերը՝ անգլիական զորքերի փոխարինումը Ֆրանսիականով:

Ինչ վերաբերում է վարչական իշխանութիւնը, ապա այն Մուդրոսի գինադագարից հետո մինչև 1919 թ. փետրվարի 7-ը շարունակում էր մնալ թուրք պաշտոնյաների ձեռքում: Սրանք իրենց տրամադրութիւն տակ ունեին 3 հազար հոգուց բաղկացած ժանդարմական մի գունդ, կովկասյան ճակատի թուրքական դիվիզիաներից մեկի նախկին հրամանատար զնդապետ Հաշիմ բեյի ղյտավորութիւնով: Հիշյալ գունդն ամբողջովին հավաքագրված էր պատերազմին մասնակցած թուրք դին-

<sup>39</sup> E. Brémond, op. cit., p. 6—7; Pierre Redan, op. cit., p. 74—75.

<sup>40</sup> E. Brémond, op. cit., p. 10.

վորներին, որոնց նահանջող օսմանյան բանակները ժանդարմերիա ստեղծելու պատրվակով թողել էին Կիլիկիայում<sup>41</sup>։

1919 թ. հունվարի վերջերից, ֆրանսիական և բրիտանական կառավարութունների միջև գոյացած համաձայնությամբ, Կիլիկիայի վարչական վերահսկողութունը հանձնվում է ֆրանսիական սպաներին, որոնք, սակայն, ենթարկվում էին անգլիական զորավար Ալենբիին։ Հունվարի 23-ին գնդապետ Բրեմոնը ֆրանսիական վեց սպաների ուղեկցությամբ ժամանում է Հայֆա՝ Ալենբիի նստավայրը և վերջինիս կողմից նշանակվում «Հյուսիսային գոտու» (Ադանայի վիլայեթը, բացի Սեյեֆքեի կազայից) վարչական վերահսկողության ղեկավար։ Հիշյալ գոտուց արևելք ընկած շրջանները՝ Մարաշը, Այնթապը, Ուրֆան, ինչպես և Հալեպը, կազմում էին առանձին մի շրջան և դրվում անգլիական «Հեծյալ անապատային կորպուսի» («Desert Mounted Corps») վարչական վերահսկողության տակ<sup>42</sup>։

1919 թ. փետրվարի 1-ին գնդապետ Բրեմոնը գալիս է Ադանա և անցնում իր պարտականութուններին։

Այդ նույն ժամանակ Սիրիայում և Հայաստանում ֆրանսիական Գերագույն կոմիսար Ժորժ-Պիկոն Սիրիայում ու Միջագետքում գտնվող հայ տարագրյալներին կոչ է անում վերադառնալ Կիլիկիա<sup>43</sup>։ Ավելի քան 150 հազար հայեր<sup>44</sup> (որոնց գերակշռող մասը 1915-ին Կիլիկիայից բռնազաղթվածներն էին), արձագանքելով այդ կոչին և հավատալով Բրեմոնի այն հայտարարությանը, թե «Մեր ցանկութունն է, որ հայերը տեղ դառնան իրենց երկրին։ Մենք պիտի առաջնորդենք զիրենք, մինչև որ անոնք աճին, մեծնան և սկսին ինքզինքնին կառավարելու գործին մեջ հաջողիլ, այն ատեն մնաք բարով պիտի

<sup>41</sup> E. Brémond, op. cit., p. 7; R. de Gontaut-Byron, op. cit., p. 215.

<sup>42</sup> Pierre Redan, op. cit., p. 76—77; E. Brémond, op. cit., p. 8—9.

<sup>43</sup> Michel Paillarès, op. cit., p. 188.

<sup>44</sup> H. Thorossian, op. cit., p. 153; Jean-Pierre Alem, op. cit., p. 66.



քսենք և հեռանանք»<sup>45</sup>, 1919 թ. ընթացքում գալիս հաստատվում են իրենց հարադատ վայրերում: Գնդապետ Բրեմոնի տվյալներով 1919 թ. վերջին Կիլիկիա վերադարձած հայերը տեղաբաշխված էին հետևյալ վայրերում. Ադանայում՝ 60 հազար, Հաճընում՝ 8 հազար, Հասան-Բեյլիում՝ 1000, Դորթ-Յոնում՝ 12 հազար, Օսմանիեում և շրջակայքում՝ 1000, Միսիսում՝ 1200—1500, Արօղլուում՝ 1000, Նաջարլիում՝ 1000, Ինջիրլիքում՝ 1200, Տարսոնում՝ 3—4 հազար, Մերսինում՝ 2—3 հազար<sup>46</sup>: Բացի դրանից, 50 հազարից ավելի հայեր եկել հաստատվել էին Մարաշում, Զեյթունում, Այնթապում (որը նույնպես մտնում էր գրավված տերիտորիաների մեջ) և շրջակա գյուղերում<sup>47</sup>:

Հայերի վերադառնալուց հետո Կիլիկիայում խիստ լարված իրադրություն ստեղծվեց: Ֆրանսիական վարչական իշխանությունները հայերին Կիլիկիա «հրավիրելուց» հետո լուրջ միջոցներ չէին ձեռնարկում նրանց անվտանգությունն ապահովելու համար, թեև քաջ հայտնի էր, որ «թուրքերը զինված էին, իսկ հայերը՝ ոչ»<sup>48</sup>: Վերն ասվեց, որ նահանջող թուրքական բանակներն Ադանայում և նրա շրջակայքում մահմեդականներին էին փոխանցել 25 հազար հրացան: Բացի դրանից, թուրք ազգաբնակչության ձեռքն էին անցել մեծ քանակությամբ զնդացիներ<sup>49</sup>: 1919 թ. մայիսի 1-ին զնդապետ Բրեմոնի կողմից արձակված զինվորական հրամանը մահմեդա-

45 Տե՛ս Կարապետ Իզմիրլեան, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատակիրը անցիալին և ներկայիս (քննական տեսություն), Պէյրուֆ, 1964, էջ 210: Ավելի ուշ՝ 1919 թ. սեպտեմբերին, նման մի սին խոստումով հանդես եկավ զորավար Գուրոն. «Կիլիկիան հայուն դարավոր հայրենիքն է, Կիլիկիան ազատագրվեցավ հայ կամավորներու թափած արյամբ և ուստի Կիլիկիան հայուն պիտի ըլլա»: Տե՛ս Անդրանիկ Կենեքեան, Սոցիալ-Դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնավարութեան արթը, Պէյրուֆ, 1958, էջ 280:

46 E. Brémond, op. cit., p. 11—12.

47 Paul du Vêou, op. cit., p. 91.

48 E. Brémond, op. cit., p. 17; R. de Gontaut-Byron, op. cit., p. 215.

49 Տե՛ս «Կիլիկիա», 19 մարտի 1919 թ.:

կան ազգաբնակչության, մասնավորապես թուրքերի կողմից, չէր կատարվում: Ավելին, մահմեդական հոգևորականությունը կոչ էր անում թուրք ազգաբնակչությանը զենքերը շահանձնել, ասելով, որ «ամոթ է իսլամության հնազանդիլ...»<sup>49</sup>: Միայն շնչին քանակությամբ սպառազինություն (որի մեծ մասը սառը զենք էր) է հաջողվում ստանալ Էրանցից: Կիլիկիայում Հայ Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Մ. Տամատյանը 1919 թ. հուլիսի 30-ին Կ. Պոլսի Զավեն պատրիարքին տեղեկացնում էր, որ «թուրքերը իրենց զենքերուն հարյուրին մեկը ոչինչ տոկոսը հանձնած են իշխանություններուն, ամբողջ երկրին մեջ ամենուրեք զենքի և ռազմամթերքի թաքստոցներ ունին, և այդ զենքերը ի հարկին մեզի դեմ գործածելու, քրիստոնեից ընդհանուր ջարդ կազմակերպելու համար ունին գաղտնի դավադրական կազմակերպություն...»<sup>50</sup>:

Զինահավաքման մասին հրամանն, այդպիսով, կատարվում էր առավելապես քրիստոնյա ազգաբնակչության կողմից: Ստացվում էր նույն պատկերը, ինչ որ սովթանական բռնատիրության ողջ ժամանակաշրջանում, երբ քրիստոնյա «զավուրները» զենք կրելու իրավունք չունեին, իսկ մահմեդականները ոտքից գլուխ զինված էին:

Ահա նման պայմաններում զնդապետ Բրեմոնը 1919 թ. ապրիլի 6-ին հրապարակում է մի կարգադրություն՝ տարազիր հայերի գույքի վերադարձի մասին: Համաձայն այդ հրահանգի, կիլիկիահայերի 1915 թ. բռնագաղթից հետո թուրքական իշխանությունների կողմից բռնագրավված և տեղի թուրք ազգաբնակչությանը բաշխված ամբողջ գույքը, նրանց բոլոր ապրանքները, երկու ամսվա ընթացքում պետք է վերադարձվեին տերերին: Հայերին պետք է վերադարձվեին նաև նրանց հողամասերը, իսկ այդ հողերը զնած թուրքերին հասանելիք գումարը փոխհատուցելու էր երկրագործական բանկը<sup>51</sup>:

<sup>49</sup>ա Տե՛ս «Հայ ձայն», 23 հուլիսի 1919 թ.:

<sup>50</sup> ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 205, գ. 780, թ. 71:

<sup>51</sup> Տե՛ս «Կիլիկիա», 11 հունիսի 1919 թ.:



Յրանսիական վարչական իշխանությունների արձակած այս հրամանը որքան որ արդարացի, նույնքան էլ անիրականալի էր: Բանը նրանումն է, որ գույքի վերագարձը հայերին կարող էր տեղի ունենալ միայն այն բանից հետո, երբ կառավարությունն ընդուներ կատարվածը՝ հայերի զանգվածային տեղահանությունն ու բարբարոսական ոչնչացումը: Կատարվածը ընդունել նշանակում էր նաև դատապարտել և օրենքից դուրս հայտարարել ձեռնարկներն ցրված, իսկ իրականում լայն գործունեություն ծավալած իթթիհատական կուսակցությունը՝ ջարդերի կազմակերպիչ կուսակցությունը: Սակայն ոչ սուլթանական, ոչ էլ քեմալական կառավարությունը նման քայլերի չէին դիմում և չէին էլ կարող դիմել: Սուլթանական կառավարության ներկայացուցիչները Փարիզի հաշտության վեհաժողովում հանդես գալով իթթիհատական առանձին ղեկավարների քաղաքականության քննուդատության մեջ, լստ էության չվերհանեցին ու չդատապարտեցին սուլթանական ու երիտթուրքական ազգայնամուլ, ջարդարարական քաղաքականությունը<sup>52</sup>, իսկ հետագա իրադարձությունները, մասնավորապես իթթիհատական նախկին հանցագործների գործունեության խրախուսումը Կիլիկիայում (այդ մասին ստորև) պարզորոշ կերպով դրսևորեց Փարիզում արված նրանց «խոստովանությունների» ողջ փարիսեցիությունը:

Ինչ վերաբերում է քեմալական ղեկավարներին, նրանք ևս իրենց գործունեության առաջին իսկ քայլերով դրսևորեցին իրենց ազգայնամուլ դիրքը: Վերևում ասվեց էրզրումի ու Սրվասի համաժողովներում քեմալականների կողմից որդեգրած ծրագրի մասին: Մուստաֆա Քեմալը Անկարայի երևելիների հավաքույթում 1919 թվականի դեկտեմբերի 31-ին արտասանած իր ճառում առավել զարգացրեց հիշյալ համաժողովներում ընդունված որոշումները՝ արդարացնելով իր նախորդների ժողովրդասպան քաղաքականությունը. «Այն, ինչ պատահեց մեր երկրում ընակվող ոչ-մահմեդական տարրերի

<sup>52</sup> *St. u. Lloyd Джордж*, Правда о мирных договорах, т. II, էջ 200—204.

հետ, հետևանք էր նրանց կողմից անցկացվող անջատողական քաղաքականութիւն, մի քաղաքականութիւն, որը հրահրվում էր օտարերկրյա ինտրիզներով, և որն իրենից ներկայացնում էր մեր կողմից նրանց շնորհած արտոնութիւնների շարաշահում:

Համենայն դեպս, անցանկալի դեպքերը, որոնք տեղի ունեցան Թուրքիայում, ունեն բազմաթիւ պատճառներ, բաղմաթիւ ներող հանգամանքներ...

Ես կրկնում եմ, մեր դեմ առաջ քաշված մեղադրանքները անհիմն են»<sup>53</sup>:

Նույն 1919 թվականին քննադատականները բացորոշ կերպով արտահայտեցին իրենց վերաբերմունքը քաղաքական սնանկութիւն կրած «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան նկատմամբ, արդարացնելով Թուրքիայի մասնակցութիւնը առաջին համաշխարհային պատերազմին և դրանից բխած հետևանքները, փորձելով կատարվածի ամբողջ մեղքը բարդել բացառապես իթթիհատական մի քանի պարագլուխների վրա<sup>54</sup>: Եվ պատահական չէր, որ էրզրումի ու Սըլվասի համաժողովների մասնակիցների գերակշռող մասը իթթիհատական նախկին ղեկավար գործիչներն էին<sup>55</sup>:

Ինչպե՞ս էին մոտենում այս հարցին անգլիական գինւորական և ֆրանսիական վարչական իշխանութիւնները:

Կիլիկիայում, ինչպես և նրանց կողմից գրավված «արեւելեկյան տերիտորիաներում» կարգ ու կանոն, խաղաղութիւն

---

53 М. Кемаль, Путь новой Турции, т. II, Приложения, стр. 300—301.

54 Sht. K. Atatürk, Избранные речи и выступления, էջ 58—61:

55 «Անկարայի կառավարութիւնն այսօր երիտթուրքական նախկին գործիչների ձեռքում է,—գրում է ֆրանսիական պատմաբան է. Նիկոլը: — Մալթայի բոլոր բանտարկյալները, որոնք մեղադրվում էին պատերազմի տարիներին կատարած հանցագործութիւնների մեջ, հավաքվել են այնտեղ: Նրանք զբաղեցնում են ամենաբարձր պաշտոնները: Նրանք մինիստրներ են, զորավարներ, պատգամավորներ, բարձրաստիճան պաշտոնյաներ...»: E. Nicol, Les Alliés et la crise orientale, p. 61—62.



և անդորր հաստատելու պատրվակով նրանք խուսափում, իսկ հունախ էլ մերժում էին շարդարարների մեղսակցության, նրանց արժանի պատժի ենթարկելու արդարացի պահանջները: «Ամբողջ Կիլիկիո մեջ հայտնի շարդարարներն բանտարկվածները (պատժված ոչ ոք կա, կրնամ ըսել) մատի վրա կհաշվվին, և թե ֆրանսիական, թե անգլիական իշխանությունը գրեթե կշղագրգռվին, երբ հայերու կողմից շարդարարներու կամ շարագործներու ցանկերը կմատուցվին անոնց պատժումը խնդրելով»<sup>56</sup>:

Նման մոտեցումը, հասկանալի է, չէր կարող չքաջալերել ոճրագործ տարրերին, որոնք պատերազմի ավարտից հետո որոշ ժամանակ իրենց զուսպ էին պահում: «Թուրքերը և քրդերը սմբած էին, — ասվում էր Ամանոսից ուղարկված մի թրդթակցության մեջ, — սակայն երբ կտեսնեն ոճրագործ ու իթթիհատական աղաներու ազատ պտտիլը և քաջալերվիլը, համարձակություն կառնեն: Պերեքեթում, էկպեզում, Իսլահիեում, Բախչեում գտնվող 70—80 իթթիհատական ու ապրեցիկ աղաները կգրգռեն ժողովուրդը. «Գլավուրներուն ապրանքները մի տար, թող գան առնեն, եթե կհամարձակին» կըսեն»<sup>57</sup>:

Կիլիկիայի որոշ վայրերում անգլո-ֆրանսիական համատեղ կառավարման շրջանում, մինչև 1919 թ. հոկտեմբերը, ստեղծվել էին միջնորդ դատարաններ և հետաքննող հանձնաժողովներ, որոնց գործունեությունը, սակայն, չէր վերահսկվում, և հետևանքը, որպես կանոն, բացասաբար էր անդրադառնում տեղի քրիստոնյա ազգաբնակչության, հատկապես հայերի վիճակի վրա:

Այսպես, 1915 թ. Մարաշի հայության տեղահանության ժամանակ երիտթուրքական իշխանությունների կողմից թուլջարված մեքենայություններն ու ղեղձումները քննելու նպատակով 1919 թ. մայիսի վերջին Մարաշ է ժամանում մի

<sup>56</sup> ՉՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 205, դ. 780, թ. 69—70 (Մ. Տամատյանի նամակը Ջավեն պատրիարքին):

<sup>57</sup> «Կիլիկիա», 11 հունիսի 1919 թ.:

հանձնախումբ, որի կազմում էին իթթիհատական մոլեռանդ մի գործիչ, իբրև դատախազ, և հույն մի պաշտոնյա՝ իբրև հարցաքննող դատավոր: Քաջալերված տեղի իթթիհատականները կողմից, և նրանց դրդմամբ, հանձնախումբը քննության և առնում ընդամենը մի քանի գործ և չի գտնում մեկին, որը հանցավոր լիներ Մարաշի 50 հազար հայության դեմ գործած ոճիրների, և նրանց ունեցվածքի հափշտակման մեջ<sup>58</sup>:

Նույն հանձնաժողովը երկար քննությունից հետո ազատ է արձակում նաև Թափո անունով քրդական մի բեկի, որը 1915-ին Կյուրիների տեղահանված 800 հայերի գազանաբար ոչնչացրել էր Այրան-Պունար կոչված վայրում՝ նրանց թանկարժեք իրերին, դրամին ու հագուստին տիրանալու համար: Ադանայի Հայ Ազգային միութունը բազմաթիվ հեռագրեր է ուղարկում Կ. Պոլիս ներքին գործերի մինիստրությանը և պատրիարքարանին, բողոքելով հանձնաժողովի ոճրապաշտպան որոշման դեմ, բայց անօգուտ:

Ավելին. թուրքական դատական պաշտոնյաներն իրենք էին խրախուսում թուրք ազգաբնակչությանը՝ ապօրինի ճանապարհով զբաղված հայերի սեփականությունը իրենց ձեռքում պահելու, օրինական տերերին ետ չվերադարձնելու խորհուրդներով: Եվ հայերի աներին, հողամասերին ու գույքին տիրացած անձինք չէին թաքցնում այդ բանը, ուղղակի խոստովանում էին, որ «դատարանի անդամներեն Օսման էֆենդին ըսավ՝ ոտքդ տունեն դուրս մի նետեր», որ դարձյալ դատարանի անդամներից, Ահմեդ էֆենդին խորհուրդ էր տվել «թող դատ բանան, ես պետք եղածին կը նայիմ...» և այլն<sup>59</sup>:

Գույքի վերադարձի հարցը ազգամիջյան սուր բախումների առիթ էր տալիս նաև Դորթ-Յոլում, Հասան-Բեյլիում, Հարունիեում և Կիլիկիայի այլ վայրերում<sup>60</sup>: Ուստի իրավացի

58 «Կիլիկիա», 15 հունիսի 1919 թ.:

59 Տե՛ս Ս. Սաղրեան, Կիսադարեան Յուշամատեան (1895—1945), Փարիզ, 1948, էջ 295—296:

60 Տե՛ր «Կիլիկիա», 13, 14, 17 հունիսի 1919 թ.:



չէ Պիեռ Ռեդանը, պնդելով, թե իբր «հաշտարար դատարանները լուծեցին այդ պրոբլեմը և իրենց վճռով բոլոր կողմերին էլ բավարարեցին»<sup>61</sup>: Ընդունելի չէ նաև Ն. Էֆենդիևայի մոտեցումը: Նա գրում է. «Ֆրանսիացիները գիտակցաբար հայերին էին հանձնարարում թուրքական տների կողոպտումը, ջարդերի կազմակերպումը և այլն: Այդ բոլորը արված էր մի նպատակով. բարոքել ազգային թշնամանքը, շեղել թուրք ժողովրդի ուշադրությունը իր երկրի իսկական թշնամիներից՝ ֆրանսիական: Ղափթիչներից և հայերի հանդեպ թուրք ազգաբնակչության մեջ առելություն առաջ բերել»<sup>62</sup>: Ֆրանսիական իշխանությունների վարած քաղաքականությունը, ինչ խոսք, նպատում էր ազգամիջյան բախումների առաջացմանը և սրմանը: Լինում էին նաև անհարկի բռնությունների դեպքեր վրեժինդրության զգացումով համակված հայերի կողմից, սակայն հեղինակը աչառու մոտեցում է հանդես բերում, ոչ մի խոսք չասելով Կիլիկիայում իթթիհատականների ծավալած հայատյաց ու ջարդարարական գործունեության և, հատկապես, բեմալական կանոնավոր զորքերի ու շեթենների կողմից հայ խաղաղ ազգաբնակչության դեմ գործադրված բռնությունների մասին:

Քննենք Կիլիկիայում երիտթուրքերի ծավալած քայքայիչ գործունեությունը բեմալական շարժման սկզբնավորման հետ առնչված:

Ինչպես նշվեց, անգլիական զորքերի կողմից Կիլիկիան գրավվելուց, նաև ֆրանսիական վարչական վերահսկողություն հաստատվելուց հետո սուլթանական պաշտոնյաները շարունակում էին մնալ տեղական իշխանություններում: Ինչպես նկատում է զնդասպետ Բրեմոնը, ի տարբերություն Սիրի-

<sup>61</sup> Pierre Redan, op. cit., p. 85.

<sup>62</sup> II. З. Эфендиева, *նշվ. աշխ.*, էջ 81: Փաստազուրկ է նաև Ա. Ժելտյակովի այն պնդումը, թե իբր «զուրթի վերադարձը նախկին տերերին» (հայերին—Ռ. Ս.) ուղեկցվում էր քուրճերի զանգվածային սպանություններով: Տե՛ս «Вестник ИГУ», № 8, серия истории, языка и литературы, вып. II, 1957, էջ 210:

այի, որտեղ օսմանյան նախկին պաշտոնյաները փոխարինվեցին, Կիլիկիայում անմիջական վարչութիւնն այդպես էլ շահատատվեց, տեղական իշխանութիւնը մնաց թուրք նախկին կառավարողների ձեռքում<sup>63</sup>, որոնց գերակշռող մասը մոլի իթթիհատական գործիչներ էին: Ադանայի ժամանակավոր վայր նազըմ բեյը և նրա պաշտոնյաները վիլայեթի մեջ մտնող քաղաքներում ու գյուղերում կազմակերպում էին «Միութիւնն և առաջադիմութիւնն» կոմիտեին հարող խմբակներ, իսկ իթթիհատական հայտնի գործիչ գեներալ Նեհաթ փաշան խրախուսում էր մահմեդականներին՝ ստեղծելու քրիստոնյա ազգաբնակչութեան դեմ ուղղված «Իսլամական միութիւններ»<sup>64</sup>, որոնք իբր նպատակ ունեին «պաշտպանել» մահմեդականներին: «Այդ պաշտպանութեան եղանակը,— գրում է Գոթթըրոն,— ամփոփվում էր երկու բառում՝ պրովոկացիա և զրպարտութիւն: Բոլոր շարագործութիւններում նախապես մեղադրվում էին «հայկական հրոսակները» (հայ լիգեոնականները— Ռ. Ս.), մինչդեռ Լեգեոնը այնպիսի պարկեշտ դիրք էր զբաղեցրել, որ Ադանայի նահանգապետը ընդունել էր այդ բանը: Ոչ-զինվորական հայերին վերագրում էին թուրքերի դեմ բռնութիւնների նախապատրաստութիւն, մինչդեռ որոշակի էր ճիշտ հակառակը... դշուրին էր առավել նողկալի պատասխանատվութիւնը բարդել դոհերի վրա»: «Այդ դեպքում,— շարունակում է հեղինակը,— ինչպե՞ս խուսափել արշունալի ընդհարումներից՝ վերադարձող դժբախտ տարագրյալների և զորացրվածների, դասալիքների, ամեն երանգի թափառականների միջև, որոնք գալով պատերազմի, տեղահանման ու ջարդերի հետևանքով ամայացած վայրերը, տեղ էին դառնում հայերի տնտեսին ու նրանց ունեցվածքին»<sup>65</sup>:

Անգլիական զինվորական իշխանութիւնները 1919 թ. առաջին կեսին որոշ փորձեր արեցին Կիլիկիայում իթթիհատ-

<sup>63</sup> E. Brémond, op. cit., p. 16.

<sup>64</sup> Pierre Redan, op. cit., p. 78.

<sup>65</sup> Gustave Gautherot, La France en Syrie et en Cilicie, p. 182.



տական կուսակցութիւնը վերակենդանացնելու դեմ, սակայն տպարդուին: Այսպէս, 1919 թ. հունիսի սկզբներին անգլիական զորավար էնդրյուն ժամանելով Մարաշ, իր մոտ հրավիրեց քաղաքի աղղեցիկ իթթիհատականներին և նրանցից պահանջեց լուծարքի ենթարկել գաղտնի կազմակերպութիւնները: Վերջիններս խոստում տվեցին, սակայն զորավարի մեկնելուց հետո նրանք շարունակեցին իրենց հրահրող գործունեութիւնը, գաղտնի ժողովներ էին գումարում և այլն<sup>66</sup>:

Գրութիւնը Կիլիկիայում առավել սրվեց 1919 թ. աշնանը, երբ ֆրանսիական ու անգլիական կառավարութիւնների միջև սեպտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով<sup>67</sup> անգլիական զորքերին Կիլիկիայում և Վարեսլյան տերիտորիաներում՝ Այնթապում, Ուրֆայում, Բիրեջիկում, փոխարինեցին ֆրանսիական զորքերը: Սրվասում հաստատված ներկայացուցչական կոմիտեի անունից Քեմալը 1919 թ. նոյեմբերի 12-ի հեռագրով բողոք է հայտնում ֆրանսիական զրավման դեմ<sup>68</sup>:

Այդ նույն ժամանակ էլ քեմալականները դիմում են նոանդուն գործողութիւնների Կիլիկիայում<sup>69</sup>:

Ինչո՞ւ քեմալական ղեկավարութիւնը, անտեսելով անգլո-հունական վտանգը, «շրջվեց» դեպի Կիլիկիան, որոշեց ազգային պատերազմը սկսել Կիլիկիայի ճակատից:

Պետք է ասել, որ պատմագիտական գրականութեան մեջ այս հարցը բավարար մեկնաբանում չի գտել: Գնդապետ Բրեմոնն, օրինակ, 1921 թ. տպագրված իր հուշերում, գրում է, որ

<sup>66</sup> Տե՛ս «Կիլիկիա», 17 հունիսի 1919 թ.:

<sup>67</sup> Jean Pichon, op. cit., p. 200.

<sup>68</sup> „Documents on British Foreign Policy 1919—1939“, First series, vol. IV, p. 538; Lord Kinross, op. cit., p. 203.

<sup>69</sup> Պիեռ Մըդանը նշում է, որ ազգայնականների որոշակի ծրագիրը հայտնի էր տակավին 1919 թ. հուլիսին: Այն նախատեսում էր հարձակում Կիլիկիայի վրա երեք ուղղութիւնով: Առաջինը՝ Մերսին-Ադանա ճակատում, նպատակ էր հետապնդում կտրել երկաթուղային հաղորդակցութիւնը այդ երկու քաղաքների միջև: Երկրորդ հարձակումը ընթանալու էր Հաճըն-Սիս գծի վրա Ջիհանի, իսկ այնուհետև Ադանայի ուղղութիւնով: Երրորդ հարձակումը պետք է զարգանար Այնթապի ճակատում: Տե՛ս Pierre Redan, նշված աշխ., էջ 95:

այդ քայլի «շարժառիթները ճշգրիտ կերպով տակավին հայտնի չեն»։ Այնուհանդերձ, նա երկու պատճառ է մատնանշում.

1. Այն փաստը, որ թուրք սպաների մեծամասնությունը իր կրթությունը ստացել էր Գերմանիայում և հենց նոր կովել էր գերմանացիների հետ դաշնակցած, նրա մեջ հատուկ ատելություն էր առաջ բերել ֆրանսիացիների նկատմամբ։ Անժըրստելի է, որ նախկինում ֆրանս-թուրքական մերձեցում է եղել, սակայն, միաժամանակ, որոշակի է, որ երեսուն տարվա ընթացքում թուրքիան գերմանացվել էր, և երեսուն տարվա այդ աշխատանքի հետքը կարելի էր վերացնել միայն տևական ու ինտենսիվ համապատասխան ջանքերի շնորհիվ։

2. Կարիքի ու լքվածության վիճակում գտնվող Կիլիկիայի օկուպացիոն կորպուսը հարձակման համար առավել գայթակղելի թիրախ էր, քան մեծաքանակ ու առատորեն նյութերով մատակարարված Իզմիրի հունական բանակը<sup>70</sup>։

Ֆրանսիական մի այլ զինվորական, Մերձավոր Արևելքում ֆրանսիական զինված ուժերի հրամանատար գեներալ Գուրոն ևս նշում է, որ ազգայնականների նպատակն էր նախ Իզմիրը վերագրավել, ապա նոր Կիլիկիան։ Սակայն Մուստաֆա Քեմալը միայն երկու զորաբանակ ունեւր, ինչը անբավարար էր Իզմիրի ճակատում գտնվող 120 հազար հույների դեմ կովելու համար, ուստի նա ֆրանսիացիների կողմը դարձավ<sup>71</sup>։

Արդեն հիշատակված Պիեռ Ռըդանը ևս միակ շարժառիթը տեսնում է Կիլիկիայի ճակատի նվազ պաշտպանվածության մեջ, այն տարբերությամբ, սակայն, որ նրա կարծիքով հաղթանակը Քեմալին հարկավոր էր իր հեղինակությունը բարձրացնելու համար. «Մուստաֆա Քեմալը գտնելով, որ Կիլիկիան անհամեմատ ավելի թույլ է տանկերով ու սավառնակներով, քան հունական զոտին, ձգտում էր ֆրանսիացիների նկատմամբ հաջողության հասնել, որն անհրաժեշտ էր իր հեղինակությունը ուժեղացնելու համար»<sup>72</sup>։

<sup>70</sup> E. Brémond, op. cit., p. 37—38.

<sup>71</sup> Տե՛ս «Ճակատամարտ», 15 դեկտեմբերի 1920 թ.։

<sup>72</sup> Pierre Redan, op. cit., p. 94—95.



Ինչ վերաբերում է ժամանակի թուրքական մամուլին, ապա նա դատապարտում էր Քեմալի այդ քայլը, որակելով այն որպես «դիվանագիտական պարտութուն»։ «Պետք է խոստովանենք,— գրում էր «Փեյամի-Սարահ» թերթում ներքին գործերի նախկին մինիստր Ալի Քեմալ բեյը,— թե դիվանագիտական մեծ սխալ մըն էր միլլի բանակին պարագլուխներուն համար, երբ դեռ երեսի վրա կմնային Իզմիրը և այլ խնդիրները, երթալ մինչև Կիլիկիա...»<sup>73</sup>։

Սովետական հեղինակներից հարցին անդրադարձել է լեհինգրադցի թուրքագետ Ա. Ժելտյակովը, որի կարծիքով, օտարերկրյա ներխուժողների դեմ առաջին հարվածը Կիլիկիայում հասցնելու Քեմալի որոշումը պայմանավորված էր Մարաշի աշխարհագրական դիրքով, նաև այն բանով, որ քաղաքում հացահատիկի մեծ պաշարներ կային<sup>74</sup>։

Բերված փաստաթղթերից միակ համոզիչը դա ֆրանսիականի համեմատ հունական զորքերի թվական զգալի գերակշռությունն ու զինվածությունն էր։ Բրեմոնի մատնանշած «հաստուկ ատելությունը» ֆրանսիացիների նկատմամբ իրականում գոյություն չի ունեցել, ոչ էլ գերմանացիներին հաջողվել էր թուրքերի միջից դուրս մղել ֆրանսասեր ավանդական հսկումները։ Ճշմարիտն այն է, որ թուրքերը ֆրանսիացիների նկատմամբ թշնամանք էին տածում այն շափով, ինչ շափով վերջիններս պաշտպանում էին հայերին, իսկ ավելի ճիշտ՝ դատարկ հայտարարություններ անում, թե իբր իրենց ներկայությունը Կիլիկիայում թելադրվում է «հայ խաղաղ ազգաբնակչությունը պաշտպանելու անհրաժեշտությունը», որ իրենք Կիլիկիա են եկել սոսկ «այդ երկիրը կարգի բերելու և հայերին հանձնելու մտադրությամբ» և այլն<sup>75</sup>։

Փաստական նյութի համակողմանի ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է այն հետևություն, որ քեմալականների պայ-

73 Տե՛ս «Ճակատամարտ», 19 մարտի 1920 թ.։

74 «Ученые записки ЛГУ», серия вост. наук, вып. 14, стр. 33.

75 Տե՛ս E. Nicol, Les Alliés et la Crise Orientale, էջ 33—34։

քարը Կիլիկիայից սկսվեց հետևյալ հիմնական պատճառներով.

1. Անգլիական զենքով լավ զինված հունական բանակի դեմ այդ շրջանում հանդես գալը կարող էր աղետարբեր հետեւվանքներ ունենալ քեմալականների համար. հաջողության հասնելու իրական երաշխիքներ չկային, իսկ պարտության դեպքում քեմալական շարժումը կարող էր վարկաբեկվել և կազմալուծվել.

2. Կիլիկիայում անգլիական զորքերին փոխարինած ֆրանսիական ռազմական ուժերը անհամեմատ ավելի թույլ էին.

3. Քեմալականներին քաջ հայտնի էին Ֆրանսիայի տիրապետող շրջանների թուրքասիրական հակումները, նրանց առանձնահատուկ շահագրգռվածությունը թուրքական գործերում: Հաջողության դեպքում, որը նրանք միանգամայն հնարավոր էին համարում, կարելի կլիներ համաձայնության գալ Ֆրանսիայի հետ, մեկուսացնելով, այդպիսով, նրան և առավել խորացնելով անգլո-ֆրանսիական տարաձայնությունները<sup>76</sup>.

4. էրզրումի ու Սըվասի համաժողովներում ընդունված ազգայնական ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ էր ռազմական որևէ հաղթանակով ոգևորել ժողովրդին (ինչպես որ այդ բանը հետագայում արվեց արևելյան ճակատում՝ Հայաստանի դեմ ձեռնարկված քեմալական արշավանքով)<sup>77</sup>.

5. Քեմալական որոշումների հակահայկական ուղղվածությունը:

---

<sup>76</sup> Այս վերջին հանգամանքի վրա, ի միջի այլոց, անգլո-ֆրանսիական իշխանությունները ուշադրություն են դարձրել: Պիեռ Ռըդանը նշում է, որ 1919 թ. սկզբներին Կիլիկիայում «ֆրանսիացիներն ու անգլիացիները բլուկ էին կազմել և թուրքերը հաջողության չհասան իրենց սովորական խաղում՝ բաժանել մեծ տերությունները»: *Pierre Redan*, op. cit., p. 83.

<sup>77</sup> Այդ մասին տե՛ս Ն. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 51:



Ինչպես վերևում տեսանք, էրզրումի և Սըվասի համաժողովներում ընդունված փաստաթղթերի ամենահիմնական կետերից մեկը հնարավոր բոլոր միջոցներով անկախ Հայաստանի ստեղծումը և, այդպիսով, միասնական մի պետության մեջ հայ ժողովրդի միավորումը խափանելն էր: Խոսքով հանդես գալով բոլոր ազգերի կամավոր ու ազատ ինքնորոշման օգտին, քեմալականներն իրականում պահանջում էին ինքնորոշում ու անկախ պետական գոյություն բացառապես թուրք կամ թուրքալեզու ժողովուրդների համար և վճռականորեն հանդես գալիս Օսմանյան կայսրության ճնշված ու կեղծված ժողովուրդների՝ արարների<sup>78</sup>, հուլյների, քրդերի, հայերի և մյուսների ինքնորոշման դեմ, ժողովուրդների, որոնք իրենց պապենական հողերում բնակվում էին օսմանյան թուրքերի Անատոլիայում հայտնվելուց շատ դարեր առաջ: Առանձնապես անհաշտ դիրք էին զրավել քեմալականները հայ ժողովրդի ինքնորոշման հարցում:

Այդ մասին են վկայում նաև նորահայտ փաստերը, որոնցից պարզվում է, որ տակավին էրզրումի ու Սըվասի համաժողովներից առաջ, Անատոլիա գալու առաջին իսկ օրերին, Քեմալը որոշակիորեն հանդես է եկել իր հակահայկական ծրագրով: Այսպես, օրինակ, Աթաթյուրքին նվիրված իր ծավալուն աշխատության մեջ լորդ Կինրոսը մատնանշում է, որ Քեմալը հարձակվում էր մեծ վեղիր Դամադ Ֆերիդ փաշայի վրա հատկապես այն բանի համար, որ վերջինս համաձայնվել էր հայկական ինքնավարության սկզբունքի հետ<sup>79</sup>: Եվ Քեմալը, ինչպես հայտնի է, ամեն հնարավոր բան արեց, որպեսզի

<sup>78</sup> Սխալ է այն կարծիքը, թե իրր քեմալականները հենց սկզբից ճանաչել են արարների ինքնորոշման իրավունքը: Այդ մասին տե՛ս մեր գրախոսականը Օ. Ի. Գիդինեիշվիլու «Պանթուրքիզմը և Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» գրքի մասին. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 7 (290), էջ 117:

<sup>79</sup> Lord Kinross, op. cit., p. 169. Տե՛ս նաև հիշյալ գրքի մասին մեր գրախոսականը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 3 (298), էջ 95:

այդ սկզբունքը շկիրաովի և բուն հայկական հողերը մնան թուրքական տիրապետութեան տակ՝ առանց հայերի:

Թուրքական տիրապետութեանից ազատագրվելու պոտենցիալ վտանգ էր ներկայացնում քեմալականների համար նաև Կիլիկիան, որտեղ հայերը, ինչպես վերևում ցույց տրվեց, ազգաբնակչության մեկ երրորդն էին կազմում: 1919 թ. աշնանը, այսինքն այն ժամանակ, երբ քեմալական ղեկավարութեանը որոշում կայացրեց առաջին հարվածն ուղղել Կիլիկիայի դեմ, Կիլիկիահայերի վերադարձը իրենց հայրենի օջախները դուշարունակվում էր և Քեմալը, բնականաբար, երկյուղ էր կրում, որ հայերը, առավել մեծ թիվ կազմելով և հիմնավորվելով երկրում, ավելի հոանդուն կերպով կպայքարեն Հայկական Կիլիկիայում ինքնավարութուն ձեռք բերելու համար:

Այս վերջին պատճառը, պետք է ասել, զգալիորեն արագացրեց ազգայնականների որոշման կենսագործումը: Եվ հատկանշական է, որ քաջ գիտենալով այն մասին, որ թուրքերը Կիլիկիայում փոքրամասնութուն են կազմում, իսկ բոլոր մահմեդականները, միասին վերցրած, հարաբերական մեծամասնութուն, քեմալականները իրենց քաղաքականության հիմքում դնում են կրոնական սկզբունքը, մահմեդական ազգաբնակչության մեջ հայերի նկատմամբ ատելութուն ու թըշնամանք բորբոքելով, «հայերին բացահայտորեն հետապնդելու» կոչելով<sup>80</sup>: 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Քեմալը իսլամի դրոշի տակ միավորվելու մի քանի կոչ է արձակում: Այսպես, սիրիացիներին ուղղված 1919 թ. հոկտեմբերի 9-ի իր կոչում Քեմալը, դիմելով նրանց որպես «կրոնակից», կոչ էր անում «մի կողմ թողնել բոլոր անհամաձայնութունները և ամբողջ ուժով հանդես գալ դավաճանական այն խմբերի դեմ, որոնք ուզում են բաժանել մեր երկիրը»<sup>81</sup>:

«Դուք կզղջաք, եթե ինձ շսեք»<sup>82</sup>, — զգուշացնում էր Քեմալը:

<sup>80</sup> Paul du Vêou, op. cit., p. 113.

<sup>81</sup> „Documents on British Foreign Policy 1919—1939“, First series, vol. IV, p. 178.

<sup>82</sup> Նույն տեղում:



Մահմեդական մոլեռանդությունը բորբոքելու և այն առաջին հերթին հայերի դեմ ուղղելու նպատակ էին հետապնդում այն բազմաթիվ թուուցիկներն ու շրջաբերականները, որ տարածում էին Կիլիկիա անցած բեմալական գործիչները:

Ահա դրանցից մեկը.

«Դուք, ո՛վ իսլամ ժողովուրդ, ո՛վ սիրտը այրած թուրք բաշեր, արցունք թափող թուրք մայրեր. ձեր ազնիվ հոգիներուն կուղղենք մեր խոսքը:

Թուրքիո օրինական ու ազգային իրավունքները չճանչցող մեր համառ ու բռնակալ թշնամիները, նորեն թուրքի հավատքին և ուժին հպատակեցնենք:

Ո՞ւր է — թրքական վայրեր անբռնաբարելի պիտի ըլլային. ո՞ւր է — մեր թրքական նահանգներուն մեջ իշխանությունը պիտի պահվեր:

Թուրք մտավորականությունը ստիպված եղավ առաջ բերելու հակա ու հոյակապ ազգային շարժում մը՝ հիմնվեցավ Անատոլուի և Ռումելիի պաշտպան կուսակցությունը, և այս, իր առաջին հարվածը իզմիրի հուլյներու գլխուն իշեցուցած պահուն, երկրորդ հարվածը կպատրաստե տալ Անդր-Տավրոսի հայ շարդարարներուն, գրգռությունը իրենց շիւ հաշիվներուն հետ միացնելով ամեն օր թուրքը վիրավորողներուն:

Այո, ո՛վ Տավրոսի ետևը ամիսներե ի վեր իրենց հանգիստեն ու երջանկութենեն զրկված ազգակիցներ, քաղաքացիներ, վստահ եղեք, շատ մոտ ատենեն այդ սև փորձանքները պիտի մաքրվին, ու լուսինը պիտի փայլի կրկին Տավրոսի փառապանծ հորիզոնին վրա:

Մեր հազարավոր քաղաքացիները նույնիսկ Ադանայի մեջ այս նվիրական հրամանին համար առաջին ազգանըշանին կսպասեն, և մյուս կողմե՛ նույն այդ Կիլիկիո հարազատ վավակներեն կազմված է մարմին մը, որ հաճույքն ու հանդիստը ձգած, այս գործին համար կաշխատի: Կամ Արևմուտքը մեր իրավունքները պիտի ճանչնա, կամ մենք՝ մեր ուժովը պիտի ճանչցվինք ամբողջ աշխարհին:

Ով մահմեդական աշխարհ, ով մահմեդական թուրքեր,

արթընցեք դեռ «էզեհնի» ձայնը կլսեք, չըլլա որ մեր հայրենիքը եկեղեցական զանգակներու աղմուկներով լեցվի»<sup>83</sup>։

Ինչպես ասվեց, 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբերին ֆրանսիական զորքերը Կիլիկիայում փոխարինեցին հեռացող անդլիական զորքերին։ Հոկտեմբերի 30-ին ֆրանսիական առաջին ջոկատը մտավ Մարաշ<sup>84</sup>, իսկ նոյեմբերի 29-ին Մարաշի սանջաքի ֆրանսիական կառավարիչ նշանակված կապիտան Անդրեն, ժանդարմական մի ջոկատի ուղեկցությամբ (125 մահմեդական՝ չերքեզներ, թուրքեր, 25 քրիստոնյաներ՝ հայեր, քաղդեացիներ, ասորիներ) գալիս է Մարաշ<sup>85</sup>։ Քաղաքն այդ ժամանակ ուներ 60 հազար աղգաբնակչություն, որից 40 հազարը մահմեդականներ էին, գերազանցապես թուրքեր, իսկ 20 հազարը՝ հայեր<sup>86</sup>։

Դրությունը Մարաշում բավականին լարված էր արդեն։ Նոյեմբերի 19-ից, գրում է գնդապետ Բրեմոնը, երբ Քեմալը Ադանայի, Մերսինի, Ջեբել-Բերեքեթի ու Սսի իրավունքների պաշտպանության կոմիտեների անունից բողոք էր հայտնել Այնթապի ու Մարաշի ֆրանսիական գրավման դեմ, ակներև էր դարձել, որ մենք բախման մեջ ենք անմիջականորեն Մուստաֆա Քեմալի հետ<sup>87</sup>։ Ֆրանսիացիների դեմ ապստամբություն բարձրացնելու նպատակով վերջինս Մարաշի շրջան էր ուղարկել մի խումբ սպաների Քըլըջ Ալիի գլխավորությամբ։ Բուն քաղաքում մի քանի ամսից ի վեր պանթուրանական եռանդուն գործունեություն էին ծավալել երիտթուրքական նախկին գործիչները՝ Մարաշի իթթիհատականների պարագլուխ դոկտոր Մուստաֆայի ղեկավարությամբ<sup>88</sup>։ Վերջինս շէր

<sup>83</sup> Տե՛ս Սոկրատ Թերգեան, նշվ. աշխ., էջ 210—211։

<sup>84</sup> *Materne Muré*, Le massacre de Marache, p. 5.

<sup>85</sup> *E. Brémond*, op. cit., p. 32.

<sup>86</sup> *Paul du Vêou*, op. cit., p. 111. Հայկական որոշ աղբյուրների համաձայն, հայերի թիվը Մարաշում 1920 թ. հունվարին՝ մինչև շարդը, հասնում էր 22—23 հազարի։ Տե՛ս Յովսեփ Տեր-Վարդանեան, նշվ. աշխ., էջ 122, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 546, ք. 22։ Գր. Հ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 818։

<sup>87</sup> *E. Brémond*, op. cit., p. 37.

<sup>88</sup> *Pierre Redan*, op. cit., p. 91.



Թարցնում, որ իրենց ընդհատակյա նախապատրաստութիւնները հավասարապես ուղղված են քաղաքի հայ ազգաբնակչութիւնն ղեմ: Նա բողոք հայտնեց անգլիական զորքերը Ֆրանսիականով փոխարինելու դեմ միայն այն բանի համար, որ այս վերջինների կազմում հայեր կային<sup>89</sup>: Հիշյալ իթթիհատական կոմիտեի կազմի մեջ մտնող Մարաշի երեւիներէից Հասան Գասը-դադե Հաշին, Հոջաբաշ օղլու Օմարը, Խյուդայի Թահսինը, դեղագործ Լյութֆին և ղոկտոր Մուստաֆան 1919 թ. դեկտեմբերին ուղևորվում են Էլբիստան, հանդիպումներ ու դրույցներ ունենում այնտեղ գտնվող քեմալական մի քանի ղեկավարների հետ՝ Ֆրանսիացիների հանդեպ իրենց բռնելիք դիրքի և ուղղութիւն շուրջ և հարկ եղած հրահանգները ստանալով՝ ետ վերադառնում Մարաշ<sup>90</sup>: Այդ նույն ժամանակ քաղաքում ստեղծվում է «Մարաշի իրավունքների պաշտպանութիւնն ընկերութիւնը», որը Ֆրանսիացիների դեմ պայքարի ծրագիր է մշակում. քաղաքը բաժանվում է 10 շրջանի. սրանցից յուրաքանչյուրում ստեղծվում են բաժանմունքներ, որոնց նախագահներից կազմվում է ղեկավար մի մարմին՝ շերքեզ Արսլան բեյի գլխավորութիւնով: Հիշյալ ընկերութիւնը սկըսում է տարածել հակաֆրանսիական ու հակահայկական թուրքիկներ, ինչպես և ձեռագիր թերթ, ամեն մի շրջանում ստեղծում է զինված ջոկատներ (շեթհներ), կապ հաստատում և իր աշխատանքին մասնակից դարձնում թուրքական ժողովրդներին և այլն<sup>91</sup>: Քաղաքի ներսում և շրջակա գյուղերում ձեռնարկվող ապստամբական այս միջոցառումները դրսից խրախուսվում ու ոգեշնչվում էին քեմալականների և նրանց

<sup>89</sup> A. Bagdadlioglu, Uzun Oluk. Istiklâl harbinde Maraş. İstanbul, 1942, s. 33.

<sup>90</sup> Յովսէփ Տէր-Վարդանեան, Մարաշի ջարդը 1920-ին, էջ 93: Մարաշից Ազանա ուղարկված մի թղթակցութիւնն մեջ ասվում էր, որ հիշյալ Լյութֆին և նրա եղբայրը, նույնպես մոլի իթթիհատական ղոկտոր Մըստըզ էֆենդին «կզործեն մեծ թափով և կսպանան իսկ Էնվերի-Թալաթի անուններով»: *Shu «Հայ ձայն»*, 20 հունիսի 1919 թ.

<sup>91</sup> A. Bagdadlioglu, op. cit., p. 63—69.

լատփողը հանդիսացող «Adanaya dogru» («Գեպի Ադանա») թերթի էջերից<sup>92</sup>։ Մթնուրտը շիկանում էր։ Հայերը, անհանգրստացած մահմեդական ազգաբնակչության զինումից, տադնապալի դիմումներով փորձում էին ֆրանսիական ղեկավարների ուշադրությունը հրավիրել վերահաս վտանգի վրա, խնդրում էին ուժեղացնել քաղաքի ֆրանսիական կայազորը՝ նոր զինվորական ուժեր բերելով Մարաշ, սակայն ամեն անգամ իշխանությունները նրանց հանգստացնում էին, ասելով, թե «ֆրանսիական ուժերը ավելի քան բավարար են»<sup>93</sup>, թե «Գերմանիան ծունկի բերող Ֆրանսան մեծ է ու հզոր» և այլն։

Պետք է ասել, որ հայերի, ինչպես և ֆրանսիացիների համար օրհասական այդ պահին ֆրանսիական զինվորական ղեկավարները բարեհոգության, ինքնավստահության ու ստեղծված իրադրությանը անգիտանալու զարմանալի օրինակներ էին ցույց տալիս<sup>94-95</sup>։ Նույնիսկ ֆրանսիական հեղինակները, նրանք, ովքեր շեն նպատակադրվել ամբողջովին արդարացնել իրենց կառավարության ու զինվորականների քաղաքականությունը կիլիկիայում, նման վարքագիծը միանգամայն շարդարացված ու կործանարար են համարում, միաժամանակ խոստովանելով, որ հայերն անընդհատ նախազգուշացնում էին սպառնացող աղետի մասին, որ «մյուլթեսարիֆը զենք է բաժանում, որ հրացաններն ու գնդացիները անվերջ գալիս են ուղտերի վրա, սայլերում կանաչիների տակ քողարկված» և այլն<sup>96</sup>։

«Օրը ցերեկով, — գրում է ֆրանցիսկյան հայրերի Մարաշի վանքի վանահայր Մատերն Մյուրեն, — բեմալական ղեկա-

92 Տե՛ս ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 546, Թ. 36։

93 Նույն տեղում, Թ. 24։

94-95 Գնդապետ Ռորեր Նորմանը իր հուշերում ուշացումով խոստովանում է, որ ազգայնականների պրոպագանդի առկայության պայմաններում ֆրանսիական զորքերի թուլությունը մեծ վտանգ էր դառնում։ R. Normand. L'Oeuvre de la France en Cilicie. Տե՛ս «L'Aste française», № 189, էջ 60։

96 Paul du Vèou, op. cit., p. 124—125. Տե՛ս նաև ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 546, Թ. 37։



վարները տեղական իշխանութիւնների հետ գործակցած զենք ու ռազմամթերք էին բաժանում քաղաքի ու շրջակայքի բնակիչներին, զնդացիներն առաքում քաղաք, տների պատերի մեջ հրակնատներ պատրաստում և, վերջապես, բարիկաղներ կառուցում: Թուրքերը մտածում էին, որ Ֆրանսիացիները, տեսնելով այդ պատրաստութիւնները, կկորցնեն համբերութիւնը և նետվելով թուրքերի վրա՝ հենց հրակնատների առջև կսպանեն նրանց...»<sup>97</sup>: Թուրքերի այս տենդոտ պատրաստութիւններին Ֆրանսիական զինվորական ղեկավարները պատասխանում էին հայերին «հանգստացնելով», թե «մենք ալ զիտենք ատոնք, մենք ունինք մեր գաղտնի շրջանները, որոնք օրը օրին կրերեն մեզ հարկ եղած տեղեկութիւնները քաղաքին մեջ անցնող դարձող գործունեութիւն մասին. դուք, հայերդ, անհոգ եղեք»<sup>98</sup>: Սակայն այդ հավաստիացումները չէին կարող զոհացնել հայ ազգաբնակչութիւնը, որն ամեն օր տագնապալից լուրեր էր ստանում թուրքական շեթենների մոտալուտ հարձակման մասին: Դեկտեմբերի 6-ին Մարաշի Աղգային միութիւնը Ֆրանսիական մի գաղտնի գործակալից (աղգությամբ թուրք) տեղեկանում է, որ թուրքերը պատրաստվում են մինչև դարուն հարձակվել Մարաշի, Հաճընի և Զեյթունի վրա: Քաղաքի հայ երեւելիները ժողով են զումարում: Ոմանք ստացած լուրը կասկածի տակ են վերցնում և թերագնահատում վերահաս վտանգը: Սակայն Մարաշի Աղգային միութիւնն ատենապետ Արամ Պաղտիկյանը, արհամարհելով ճանապարհի վտանգը, մեկնում է Ադանա՝ Կիլիկիայի Գլխավոր կառավարիչ զնդապետ Բրեմոնից օգնութիւն խնդրելու համար: Վերջինս խոստանում է նոր զորքեր ուղարկել Մարաշ: Ատենապետը վերադառնում է Մարաշ ղեկտեմբերի 22-ին, երբ «թուրքերը քաղաքին մեջ հայտնաբար կսպաննային Ֆրանսիացիներուն ու հայերուն»<sup>99</sup>:

<sup>97</sup> *Materne Muré, Le massacre de Marache, p. 6.*

<sup>98</sup> Յովսէփ Տէր-Վարդանեան, *Եզվ. աշխ.*, էջ 93:

<sup>99</sup> Գր. Հ. Գալուստեան, *Եզվ. աշխ.*, էջ 793:

Դեկտեմբերի 21-ին «Մարաշի իրավունքների պաշտպանութեան ընկերութիւնը» նամակով դիմում է Մարաշի ֆրանսիական ուժերի հրամանատար գեներալ Քերեթին՝ ֆրանսիական զորքերը քաղաքից անհապաղ դուրս բերելու պահանջով<sup>100</sup>: Իսկ դեկտեմբերի 27-ին Մարաշում բռնկվում է հակաֆրանսիական առաջին ապստամբութիւնը: Քաղաքի թուրք ազգաբնակչութեան ելույթի համար ազդանշան է ծառայում ազգայնականների կողմից էլբիստանում նախապատրաստված շեթեական մի խմբի մուտքը Մարաշ: Հարցուր հեծյալներից բաղկացած այդ խումբը դեկտեմբերի 27-ին, օրը ցերեկով, խուժում է քաղաք, կրակոցնեբրով ու գոռուն-գոչյունով սուրում դեպի միջնաբերդը և բարձրացնելով այնտեղ թուրքական դրոշակը և կանաչ-կարմիր գույնի կրոնական մի դրոշ, դուրս նետվում քաղաքից՝ մինչ ֆրանսիացիները կկողմնորոշվեին ու կկարողանային որևէ բան ձեռնարկել<sup>101</sup>: Քաղաքի թուրք բնակիչները՝ չքավորները, արհեստավորները, հիմնականում ստորին խավերը, դուրս են գալիս ցուլցի, իրենց զայրույթն ուղղելով ամենից առաջ ֆրանսիական իշխանութիւնների հետ գործակցող մահմեդական բարձր հոգևորականութեան ու հարուստ վերնախավի դեմ: Գազազած ամբոխը մորուքից բռնած քարը է տալիս 80-ամյա իմամ Դայր-զադեին<sup>102</sup>, ծեծում նրան և գցում ցեխի մեջ: Այնուհետև ամբոխը շարժվում է դեպի քաղաքի ամենաազդեցիկ դեմքի՝ խոշոր ավատատեր-մեծահարուստ Բայազիդ-զադեի տունը և սպառնում հաշվհարդար տեսնել՝ ֆրանսիացիների հետ հետագա համագործակցութեան դեպքում<sup>103</sup>:

<sup>100</sup> A. Bagdadlioglu, op. cit., p. 69.

<sup>101</sup> E. Brémond, op. cit., 33; Paul du Vêou, op. cit., p. 112. Ըստ Միշել Պայառեսի, այդ խումբը քրդական հեծյալ ջոկատ էր: Տե՛ս Michel Paillarès, նշվ. աշխ., էջ 110:

<sup>102</sup> Վերջինս 1919 թ. նոյեմբերի 27-ին Մարաշի մեծ մզկիթում կարգացած իր քարոզում մահմեդական ազգաբնակչութեանը կոչ էր արել հնազանդվել ֆրանսիական օկուպացիոն զորքերին: Տե՛ս Paul du Vêou, նշվ. աշխ., էջ 112:

<sup>103</sup> E. Brémond, op. cit., p. 33; Pierre Redan, op. cit., p. 92.



Պետք է ասել, որ ֆրանսիական օկուպացիոն իշխանութիւնները սերտ կապեր էին հաստատել և փորձում էին հեն-վել քաղաքի մահմեդական բարձր հոգեորականութեան, հարուստ վերնախավի, քրդական առանձին շեյխերի վրա, որոնց մի զգալի մասը 1915 թ. հայերի բռնագաղթի ժամանակ նրանց թալանի ու կողոպուտի շնորհիվ հարստութիւն դիզածներն էին: Սրանք երկյուղ էին կրում, որ կարող են կորցնել իրենց հարստութիւնը, ուստի մի կողմից բորբոքում էին ազգամիջ-յան ատելութիւնը, թուրքերին գրգռում հայերի դեմ՝ այդ եղանակով «վտանգն» իրենցից հեռացնելով, մյուս կողմից՝ առերես պաշտպանում ու համադործակցում ֆրանսիական զինվորական ու վարչական իշխանութիւնների հետ՝ վերջին-ներիս աջակցութիւնը ստանալու համար:

Գնահատելով 1919 թ. դեկտեմբերի 27-ի ելույթը, հարկ է նշել, որ այն ամենից առաջ և հիմնականում ուղղված էր ֆրանսիական իշխանութիւնների հետ համագործակցող ման-մեղական վերնախավի դեմ, և ոչ թէ քաղաքի բոլոր շահագոր-ծողների դեմ ընդհանրապես: Որոշ հետադոտողներ, առանց բավարար հիմնավորման, փորձում են այդ շարժմանը սոցիա-լական ուժեղ երանգ տալ, հիմնվելով այն փաստի վրա, որ նրա մասնակիցները մեծ մասամբ քաղաքի ստորին խավերի ներկայացուցիչներն էին: Արդեն հիշատակված Ա. Գ. Ժելտյա-կովն, օրինակ, որպես ապացույց ընդգծում է այն հանգաման-քը, որ «Մարաշն անկախութեան պատերազմում» գրքի հեղի-նակ Ա. Բաղդադլըօղլուն նույնիսկ չի հիշատակում դեկտեմ-բերի 27-ի ապստամբութեան մասին, «մինչդեռ ֆրանսիական բոլոր հեղինակները, այդ թվում և ինտելիկենցիայի մասնա-կիցները, գրում են այդ մասին»<sup>104</sup>: Ֆրանսիական հեղինակնե-րը, իսկապես, նշում են, որ դեկտեմբերի 27-ի ելույթը դա «ստոր պլեբսի շարժումն էր, որը հեղեղեց երևելիներին և կրոնի սպասարկուներին»<sup>105</sup>, սակայն նրանք չեն թաքցնում, որ ամ-

<sup>104</sup> «Ученые записки ЛГУ», серия вост. наук, вып. 14, стр. 36.

<sup>105</sup> Pierre Redan, op. cit., p. 92—93; E. Brémond, op. cit., p.

բոխը քաղաքի երևելիների, հարուստ վերնախավի դեմ հանդես եկավ հենց այն պատճառով, որ նրանք համագործակցում էին ֆրանսիացիների հետ, նաև ընդգծում են, որ «ճնշումը դրսից էր», քեմալականների ջանքերի շնորհիվ էր առաջ եկել: «Միայն հասարակ ժողովուրդը իրական աշակցութուն ցույց տվեց, — գրում է Բրեմոնը: — Մինչդեռ միջին խավերը անվրձնական դիրք էին բռնել, իսկ բարձր ղեկավարները անցել էին մեր կողմը: Թուրք պաշտոնյաներն էլ Կ. Պոլսի հրահանգներին էին սպասում՝ կողմնորոշվելու համար, և միայն նրանցից մի քանիսը բացահայտ համակրանք էին տածում հանդեպ քեմալականները»<sup>106</sup>:

Չնայած այն բանին, որ ղեկտեմբերի 27-ի շարժումը ոչ-անմիջական, անուղղակի հակաֆրանսիական ուղղվածություն ունեւր (այսինքն ուղղված էր ֆրանսիական իշխանութուններին հետ առժամանակ համագործակցող մահմեդական վերնախավի և այդ իշխանութունների հովանավորութւյանն ու պաշտպանութւյանը ապավինած հայերի դեմ), Մարաշի ֆրանսիական վարչական ու զինվորական ղեկավարները լուրջ շնոտեցան խնդրին և անկարող գտնվեցին արագ ու ճիշտ կողմնորոշվելու: Քաղաքի ֆրանսիական կառավարիչ կապիտան Անդրեն, ղեպքերից անմիջապես հետո հեռախոսով կապվելով Ալնթապի ֆրանսիական ուժերի հրամանատար գնդապետ Յլի Սենտ-Մարիի հետ, հավաստիացնում էր նրան, որ ոչ մի վտանգավոր բան չի եղել. «Դա սոսկ մի տազնապ էր, որովհետև երևելիները տակավին թեքվում են մեր կողմը, իսկ մյուս թեսարիֆը տատանվում է: Տվեք ինձ երեք հարյուր հոգի և ես կարգ ու կանոն կհաստատեմ»<sup>107</sup>: Գնդապետն էլ իր հերթին բարեհոգութուն հանդես բերելով, հրավիրում է Անդրեին Ալնթապ հարցը տեղում քննելու համար՝ ռազմական արագ օգնութուն ուղարկելու փոխարեն:

Դեկտեմբերի 30-ին կապիտան Անդրեն գալիս է Ալնթապ և հանդիպում գնդապետ Սենտ-Մարիին, որը, սակայն, գրտ-

<sup>106</sup> E. Brémond, op. cit., p. 34.

<sup>107</sup> Paul du Véou, op. cit., p. 112.



նում է, որ ինքն ի վիճակի չէ վճռելու հարցը, և ուղարկում է Անդրեիին Ադանա վերին հրամանատարութեան մոտ<sup>108</sup>: Ֆրանսիական պատմարան Պոլ դյու Վեուն իրավացիորեն դատապարտում է զնդապետ Սենտ-Մարիի բռնած դիրքը. «Այն ժամանակ, երբ Մուստաֆա Քեմալը իր գլխավոր շտաբը տեղափոխել էր Անգորա, հայերին հետապնդելու բացահայտ կոչարձակել, իր հեծյալներով հեղեղել շրջանը, սպառնալիքի տակ դրել Հարունիի որբանոցը, երեք հարյուր շեթներով Պազարչըբում կտրել Այնթապ տանող նոր ճանապարհը, Ֆլի Սենտ-Մարիին չհասկացավ, որ նման շարժման ետուն պահին անհրաժեշտ էր ամեն զնով կարգ ու կանոն պահպանել Մարաշում, որի կառավարիչը գեթ մի պահ չպետք է հեռանար քաղաքից»<sup>109</sup>:

Նոր տարվա առաջին օրերից դրությունը Մարաշում առավել լարված դարձավ: Կապիտան Անդրեն ալլևս չվերադարձավ քաղաք: Նրա փոխարեն նոր կառավարիչ նշանակվեց հազարապետ (մայոր) Մորբիոն, իսկ Մարաշի ֆրանսիական ուժերի հրամանատար՝ հազարապետ Ռոզ գեզ Օրդոնը, որի զորամասը, բաղկացած մի գումարտակից, մի մարտկոցից, կես էսկադրոն հրաձիգներից, ընդամենը 2000 հոգի, վերին հրամանատարությունը ի վերջո ստիպված է լինում ուղարկել Մարաշ՝ քաղաքում առկա զորքերն ուժեղացնելու համար<sup>110</sup>: 1920 թ. հունվարի կեսերին Մարաշի ֆրանսիական կայազորը հաշվում էր մոտ 3000 զինվոր՝ 456-րդ դիվիզիայի կեսը<sup>111</sup>: Զորավար Քերեթը, որն այդ ժամանակ քաղաքում էր գտնվում, բարձր հրամանատարութեան կարգադրութեամբ իր վրա է վերցրնում ֆրանսիական զորքերի ընդհանուր ղեկավարությունը:

<sup>108</sup> E. Brémond, op. cit., p. 33.

<sup>109</sup> Paul du Vèou, op. cit., p. 113.

<sup>110</sup> E. Brémond, op. cit., p. 39.

<sup>111</sup> ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, դ. 546, թ. 38: Ն. Էֆենդիևան, վստահելով Ա. Բաղդադըզլուի բերած տվյալներին, գրում է, թե իբր «ֆրանսիական բանակը Մարաշում հաշվում էր 40 հազարից ավելի մարդ»: Տե՛ս Н. З. Эфендиева, նշվ. աշխ., էջ 111:

Սակայն կապը բարձր հրամանատարութեան հետ շատ թույլ էր, գրեթե խզված: Քաղաքի կայազորը շուներ ոչ մի անթել հեռախոս՝ բոլոր ապարատները Բեյրութում էին մնացել, շուներ ոչ մի սավառնակ: Քերեթի դիվիզիայի ամբողջ էսկադրիլիան նույնպես Բեյրութում էր: Ճնույնիսկ փոստատար աղավնիներ չկային,— գրում է դու Վեոն: — Մարաշը վերստին կտրված էր Ադանայից. ֆրանսիական դիվիզիայի կեսը անդամալուծված էր, կույր ու համր»<sup>112</sup>:

Բացի ֆրանսիական այս ուժերից, մինչև 1920 թ. հունվարի 21-ի թուրքական հարձակումը Մարաշում կային մոտ 600 հայ կամավորներ, որոնց ներկայութունը քաղաքում առանձնապես դուր չէր գալիս հայերի ջարդը ծրագրած թուրք ազգայնամուլ գործիչներին: Սրանք կեղծ լուրեր էին տարածում, թե իբր հայ կամավորներն ու լեգեոնականներն են լարված իրադրութիւն ստեղծում քաղաքում, սպառնալիք ներկայացնում մահմեդական ազգաբնակչութեան համար և այլն: Այդ բանսարկութիւնները տարածելով, ինչպես ստորև կտեսնենք, ազգայնականները նպատակ էին հետապնդում ֆրանսիական հրամանատարութեանը դրդել հայ կամավորներին դուրս հանել Մարաշից՝ քաղաքի խաղաղ հայ ազգաբնակչութեանը անպաշտպան թողնելու համար:

Բոլոր անաչառ հետազոտողները, սակայն, ժամանակին հերքել են հակահայկական թշնամանք բորբոքող այդ հերյուրանքները: «Եթե լեգեոնականները Կիլիկիա գալու պահին՝ ռեպրեսիաների են դիմել Ադանայում, Բողանթիում և երկաթուղու երկայնքի վրա, ապա նրանք իրենց հիանալի պահեցին Մարաշում և Այնթապում»<sup>113</sup>,— գրում է Պիեռ Ռեդանը:

Մի այլ վկայութիւն. «Մերձավոր Արևելքի իրադարձութիւնների շուրջ տարածված առասպելներից է այն,— գրում է գնդապետ Բրեմոնը,— թե իբր քեմալական ապստամբութեան պատճառը հայ լեգեոնականների օգտագործումն էր:

<sup>112</sup> Paul du Véou, op. cit., p. 126.

<sup>113</sup> Pierre Redan, op. cit., p. 36.



Պետք է ասել ճշմարտութիւնը. Հայկական լեզեոնը, խիստ նւազած, հաշվում էր այն ժամանակ 2 փոքր գումարտակ, ընդամենը 400—500 հոգի, և նա զորասյունների մեջ կազմում էր աննշան մի մասնիկ: Եվ ո՛չ Այնթապում, ո՛չ էլ Մարաշում լեզեոնը դժգոհութեան առիթ չտուլեց: Ֆրանսիական հրամանատարութիւնը նույնիսկ նրան շնորհակալութիւն հայտնեց այդ լավ վարքագծի համար»<sup>114</sup>: Նույն բանն են նշում Մատերն Մյուրեն<sup>115</sup> և ուրիշները:

Հայ լեզեոնականների դեմ ուղղված բանսարկութիւնների հեղինակները, սակայն, կարողացան իրականացնել իրենց բաղձանքը՝ վտարել նրանց Մարաշից, հայերի համար օրհասական պահին: 1920 թ. հունվարի 18-ին Մորբիոյին այցելած քաղաքի թուրք պաշտոնյաները ֆրանսիական կառավարչին մի վերջնագիր են ներկայացնում, պահանջելով. 1. Դադարեցնել միջամտութիւնը բոլոր հանրային գործերին, 2. Մարաշից հեռացնել հայ կամավորներին<sup>116</sup>: Վերջինս հանդես է բերում երկչոտութիւն ու անվճռականութիւն՝ առավել համարձակութիւն հաղորդելով թուրքերին: Նա ինքը այցելում է փոխկառավարիչ Զեվդեթ բեյին, որի մոտ հավաքվել էին Մարաշի 15 թուրք երեւիները և սկսում նրանց բացատրել «քաղաքում ստեղծված տազնապալից վիճակը»՝ ապարդշուն փորձեր անելով մերձեցման ու համաձայնութեան եզրեր գտնել նրանց հետ: Զեվդեթ բեյը նրան ուղղակի պատասխանում է. «Անհրնարին է, որ օկուպացիան շարունակվի»<sup>117</sup>: Զանալով մասնակի բավարարութիւն տալ թուրքական վերջնագրին, ֆրանսիական կառավարիչը հունվարի 19-ին 500 հայ լեզեոնականների դուրս է հանում քաղաքից՝ նրանց ուղարկելով Իսլահիե՝ պարեն ու ռազմամթերք բերելու: Ծանապարհին նրանք ընկնում են թուրքերի կողմից պատրաստված ծուղակը և ստիպված լինում 8—9 օր անընդհատ պաշտպանական կռիւլներ

<sup>114</sup> E. Brémond, op. cit., p. 28.

<sup>115</sup> Materne Muré, op. cit., p. 6.

<sup>116</sup> ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 546, թ. 37:

<sup>117</sup> Նույն տեղում, թ. 37—38:

մղել իրենց վրա հարձակված թուրքական շեթեների դեմ: Հայ կամավորները Մարաշ են վերադառնում հունվարի 28—29-ին՝ ճանապարհին թողնելով 100-ից ավելի զոհեր<sup>118</sup>:

Հայ լեզեռնականներին Մարաշից հեռացնելու հետ մեկտեղ թուրք ազգայնամուլները՝ այդ նույն օրերին «բարեկամության» ու «համագործակցության» առաջարկներ են անում քաղաքի հայ ազգաբնակչությանը, հայտարարելով, թե իրենց թշնամությունը ֆրանսիացիների դեմ է միայն: Հայերին նույնիսկ զգալի գումարներ են առաջարկվում, «որպես վարձ թուրքերին աջակցելու համար»<sup>119-120</sup>:

Կարող էին հայերը վստահել թուրքական այդ «հավաստիացումներին» ու խոստումներին, երբ հենց այդ նույն ժամանակ իրենց հայրենակիցների արյունն էր թափվում Մարաշի շրջակայքում, երբ իրենք ամեն ժամ հաշվեհարդարի սպառնալիքներ էին լսում: Իհարկե, ո՛չ: Եվ այնուհանդերձ Մարաշի հայ երեւելիների ու Ազգային Միության կազմում գտնվեցին մարդիկ, ովքեր քաղաքի հայ ազգաբնակչությանը փորձեցին ապակողմնորոշել ու զգոնությունից զրկել՝ «մեծահոգություն» ու «խոհմություն» քարոզելով այն պահին, երբ հույժ կարևորը զինված ինքնապաշտպանության նախապատրաստվելն էր: Այդ տեսակետից խիստ բնորոշ է Մարաշի Ազգային Միության հունվարի 18-ի շրջաբերականը:

Ահա այն.

«Հայրենակիցներ!

... Բաց խոսինք. թրքերուն դեմ անօգուտ ու անտեղի ցույցեր կրնան մինչև իսկ մեր դատը ձախողել...

Խոստովանինք, որ թուրքերը մեզի այնչափ շարիք հասցուցին, որ մոռնալ կարելի չէ, բայց իբրև ճշմարիտ քրիստոնյաներ, իբրև խոհեմ ու խելացի մարդիկ, պետք է ներհնր անոնց ու կամաց-կամաց, քայլ առ քայլ ձգտենք միակ նպատակի մը, այն է՝ ջանալ վերահաստատելու մեր հին հարաբե-

118 ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 200, դ. 546, ք. 38:

119-120 նույն տեղում, ք. 36:



բությունները թուրքերուն հետ, որովհետև աշխարհի իրադարձությունները ինչ ձև ալ որ առնեն, մենք ստիպված ենք թուրքերու հետ և թուրքերն ալ ստիպված են մեզի հետ ապրելու(!?—Ռ. Ս.): Ըսկատագրական է այս: Իրավ է, մենք ալ իրավունք ունինք, որ թուրքերն ալ այս ճշմարտությունը հասկնան ու իրենք ալ մեզի պես խորհին, ինչ որ դժբախտաբար ներկայիս դեռ չենք տեսներ, սակայն վստահ ենք, որ պիտի գա ժամանակ մը, որ անոնք ալ այս ճշմարտությանը վերահասու ըլլալով, իրենց անհաշտ փառաբանությունը, թշնամական վերաբերմունքը փոխեն ու ճշմարիտ փառաբանական հարաբերությանց սկսին:

Մենք, իբրև ուղիղ քրիստոնյաներ, իբրև մարդիկ, որ ավելի շիտակ ու շուտ կրմբունեն հառաջադիմության ու քաղաքակրթության պահանջները, պարտավոր ենք փոխանակ շատ հեռու ապագաներու հառաջ բերելիք աղտեցությանց սպասելու, ընդառաջ երթալ անոնց և այժմե՛ն իրագործելու ջանալ այն, ինչ որ պիտ ընեն ապագան:

Հետևաբար ստիպողաբար կ'պահանջենք ու կ'խնդրենք.

1. Զանալ առևտրական ու գործնական հին հարաբերությունները վերամշակել թուրքերու հետ, պարկեշտության շրջանակի մեջ իրենց շահերը ապահովելով:

2. Ֆրանսիական ուժերու ժամանման առթիվ սուր, անտեղի ցույցերն զգուշանալ:

3. Արգելել օղիի, գինիի գործածությունը և այլն<sup>121</sup> (ընդգծումներն իմն են— Ռ. Ս.):

Մարաշի հայ ազգաբնակչությանն ուղղված այս կոչը, ինչպես տեսնում ենք, հեռու էր դեպքերի իրական վիճակը գնահատելուց, այն բոլորովին շէր արտահայտում ժամանակի պահանջները, որովհետև ինչ որ առաջարկվում էր, այլևս անհնարին էր ու անիրականալի ստեղծված իրագործության պայմաններում<sup>122</sup>:

<sup>121</sup> ՀԱՍՆ ՊԿՊԱ, ք. 200, դ. 546, թ. 52—53.

<sup>122</sup> Մեր այս գնահատականին շի հակասում այն փաստը, որ Ազգային Միությունը (ըստ նրա անդամներից մեկի՝ Հարություն Տեր-Ղազար-

Ահա այսպիսին էր իրադրութիւնը Մարաշում, երբ 1920 թ. հունվարի 21-ին բռնկվեց վաղուց նախապատրաստվող հակաֆրանսիական ապստամբութիւնը, որը տեւեց մինչև փետրվարի 11-ը՝ ֆրանսիական զորքերի անփառունակ նահանջը Մարաշից:

1920 թ. Մարաշի դեպքերի մասին շատ է գրվել ժամանակի թուրքական, ֆրանսիական ու հայկական մամուլում. իրենց հուշերն են հրատարակել նաև այդ դեպքերի թուրք. ֆրանսիացի և հայ մասնակիցներն ու անմիջական ականատեսները: Անշուշտ բոլոր գործերը չէ, որ կարող են ճիշտ պատկերացում տալ կատարվածի մասին, մի շարք ականատեսների հուշեր տառապում են կանխակալ մտտեցումով, շփազանցված գնահատականներով, դեպքերի ոչ-անաշուշտ շարդարանքով, կարևոր փաստերի միտումնավոր շրջանցումով և այլն: Նման հուշերից է վերը հիշատակված թուրք հեղինակ Ադիլ Բաղդադլըօղլուի «Մարաշը անկախութեան պատերազմում» գիրքը, որտեղ ամբողջովին բացակայում է գիտական անաշուշտութիւնը, բերված փաստերի գերակշռող մասը չի արտահայտում իրական պատկերը, իսկ քաղաքի խաղաղ հայ ազգաբնակչութեան նկատմամբ 20 օրում գործադրված բարբարոսական արարքների մասին հեղինակը ընդհանրապես ոչ մի խոսք չի ասում:

1920 թ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 11-ը Մարաշում տեղի ունեցած անցքերի առավել ստույգ, հավաստի և անկողմնակալ նկարագրութիւնը տրվում է դեպքերի անմիջական ականատեսների՝ Մարաշի ֆրանցիսկյան վանքի վանահայր Մատերն Մյուրեի «Մարաշի ջարդը 1920 թ. փետրվարին» գրքույկում և Մարաշի ամերիկյան հիվանդանոցի

---

յանի պատմածի) դիմել էր հազարապետ Ռոզ դեզ Օրդոնին՝ հայերին «զոնե 1000 կամ 500 զենքեր տալու խնդրանքով, սակայն վերջինս վստահեցրել էր, թե «թուրքերու կողմն հարձակում կարելի չէ և թե ինքը կրնա նրկու ժամեն խորտակել ամեն հարձակում»: Տե՛ս Գր. Հ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 813:



բժշկապետուհի Մելլըլ Իվլին էլիոտի «Վերստին սկսելով Արարատից» խորագիրը կրող գրքում, որտեղ ղետեղված է Մարաշի իրադարձութունները օրը-օրի գրանցված հեղինակի օրագիրը: Ուստի մենք ղեպքերի շարադրանքը հիմնականում տալիս ենք նշված ղույզ օտար ականատեսների պատմածների հիման վրա<sup>123</sup>:

Ապստամբութունը, ինչպես ասվեց, սկսվեց 1920 թ. հունվարի 21-ին: Այդ օրը, կեսօրին մոտ, գեներալ Քերեթը իր մոտ է կանչում քաղաքի մի շարք թուրք երեկիների ու պաշտոնյաների և պահանջում նրանցից դադարեցնել խռովության նախապատրաստումը: Խուսանավող պատասխան ստանալով, նա հրամայում է բանտարկել և որպես պատանդ պահել ներկայացած պաշտոնյաների մեծ մասին, իսկ երկուսին՝ մյուսիսարիֆի տեղակալ Զեվդեթ բեյին և ոստիկանական կոմիսարին թույլ է տալիս ղնալ «ժողովրդին համոզել»:

Այս վերջինների հեռանալուց շատ շանցած կոմիսարը, որպես աղղանշան, ատրճանակից 5 կրակոց է արձակում, աղղարարելով ապստամբության սկիզբը: Նախապես ղինված թուրք աղղարնակչութունը մի ակընթարթում լցվում է փողոցները և սկսում ղնդակոծել ֆրանսիական շրջող պահակախումբը (վեց հոգի ընկնում են հենց թուրք ոստիկանների ղնդակներից), ինչպես նաև կրակ բաց անում հայկական թաղամասերի վրա<sup>124</sup>:

Հայերը թրքախառը թաղամասերից քաշվում են ղուտ հայկական թաղամասերը, պատսպարվում եկեղեցիներում, ղպրոցներում և օտար հաստատութունների շենքերում, որոնք սակայն անմիջապես շրջապատվում են թուրքերի կողմից: «Ֆրանսիացիների տեղաբաշխման կետերը և քրիստոնիական թաղամասերը շրջապատելու պլանը այնքան լավ էր մշակվել

<sup>123</sup> Հայկական աղբյուրներից մանրամասն տե՛ս Կր. Հ. Գալուսեան, նշվ. աշխ., էջ 785—826, Յովսէփ Տէր-Վարդանեան, նշվ. աշխ., էջ 96—119, Մարաշի հերոսամարտը. «Արեւելեան մամուլ», 2 մարտի 1920 թ.:

<sup>124</sup> *Materne Muré*, op. cit., p. 8.

և իրականացվել թուրքերի կողմից, — գրում է Մատերն Մյուրեն, — որ ամեն մի կապ անհնարին էր դարձել ոչ միայն իրարից հեռու, այլև իրար հարևան կետերի միջև»<sup>125</sup>:

Ենթադրելով, որ ինչպես Ֆրանսիացիների, այնպես էլ հայերի կողմից ցույց տրված ամեն մի դիմադրություն հաջողություն չի ունենա, թուրքերը հաջորդ օրը՝ հունվարի 22-ին շորս կետից բաղկացած մի վերջնագիր են ներկայացնում Ֆրանսիական հրամանատարությունը, պահանջելով իրենց հանձնել ամբողջ ռազմամթերքը, բոլոր զենքերն ու փոխադրական միջոցները, Ֆրանսիացի զինվորներին՝ անձնատուր լինել խոստանալով միաժամանակ սպայական կազմին թույլ տալ ազատ հեռանալու քաղաքից»<sup>126</sup>:

Վերջնագիրը, բնականաբար, մերժվում է Ֆրանսիացիների կողմից, և կռիվը շարունակվում է մինչև փետրվարի 11-ը, 21 օր անընդհատ: «Դրանք դժողբի, ոչնչացման, ջարդի օրեր էին, — գրում է ականատեսը: Օրեր, որոնք մարդու խելագար կդարձնեին, եթե դեպքերի տեսարաններն անցնեին նրա աչքի առջևով»<sup>127</sup>:

Թուրքական վայրագությունները նոր թափ ստացան հունվարի 23-ից, երբ Մարաշի շրջակա գյուղերի զինված շեթները և քեմալական կանոնավոր զորաջոկատները Քըլըջ Ալիի ընդհանուր հրամանատարությամբ խուժեցին քաղաք: Հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, թուրքերը շորս կողմից կրակի են տալիս հայկական թաղամասերը, ստիպելով բնակիչներին դուրս գալ իրենց ապաստարաններից: Նշված պահից սկսած մինչև սարսափելի այդ օրերի վերջը հրդեհները շարունակվում էին գիշեր-ցերեկ: «Այրվող տների մեծ մասը քրիստոնյաների տներն էին»<sup>128</sup>, — վկայում է Մյուրեն: «Ահավոր մի տեսարան՝ դժբախտ մարդիկ, կրակով օղակված, խելագարի պես վա-

125 *Materne Muré*, op. cit., p. 8.

126 Նույն տեղում, էջ 9:

127 Նույն տեղում:

128 Նույն տեղում, էջ 10:



դում էին կտուրների վրայով, մինչև որ տները կփլվեին և իրենք կանհայտանային բոցերի ու ծխի անդունդում»<sup>129</sup>։ «Սակայն բոլոր այդ տեսարաններից ամենազարհուրելին, — շարունակում է ականատեսը, — դա հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցու հրկիզումն էր։ Այդ եկեղեցին գտնվում էր բլրի վրա, մեր վանքից շատ փոքր հեռավորության վրա։ Այնտեղ պատասպարվել էին 50 ֆրանսիացի և հայ զինվորներ և մոտ 2000 փախստականներ։ Եկեղեցու և նրանում ապաստան գաած մարդկանց լրիվ ոչնչացումը թուրք ապստամբներից ութ օրվա հողհեցուցիչ աշխատանք պահանջեց, և ես վանքի պատուհանից հեռադիտակով դիտում էի իմ աչքերի առջև ծավալվող ողբերգությունը»<sup>130</sup>։

Ի վերջո գազանարարո ամբոխը եկեղեցու տանիքը ողողում է նավթով և հրդեհում։ «Նավթը այն աստիճան թափանցել էր տանիքի հողի մեջ, — գրում է Մյուրեն, — որ բոցավառվելով, այրեց տանիքի գերանները և այդ պահից փրկության ամեն մի հույս կորսված էր այլևս... Այն քրիստոնյաները, ովքեր նետվում էին եկեղեցուց դուրս, մորթոտվում էին թուրքերի կողմից, իսկ ներսում մնացողները՝ զոհվում կրակի բոցերում... 50 զինվորից և 2000 քրիստոնյաներից գրեթե ոչ մեկը չփրկվեց...»։

«Նկարագրել այն, ինչ բաժին ընկավ քրիստոնյա բնակչությանը... տանջալից մի խնդիր է. դա մի երկար մարտիրոսության պատմությունն է»<sup>131</sup>, — հզրափակում է ականատեսը։

Մարաշի խաղաղ հայ ազգաբնակչության դեմ գործադրված անմարդկային, բարբարոսական արարքների մասին է պատմում նաև մյուս օտար ականատեսը՝ Մեյբլ էլիոտը<sup>132</sup>։

<sup>129</sup> *Materne Muré*, op. cit., p. 11.

<sup>130</sup> նույն տեղում։

<sup>131</sup> նույն տեղում, էջ 12։ Տես նաև *Michel Paillarés*, նշվ. աշխ., էջ 112։

<sup>132</sup> *She Mabel Evelyn Elliott*, նշվ. աշխ., էջ 99—103։

վերջինս նկատում է, որ թուրքերը առանձնահատուկ դատանություն էին հանդես բերում արու սեռի նկատմամբ, անխնա կոտորելով բոլորին:

«Երբեմն ես մեղադրում էի հայ տղամարդկանց այն բանի համար, որ նրանք առանձին դեպքերում լքում էին կանանց ու երեխաներին՝ փորձելով փրկել իրենց կյանքը, — գրում է ամերիկուհի ականատեսուր: Այժմ տեսնում եմ, որ ես սխալվել եմ. ցեղը պահպանելու բնազդն է, պարզապես, նրանց ստիպում այդպես վարվել, որովհետև թուրքերը ձգտում են ամենից առաջ տղամարդկանց ու արու մանուկներին ոչնչացնել, իսկ կանանց երբեմն թողնում են, որ ազատվեն, քանի որ նրանց զավակները, միևնույն է, թուրք պիտի դառնան: Ուստի հայ կնոջ առաջին պարտքը տղամարդկանց ու արու զավակներին փրկելն է...»<sup>133</sup>:

Պետք է նշել, որ շնայած Մարաշի հայ ազգաբնակչությունը, Ֆրանսիական զենքին ու հավաստիացումներին ապավինելով, միջոցներ չէր նախատեսել ինքնապաշտպանության համար, այնուհանդերձ, կանգնելով իսպառ ոչնչանալու վտանգի առջև, կարողացավ համախմբվել և հայ կամավորների հետ մեկտեղ առանձին տեղերում արժանի հակահարված հասցնել քեմալական շարժարարներին<sup>134</sup>: Եղավ մի պահ, երբ փրկության հույսը իրական էր թվում, և կարճատև ոգեվորությունը համակեց Մարաշի հայերին. դա փետրվարի 7-ին էր, երբ Իսլահիեից շարժվող Ֆրանսիական խոշոր զորասյունը (մոտ 4000 հոգի)<sup>135</sup>, բաղկացած հետևակային երկու գումարտակից, հեծելազորային երկու վաշտից և հրետանային շորս մարտկոցից, զնդապետ Նորմանի հրամանատարությամբ ընդհուպ մոտեցավ քաղաքին և վրան խփեց Մարաշի

<sup>133</sup> Mabel Evelyn Elliott, op. cit., p. 104.

<sup>134</sup> Մարաշի կռիվներում աչքի ընկած հայ լեզոնականների ու մարտիկների մասին մանրամասն տես Գր. Հ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 818—826:

<sup>135</sup> ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 546, Թ. 40:



դաշտում՝ քաղաքից ընդամենը 4 կիլոմետր հեռավորութիւն վրա<sup>136</sup>։

Հաջորդ երեք օրերին արդեն բացահայտ գերակշռութիւնը ֆրանսիացիների կողմն էր։ Թուրքական շեֆեները ու քեմալական կանոնավոր ջոկատները, չգիմանալով թնդանոթային կրակին, ցիր ու ցան եղան։ Ա. Բաղդադլըօղլուն խոստովանում է, որ Քըլըջ Ալին առանց զորքի էր մնացել<sup>137</sup>։ Համոզվելով, որ իրենց չի հաջողվի հաղթահարել լավ զինված ֆրանսիական ուժերին, թուրք ղեկավարները և քաղաքի երևելիները փետրվարի 10-ին իթթիհատականների նախկին պարագլուխ ղոկտոր Մուստաֆային ուղարկում են ֆրանսիական վերին հրամանատարութիւն մոտ՝ անձնատրութիւն առաջարկով։ Դոկտոր Մուստաֆան սպիտակ դրոշակը ձեռքին գնում է ֆրանսիական բանակատեղին և ընդունվում գեներալ Քերեթի կողմից, որը և թելադրում է թուրքերի անձնատրութիւն պայմանները. կրակի անհապաղ դադարեցում, զենքի հանձնում, Մարաշի կռիվներում աչքի ընկած 200 թուրքերի հանձնում<sup>138</sup>։ Թուրք ղեկավարը ընդունում է ֆրանսիական պայմանները և պարտավորվում հաջորդ օրը՝ փետրվարի 11-ին ներկայանալ՝ անձնատրութիւն գրավոր կետերը ստանալու համար, սակայն վերադարձի ճանապարհին նա սպանվում է<sup>139</sup>։

Սակայն անկախ Մուստաֆայի սպանութիւնից, այդ նույն ժամանակ տեղի է ունենում անսպասելի մի բան՝ գեներալ Քերեթը ֆրանսիական զորքերին նահանջի հրաման է արձակում։ Ֆրանսիական զորավարի այդ քայլը հետագայում

<sup>136</sup> Paul du Veou, op. cit., p. 126—127; Materne Muré, op. cit., p. 15.

<sup>137</sup> A. Bagdadlioglu, op. cit., p. 108.

<sup>138</sup> նույն տեղում, էջ 110—111, Paul du Véou, op. cit., p. 135.

<sup>139</sup> Ա. Բաղդադլըօղլուն, առանց որևէ հիմքի, պնդում է, թե իբր ղոկտոր Մուստաֆային սպանել են հայերը։ Sht A. Bagdadlioglu, Նշվ. աշխ., էջ 111։

երկար վիճաբանությունների առիթ տվեց: Այդ հարցին իրենց հուշերում անդրադարձել են դեպքերի անմիջական մասնակիցները և մի շարք հետազոտողներ, սակայն, պետք է ասել, որ ց'այսօր էլ բացակայում է հարցի հիմնավոր ու համոզիչ պատասխանը:

Գնդապետ Բրեմոնը, իր հուշերում առաջինը անդրադառնալով Քերեթի հրամանի շարժառիթներին, նահանջի որոշումը համարեց մի «հանելուկ», քանի որ «այդ որոշումը կայացվել էր ո՛չ Բեյրութում, ո՛չ էլ Ադանայում, այլ Մարաշում»<sup>140</sup>: Նրա կարծիքով, այդ հանելուկը, հնարավոր կլիներ տեղն ու տեղը լուծել՝ հեռագրային կապի առկայության դեպքում: «Կասկածից վեր է, — գրում է նա, — որ եթե Մարաշում լիներ անթեյ մի հեռախոս, որի օգնությամբ մշտական կապ պահպանվեր Ադանայի հետ, ապա, անշուշտ, քաղաքից չհեռանալու հրաման կտրվեր»<sup>141</sup>:

Ավելի ուշ, մարսելահայ գործիչ Արամ Թյուրապյանին և Ֆրանսիացի պատմաբան Պոլ դյու Վեուին գրած նամակներում վերստին անդրադառնալով այդ հարցին, գնդապետ Բրեմոնը ըստ էության հերքեց իր հուշերում գրածը, ընդունելով, որ նահանջի հրամանը տրվել էր Ֆրանսիական բարձր հրամանատարության գիտություն: Այսպես, Թյուրապյանին հասցեագրված 1929 թ. հունվարի 24-ի թվակիր նամակում, որն անմիջապես հրապարակվեց առանձին գրքույկով, գնդապետ Բրեմոնը ուղղակի մատնանշում է, որ «Մարաշի պարպումը կարգադրվել էր գնդապետ Նորմանի կողմից, որը Բեյրութից եկել էր զորասյան հրամանատարությունը ստանձնելու՝ գնդապետ Գուրոյից անձամբ հրահանգներ ստանալուց հետո միայն»<sup>142</sup>:

«Ուրեմն տրամաբանական է մտածել, — եզրակացնում է

<sup>140</sup> E. Brémond, op. cit., p. 40.

<sup>141</sup> Նույն տեղում:

<sup>142</sup> La lettre du général Brémond au sujet de "L'Eternelle victime de la diplomatie européenne". Marseille, 1929, p. 1.



Կիլիկիայի նախկին կառավարիչը, — որ նահանջը բխում էր Գուրոյի կամքից...»<sup>143</sup>,

Իր այս կարծիքը Բրեմոնը վերահաստատեց դու Վեուին գրած նամակում, ավելացնելով, սակայն, որ Ադանայում նստած գեներալ Դյուֆիոն, Կիլիկիայում ֆրանսիական զորքերի հրամանատարը, ինչպես և ինքը, գաղափար անգամ չեն ունեցել գեներալ Գուրոյի կարգադրության մասին: «Գեներալ Դյուֆիոն նահանջի մասին տեղեկացավ միայն այն ժամանակ, երբ տեսավ Նորմանի զորասյան ժամանումը»<sup>144</sup>, — գրում է Բրեմոնը:

Իր հուշերում ֆրանսիական զորքերի նահանջի հարցը շոշափել է նաև զնդապետ Նորմանը, որը գեներալ Քերեթին հազորդել էր գեներալ Գուրոյի հրահանգների մասին և ներշնչել նրան Մարաշից հեռանալու անհրաժեշտությունը: «Իմ զորասյունը պահեստի վերջին ազատ ուժն է Միրիայում, — ասել էր Նորմանը: Ֆրանսիան այլևս չի կարող ոչինչ ուղարկել: Հարկավոր է նահանջել՝ կենտրոնացվելու համար»<sup>145</sup>: Զանալով «հիմնավորել» Մարաշը թողնելու անխուսափելիությունը, զնդապետ Նորմանն իր հուշերում բերում է հետևյալ լրացուցիչ «փաստարկները». ուտելիքի պակաս, որի հետևանքով, շնայած ցուրտ եղանակին, զինվորների պարենաբաժինը կիսով չափ կրճատվել էր, և անասնակերի ու ռազմամթերքի պակաս: Այս փաստարկները, սակայն, ինչպես ցույց է տալիս իր գրքում Պոլ դու Վեուն, համոզիչ ու հիմնավորված չէին: «Մարաշում հացահատիկի մեծ պաշարներ կային, — գրում է հեղինակը, — ճիշտ է, դրանց մի մասը այրվեց, բայց եղածը միանգամայն բավարար էր մեր կարիքների համար: Ոչխարի հոտերն էլ անտեր թափառում էին դաշտում: Ինչ վերաբերում է ռազմամթերքին, զորասյունը մեծ քանակությամբ սպառազինություն ու ռազմամթերք էր բերել իր հետ»<sup>146</sup>:

143 Նույն տեղում, էջ 1—2:

144 Paul du Vêou, նշվ. աշխ., էջ 133:

145 Colonel Normand, Colonne dans le Levant, p. 39. Տե՛ս Paul du Vêou, նշվ. աշխ., էջ 133:

146 Նույն տեղում, էջ 134:

Հերքելով Նորմանի պատճառաբանությունները, ֆրանսիական պատմաբանը, սակայն, անհետևողականություն և ոչ-անաչառ մոտեցում է հանդես բերում, փորձելով արդարացնել վերը նշված զինվորականների քայլերը և խուսափելով բացահայտել Մարաշի նահանջի իրական պատճառները: Նամիայն իր զարմանքն է հայտնում կատարվածի առթիվ և ցավում, որ գեներալ Քերեթը (հեղինակի արտահայտությունը՝ «թույլ և ողորմելի մի անձնավորություն») չհավատաց դոկտոր Մուստաֆայի անկեղծությունը և «ի զարմանս պատմության, անձնատուր եղավ խռովարարներին, որոնք իրենք անձնատուր էին լինում»<sup>147</sup>: Գեներալ Քերեթի վարքագիծը անհասկանալի, ինչ-որ «խորհրդավոր միջամտության» արդյունք է համարում նաև Միշել Պայառեսը<sup>148</sup>, որը նույնպես իր խոսքը չի ասում ֆրանսիական զորքերի նահանջի իրական դրդապատճառների մասին: Իսկ լորդ Կինրոսը ֆրանսիական զորքերի նահանջը «անբացատրելի աղբյուրից եկող հրամանի հետևանք» է համարում<sup>149</sup>: Իսկապես «խորհրդավոր» էր, «հանելուկային», «անտրամաբանական» ու «անհասկանալի» Մարաշի նահանջը և արդարացի՞ է արդյոք այդ ողբերգության մեղքը բարդել հիմնականում գեներալ Քերեթի վրա<sup>150</sup>: Իհարկե, ո՛չ:

Դեպքերի ականատեսների ու անմիջական մասնակիցների հուշերի, ֆրանսիական պատմաբանների աշխատություններում բերված փաստերի և, հատկապես, Ֆրանսիայի

147 Paul du Vèou, նշվ. աշխ., էջ 135—136:

148 Michel Paillarès. op. cit., p. 112.

149 Lord Kinross, op. cit., p. 204.

150 Ի դեպ նշենք, որ թեև գեներալ Քերեթը հուշեր չի թողել, սակայն ժամանակին նա որոշակիորեն արտահայտվել է քննարկվող հարցի շուրջ: Այսպես, 1920 թ. փետրվարի 11-ին, երբ նահանջող ֆրանսիական զորքերը հասնում են էլօղլու, վերը նշված Մատերն Մյուրեն հարցնում է գեներալին նահանջի դրդապատճառների մասին և վերջինս պատասխանում է, որ ինքը «ստիպված էր հնազանդվել»: Հաջորդ օրը՝ հունվարի 12-ին Բել-Պունարում Քերեթը կրկնում է իր պատասխանը, ասելով, որ «ինքը ստիպված էր ենթարկվել տրված հրամանին»: Տես ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, դ. 546, թ. 28—29:



կառավարող շրջանների քաղաքականության ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆրանսիական զորքերի հեռանալը Մարաշից ամենևին էլ պատահական չէր, ինչպես փորձում են ներկայացնել ֆրանսիացի հեղինակները, այլ այն տրամաբանական վախճանն էր ֆրանսիական կառավարողների որդեգրած մերձավորարևելյան քաղաքականության:

Նախորդ գլխում մենք բացահայտեցինք ֆրանսիական գիվանագիտության ելևէջները և, մասնավորապես, Կիլիկիայի ճակատագրի հարցում նրա թույլ արված նահանջներն ու դիջումները: Մարաշի նահանջը վերստին հաստատեց այն իրողությունը, որ Կիլիկիան ֆրանսիական իմպերիալիստների ծրագրում ստորադաս տեղ էր զբաղում՝ Սիրիայի համեմատությամբ: Վերը բերված զնդապետ Նորմանի այն խոստովանությունը, թե հարկավոր էր զորասյունը պահպանել, որպես պահեստի ուժ Սիրիայում, խիստ բնորոշ է այդ տեսակետից: Կիլիկիան, ինչ խոսք, «չուղալի պատառ էր», սակայն նրա պահպանումը կապված էր անհամեմատ ավելի մեծ դժվարությունների ու «փորձությունների» հետ, քան թվում էր ֆրանսիական կառավարողներին: Մինչդեռ Կիլիկիան Ֆրանսիայի համար այն նշանակությունը չունեիր, ինչ որ Սիրիան, ուստի և, Մարաշում առաջին լուրջ դժվարությանը հանդիպելով, նրանք զերազասեցին նահանջել, ի մոռացություն իրենց խոստումների, հայ ազգաբնակչությանը թողնելով թուրքերի վայրագությանը: Մարաշի նահանջը, այսպիսով, ամբողջ Կիլիկիայից ֆրանսիական զորքերի հեռացման սկիզբը դարձավ:

Ուստի մենք համաձայն չենք նաև Մարաշի նահանջի վերաբերյալ վերը հիշատակված թուրքագետներ Ա. Ժելտյակովի և Ն. էֆենդիևայի հայտնած կարծիքներին, որոնք հարցին մոտենում են միակողմանի, անտեսելով արտաքին քաղաքական շարժառիթները: Այսպես, Ա. Ժելտյակովը գտնում է, որ «Մարաշից ֆրանսիական զորքերի շուտափույթ փախուստի իսկական պատճառը ղավթիչների և թուրքական ուժերի իրական փոխհարաբերությունն էր Մարաշում և նրա շրջակայ-

քում»<sup>151</sup>։ Սակայն հեղինակը իր այս եզրակացութիւնը չի հիմնավորում փաստերով։ Ընդհակառակը, նրա կողմից բերված և մի շարք այլ փաստեր վկայում են, որ գնդապետ Նորմանի զորասլան ժամանումով «Ճգնաժամային վիճակ էր ստեղծվել թուրքական ճամբարում»<sup>152</sup>, քեմալական կանոնավոր ուժերի մեծ մասը ցիր ու ցան էր եղել, կովոզները հուսալքվել էին և այլն<sup>153</sup>։

Ն. էֆենդիևան ևս ֆրանսիացիների նահանջը վերագրում է նրանց ռազմական թուլութիւնը։ Հեղինակը գրում է, որ գնդապետ Նորմանը, վախենալով ծուղակն ընկնելուց, շահամարձակվեց Մարաշ մտնել, և գեներալ Քերեթը գիտեր, որ եթե Նորմանի խումբը նահանջի, իր սեփական զորքերը շրջապատման մեջ կընկնեն և կործանման կդատապարտվեն։ Ուստի և նա որոշեց նահանջել<sup>154</sup>։ Նման հետևութիւն անելով, հեղինակը չի պատասխանում այն հարցին, թե գնդապետ Նորմանի զորասլանը, տակավին Մարաշ չմտած, ինչո՞ւ պետք է նահանջեր, եթե նրա գալու նպատակը Քերեթի ուժերին օգնութիւն հասնելն ու Մարաշից դուրս բերելն էր։ Ուրեմն պատճառը ամենևին էլ ֆրանսիական ուժերի ռազմական տկարութիւնը չէր (ընդհակառակը, ինչպես ցույց տրվեց, Նորմանի զորասլան ժամանումով ֆրանսիացիները ռազմական բացահայտ գերակշռութիւն հասան թուրքերի նկատմամբ), այլ այն, որ զորքերի դուրս բերումը Մարաշից սկզբունքորեն որոշվել և կարգադրվել էր ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Գուրոյի կողմից, մի կարևոր հանգամանք, որը անտեսում են ինչպես Ն. էֆենդիևան, այնպես էլ Ա. Ժելտյակովը<sup>155</sup>։

151 «Ученые записки ЛГУ», серия вост. наук., вып. 14, стр. 39.

152 Նույն տեղում, էջ 38։

153 Տե՛ս A. Bagdadlioglu, նշվ. աշխ., էջ 106—108; E. Brémond, նշվ. աշխ., էջ 40; Pierre Redan, նշվ. աշխ., էջ 94։

154 Н. З. Эфендиева, նշվ. աշխ., էջ 115։

155 Նշենք նաև, որ սփյուռքահայ հեղինակների մեծ մասը նույնպես անտեսում է Մարաշի նահանջի քաղաքական շարժառիթները և կատարվածը դիտում լոկ որպես «գինվորական ահռելի մի սխալ», «անհասկանալի տակտիկական քայլ», «հավետ անբացատրելի մի նահանջ», «հանելուկ» և



եվ այսպէս, 1920 թ. փետրվարի 10-ի լույս 11-ի գիշերը գնե՛րալ Քերեթը Մարաշում եղած ֆրանսիական բոլոր ուժերին բաղաբից հեռանալու հրաման է արձակում կարգադրելով, միաժամանակ, այդ հրամանը, որպէս «ռազմական գաղտնիք», խիստ գաղտնի պահել հայ ազգաբնակչութիւնից: Այդ պատճառով նահանջի մասին տեղեկացան միայն այն հայերը, որոնք ֆրանսիական դիրքերին մոտ ընկած վայրերում էին ապաստան գտել և նկատել էին այդպիսով նահանջի պատրաստութիւնները: Սրանց՝ թվով հինգ հազար հայերի<sup>156</sup>, ֆրանսիական զորավարը, որոշ տատանումներից հետո, համաձայնվում է վերցնել զորքերի հետ, մնացածներին թողնելով բախտի քմահաճույքին, իսկ ավելի ճիշտ՝ թուրքական արնածարավ ամբոխի վրեժխնդրութիւնը: Մոտ 2 հազար անգն հայեր, մեծ մասը կանայք, երեխաներ ու ծերեր, որոնք ապաստան էին գտել բողոքական եկեղեցում, փետրվարի 11-ի առավոտյան, տեսնելով ֆրանսիական զորքերի հեռացող շարասյունը, նետվում են նրանց ետևից, սակայն ճանապարհին գրեթե ամբողջութեամբ զոհ են դառնում հետապնդող շեթներին ու գազանաբարո խուժանին<sup>157</sup>: Շատերին թուրքերը մորթոտում են կացիններով ու դանակներով, իսկ մի քանիսի զուլաները ուղղակի սղոցում<sup>158</sup>:

այլն: Տե՛ս Գալիք Մ. Աղամեան, Կիլիկիան գրուագներ, էջ 39—40, Գր. Հ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 816, *Aram Turabian*, L'Eternelle victime de la diplomatie européenne, էջ 9:

<sup>156</sup> Mabel Evelyn Elliott, op. cit., p. 131: Գնդապետ Բրեմոնի և դուստրի տվյալներով Մարաշից գաղթած հայերի թիվը կազմում էր 7—8 հազար մարդ, սակայն այս թիվը չափազանցված պետք է համարել: Տե՛ս E. Brémond, նշվ. աշխ., էջ 40—41: Paul du Véou, նշվ. աշխ., էջ 137:

<sup>157</sup> Materne Muré, op. cit., p. 17; E. Brémond, op. cit., p. 40; Paul du Véou op. cit., p. 137; Դոկտ. Հ. Տեր-Ղազարյանի և Մ. արքեպիսկոպոս Նարոյանի տվյալներով նրանց թիվը կազմում էր 3 հազար մարդ և միայն 27 հոգի է ազատվում մահից: Տե՛ս Գր. Հ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 817, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 14:

<sup>158</sup> Materne Muré, op. cit., p. 17; Michel Paillarès, op. cit., p. 112.

Սակայն առավել մեծ տառապանքներ կրեցին և տանջալից մահով ընկան ֆրանսիական զորքին հետևող փախստական հայ կանայք ու երեխաները: 20 աստիճանի հասնող սառնամանիքի ու բուքի պայմաններում նրանք ստիպված էին առաջ շարժվել մահվան սպառնալիքի տակ, քայլելով անընդհատ երկար ու տանջալից ժամեր: «Մի ակնթարթ հանգստանալն անգամ մահ էր, — պատմում է Մատերն Մյուրեն: — Դըժբախտ մարդիկ, ուլքեր փորձում էին մի պահ նստել, շունչ առնել, այլևս անկարող էին ոտքի կանգնել: Ամբողջ ճանապարհին դիակներից բացի ոչինչ չկար...: Ուղղակի սարսափելի էր դիտել սրտաճմլիկ այն տեսարանները, որոնք բացվում էին մեր առջև Բել-Պունարից մինչև Իսլահիեի կայարանն ընկած ճանապարհի ամբողջ ընթացքում»<sup>159</sup>:

«Աննկարագրելի մի վիճակ էր, — գրում է իր հուշերում ամերիկուհի ականատես Մեյրլ էլիոտը: — շինգ հազար փախըստականներ սարսափահար ճանապարհ էին ընկել: Զիերի խրխնջյուն, երեխաներին կորցրած մայրերի ճիշ, իրենց մայրերին փնտրող մանուկների լաց, հրետանային կառքերի ճարձատյուն, սպաների աղաղակ և բո՛ւք... և այդպես 14 ժամ շարունակ»<sup>160</sup>: «Ուժասպառ մայրերը, — գրում է էլիոտը, — այլևս ոչինչ չէին զգում և իրենց մեջքին տանում էին արդեն սառած մանուկներին, մինչև որ իրենք էլ սառած ընկնում էին ձյան մեջ...»<sup>161</sup>: Մարդասիրական բարձր հատկություններով օժտված ամերիկյան բժշկուհին, որը ինչպես Մարաշի կռիւների օրերին, այնպես էլ նահանջի ճանապարհին անկարելին էր անում դժբախտ մարդկանց օգնելու համար, իրեն երջանիկ է համարում «այն հազարավոր հայ մայրերի համեմատությամբ, որոնք հետևում էին բանակին...»<sup>162</sup>:

Անհուն կսկիծով ու կարեկցանքով նկարագրելով մարաշցի հայերի կրած տառապանքները, հեղինակը իրավացիորեն

<sup>159</sup> *Materne Muré*, op. cit., p. 21.

<sup>160</sup> *Mabel Evelyn Elliott*, op. cit., p. 119—120.

<sup>161</sup> Նույն տեղում, էջ 121—122:

<sup>162</sup> Նույն տեղում, էջ 123:



եզրակացնում է, որ Մարաշի նահանջը չպետք է դիտել, որպես մարդկանց բարեկեցութիւնն ու անդորրը խանգարող մասնակի մի աղետ, ինչպես Սան-Ֆրանցիսկոյի հրդեհը կամ Ջալվրստոնի հեղեղն էր: «Այս ժողովուրդը (հայերը — Ռ. Ա.), — գրում է էլիոտը, — պատերազմի ընթացքում Թուրքիայում անցել էր ջարդերի ու տեղահանութիւնների միջով, վեց տարի տառապել ու մեռել, ինչպես տառապեց ու մեռավ Իսլահիեի ճանապարհին... և Մարաշի նահանջը հայերի համար հին պատմութեան վերսկսումն էր՝ սկիզբն այն թափառումների ու տառապանքների, որոնք տակավին չեն վերջացել»<sup>163</sup>:

Փետրվարի 15-ին նահանջող ֆրանսիական զորքերը և ողջ մնացած հայ փախստականները հասնում են Իսլահիե, որտեղից նրանք զնացքով մեկնում են Ադանա:

Նահանջի ճանապարհին, ըստ տարբեր տվյալների, հայերը ավեցին 3-ից 5 հազար զոհ, իսկ ֆրանսիացիները՝ 800-ից 1200 սպանված և վիրավոր, այդ թվում այն 200 ֆրանսիացի զինվորները, որոնք ցրտահարվել էին և որոնց անդամահատեցին, հեռացնելով շատերի զույգ ձեռքերն ու սորերը<sup>164</sup>:

Ինչ վերաբերում է Մարաշի կոիվների և նահանջի ընթացքում հայ ազգաբնակչութեան կրած զոհերի ընդհանուր թվին, այստեղ ևս հանդիպում ենք հակասական կամ չափազանցված տվյալների: Ինչպես վերը նշվեց, Մարաշի հայ ազգաբնակչութեան թիվը 1919 թ. վերջին կազմում էր 20—22 հազար մարդ: Եթե վերցնենք նվազագույնը՝ 20 հազար (այս թիվը ընդունում է հետազոտողների գերակշռող մասը) և դրան ավելացնենք Մարաշի ջարդի նախօրյակին շրջակա գյուղերից փախած և քաղաքում ապաստան գտած մոտ երկու հազար հայերին, ապա ստացվում է, որ Մարաշի կոիվների

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>164</sup> Տե՛ս Mabel Evelyn Elliott, նշվ. աշխ., էջ 131; Paul du Vèou, նշվ. աշխ., էջ 139; Lord Kinross, նշվ. աշխ., էջ 204; E. Brémond, նշվ. աշխ., էջ 41; M. Paillarès, նշվ. աշխ., էջ 113; Gustave Gautherot, նշվ. աշխ., էջ 199; Aram Turabian, նշվ. աշխ., էջ 74; Ա. Աթա-նասեան, նշվ. աշխ., էջ 33:

ժամանակ թուրքական յաթաղանից զոհված և նահանջի ճանապարհին ընկած հայերի ընդհանուր թիվը կազմում էր մոտ 12 հազար, որովհետև, ըստ արժանահավատ տվյալների, Մարաշի աղետից հետո քաղաքում մնացել էր ընդամենը 8 հազար հայ ազգաբնակչություն, 2 հազար հոգի էլ՝ նահանջի ժամանակ փրկվածները, հասել էին Իսլահիե. վերապրողները ընդհանուր թիվն, այդպիսով, 10 հազարից չէր անցնում<sup>165</sup>:

Սակայն Մարաշի կոռիվների ժամանակ ջարդերից խուսափած շուրջ 8 հազար հայերն էլ երկար շմանացին քաղաքում: Ֆրանսիական զորքերի հեռանալուց հետո քաղաքի խուժանը, քաջալերված թուրքական իշխանությունների հովանավորությունից, սկսում է հալածել խաղաղ բնակիչներին, խարենություն մը դուրս է հանում Մարաշից և սպանում մոտ 100 մարաշցի հայերի, ոմանց բանտարկել տալիս և այլն: Քաղաքում երևում են հայտարարություններ. «Հայեր, քանի տակավին ողջ եք և ժամանակ կա, հեռացե՛ք քաղքեն և երկրեն...»: Նման պայմաններում մարաշցի հայերը ստիպված են լինում զանգվածաբար լքել իրենց հարազատ քաղաքը և ապաստան գտնել Սիրիայում՝ Հալեպում, Դամասկոսում, ինչպես նաև Բևյրութում ու Երուսաղեմում: Մարաշն ու շրջակայքը ամբողջովին դատարկվում են հայությունից:

Ահա այսպիսի վախճան ունեցավ մարաշցի հայերի համար ֆրանսիական քաղաքականության անդրանիկ պարտությունը Կիլիկիայում:

Ֆրանսիական հեղինակների մեծ մասը Մարաշի դեպքերը գնահատելիս հարցին մոտենում է Մերձավոր Արևելքում

165 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 516, Բ. 42 (Մուշեղ եպիսկոպոսի տեղեկագիրը): Մի շարք տղբյուրների համաձայն զոհված հայերի ընդհանուր թիվը հասնում էր 15—20 հազարի: Տե՛ս, օրինակ, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, ԲԲ. 11, 13—14, Դալիք Մ. Աղամեան, նշվ. աշխ., էջ 39, Յովսէփ Տէր-Վարդանեան, նշվ. աշխ., էջ 122, L'Extinction des chrétiens d'Orient, էջ 50; E. Jung, La révolte arabe, II, p. 153. Այս թվերը, սակայն, անստույգ և չափազանցված են:



Ֆրանսիայի հեղինակութեան անկման տեսանկյունից, նվազ կարևորություն տալով այն բանին, թե այդ քաղաքականությունը Մարաշում, իսկ հետագայում Կիլիկիայի այլ քաղաքներում, ի՞նչ արժեցավ խաղաղ հայ ազգաբնակչությանը:

«Մարաշի դրաման մեր պատմության ամենատխուր էջերից մեկն է,— գրում է Պայառեսը: — Թերևս երբեք մանրամասները հայտնի չդառնան, և դա լավ է մեր ազգի պատվի համար...»<sup>165</sup>:

«Մարաշի կորուստը սարսափելի մի հարված էր մեր հեղինակությանը»<sup>167</sup>,— ավելացնում է գնդապետ Բրեմոնը:

Նույն միտքն են կրկնում նաև Տեստին<sup>168</sup> և մյուսները:

Սակայն նշված հեղինակներից և ոչ մեկը չէր փորձում, համենայն դեպս, ժխտել այն իրողությունը, որ Ֆրանսիական զորքերի նահանջը նոր տառապանքներ պատճառեց հայ ազգաբնակչությանը, և որ վերջինս հաղարավոր նոր զոհեր տվեց Մարաշում, ինչպես այդ բանն արեց արդեն հիշատակված թուրքասեր գրող Պիեռ Լոտին, որը, կեղծելով պատմությունը, հայտարարում էր, թե «Մարաշի հայերի ջարդի վերաբերյալ առասպելները ամենալկտի զրպարտություններ են, որոնք հորինված են առավել հակաֆրանսիական քայլերին ծառայելու նպատակով»<sup>169</sup>:

Միտումնավոր է նաև Մ. Քեմալի գնահատականը, որ նա տվել է Մարաշի իրադարձություններին 1927 թվականին ժողովրդա-հանրապետական կուսակցության II համագումարում արտասանած իր ճառում.

«Հայկական ջարդերի վերաբերյալ եղած պնդումներն, անկասկած, չէին արտացոլում իրերի իսկական վիճակը: Ծիշտ ընդհակառակը, հարավային շրջաններում հայերը, զին-

<sup>165</sup> M. Paillarès, op. cit., p. 113.

<sup>167</sup> E. Brémond, op. cit., p. 41.

<sup>168</sup> Testis, op. cit., p. 37.

<sup>169</sup> Pierre Loti, La mort de notre chère France en Orient, p. 106.

Պիեռ Լոտիի թուրքապաշտպան ելույթների քննադատությունը տե՛ս նաև Paul du Vèou, նշվ. աշխ., էջ 207—208:

ված օտարերկրյա զորքերի կողմից և նրանց աջակցութեամբ համարձակութիւնն առած, ճնշում էին մահմեդականներին։ Վրեժխնդրութեան զգացումով ղեկավարվելով, նրանք ամենուրեք կիրառում էին թուրքական ազգաբնակչութիւնը ջարդելու ու ոչնչացնելու քաղաքականութիւնը։ Այդպիսով առաջ եկավ Մարաշի ողբերգութիւնը։ Միանալով օտարերկրյա զորքերին, հայերը, թնդանոթային համազարկերով ու գնդացրային կրակով հիմնահատակ կործանեցին մի այնպիսի հին մահմեդական քաղաք, ինչպիսին Մարաշն է։

Նրանք սպանեցին հազարավոր անմեղ ու անպաշտպան մայրերի ու երեխաների։ Հենց հայերն էին կերտողները այն վայրենութեան, որն իր նախադեպը շունեւ պատմութեան մեջ»<sup>170</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.)։

Համաշխարհային հասարակական կարծիքը, սակայն, շատ շուտով համոզվեց, թե ովքե՞ր էին Մարաշի ողբերգութեան իսկական «կերտողները»։ Մարաշի ղեպքերը, որպէս հայերի նկատմամբ մեծ եղեռնի տարիներից հետո գործադրված նոր բռնութիւն, լայն արձագանք գտան մի շարք երկրներում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր։

Անգլիայի Համայնքների պալատում Լոյդ Ջորջին հարցում արվեց, թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել քրիստոնյաների անվտանգութիւնն ապահովելու համար, որին անգլիական կառավարութեան ղեկավարը պատասխանեց, թե իբր ֆրանսիական կառավարութիւնը շտապ միջոցներ է ձեռնարկել գեներալ Գուրոյին համալրում ուղարկելու համար՝ «դրութիւնը կայունացնելու և հայերի դեմ նոր հարձակումները կանխելու նպատակով»<sup>171</sup>։ Իսկ Լորդերի պալատի 1920 թ. մարտի 11-ի նիստում դաշնակից տերութիւնների քաղաքականութեան քննադատութեամբ հանդես եկավ լորդ Բրայսը, իր կառավարութեանը մեղադրելով այն բանում, որ անգլիական զորքերը, գրավելով Կիլիկիան, չէին ղինաթափել թուր-

<sup>170</sup> М. Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 113.

<sup>171</sup> Michel Paillarès, op. cit., p. 129.



բական զորքերին, չէին պահանջել «Հայաստանի ու Կիլիկիայի տերիտորիան ազատել թուրքական գերիշխանությունից՝ տեղի բրիտանյա բնակչության անվտանգությունն ապահովելու համար»<sup>172</sup>։

Պատասխանելով լորդ Բրայսին, արտաքին գործերի մինիստր Քերզոնը փորձում էր հավաստիացնել, որ Ֆրանսիան մտադրություն չունի ետ կանգնել հայերին պաշտպանելու իր որոշակի պարտավորությունից, և որ «աշխարհի այդ շրջանի (Կիլիկիայի— Ռ. Ս.) փոքրամասնությունների անվտանգությունը կապահովվի նրա կողմից»<sup>173</sup>։

Նույնպիսի դատարկ հավաստիացումներով փորձեցին ֆրանսիական ղեկավարները հանգստացնել Կիլիկիայի հայ ազգաբնակչությանը։ Պատասխանելով Զավեն պատրիարքի փետրվարի 27-ի տազնապալից հեռագրին<sup>174</sup>, Միլերանը «վըստահեցնում էր», որ «ֆրանսիական կառավարությունը, հավատարիմ այն ավանդներին, որոնք նրան կապում են հայ ազգաբնակչությանը, խորապես մտահոգված է այն հարցով, որ անհապաղ ձեռք առնվեն ռազմական ու դիվանագիտական բոլոր միջոցները՝ նրանց պաշտպանությունն ապահովելու համար»<sup>175</sup>։

Նույնպիսի «հանգստացնող» խոսքեր էր շուրջում Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրը Կիլիկիայի Սահակ Բ. կաթողիկոսին, (որը Մարաշի աղետից հետո մեկնել էր Եվրոպա օգնություն խնդրելու), ասելով նրան. «ինչ որ պետք է, պիտի ընե Ֆրանսան ոչ միայն ներկան ապահովելու, այլև ապագա զարգացման և զորավոր Հայաստան մը կազմելու համար»<sup>176</sup>։

Նման հավաստիացումները, սակայն, դիվանագիտական կեղծիքից բացի ուրիշ բան չէին պարունակում։ Մարաշի դեպ-

<sup>172</sup> M. Paillarès, op. cit., p. 130.

<sup>173</sup> Նույն տեղում, էջ 131, Paul du Vèou, op. cit., p. 216.

<sup>174</sup> Հեռագրի լրիվ տեքստը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 546, ք. 22։

<sup>175</sup> ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, ք. 20 (Ա. Միլերանի հեռագիրը Զավեն պատրիարքին)։

<sup>176</sup> Վ. Լ. Խուպէսէեան, նշվ. աշխ., էջ 7։

քերից անմիջապես հետո ֆրանսիական կառավարող շրջաններում իշխող տրամադրությունը իր արտահայտությունն էր գտել արտաքին գործերի մինիստրության պաշտոնաթերթի հանդիսացող «Տան» թերթի 1920 թ. փետրվարի 15-ի համաքում գետեղված հոդվածում, որտեղ, ի միջի այլոց, ասված էր. «Կիլիկիայում, ուր թուրքական դրոշը պետք է շարունակվի ծածանվել, մենք ցանկանում ենք, որ Ֆրանսիան սուլիքենություն ու մշտական գրավման ոչ մի իրավունք չպահանջի: Միայն մաքուր խղճով մեր դիվանագիտությունը կկարողանա բանակցությունների մեջ մտնել և արևելյան հարցը կարգավորել»<sup>177</sup>:

Եվ ֆրանսիական դիվանագիտությունը «մաքուր խղճով» փորձեր էր անում համաձայնություն գալու Քիմալի կառավարության հետ, այդ նպատակին «մաքուր խղճով» զոհաբերելով Կիլիկիայի հայ ազգաբնակչության անվտանգությունն ու օրինական իրավունքները, որոնց պաշտպանությունը Ֆրանսիան ստանձնել էր պաշտոնապես:

\* \* \*

Մարաշից հետո ֆրանսիական քաղաքականության զոհը դարձավ Հաճընը, որը, ի տարբերություն Մարաշի, Այնթապի, Ուրֆայի, ամբողջովին թողնված էր սեփական բախտին, ո՛չ մի ֆրանսիական զինվոր մուսիք չէր գործել Հաճըն, հայերին պաշտպանելու համար:

Լեռնային Կիլիկիայի հինավուրց քաղաքներից մեկը՝ Հաճընը համաշխարհային առաջին պատերազմից առաջ ուներ մոտ 30—35 հազար ազգաբնակչություն<sup>178</sup>, բացառապես հայեր, որոնք 1915 թ. հաշվոք եղեռնի ժամանակ կեղծիքի ու մատնության զոհը դառնալով<sup>179</sup>, զինաթափվեցին ու քսուր-

<sup>177</sup> M. Paillarès, op. cit., p. 127.

<sup>178</sup> Paul du Vèou, op. cit., p. 148; Սոկրատ Յ. Թերզեան, նշվ. աշխ., էջ 69, 204.

<sup>179</sup> Հաճընցիներին մատնել էր զինագործ Արամ Ճիկերճյանը, զենք ունեցողների ցուցակը հանձնելով թուրքական իշխանություններին: «Հա-



վեցին Տեր-Ջորի անապատները, ուր նրանց մեծ մասը ոչնչացավ:

1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարից հետո, ինչպես վերը տեսանք, դաշնակից տերությունների քաղաքական ու զինվորական պատասխանատու անձինք շուրջ խոստումներ էին տալիս եղևոնը վերապրած կիլիկիահայերին: 1919 թ. Հաճըն այցելած ֆրանսիական շնորհակետ նորմանը «հավաստիացնում» էր, որ «ասկի հուք ամեն հայ ազատ պիտի ապրի և ոչ ոք պիտի չկրնա վնասել անոր»<sup>180</sup>:

Հավատալով նման սին խոստումներին, Տեր-Ջորի սպանդանոցներից փրկված ազատասեր ու քաջարի հաճընցիները Հալեպից, Ադանայից, Սսից ու այլ վայրերից մեկնում են իրենց հարազատ քաղաքը՝ այն ավերակների միջից բարձրացնելու, հայրենի օջախները վերակենդանացնելու համար: Հաճընցիների առաջին քարավանը՝ մոտ 550 հոգի, Հաճըն է հասնում 1919 թ. մարտի 22-ին<sup>181</sup>, իսկ 1919 թ. վերջին, Բրեմոնի տվյալներով, Հաճընում վերահաստատվել էին 8 հազար հայեր<sup>182</sup>:

Վերապրող հաճընցիները շատ կարճ ժամանակամիջոցում ոտքի կանգնեցրին հրդեհված ու ավերված իրենց քաղաքը, որտեղ միայն ազգային վարժարանի շենքն էր պահպանվել: Շինարար ու ստեղծագործ ժողովուրդը վերստին դրսևորեց իր անընկճելի կամքը: Այրված ու քարուքանդ արված տների տեղը նորերը բարձրացան, դպրոցներ բացվեցին, որբանոց հիմնվեց և այլն: Սակայն կարճ տևեց հաճընցիների այդ խանդավառ աշխատանքը: Մարաշի հաջողությունից քաջալերված, քեմալական սպաներն ու բազմաթիվ լրտեսները

---

ճրնցրն կհոսար,—գրում է ղեպքերի ակնատես Ա. Ասպետը,—որ ղենքերը հանձնելով նրան հանդիստ կթողնեն, մանավանդ հարուստները ալդպես էին կարծում, բայց բոլորն էլ տարագրվեցան Տեր-Ջոր: Արամ Ասպետ, նշվ. աշխ., էջ 53:

<sup>180</sup> Տե՛ս Ասկրատ Թլրգեան, նշվ. աշխ., էջ 200:

<sup>181</sup> Տե՛ս Գրիգոր Թարովեան, Անթեղուած գաղտնիքներ, Պեյրութ, 1967, էջ 222:

<sup>182</sup> E. Brémond, op. cit., p. 11. Այս թիվը չափազանցված է, տե՛ս էջ 186:

տենդագին գործունեութիւնն են ծավալում նոր շէքներ կազմակերպելու և Հաճընը պաշարելու ուղղութեամբ:

Վերահաս վտանգը հաճընցիները որոշում են դիմավորել վազմակերպված, զենքը ձեռքներին: Հաճընի ինքնապաշտպանութեան գործը ղեկավարելու համար ստեղծվում է զինվորական բարձրագույն մարմին՝ ազգային հերոս Անդրանիկի նախկին զինվոր Սարգիս Ծեպեճյանի գլխավորութեամբ, որն ընտրվում է զինված ուժերի ընդհանուր հրամանատար:

Սարգիս Ծեպեճյանի հրամանով զորակոչի են ենթարկվում 16—50 տարեկան բոլոր տղամարդիկ: Զինված ուժերը բաժանվում են չորս վաշտերի: Կազմվում են առաջապահ և պահեստի խմբեր, որոնք կանոնավոր մարզվում են: Զինվորական խիստ կարգապահութիւնն է սահմանվում: Կարգավորվում է պարենավորման գործը, փորվում են խրամատներ և այլն<sup>183</sup>: Սակայն զենքի խիստ կարիք էր զգացվում. ուժը հարյուր կոլոդներից միայն երեք հարյուրը իրենց անձնական զենքն ունեին<sup>184</sup>:

1920 թ. փետրվարի վերջերին Հաճընի դրութիւնը սպառնալից է դառնում: Զինված ուժերի հրամանատար Սարգիս Ծեպեճյանը փետրվարի 22-ին գումարում է ինքնապաշտպանութեան կոմիտեի ժողով, և տեղեկացնում, որ «այս առավոտ էվերեկի կողմերեն քաղաք հասած է բարեկամ քուրդի մը զավակը, որ հայտնեց, թե Կեսարիո, էվերեկի և Ազիզիի մեջ թուրքերը կհավաքվին շրջակա գյուղերը, կզինվին և կսպասեն ձյունհալին՝ Հաճընո վրա հարձակվելու համար»<sup>185</sup>:

Երկար խորհրդակցելուց հետո ժողովը որոշում է երեք հոգուց բաղկացած մի պատվիրակութիւնն ուղարկել Ադանա

183 Մանրամասն տե՛ս Սոկրատ Թէրզեան, Եշվ. աշխ., էջ 212—213, Արամ Ասպետ, Եշվ. աշխ., էջ 75—78:

184 Տե՛ս ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 408, ց. 1, դ. 142, թ. 13 (Հնչակյան կուսակցութեան Հաճընի մասնաճյուղի վարչութեան նամակը):

185 Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավերագիր 29, թ. 2 (Հաճընի առաջնորդ Պետրոս արք. Սաբաճյանի հուշերը «Հաճըն ինչո՞ւ նահանջեց և ընկավ»):



զնդապետ Բրեմոնի մոտ՝ Հաճընի վիճակը, շրջակա թուրքերի պատրաստութիւններն ու ծրագրերը ներկայացնելու և օգնութիւն խնդրելու համար<sup>186</sup>։ Պատվիրակութիւնը, որի կազմում էին Հաճընի առաջնորդ արքեպիսկոպոս Պետրոս Սարաճյանը, Հարութիւն Խաչատրյանը և Աղզային վարժարանի տնօրեն Շմավոն Փոսթոյանը, ժողովի կողմից հետևյալ առաջադրանքըն էր ստացել.

«Ա. ո. ա. ջ. ի. ն. Ազանա երթալ և տեսնել Ֆրանսիական իշխանութիւն ներկայացուցիչ զնդապետ Բրեմոնին և հանուն Հաճընի խնդրել զինվորական և նյութական օգնութիւն, այսինքն զինվոր, զինք, ուղղամթերք և դրամ»։

Երկրորդ. Ի հարկին ազանայաբնակ հաճընցիներե և այլ փափագողներե կամավորական խումբեր կազմել և զրկել Հաճըն։

Երրորդ. Այս ըլլալիք դիմումներու հաջողումի կամ անհաջողումի պարագային հեռագրով հրահանգ տալ Հաճընին՝ զիմադրելու կամ նահանջելու<sup>187</sup>։

Նույն օրը՝ փետրվարի 22-ին, հիշյալ պատվիրակութիւնը, 7 ոստիկանների ուղեկցութեամբ ճանապարհ է ընկնում և հաջորդ օրը հասնում Սիս, որտեղ նա ստիպված է լինում մնալու մեկ շաբաթ՝ ճանապարհների անապահովութեան պատճառով։ «Ամբողջ դաշտը չեթեհներով լեցուն էր, — գրում է իր հուշերում Պ. Սարաճյանը, — ոչ միայն ճամբորդները կկողոպտեին, այլ նաև այն թուրք գյուղերը, որ չեթեհներուն չէին միանար, կթալանվեին ու կհրկիզվեին»<sup>188</sup>։

Փետրվարի 24-ին Սսի մայրավանքում պատվիրակութեան անդամները տեսնվում են քաղաքի Ֆրանսիական կառավարիչ կապիտան Քայարդայի հետ և հայտնում նրան իրենց առաքելութեան նպատակը։ Վերջինս հայտարարում է, որ «Գնդապետ Պրեմոն կգրի զինք ու ուղղամթերք տալու,

186 Նույն տեղում։

187 Նույն տեղում, թ. 3։

188 Նույն տեղում, թ. 10։

սակայն երբեք մի սպասեք, որ կրնանք զինվոր տրամադրել Հաճընի պաշտպանության համար կամ զենքի տեղափոխման համար»<sup>189</sup>:

Պատվիրակութունն, այնուամենայնիվ, որոշում է հասնել Ադանա և փորձել օգնութիւն կազմակերպել թուրքական հերոսակների կողմից օղակվող Հաճընին:

Մարտի 4-ին, Սսից Տարսոն փոխադրվող ֆրանսիական մի շոկատի ընկերակցութիւնից օգտվելով, պատվիրակութիւնը շարունակում է իր ուղին և մարտի 5-ի երեկոյան ժամանում Ադանա: Մարտի 7-ին Հաճընի պատվիրակութիւնը Միհրան Տամատյանի հետ ներկայանում է գնդապետ Բրեմոնին, որը, ըստ էութեան, նույն պատասխանն է տալիս, ինչ որ Թայարդան, միայն խոստանում է զենք և պարեն հայթայթել, եթե հայերից կազմվեն կամավորական խմբեր՝ Հաճըն գնալու համար: Մարտի 9-ին 200 երիտասարդներ պատրաստ էին մեկնելու, սակայն զինվորական իշխանութիւնները, հակառակ Բրեմոնի խոստման, հրաժարվում են նրանց զենք տալ, պատճառաբանելով, որ նրանք պետք է հասնեն Սիս և այնտեղ միայն զինվեն, թեև նրանց քաջ հայտնի էր, որ ամբողջ Չուքուր-օվան լի էր շեթեներով: Հետևյալ օրը, մարտի 10-ին, Հաճընի պատվիրակութեան անդամները կրկին այցելում են Բրեմոնին, որը հավաստիացնում է նրանց, թե կատարվածը «թշուրիմացութիւն է եղած, թող 200 երիտասարդները մեկնեն այս իրիկուն, ես կպարզեմ հարցը»<sup>190</sup>: Նույն օրը հայտնի է դառնում, որ այն զենքն ու ռազմամթերքը, որ ֆրանսիական զինվորականները խոստանում էին Սսում տրամադրել հայ կամավորներին, ամբողջութեամբ ընկել է թուրք շեթենների ձեռքը: Արդեն հիշատակված Սսի կառավարիչ Թայարդան, սսեցի և հաճընցի 80 երիտասարդների (ժանդարմներ և կամավորներ) հանձնարարում է մեծ քանակութեամբ հրացան, փամփուշտ և պայթուցիկ նյութեր փոխադրել Հաճըն, սակայն

189 Նույն տեղում:

190 Նույն տեղում, թ. 12:



ոչ թե սովորական ճանապարհով, այլ Յաղրասանի վրայով, ուր թուրքական զյուզերն ավելի շատ էին: Վերջիններս, սակայն, խոհեմություն հանդես բերելով, որոշում են գնալ ճիշտ հակառակ կողմից՝ լեռների միջով, առավել ապահով և կարճ ճանապարհով, սակայն մեկնելու պահին թայարդան տեղեկանում է նրանց մտադրության մասին և խստիվ հրամայում գնալ իր կողմից նախընտրած ճանապարհով: Քեմալական բաղմամբիվ ջոկատները հենց դրան էին սպասում. նրանք շրջապատում են հայ կամավորներին և կատաղի կովում ոչնչացնում նրանց մեծ մասին: Միայն 18—20 հոգու, վիրավոր վիճակում, հաջողվում է ազատվել: 40 բևռ ուղմամթերք բնկնում է շեթենների ձեռքը<sup>191</sup>:

Ահա այսպիսի վախճան ունեցավ Ֆրանսիական զինվորական իշխանությունների «օգնությունը» Հաճընին: Մի քանի օր հետո՝ մարտի 14-ին Բրեմոնը Պետրոս արք. Սարաճյանին և Միհրան Տամատյանին ավելի բացորոշ և կտրուկ կերպով արտահայտեց այդ նույն զինվորականության բռնած դիրքը. «Այլևորդ և ապարդյուն է զժվարին լեռներով Հաճընին օգնություն ուղարկել, կամ կամավորական գնդեր ղրկել. զինվոր ղրկելու մասին խորհել անգամ ավելորդ է...»<sup>192</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Այսպիսով, Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչը Կիլիկիայում «մոռանալով» իր կառավարության կողմից հայե-

<sup>191</sup> Նույն տեղում, թ. 12—13: Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 124, թթ. 1—2 (Արմաղանի մարտի 19-ի թվակիր նամակը Վահան Ժամկոչյանին): Սփյուռքահայ հեղինակներից Մ. Սեպուհը գտնում է, որ «մեծաքանակ փամփուշտ և հրացան Հաճըն փոխադրող ոստիկան զորաջոկատի շրջապատման միակ պատասխանատուն էվերեկցի հայանուն Արշակ Սէմիզյան բաված հրեշածին դավաճանն էր, որ պատահարք տեղեկանալով ուղմամթերք փոխադրող ջոկատին ճամփա ելած ըլլալուն լուրը հաղորդող հեռագրին, անմիջապես իմաց տված էր Վահայի քեմալական կաղմակերպության ներկայացուցիչ Ճեզմի բեյին»: Տե՛ս Մ. Սեպուհ, Հաճընի ողբերգութիւնը, էջ 52:

<sup>192</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ-թղթ. 14, վավերագիր 29, թ. 14:

րին տրված «երաշխիքները», հայտարարում է, որ ոչ մի ֆրանսիացի զինվոր չի ուղարկվելու հաճընցիներին պաշտպանելու համար<sup>193</sup>, նաև գտնում, որ ավելորդ է հայ կամավորական գնդեր ուղարկել Հաճըն<sup>194</sup>:

Ի՞նչ էր մնում անելու նման պարագայում, երբ ռազմական ոչ մի օգնություն չէր հասցվելու Հաճընին, իսկ այնտեղից նույն օրը՝ մարտի 14-ին ստացված հեռագրում (որը Հաճընից ուղարկված վերջին հեռագիրը եղավ) աղերսագին ասվում էր, որ եթե «օգնություն չը փութաք, գիտցեք, որ Հաճըն ջնջված է երկրի վրայեն»: Երկու ընտրություն կար.

կազմակերպված նահանջել Սիս, քանի դեռ քաղաքը զրիվ օղակված չէր թուրքական հրոսակների կողմից, կամ

մնալ և ընդունել անհավասար կռիվը, ավելի ճիշտ՝ մահվան դատապարտել Հաճընի վեց հազարից ավելի ազգաբնակչությունը, այդ թվում կանանց և երեխաներին:

Բանականությունը թելադրում էր նախընտրել առաջինը և նահանջել: Այդպես էին մտածում հաճընցիները և Ագանա աղարկված նրանց ներկայացուցիչները: Մարտի 14-ին էլ Հաճընի պատվիրակության ղեկավար Պետրոս եպիսկոպոս Սաքաճյանի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվում Հաճըն՝ անհապաղ նահանջելու խորհրդով: Հեռագիրը հասնում է Հաճըն<sup>195</sup>:

193 Ըստ Սոկրատ Քերզյանի, զնդ. Բրեմոնը տակավին մարտի 11-ին գրավոր հաղորդել էր Միհրան Տամատյանին, որ «ֆրանսիական իշխանությունները ի վիճակի չեն ներկայիս որևէ զինվորական ուժ ղրկելու Հաճըն և ոչ ալ ապագայի համար այդ տեսակ որևէ հանձնառություն չեն ստանձնեիր»: Տե՛ս Սոկրատ Քերզյան, նշվ. աշխ., էջ 237:

194 Իր հուշերում գնդապետ Բրեմոնը մատնանշում է, որ հայ ղեկավար գործիչները և Հաճընի բնակիչները բազմիցս դիմել են ֆրանսիական զինվորական իշխանություններին՝ Հայկական լեզեռնի մի շոկատը Հաճըն աղարկելու խնդրանքով, սակայն իրենք ընթացք չեն տվել այդ դիմումներին, որովհետև չէր կարելի թողնել ֆրանսիական համազգեստ կրող մի շոկատի, որին մենք ի վիճակի չէինք աշակցություն ցույց տալու հեռավոր, ալպիական բարձր լեռների (3000 մետրից բարձր) այս երկրում»: E. Brémond, op. cit., p. 45.

195 Մաշտոցի անվան Մամեհադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավերագիր 29, Բ. 16: Իր հուշերում Պ. Սարաճյանը չի բերում



Սակայն այլ մոտեցում ունեին Հաճընի պաշտպանութիւնն հարցին Կիլիկիայի Աղզային խորհրդի աղդեցիկ անդամները՝ Միհրան Տամատյանի դիմավորութեամբ: Ինչպես գրում է իր

ուղարկված հեռագրի տեքստը, այն բերված է սփյուռքահայ երկու հեղինակներին՝ Լ. Պողոսյանի և Հաճընի հերոսական ինքնապաշտպանութիւն մասնակից Սոկրատ Թերզյանի կողմից՝ տարբեր շարագրանքով: Ահա դրանք.

«...Հաճընցի դավակներս.

Հաճընի մոտեցող ու շատ մոտեն նշմարվող ահուկի վտանգն ձեր պաշտելի հայրենիքն ու կյանքներն ազատելու ճար մը գտնելու համար էր, որ մեզ հոս զրկեցիք: Այս վերջին հեռագիրն է, որ կոտամ: Հաճընը վտանգն, թշնամի սպառնալիքն զերծ պահելու համար ինչ որ պետք էր մտածեցինք: Ամեն կողմ դիմումներ ընելի իսկ անտարբեր չի գտնվեցանք. բայց լալով կգրեմ այս տողերը, կը ցավիմ, որ բոլոր դիմումներս սպարդյուն մնացին, որևէ մեկ աղբյուրի օգնութեան հույս չի նշմարվիր: Ուստի, Հաճընը փրկելու միակ միջոցը, առանց երկրորդ, երրորդ հեռագրի սպասելու, վայրկենական, անմիջապես ամեն ինչքերնիդ հող ձգելով՝ կյանքերնիդ ազատելու, ժամ առաջ Սիս հասնելու աշխատեցեք: Աստված պահապան ըլլա ձեզի:

13 մարտ 1920

Պ. Սարաճյան

Յ. Պ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 652:

Հաճըն՝

Ինքն. Կոմիտեին.

Կը ցավիմ, որ բոլոր դիմումներս սպարդյուն մնացին: Որևէ տեղե օգնութիւն մի սպասեք: Անմիջապես նահանջեցեք Սիս: Աստված պահապան ըլլա ձեզի:

13 մարտ 1920

Սարաճյան

Սոկրատ Թերզեան, նշվ. աշխ., էջ 257:

Ինչպես տեսնում ենք, դույզ հեղինակների կողմից բերված Սարաճյանի հեռագրի տակ մարտի 13-ի ամսաթիվն է դրված, մինչդեռ, ինչպես վերը տեսանք, նման բովանդակությամբ հեռագիր Պ. Սարաճյանն ուղարկել էր Հաճըն մարտի 14-ին: Պետք է ենթադրել, որ հեռագրի տեքստը կազմվել է մարտի 13-ին, իսկ ուղարկվել 14-ին, գնդ. Բրեմոնի հետ Պ. Սարաճյանի վերջին տեսակցութիւնից հետո:

հուշերում «Հաճընի օգնութեան արշավախմբի Արտակարգ հանձնախմբի» ատենադպիր Կարապետ Իզմիրլյանը, «Կիլիկիայում բարձր քաղաքականութիւնը ընդհանրապէս հաճընցիներուն նահանջը կնկատեին ոչ միայն նվաստութիւն, այլև այդ շրջանին նկատմամբ ազգային իրավունքներու ժխտում»<sup>196</sup>։

Նույն օրը՝ մարտի 14-ին, Մ. Տամատյանը, խարսկելով գնդ-Քրեմոնի՝ իրեն հասցեագրված 1920 թ. մարտի 14-ի թվակիր նամակում արտահայտած այն կարծիքից, թե հաճընցիների «ամբողջական մեկնումը առանց կովի Եվրոպայի առաջ իրենց համար պիտի ըլլա վնասակար», և որ «Հայաստանի բարձր համբավին տեսակետովը անհրաժեշտ է, որ այդ նահանջը շկատարվի»<sup>197</sup>, հետևյալ հեռագիրն է ուղարկում Հաճըն.

«Հաճըն՝

Հայ Ազգային Միութեան.

Գաղթը ազգային արժանապատվութեան դեմ է։ Գուր հայու վայել և հաճընցիի քաջութեամբ կռիւլը շարունակեցեք, քանի մը օրվան մեջ ձեզի 1200 հոգինոց օգնական ուժ պիտի հասնի։ Օղանավ ալ պիտի դրկենք, Մ. Սարգիս բլուրին վրա ճերմակ խաչ մը շինեցեք, որպեսզի ծրարները հոն նետնի։

14 մարտ 1920:

Մ. Տամատյան

Հարանվանական պետեր

Հաճընի Հայր. Միութեան»<sup>198</sup>։

Մյուս օրը՝ մարտի 15-ին Մ. Տամատյանը հրավիրում է Ազգային Միութեան և միջկուսակցական խառը ժողով՝ Հաճընի խնդիրը քննութեան առնելու համար։ Հիշյալ ժողովում

196 Մեքր Կ. Իզմիրլեան, Արագ վերլուծում մը Հաճնոյ եղևնի առթիւ «Նոր Հաճըն», 1966, թիվ 10, էջ 270:

197 Տե՛ս Մ. Ն., Կիլիկիան յուշեր, «Նոր Հաճըն», 1956, թիվ 8—9—10, էջ 112:

198 Սոկրատ Թէրզեան, Նշվ. աշխ., էջ 258: Վերը հիշատակված Կ. Իզմիրլյանը իր հուշերում գրում է, որ հեռագիրը Մ. Տամատյանը Հաճըն էր ուղարկել իր և Պետրոս Սարաճյանի ստորագրութեամբ: Տե՛ս «Նոր Հաճըն», 1966, թիվ 10, էջ 271:



նա տեղեկացնում է, որ Բրեմոնը Սսի ֆրանսիական կառավարիչ կապիտան Թալարդայի միջոցով հեռագրական հրաման է տվել Հաճընի տեղակալ (կայմակամ) Կարապետ Չալյանին, որ «պատրաստվին նահանջել կիները, մանուկները և ծերերը, զորս դիմավորելու և ապահով կերպով Սիս հասցնելու համար ֆրանսիական իշխանությունը մինչև որոշ վայր մը զինվոր պիտի դրկեր, իսկ զենք բռնող տղամարդիկ պետք է Հաճըն մնան և զայն պաշտպանեն, որուն ի պատասխան Հաճընի տեղակալը հեռագրած է, թե Հաճընի տղամարդիկ իրենց կիներու, ծնողներու և զավակներու մեկնումե վերջ չեն ուղեր Հաճըն մնալ, միայն Հաճընի ավերակները պաշտպանելու համար, ուստի որոշած են ամբողջովին նահանջել»<sup>199</sup>։ Միաժամանակ Տամատյանը հայտնում է այն մասին, որ գնդ-Բրեմոնը իրեն հանձնարարել է «համոզել հաճընցիները, որ բարձրագույն հրամանին համեմատ շարժին»։ Բրեմոնի հրամանը Հաճընի մասնակի նահանջի վերաբերյալ երկար վիճաբանությունների առարկա է դառնում հիշյալ ժողովում, որն ի վերջո որոշում է «հրահանգ տալ Հաճընի, որ չը նահանջեն և ամբողջությամբ հոն մնան, և թե պետք եղած նյութական ու զինվորական օգնությունը շուտով պիտի հասնի»։ Ժողովը նաև որոշում է, որ այդ հեռագիրը Հաճըն ուղարկվի Պետրոս եպիս. Սարաճյանի ստորագրությամբ, չիմանալով այն մասին, որ Հաճընի առաջնորդը նախօրյակին՝ մարտի 14-ին հեռագրել էր հաճընցիներին՝ անհապաղ Սիս նահանջելու։ Տեղեկանալով այդ մասին, ժողովը, որոշ տատանումներից հետո, որոշում է, որ Պ. Սարաճյանը նոր հեռագիր ուղարկի հաճընցիներին, որ նրանք չնահանջեն, այլ մնան քաղաքում<sup>200</sup>։ Սարաճյան սրբազանը հրաժարվում է նահանջի հեռագիրը հերքող նոր հեռագիր ուղարկել, սակայն ժողովը հաշվի չի առնում նրա կարծիքը և Միհրան Տամատյանը իր անձնական

199 Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, Բղթ. 14, վավերագիր 29, Բ. 16—17։

200 Նույն տեղում, Բ. 17։

պատասխանատվութիամբ հեռագրում է Հաճըն՝ «չը նահանջել, դիմադրել և օգնութիան սպասել»<sup>201</sup>»:

Իմանալով այդ մասին, Պ. Սարաճյանը հայտարարում է, որ ճակատագրական սխալ է թույլ տրվել, և հանձնարարում պատվիրակութիան անդամ Շ. Փոսթոյանին անհապաղ Հաճըն ուղարկել հետևյալ հեռագիրը.

«Ծրեկվան հեռագիրս կհաստատեմ, կետ առ կետ գործադրեցեք, առանց ուրիշներուն մտիկ ընելու»<sup>202</sup>:

Ի մեծ դժբախտութիուն հաճընցիների, այս վերջին հեռագիրը Հաճըն չի հասնում, որովհետև նախօրյակին հեռագրաթելը Վահկայի և Հաճընի միջև խզվել էր, և պաշարված հաճընցիները այլևս ոչ մի հեռագիր չստացան արտաքին աշխարհից: Այսպիսով, վերջին հեռագիրը, որ ստացան շեթեների կողմից օղակված հաճընցիները, դա Մ. Տամատյանի վերը բերված հեռագիրն էր, որն, իսկապես, ողբերգական հետևանքներ ունեցավ քաղաքի 6 հազար հայ ազգաբնակչության համար: Եվ այդ բանը հայտնի դարձավ հերոսական Հաճընի անկումից հետո միայն, երբ պաշարման շղթան ճեղքած և մահից փրկված Հաճընի ինքնապաշտպանութիան կոմիտեի անդամներից մի քանիսը պատմեցին եղիլութիւնը, այն է՝ մարտի 14-ին, ստանալով Պ. Սարաճյանի հեռագիրը, հաճընցիները ժողովի են հավաքվում, որոշում ունկնդրել իրենց առաջնորդին, և նահանջի պատրաստութիւններ են տեսնում, սակայն մարտի 15-ին ստանալով Մ. Տամատյանի հեռագիրը, եզրակացնում են, որ քաղաքականութիւնը փոխվել է, օգնութիան հույս կա, և ամիսներով սպասում վերջինիս խոստացած օգնութիւնը<sup>203</sup>, որը նրանք այդպես էլ չստացան: Այստեղ պետք է ասել, որ եթե նույնիսկ հայ կամավորներին հաջողվեր հասնել Հաճըն, կամ եթե ֆրանսիական զինվորական իշխանութիւնները մեծ քանակութիամբ զենք և ռազմամթերք տրամադրեին քաղաքի հաճընցիներին, միևնույն է, վերջին-

201 Նույն տեղում, թ. 19:

202 Նույն տեղում, թ. 20:

203 Նույն տեղում, թ. 21—22:



ներս ի վիճակի չէին լինի երկար ժամանակ պաշարված վիճակում պաշտպանական կռիվներ մղելու քեմալական կանոնավոր զորքերի դեմ, որոնց թիվը օրըստօրե բազմապատկվում էր: Առանց Հաճընի ռազմական գրավման, հնարավոր չէր պաշտպանել քաղաքը քեմալական հրոսակներից: Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, Ֆրանսիական իշխանությունները Կիլիկիայում ամենևին էլ մտադիր չէին զորք ուղարկել Հաճըն, թեև նրանք հայտարարում էին, որ «այդ քաղաքը և նրա տերիտորիան, անկասկած, Ֆրանսիական գրավման և վարչության գոտու մասն են կազմում»<sup>204</sup>:

Այսպիսով, Ֆրանսիայի իմպերիալիստական շրջաններին և Մերձավոր Արևելքում նրանց ծրագրերն իրականացնող պինվորականության խարդախ, հայերի համար աղետաբեր քաղաքականությունը մի կողմից, և կիլիկիահայլության բախտի տնօրինումը ստանձնած հայ ազգայնական մի քանի ղեկավարների անհեռատես քայլերը, մյուս կողմից, հնարավորություն բնձեռեցին Անկարայի ղեկավար շրջաններին շարունակելու երկիրը հայերից մաքրելու թուրքական ավանդական քաղաքականությունը, Մարաշից հետո սրի քաշելով Հաճընի վեց հազար հայլությունը, որը 7-ամսյա խիզախ դիմադրությունից հետո, բնաջնջվեց քեմալական բանակի կողմից:

Մեր խնդրից դուրս է հանդամանորեն լուսաբանելու Հաճընի հերոսական ինքնապաշտպանության պատմությունը, որն ի մի է բերել այդ հերոսամարտի մասնակից Սոկրատ թերզյանը<sup>205</sup>: սակայն հարկ է այստեղ անդրադառնալ այդ պայքարի առանձին դրվագներին:

Ինչպես ասվեց, 1920 թ. մարտի 15-ից Հաճընը լրիվ շրջապատված էր, հեռագրային կապը արտաքին աշխարհի հետ խզված: Սակայն տեղեկանալով հաճընցիների ինքնապաշտպանական միջոցառումների մասին և ծանոթ լինելով նրանց դիմադրական կորովին, Կիլիկիայի հտգրավման քեմալական

<sup>204</sup> E. Brémond, op., cit., p. 45.

<sup>205</sup> Տե՛ս Սոկրատ Թերզյան, նշվ. աշխ., էջ 265—550:

բանակի հրամանատար Կոզան օղլու Դոդանը կուլի առաջին օրերին փորձ է անում կեղծիքի ու խորամանկության օգնությամբ համոզել հաճընցիներին դադարեցնելու կուլվը և անձնատուր լինելու: Մարտի 17-ին նա Հաճընի ինքնապաշտպանության կոմիտեին նամակ է ուղարկում «իրարհասկացողության գալու և վեճերն ու պառակտիչ հարցերը հարթելու» կեղծ առաջարկությամբ և 12 օր բանակցություններ վարում վերջինիս հետ:

Մարտի 28-ին ուղարկված Դոդանի խաբեպատիր վերջին նամակը արդեն վերջնագրի բնույթ էր կրում:

«Հաճընցիներ, թուրք կայսրությունը ճիհատ հռչակած է: Անատոլուի բազմացեղ բնակչությունը անխտիր, ազգային գերապանծ դրոշին տակ համախմբված, կկուլի արիաբար, հանուն թուրք ազգի ազատության: Ցավալի է, որ մեր ազգային շարժումին տարբեր նկատումներ կվերագրեք: Մեր նպատակն է 18 ամիսներե ի վեր կապիտալիստ Ֆրանսայի արյունաթաթախ դրոշին ներքև հեծող մեր թուրք ազգակիցները ազատագրել և վտարել մեր սրբազան հողեն անոր վայրագ դորքերը: Ձեր ներքին պատրաստությունները որքան ալ անպարտելի նկատվին, անկարող են մեր բանակին դեմ երկու ժամ դիմադրելու: Արդ, անմիջապես պետք է հանձնեք Ֆրանսացիներուն կողմե բաժնված զենքերն ու ռազմամթերքները, որոնք ապերախտ Ֆրանսա մեզմե գրավեց:

Բացեք մեր ճամբան, որ շարունակենք իրագործելու շերիաթի հրամանը, որ է՝ զոհել ամեն բան, փրկելու համար Անատոլուի նվիրական հողամասը՝ Կիլիկիան:

Եթե մեր պահանջները չընդունիք, ձեր «շուլուխ-չոճուխ» ներուն մեղքը վիզերնիդ ըլլա՞՞»<sup>206</sup>:

Այս նամակին Հաճընի ինքնապաշտպանության կոմիտեն հետևյալ պատասխանն է տալիս.

«Եթե ձեր նպատակը Ֆրանսան վտարել է Կիլիկիային, հոս որևէ Ֆրանսական սպա և զորք չկա. թուրքերը լավ գիտեն յայս պարագան:

<sup>206</sup> Նույն տեղում, էջ 267.



Ահա Ֆրանսան և դուք: Հաճընը Կիլիկիո ճանապարհը չէ և ոչ ալ անոր պատվարը: Ատանա քանի որ Կիլիկիո մայրաքաղաքն է, առաջին առթիվ պետք է դայն գրավեք: Այդ պարագային մենք սիրով կհամակերպվինք թրքական վարչության վերահաստատումին: Ատանան գրավվելու պարագային հանձնախումբ մը կուգա և անոր որոշումները սիրով կընդունինք: Որքան ատեն Ատանա և Սիս կմնան Ֆրանսական իշխանության տակ, անկարելի է, որ զինաթափ ըլլանք:

Վեց հարյուր տարիներն ի վեր թուրք գերիշխանության լուծին տակ ապրեցանք որպէս ստրուկներ, ամեն հարստահարությանց տոկալով: Ահա Հաճընը: Ո՛ւր են պալատանման մեր տունները:

Թողեք, պարոններ, մեզ ազատ, որպեսզի խաղաղ կյանք մը ապրենք:

Այո, գիտենք ձեր ծրագրին ներքին ծալքերը. ջարդել, քանդել ու մոխրի վերածել, ինչ որ հայկական է...:

Մենք չենք հնազանդիր այն պայմաններուն, որոնք հակառակ են մեր շահերուն: Թողեք մեզ ազատ, որ կարենանք Մաղարայի թուրքերուն հետ պապենական բարեկամությունը անվրեպ պահել»<sup>207</sup>:

Հաջողության շհասնելով, Դողան-բեյը դիմում է մի այլ խորամանկության՝ անուղղակի բանակցությունների, Հաճըն ուղարկելով քաղաքի արվարձաններից մեկում՝ Գրտեթում գտնվող ամբրիկյան որբանոցի միսիոներուհի տիկին Իպիին<sup>208</sup>: Հաճընցիները, սակայն, անցյալի դառը փորձից իմաստնացած, հրաժարվում են հանձնել իրենց զենքերը.

<sup>207</sup> Նույն տեղում, էջ 267—268:

<sup>208</sup> Հիշյալ բանակցությունների և ընդհանրապես Հաճընը գրավելու նպատակով բնաւական հրամանատարության կողմից ձեռնարկված քայլերի մասին տիկ. Իպին հանգամանորեն պատմում է 1923 թ. Լոնդոնում հրատարակված «At the mercy of turkish brigands» («Թուրք ավազակների զթությանը հանձնված») խորագիրը կրող գրքում, որը, ցավոք, մեզ չհաջողվեց գտնել և օգտագործել սույն աշխատության մեջ:

ասելով, որ դրանք բացառապես ինքնապաշտպանության համար են և ուրիշ նպատակի չեն ծառայելու:

Ապրիլի 16-ին թուրքերը Հաճըն են ուղարկում անգլիական նպաստամատուցցի ներկայացուցիչ պ. Իպիին և Գրտեթի ամերիկյան որբանոցի տնօրենուհի տիկ. Քոլտին, որոնք իրենց հետ բերում են Դողանի հետևյալ պայմանները.

«1. Թրքական դրոշակ պարզել:

2. Ֆրանսական կառավարության կողմն տրված զենքերն ու ռազմամթերքները հանձնել ամբողջությամբ:

3. Հաստատել Հաճընի մեջ թրքական ազգային կառավարություն, որ իրավասու ըլլա հայ ըմբոստներուն արդար պատիժը տնօրինելու»<sup>209</sup>:

Այս պայմանները, բնականաբար, չէին կարող ընդունվել հաճընցիների կողմից: Ինքնապաշտպանության կոմիտեն Հաճընի մտավորական անձանց խառը նիստի հրավիրելով, քննության է առնում Դողան-բեյի «նոր» առաջարկները և

Ա. Նկատի ունենալով, որ ներկայացված պայմանները Հաճընի ժողովուրդին կյանքին ու ինչքին վստահություն չեն ներշնչեր,

Բ. Նկատի ունենալով վեց հազար հայության գոյության դեմ խորհրդավոր դավ մը թագնված է երեք առաջարկներուն մեջ»,

մերժում է դրանք<sup>210</sup>:

Հաճընցիների համառությունից կատաղած, թուրքական հրամանատարությունը նոր ուժեր է կենտրոնացնում Հաճընի շուրջը և ուժեղ ուժակոծության ենթարկում քաղաքը: Ապրիլի 30-ին թուրքերն անցնում են հարձակման, սակայն հարյուրավոր զոհեր տալով, ստիպված են լինում հտ նահանջել: Հակահարձակման ժամանակ հաճընցիների ձեռքն ընկած մի փաստաթղթից հայտնի է դառնում, որ Դողանը,

209 Ասկրաա Քէրզեան, նշվ. աշխ., էջ 307—308:

210 Նույն տեղում, էջ 308:



որը էվերեկից, Վահկայից, Կեսարիայից ու Ազիզիեից մի շարք երևելի թուրքերի հրավիրել էր Հաճընի անկման «հարսանիքին» մասնակցելու, անհաշողություն կրելով, հետևյալ հեռագիրն էր ուղարկել Անկարա՝ Մուստաֆա Քեմալին.

«Մեր հարձակումներն ապարդյուն անցան: Հաճընը զենքով գրավել անկարելի է: Պիտի սպասեմ, որ անոթութենե ուժասպառ անձնատուր ըլլան: Արդեն քանի մը ամսվան բավելիք ուտելիք ունին»<sup>211</sup>:

Հիրավի, շուտով Հաճընի վիճակը առավել ծանր դարձավ: Քաղաքի քաշարի պաշտպանները հատկապես նեղվում էին զինամթերքի պակասից: Մայիսի 30-ին Հաճընից Ադանա հասած երկու սուրհանդակները հայտնում են, որ ամեն մի հրացանի համար ընդամենը 15 փամփուշտ էր մնացել<sup>212</sup>:

Սակայն հաճընցիներին հասցված ամենածանր հարվածը 1920 թ. մայիսի 30-ին կնքված Ֆրանս-քեմալական զինադադարն էր<sup>213</sup>, որի համաձայն Ֆրանսիական զորքերը լքեցին Սիսը և նահանջեցին Ադանա՝ իրենց հետ տանելով քաղաքի հայ ազգարնակչութունը և անշափ դժվարացնելով Հաճընին օգնության փութացող հայ կամավորների ջանքերը: Միաժամանակ, «Սսի պարպումով,— նշում էր այդ ժամանակ Կիլիկիայում գտնվող Զապել Եսայանը,— դաշտային Կիլիկիան իր բոլոր դռները կբանար թշնամիին առաջ՝ առանց այլևս ունենալու որևէ ռազմական հենակետ»<sup>214</sup>:

1920 թ. հունիսի 14-ին Մ. Տամատյանը իր մոտ հրավիրելով Հաճընի Հայրենակցական միության անդամներին և մի քանի հաճընցիների; հայտնում է նրանց, որ պաշարված Հաճընի ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու միակ ելքը այլևս մնում է հաշտվել թուրքերի հետ և կո՛ւրծ դադարեցնել,

211 Նույն տեղում, էջ 316:

212 Paul du Véo, op. cit., p. 222.

213 Զինադադարի պայմանների մասին տե՛ս էջ 135—136:

214 Ե. Զարեհցի անվան զրակաճուրջան և արվեստի բաճառան, Զայել Եսայանի ֆոնդ, № 289, թ. 29:

ուստի նա առաջարկում է, որ Հաճընի Հայրենակցական միությունը այդ մասին մի նամակ ուղարկի հաճընցիներին՝ իր ծառայությունը բերելու պատրաստ ամերիկյան միսիոներ դուրս. Տատի միջոցով<sup>215</sup>: Հաճընի ղեկավարները, ի վերջո համաձայնություն են տալիս Մ. Տամատյանի առաջարկին, պայմանով, որ հաշտության պայմանները սահմանվեն վերջինիս կողմից: Նույն օրը Մ. Տամատյանը, հաճընցիների ներկայությամբ և նրանց հետ խորհրդակցելով, իր ձեռքով գրի է առնում ապագա հաշտության պայմանները.

Հաճընցիները պետք է ճանաչեն թուրքական կառավարությունը և դրոշակը, չհանձնելով, սակայն, իրենց զենքերը.

Քաղաքի ապահովության համար խառը ոստիկանություն պիտի ստեղծվի.

Գերիների փոխանակություն պիտի կատարվի հայերի և թուրքերի միջև և այլն<sup>216</sup>:

Վերջապես Հաճընի Հայրենակցական միության 1920 թ. հունիսի 14-ի թվակիր նամակը պատրաստ էր: Նամակի վերջում ասված էր. «Անհեթեթություն պիտի ըլլար ասկե ուղղություն տալ Ձեզ, որով առաջադրված կետերը ձեզի կը ներկայացվին թելադրական ձևով և անտարակույս, եթե դուք ալ հարմար տեսնեք, ինչ որ ներկա կացության առջև տրամաբանական է, Ձեր ուզած և կարելի ձևով կը կարգադրեք զայն երկու շարյաց փոքրագույնը...»<sup>217</sup>: Հիշյալ նամակը, Հաճընի Հայրենակցական միության կնիքով կնքված և նրա անդամների կողմից ստորագրված, հանձնվում է Մ. Տամատյանին՝ օգանավով Հաճըն ուղարկելու համար, սակայն մի քանի օր հետո ետ է վերադարձվում այն առարկությամբ, թե օգանավով հնարավոր չի եղել հասցնել Հաճըն:

Պետք է ասել, որ դեպքերի ականատեսներից ու մասնակիցներից և ոչ մեկի հուշերում չի նշվում, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, հիշյալ նամակը Հաճըն չհասցվեց, չէ՞ որ օգա-

<sup>215</sup> Տե՛ս «Նոր Հաճըն», 1966, թիվ 11, էջ 301:

<sup>216</sup> Նույն տեղում, էջ 302:

<sup>217</sup> Նույն տեղում:



նավից բացի, ուրիշ շատ միջոցներ չ'այլին. այն կարելի էր ուղարկել հաճընցի սուրհանդակներից մեկի միջոցով (որոնք ինչպես այդ ժամանակ, այնպես էլ ավելի ուշ, լուրեր էին բերում Հաճընի դրուժյան մասին), դոկտ. Տատի կամ մեկ ուրիշ ասերիկյան միսիոների միջոցով և այլն:

Սակայն վերը հիշատակված Կ. Իլմիրյանը իր հուշերում մատնանշում է, որ Հաճըն ուղարկվելիք նամակի լուրը տարածվելուն պես մեծ դժգոհություն ծայր առավ նրա բովանդակության շուրջ, քննադատում էին առաջ քաշված պայմանները հետևյալ պատճառաբանություններով.

«Բրբական դրոշը և կառավարությունը ընդունիլ արատ մըն է, և մահ կը նշանակե: Այս ակտը Կիլիկիո հայության սրտին միաված դաշույն մըն է: Մեր իրավունքները մեր իսկ կամքովը ջնջել է: Այլևս բան մը պահանջելու իրավունք պիտի չունենանք, Հաճնո հաշտութենեն դրական օգուտ մը սպասել անհեթեթություն է, հետևաբար նամակը քաջաբար կուվող հաճընցիներուն կորովը ջլատելն զատ ոչինչ կը ծառայե: Ամոթ մըն է, որ Ատանայի մեջ դտնվող այնքան հայությունը Հաճընը լքե: Ազգը, եթե ուղե, ամեն բան կարելի է, Հաճըն կարելի է ուժ դրկել, ազգը պետք է ոտքի ելլե և այլն»<sup>218</sup>:

Բերված փաստերից կարելի է ենթադրել, որ նամակը Հաճըն շուղարկելու հիմնական պատճառը, թերևս, եղել է Ադանայում բնակվող հաճընցիների<sup>219</sup> դժգոհությունը: Այդ մասին է վկայում նաև հունիսի 27-ին Ադանայի Աբգարյան վարժարանի բակում հրավիրված բազմահազարանոց հավաքը, որի բուն նպատակը, — ինչպես նշում է իր հուշերում Կ. Իլմիրյանը, — դրված նամակին դեմ բողոքելը «և ժողովուրդը Հաճընը ազատելու համար կամավոր արձանագրվելու հրավիրելն էր»: Հավաքի մասնակիցները գալիս են այն եզ-

<sup>218</sup> Նույն տեղում:

<sup>219</sup> 1920 թ. հունիսին, Սսից և Կարս-Պաղարից եկածների հետ միասին, Ադանայում դանվող հաճընցիների թիվը հասնում էր երկու հազարի: Տե՛ս նույն տեղում, էջ 303:

րակացութիւն, որ «հերոս Հաճընը պետք չէ որ հաշտութիւն խնդրե, թուրքին ձեռքը համբուրե: Ազգը անոր կռնակն է, պատրաստ է երթալու...»<sup>220</sup>:

Հաճընի Հայրենակցական միութիւնը գործի է լծվում. կազմվում է «Հաճընի օգնութեան արշավախմբի արտակարգ հանձնախումբ», ստեղծվում են զինվորական հավաքի, դրամահավաքի և զինահավաքի գործը կազմակերպող ենթահանձնախմբեր և այլն: 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին թագաւորութեան, սակայն, հաջողվում է հավաքագրել և Ախարճայում կենտրոնացնել ընդամենը 300 կամավորների, գրեթէ ամբողջովին հաճընցիներից բաղկացած, այն դեպքում, երբ միայն Ադանայում 100 հազարից ավելի հայեր կային:

Ինչո՞վ էր բացատրվում նման անտարբերութիւնը մարտընչող Հաճընի ճակատագրի հանդեպ: Մեր կարծիքով, մի շարք պատճառներից հիմնականներն էին.

1 Անվստահութիւնը ձեռնարկված գործի հաջողութեան հանդեպ.

2 Հուսալքումը և հիասթափութիւնը՝ ֆրանսիական կառավարութեան և զինվորական շրջանների գրաված դիրքից, հատկապէս Սևրի պայմանագրից հետո, որի համաձայն Կիլիկիան մնում էր Թուրքիայի գերիշխանութեան ներքո.

3 Յուրաքանչյուրի ձգտումը առաջին հերթին և գլխավորապէս օգնել իր անմիջական հայրենակիցներին և անտարբերութիւնը մյուս վայրերից սերող հայրենակիցների ճակատագրի նկատմամբ (Զապել Եսայանը գրում է, որ «կամավորները շատ կամայական տրամադրութիւն ունեին. հաճընցիները կուզեին Հաճըն երթալ, գէթ ունցիները՝ Զեյթուն և այլն»<sup>221</sup>):

Այս և մյուս պատճառները խանգարեցին ժամանակին կազմակերպելու և մինչև վերջը հասցնելու Հաճընի օգնութեան գործը, որի հաջողութիւնը, թերևս, հնարավորութիւն տար

220 Նույն տեղում, էջ 302:

221 ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, № 289, թ. 13:



պաշարված հաճընցիներին կամավորական ուժերին միացած  
Հեղբել թշնամու շղթան և ազատվել բնաջնջումից:

Սակայն մեծ դժվարութիւններ կազմված հայ կամավոր-  
ների փոքրաթիվ շոկատն անգամ չկարողացավ Հաճըն մեկնել:  
Օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը, որն այնքան  
սին պատրանքներ ստեղծեց ու շարդարացված ոգևորութիւն  
առաջ բերեց համայն աշխարհի հայութեան մեջ, անսրող կեր-  
պով ազդարարում էր, որ Ֆրանսիան Կիլիկիան «զիջում» է  
Թուրքիային: Եվ Սևրի պայմանագրի անմիջական հետևանք-  
ներից մեկը արդեն մի քանի օր հետո երևան եկավ այն բա-  
նում, որ Ֆրանսիական իշխանութիւնները Կիլիկիայում փորձ  
արեցին ցրելու Հաճընի օգնութեան արշավախմբի պատրաստ  
ուժերը՝ պահանջելով նրանց ուղարկել Միսիսի, Ինջիրլիկի և  
Ախարճայի շրջանները՝ բերքը հավաքելու պատրվակով: Եվ  
եթե այդ հրահանգը չկատարվեց օգոստոսին, ապա սեպտեմ-  
բերի 22-ին, երբ շուրջ 300 հաճընցիներից կազմված կամա-  
վորական խումբը պատրաստվում էր Հաճընին օգնութեան  
հասնել, Ֆրանսիական զորքերը շրջապատում են Ախարճան,  
դինաթափ անում հայ կամավորներին և արտաքսում նրանց  
Կիլիկիայից<sup>222</sup>:

Ահա այսպիսի տխուր վախճան ունեցավ Հաճընին օգնու-  
թեան հասնելու նպատակով առաջ եկած կամավորական շար-  
ժումը՝ կործանման դատապարտված հերոս Հաճընի հույսի  
վերջին ազրյուրը: Եվ քաջարի հաճընցիները, 7-ամսյա դաժան  
կովից հետո, բնկան անհավասար մարտում:

Հոկտեմբերի 15-ին, քեմալական զորքերը անցնում են  
հարձակման բոլոր ուղղութիւններով և հրետանային կրակով  
խորտակելով պաշտպանութեան գծերը, ներխուժում քաղաք:

Մինչև վերջ քաջարի հաճընցիները կովեցին անարգ թըշ-  
նամու դեմ՝ անօրինակ սխրանքներ կատարելով: Գրավելով  
Հաճընը, քեմալական զորքերն ու շեֆենները հրկիզեցին այն և

222 Տե՛ս Ասկրատ Թե՛րզեան, նշվ. աշխ., էջ 392—394, «Նոր Հաճըն»,  
1966, թիվ 11, էջ 303:

գազանաբար ոչնչացրեցին քաղաքի ողջ ազգաբնակչութիւնը՝ վեց հազար հայերի<sup>223</sup>, այդ թվում կանանց ու երեխաներին, ծերերին ու վիրավորներին<sup>224</sup>: Միայն 380 հոգուց բաղկացած մի ջոկատի հաջողվում է ճեղքել թուրքերի պաշարման գիծը և անընդհատ մարտեր մղելով հետապնդող թշնամու դեմ, հասնել Զիհան, իսկ այնուհետև՝ Ադանա<sup>225</sup>:

Այսպես ընկավ հերոսական Հաճընը, ֆրանսիական իմպերիալիստների գիշատիչ ու խարդախ և քեմալական թուրքիայի ազգայնամուլ ու հայատյաց քաղաքականութիւնի զոհը: Ինչպե՞ս են լուսաբանվում Հաճընի դեպքերը պատմագրութիւնի մեջ:

Սովետական թուրքագետներից վերը հիշատակված Ա. Դ. Ժելտյակովը իր հոդվածներից մեկում ուղղակի հիշատակում է այն փաստը, որ «Հաճընի ազգաբնակչութիւնը անխնա սրի քաշվեց քեմալական զորքերի կողմից»<sup>223</sup>, Ն. էֆենդիեան Կիլիկիայի իրադարձութիւններին նվիրված գրքում հարկ չի համարում անգամ նշելու այդ փաստը և

---

223 Մի շարք հեղինակներ Հաճընի ազգաբնակչութիւնի ընդհանուր թիվը, հետևաբար և զոհվածների թիվը, մատնանշում են 8 հազար, ինչը, սակայն, չափազանցութուն է, ստույգ չէ: Հաճընի անկման ժամանակ նահատակվել է 6 հազար մարդ: Այս թիվը բերվում է առավել տեղյակ հաճընցիներին՝ Պետրոս արք. Սարաճյանի, Սոկրատ Թերզյանի և մյուսների կողմից: Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 15, Սոկրատ Թերզեան, նշվ. աշխ., էջ 698. «Նոր հաճըն», 1966, թիվ 10, էջ 266, «Արևելեան մամուլ», 21 մարտի 1920 թ. և այլն:

224 Անգեն ու անօգնական հաճընցիների նկատմամբ քեմալական կանոնավոր զորքերի կողմից գործադրված անմարդկային արարքների մասին են պատմում սպանդից փրկված մի քանի ականատեսները. տես Սոկրատ Թերզեան, նշվ. աշխ., էջ 513—550:

225 Հաճընի անկման օրը՝ հոկտեմբերի 15-ին, թշնամու շղթան ճեղքած հաճընցիների խումբը բաղկացած էր 387 մարտիկներից: Սրանցից 22-ը զոհվում են նահանջի ճանապարհին, իսկ 365 հոգի հոկտեմբերի 29-ին հասնում է Զիհան: Տե՛ս Սոկրատ Թերզեան, նշվ. աշխ., էջ 579, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 142, թ. 15—16:

226 Տե՛ս «Вестник ЛГУ», 1957, № 3, серия истории, языка и литературы, вып. II, էջ 208:



մարքսիստ-պատմաբանի իր վերաբերմունքը ցույց տալու կատարվածի նկատմամբ<sup>227</sup>, իսկ պրոֆ. Ա. Մ. Շամսուտդինովը քստ էություն աղավաղում է իրականությունը, գրելով հետեւյալը. «Մարաշի, Ուրֆայի ու Ալնթապի բնակիչներից հետո ֆրանսիական դավթիչների դեմ պայքարի ելավ նաև Կիլիկիայի մյուս վայրերի բնակչությունը: Տարսուսի, Ադանայի, Պողանթիի, Սսի, Օսմանիեի, Մերսինի, Հանընի շրջակայքում համառ պայքար ծավալվեց»<sup>228</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.): Այսպիսով, ստացվում է, որ Հանընի ազգաբնակչությունը ևս, այսինքն՝ հայերը, պայքարել են ոչ թե քեմալական, այլ ֆրանսիական զորքերի դեմ<sup>229</sup>:

Թուրք պատմաբանների գերակշռող մասը գերադասում է շանդրադառնալ «Հանընի դեպքին», քանի որ, ինչպես խոստովանում էր թուրքական «Ադանա փոսթասը» թերթը տակավին 1920 թ. նոյեմբերի 4-ին, «Հանընի դեպքը աղետալի ձեւով մը եղած է», և այն «աշխարհի ամեն կողմն գեշ արձագանք պիտի տա...»<sup>230</sup>, իսկ այն հեղինակները, ովքեր իրենց զործերում տեղ են հատկացրել Հանընի կռիվներին, նպատակ են հետապնդում քողարկել կամ արգարացնել 6 հազար հանընցիների քստմենի բնաջնջումը՝ մեղքը բարդելով վերջինների վրա: Այսպես, Ալի Սաիպը հանընցիներին անվանում է «չեթեական հրոսակներ», որոնք իբր թուրք ազգաբնակչությանը հալածում ու կեղեքում էին<sup>231</sup>: Նա միաժամանակ գովարանում է Հանընի պաշարումն ու գրավումը անմիջականորեն իրականացրած հանընցիների դահիճ Թուֆան բեյին<sup>232</sup>:

Վերը հիշատակված Ռեջեպ Դալքըրը (Սսի կայազորի

227 Տե՛ս Ի. Յ. Эфендиева, նշվ. աշխ.:

228 Ա. Մ. Шамсутдинов, նշվ. աշխ., էջ 129:

229 Ի դեպ, փաստական անճշտություն է թույլ տվել նաև Ա. Ժելտյակովը գրելով, թե իբր «Հանընում ֆրանսիական կայազոր կար»: Տե՛ս «Вестник ЛГУ», 1957, № 8, вып. 2, էջ 209:

230 Տե՛ս Սոկրատ Թէրզեան, նշվ. աշխ., էջ 619:

231 Ali Saib, op. cit., p. 42.

232 նույն տեղում, էջ 29:

նախկին պետը) ևս իր հուշերում նենգափոխում է Հաճընի իրադարձությունները: Անվերապահորեն արդարացնելով իր իսկ խոստովանություններ 30—40 հազար հաճընցիների տեղահանությունը, հեղինակը պնդում է, որ «պատերազմից հետո նրանք ետ վերադարձան»<sup>233</sup>, լռության մատնելով, այդպիսով, նրանց մեծ մասի ոչնչացումը Սիրիայի անապատներում: Խոսելով 1920 թվականի Հաճընի կռիվների սկզբնավորման մասին, հեղինակը խեղաթյուրում է իրականությունը գրելով, թե «կոմիտեջի գեներալ Անդրանիկի կողմից ուղարկված ձեպեճյանը զինում էր նույնիսկ հայերի կանանց՝ թուրքերին բնացնելու նպատակով»<sup>234</sup>:

Ոչ անհայտ գորավար և քաղաքական գործիչ Ալի Ֆուաթ Զեբեսոյը ևս շարամտորեն խեղաթյուրում է իրականությունը. գրելով թե «Հաճընի հայերը շորս դին այրում-ավերում էին և վայրագ հարձակումներ գործում ժողովրդի վրա»<sup>235</sup>: Հաճընի հայ ազգաբնակչության դեմ քեմալական կանոնավոր զորքերի կողմից «նախատեսված գործողությունների նպատակն էր,— գրում է հեղինակը,— ազատել Սսում և Հաճընում հարձակման ենթարկվող մեր եղբայրներին»<sup>236</sup>: Հեղինակը գոհունակություններ է նշում այն փաստը, որ հաճընցիների «մի փոքր մասը միայն կարողացավ փախչել, իսկ մնացածները ոչնչացվեցին»<sup>237</sup>:

Ինչ վերաբերում է Ֆրանսիական հեղինակներին, նրանք, գրեթե բոլորն էլ, հիշատակելով հանդերձ Հաճընի հերոսական ինքնապաշտպանության մասին, տարբեր փաստարկներով ու պատճառաբանություններով փորձում են արդարացնել Ֆրանսիայի կառավարող շրջանների և զինվորականության քաղաքականությունը, լռության մատնում նրանց մեղսակցությունը կիլիկիահայերի, մասնավորապես հաճընցիների ողբերգական

<sup>233</sup> *Recep Dalkir*, op., cit., p. 106.

<sup>234</sup> *Նույն տեղում*, էջ 148:

<sup>235</sup> *Ali Fuat Cebesoy*, op. cit., p. 418.

<sup>236</sup> *Նույն տեղում*, էջ 296:

<sup>237</sup> *Նույն տեղում*, էջ 418:



ճակատագրում: Այսպես, գնդապետ Բրեմոնը պնդում է, որ «Հաճընին օգնելու ուղղութիւնը բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվել էին գեներալ Դյուֆիոյի կողմից»<sup>238</sup>, թեև հայտնի է, որ Հաճընի պաշարման ամբողջ ժամանակամիջոցում ֆրանսիական մի ինքնաթիռ ընդամենը երկու անգամ թռիչք է կատարել Հաճընի վրա, դրանցից մեկի ժամանակ քաղաքի պաշտպաններին հասցնելով մեկ արկղ փամփուշտ<sup>239</sup>: Պոլ դյու Վեոն ևս շեշտում է, թե իբր «Դյուֆիոն նյութական միջոցներ չունեւր» հաճընցիներին օգնելու համար<sup>240</sup>, իսկ Պիեռ Մըզանը, ընդունելով, որ «Հաճընի պաշտպանութիւնը մեծաքանակ հրետանիով զինված հակառակորդի դեմ պատմութիւն գեղեցիկ էջերից մեկն է», նույնպես մատնանշում է այն փաստը, որ «ֆրանսիացիները կարողացան մեկ ինքնաթիռ ուղարկել Հաճըն»<sup>241</sup>:

\* \* \*

Միանգամայն այլ ձևով զարգացան իրադարձութիւնները Ուրֆայում և Այնթապում, որոնք նույնպես մտնում էին ֆրանսիական գրավման գոտու մեջ:

Ուրֆա քաղաքը 1919 թ. հունվարին գրավվել էր անգլիական զորքերի կողմից, որոնք մնացին այնտեղ մինչև նույն թվականի հոկտեմբերը, երբ նրանք փոխարինվեցին ֆրանսիականով: Ուրֆայի ֆրանսիական կայազորը՝ ալժիրցի հրաձիգների 18-րդ գնդի մի գումարտակը, իր կազմում ունեւր 12 սպա և 461 զինվոր<sup>242</sup>, որոնցից հարյուրը ֆրանսիացիներ էին, մյուսները սենեգալցի և թունիսցի զաղութային զորքեր:

<sup>238</sup> La lettre du général Brémond..., p. 2.

<sup>239</sup> Արկղը շարգուփշուր է լինում և հաճընցիները կարողանում են միայն հրապատիճներն օդազործել նռնակներ պատրաստելու համար:

<sup>240</sup> Paul du Vèou, op. cit., p. 211.

<sup>241</sup> Pierre Redan, op. cit., p. 37.

<sup>242</sup> Paul du Vèou, op. cit., p. 162—163. Ալի Սաիպի տվյալներով ֆրանսիական զորքերի ընդհանուր թիվը Ուրֆայում հասնում էր 560 մարդու: Տե՛ս Ali Saïb, նշվ. աշխ., էջ 52:

Ֆրանսիացիների դեմ դիմադրական շարժումը Ուրֆայում կազմակերպված բնույթ է ընդունում 1919 թ. դեկտեմբերի 29-ից, երբ Ուրֆա է ժամանում սուլթանական կառավարության կողմից քաղաքի ժանդարմական ուժերի պետ նշանակված Ալի Սաիպ բեյը<sup>243</sup>։ Վերջինս, Մուստաֆա Քեմալի կողին հետևելով, անցնում է նրա կողմը և 1920 թ. հունվարի 9-ին ստեղծում Ուրֆայի իրավունքների պաշտպանության ընկերություն, որը գալիս է փոխարինելու մինչ այդ քաղաքում գործող «Զարթոնք» գաղտնի կազմակերպությանը։ Ալի Սաիպը բանտերից ազատում է բոլոր կալանավորներին, այդ թվում քրեական հանցագործներին<sup>244</sup>։ Սկսվում են պատրաստություններ քաղաքը ֆրանսիական զորքերից ազատագրելու համար։ Այդ նպատակով Ալի Սաիպը որոշում է օգտագործել Ուրֆայի շրջակայքում գտնվող քրդական ցեղերին, ինչպես և բուն քաղաքում բնակվող քուրդ աղգաբնակչությանը։ Վերջ հիշված Ուրֆայի իրավունքների պաշտպանության ընկերության ստեղծումից երկու օր առաջ, 1920 թ. հունվարի 7-ին, նա դիմում է քրդական աշիրեթներին «մահմեդական կրոնը և հայրենիքը պաշտպանելու» գաղտնի կոչով։

Ահա այդ կոչը, որն ամբողջությամբ բերված է Ալի Սաիպի հուշերում.

«Ես հաստատում եմ, որ դուք ամբողջովին անտեղյակ եք այն հալածանքներին, որ կիրառում են ֆրանսիացիները Ադանայի վիլայեթում։ Ֆրանսիացիների Ադանա դալուց անմիջապես հետո սկսվեցին ոտնձգությունները կրոնի, պատվի ու ինքնասիրության դեմ։ (Այստեղ ես մանրամասն ծանոթացնում եմ ձեզ այն հալածանքներին ու դաժանություններին, որ գործադրել են ֆրանսիացիները և հայերը Բրեմոնի հրահանգով)։ Այդ նույն հալածանքները մոտ ապագայում կրկնվելու են այստեղ։ Ֆրանսիացիների հրամանատարը արդեն հայտարարել է, որ ինքը վերակազմելու է ժանդարմ-

<sup>243</sup> *All Saib*, op. cit., p. 47.

<sup>244</sup> *Paul du Véou*, op. cit., p. 170.



րիան և ծառայութեան կանչելու կամավորներին: Այդ միջոցառումով նա նպատակ է հետապնդում իր ընտրութեամբ 300 հայերի ներգրավելու ժանդարմերիայի կազմում: Ինչպես Ադանայում, այնպես էլ Կոզանում, ես իմ աչքերով տեսել եմ մահմեդականների, որոնց ականջները կտրել էին և աչքերը հանել: Գալով այդ դժբախտ երկրամասից խորը ցավով լեցուն սրտով, ես տեսնում եմ, որ նույն այդ սարսափները կրկնվելու են, և ես իմ պարտքն եմ համարում նախապաշարացնել ձեզ այդ մասին:

Ֆրանսիական հրամանատարը, առանց տատանվելու, բացեց խոսում է այն քաղաքականության մասին, որ ինքը մտադիր է կիրառելու այս երկրում. «Դրամի միջոցով բրդական քոշվոր ցեղերին մեր կողմը գրավելուց հետո, նրանց առաջնորդները կձերբակալվեն և որևէ պատրվակով կաքսորվեն Ալժիր կամ Թունիս: Եվ այդպիսով կստեղծվեն բրդերից ու հայերից բաղկացած միավորումներ Ֆրանսիական սպաների հրամանատարության ներքո: Վճարելով մահմեդական բարձր հոգևորականությանը և օգտագործելով նրանց կրոնական ղգացմունքները, մենք աստիճանաբար կգրավենք Դիարբեքի, Սըվասի, Խարբերդի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները: Մեր նպատակն է վերջ դնել քոշվորական կյանքին և այդպիսով ծառայություն մատուցել մարդկությանը: Ահա թե ինչու մենք սկսել ենք բրդերին անջատել թուրքերից»:

Յեղապետե՛ր. դուք շատ լավ գիտեք, որ սրանից քառասուն տարի առաջ Ռուսաստանը նույնպես ցանկացավ մեր արևելյան վիլայեթներից Հայաստան ստեղծել: Եվ եթե չլինեին մեր հայրերի քաջությունն ու հավատքը, մենք այլևս այնտեղ չէինք լինի: Ամբողջ աշխարհում միայն ազատ ու անկախ թուրքերն ու բրդերն են պաշտպանում իսլամի կրոնը: Այսօր իսլամն ու հայրենիքը վտանգի մեջ են: Նրանք իրենց հայացքը հատել են դեպի ձեզ՝ հետնորդները Սալահդդին էյուբի, որը հաղթականորեն պաշտպանեց Երուսաղեմը քրիստոնեական աշխարհի դեմ: Մենք ղգում ենք տաքությունը այն ար-

յան, որ թափվել է թշնամու կողմից գրավված մեր հողերում և այն արյունոտ ընդհարումների, որ տեղի են ունեցել Մալաշում՝ հրկու օրվա ընթացքում: Այնթապը պատրաստ է ապստամբվելու, և անհզենները (Անհզե արաբական ցեղը— Ռ. Ս.) շուտով այստեղ կլինեն: Համոզեցեք Հաշիմ բեյին (Անհզե ցեղի առաջնորդին— Ռ. Ս.), և եթե ձեր միջև գոյություն ունի որևէ թյուրիմացություն, թողե՛ք այն ավելի ուշ ժամանակների, միացե՛ք իրար և եկեք միավորվելու: Ֆրանսիացիների դեմ՝ Ուրֆայում: Ուրֆան ձեզ է սպասում: Իմ գաղտնի հրահանգների կիրառումը կապահովի մեր ազատագրումը: Ժամանակն է արդեն, որ դուք աշխարհի առջև ապացուցեք, որ ամենաերևելի ու ամենաաղնիվ ցեղի առաջնորդն եք...

7 հունվարի 1336 թ.

Ալի Սաիպ»<sup>245</sup>:

Ինչի՞ մասին էր վկայում Ալի Սաիպի կողը: Այն մասին, որ քեմալական ղեկավարները որդեգրել էին սուլթանական ազգային քաղաքականության ամենաբնորոշ կողմը՝ թուրքահպատակ ժողովուրդներին իրար դեմ հանելու, փոխադարձատելություն ու թշնամանք սերմանելու ծանոթ մեթոդը<sup>246</sup>:

Ալի Սաիպի այս կողը արձագանք է գտնում քրդական մի քանի ցեղերի մոտ, որոնց առաջնորդները, սակայն, շտապում են Ուրֆա ոչ թե «ազատագրական պայքարին» իրենց մասնակցությունը բերելու նպատակով (ինչպես փորձում են ներկայացնել որոշ հետազոտողներ<sup>247</sup>), այլ, պարզապես, քաղա-

<sup>245</sup> All Saib, op. cit., p. 53—54; նույնը տե՛ս Paul du Vèou, նշվ. աշխ., էջ 351:

<sup>246</sup> Հետագա իրադարձությունները մերկացրին նաև հիշյալ կողում սարունակվող կեղծիքը՝ քրդերի «ազատ ու անկախ» գոյության մասին, երբ քեմալական կառավարութունը արյան մեջ խեղդեց քրդական ապստամբությունները, իսկ թուրքական մեջլիսի երեսփոխան Ալի Սաիպը զլխավորեց Շեյխ Սաիդի ապստամբության ղեկավարների և մասնակիցների հետ հաշվեհարդար տեսնող «Անկախության ատյանը»:

<sup>247</sup> Տե՛ս Н. З. Эфендиева, նշվ. աշխ., էջ 122—123:



քի բրիստոնյա ազգարնակչութիան, գերազանցապես հայերի զեմ բոնութիւններ գործադրելու, թալանին ու կողոսուտին մասնակցելու համար: Եվ եթէ Ուրֆայի հայերը զինված ինքնապաշտպանութիւն չկազմակերպեին, նրանք, անկասկած, նույն բախտին կարժանանային, ինչ որ հարյուր հազարավոր արեմտահայերը՝ Մեծ եղեռնի տարիներին:

Եվ այսպէս, 1920 թ. հունվարի 28-ին, Անեղե ցեղի առաջնորդ Հաշեմը, 600 հեծյալների զուխն անցած, գալիս է Ուրֆա՝ քաղաքի պաշարմանը մասնակցելու համար: Բացի հիշյալ 600 հոգուց, Ուրֆայում սկսված կռիվներին մասնակցում էին հետևյալ քրդական ցեղերը. Միլի՝ 150 մարդ, Բուջակ՝ 150, Բադիլի՝ 250, Դոյերլի՝ 100, Իզոլի՝ 100, Շելխանլի՝ 100, ընդամենը, այսպիսով, մոտ 1500 հոգի<sup>248</sup>.

Փետրվարի 7-ին Ուրֆայի և նրա շրջակայքի ազգային ուժերի հրամանատար Ալի Սաիբը Ուրֆայի ֆրանսիական զբաղման զորքերի հրամանատարին վերջնագիր է ուղարկում՝ 24 ժամվա ընթացքում զորքերը քաղաքից դուրս հանելու պահանջով: Վերջնադրում ասված էր հետևյալը. «Մի ժողովուրդ, որը դարերի ընթացքում ազատ է ապրել և իր տան տերն է եղել, չի կարող հաշտվել զբաղման և ստրկութեան հետ: Մենք այստեղ ենք գտնվում պաշտպանելու և ապահովելու մեր սրբազան իրավունքները խարդախ ու բռնի զբաղման դեմ, որն ավելի ու ավելի է ծանրանում մեր վրա ի խախտումն զինազագարի պայմանների և Վիլսոնի սկզբունքների:

Մենք այլևս անկարող ենք տանելու այն հյուրընկալութիւնը, որից դուք օգտվում եք Ուրֆայում: Մենք վճռականորեն մերժում ենք ձեր կողմից իրականացված զբաղումը, որը հակառակ է կնքված զինազագարին: Եվ եթէ դուք 24 ժամվա ընթացքում չհեռանաք Ուրֆայից, մենք որոշակի միջոցներ կձեռնարկենք, և թափված արյան պատասխանատւութիւնը կընկնի ձեր վրա: Մեր բրիստոնյա հայրենակիցների բոլոր իրավունքները մեր պաշտպանութեան տակ են: Եթէ դուք հա-

<sup>248</sup> Ali Saïb, op. cit., p. 137; Paul du Vêou, op. cit., p. 172—173.

մաձայնվեք թողնել Ուրֆան, մենք հրաշխավորում ենք ձեր ազատ մեկնումը մինչև մեր սահմանների այն կողմը»<sup>249</sup>։

Հիշյալ վերջնագիրը ֆրանսիական հրամանատարուհի-անը հասցնելուց մեկ ժամ հետո թուրքերեն լեզվով գրված հետևյալ պատասխանն է ստացվում.

«Ուրֆայի շրջակայքում գտնվող բոլոր ցեղերին

Ես ստացա ձեր նամակը։ Մենք պատերազմական վիճակի մեջ չենք գտնվում ձեզ հետ։ Ձեր հողից հեռանալու հրամանը կախված է միմիայն գեներալ Գուրոյի համաձայնությունից։ Ես նրան ուղարկեցի ձեր պահանջը։ Մեր միջև գոյութուն ունեցող բարեկամական կապերի խզմանը սպառնացող միջադեպերին տեղի չտալու համար ես խնդրում եմ սպասել նրա պատասխանը գալուն։ Ես հաստատ հույս եմ տածում, որ այդ պատասխանը չի հապաղի մեզ հասնելու։

7 փետրվարի 1920 թ.

Ուրֆայի ֆրանսիական քաղաքական կառավարիչ Սաժու»<sup>250</sup>

Ֆրանսիական կառավարչի այս նամակից հետո Ալի Սաիրը առավել մեծ եռանդով է նախապատրաստում հարձակումը ֆրանսիացիների դիրքերի վրա։ Ալի Սաիրի գլխավորած ազգային ուժերի համար այդ պահին մեծ նշանակություն ունեցավ նաև լեռնային մի թնդանոթի և մի զնդացրի ստացումը Սեվերեկից<sup>251</sup>։

Փետրվարի 9-ին թուրքական ուժերը ընդհուպ մոտենում են ֆրանսիական դիրքերին և կրակ բացում նրանց վրա։ Սկսվում են խրամատային կռիվներ, որոնք տևում են շուրջ երկու ամիս՝ մինչև ֆրանսիական զորքերի նահանջը Ուրֆայից։ Քաղաքի ֆրանսիական կայազորը, այսպիսով, ամբողջ-

<sup>249</sup> *Alli Saïb*, op. cit., p. 74, նույնը տե՛ս *Paul du Véoü*, նշված աշխ., էջ 356.

<sup>250</sup> *Alli Saïb*, op. cit., p. 75.

<sup>251</sup> *Alli Fuat Cebesoy*, *Millî mücadele hatıraları*, s. 296.



շովին կտրվում է արտաքին աշխարհից այն պահին, երբ պարենի պաշարները գրեթե սպառվել էին: Դրան ավելացավ Մարաշից ֆրանսիական զորքերի անսպասելի նահանջի լուրը, որը, ինչ խոսք, մեծ բարոյալքում առաջ բերեց:

Փետրվարի 13-ին Ալի Սաիբը Ուրֆայի ֆրանսիական ուժերի հրամանատար Օթեին նոր նամակ է ուղարկում և տեղեկացնելով այն մասին, որ ֆրանսիական զորքերը պարտություն են կրել և պարպել Մարաշը, ինչպես նաև շրջապատվել ու անձնատուր են եղել Բիրեջիկում, պահանջում է անհապաղ հանձնել բոլոր զենքերն ու ռազմամթերքը, և այդ դեպքում ֆրանսիական ուժերը ապահովությամբ կառաջնորդվեն իրենց ցանկացած վայրը<sup>252</sup>: Պատասխան շտանալով, Ալի Սաիբը հրամայում է հրետանային կրակ բացել ֆրանսիական զորքերի վրա, որոնք, քաշվելով իրենց նախկին դիրքերից, համախմբվել էին հիվանդանոցի շենքում և նրա շրջակայքում: Փետրվարի 28-ին Կիլիկիայի ֆրանսիական ուժերի հրամանատար զենքերալ Դյուֆրոն մի սավառնակ է ուղարկում Ուրֆա, որը, թուշելով ֆրանսիական դիրքերի վրայով, թռուցիկներ է նետում, որոնցում ասված էր. «Ձեր վատ օրերը իրենց վախճանին են մոտենում: Շատ շուտով դուք օգնություն և մատակարարում կստանաք»<sup>253</sup>:

Ինչպիսի՞ դիրք էր գրավել ծավալվող իրադարձությունների նկատմամբ քաղաքի հայ ազգաբնակչությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ուրֆայի հայերի թիվը հասնում էր շուրջ 30 հազարի<sup>254</sup>, 1915 թ. ահավոր եղեռնի ժամանակ նրանք, ինչպես հայտնի է, թանկ վաճառեցին իրենց կյանքը, հերոսական դիմադրություն ցույց տալով թնդանոթներով զինված թուրքական կանոնավոր զորքերին, սակայն անհավասար կռվում ոչնչացան՝ սրի քաշվեցին կամ աքսորվեցին Տեր-Ձորի անապատները:

<sup>252</sup> *All Saib*, op. cit., p. 93.

<sup>253</sup> *Paul du Vélou*, op. cit., p. 173.

<sup>254</sup> Լոսթեր, *Ուրֆայի հերոսամարտը*, էջ 231:

Պատերազմի ավարտից հետո վերապրող ուրֆացիների թիվը հասնում էր ընդամենը 6 հազարի: Նրանց ճնշող մեծամասնությունը 1919 թվականի ընթացքում տարբեր տեղերից գալիս հասնում է իր հարազատ քաղաքը: 1919 թ. վերջին Ուրֆայի հայաբնակ թաղամասը, ամերիկյան նպաստամատույցում գտնվող 800 հայ որբերի հետ միասին, հաշվում էր 5—6 հազար մարդ<sup>255</sup>: Ուրֆայի մութեսարիֆ Ալի Ռիզա բեյը, որը քաղաքում էր մնացել ներքին ուժերը ֆրանսիացիների դեմ կազմակերպելու համար, և Ալի Սաիբը զանազան գրուբյունների, նամակների և այլ միջոցներով փորձում էին հավաստիացնել հայերին, որ նրանք կարող են միանգամայն ապահով զգալ իրենց, սակայն Ուրֆայի հայությունը 1915 թ. դեպքերից գիտեր, թե ինչ արժեք ունեն թուրքական խոստումները: 1919 թ. վերջից հայերը սկսում են զինվել. 500 երիտասարդներ կանոնավոր կերպով զինվորական վարժություններ էին անում, ամրացնում հայկական թաղամասերը, գիշեր-ցերեկ հսկում դիրքերը<sup>256</sup>: Եվ ուրֆացի հայերի զինված յաշ շեզոբությունը, որը, ինչ խոսք, դուր չէր գալիս ինչպես ֆրանսիացիներին, այնպես էլ թուրքերին, վճռական դեր խաղաց նոր բռնություններից ու կոտորածներից զերծ մնալու գործում: 1920 թ. մարտ ամսվա ընթացքում Դյուֆիոյի խոստացած օգնությունը այդպես էլ չստացվեց և սննդամթերքի պակասից հյուծված ֆրանսիական զորքը, այլևս անկարող գրտնրվելով դիմանալ տանջալից պաշարմանը, ստիպված է լինում հեռանալ Ուրֆայից: Ապրիլի 8-ին ֆրանսիական հրամանատարությունը համաձայնվում է զորքերը քաղաքից դուրս բերելու, առաջ քաշելով նահանջի հետևյալ պայմանները.

1 Հայերի կյանքի ապահովում.

2 Ամերիկացիների կյանքի և ունեցվածքի ապահովում.

<sup>255</sup> Paul du Véou, op. cit., p. 166; Արամ Սահակեան, նշվ. աշխ., էջ 1217.

<sup>256</sup> Նույն տեղում, էջ 1216.



3. Ուրֆայում զոհված ֆրանսիական զինվորների գերեզմանների հարգում.

4. Տրամադրել 60 ուղտ և 25 ջորի՝ գումակը Զերաբլուս տեղափոխելու համար.

5. Վերադարձնել 1920 թ. փետրվարի 17-ի համաձայնությունից հետո գերի վերցված ֆրանսիական զինվորներին.

6. Ուրֆայի 10 երեխիներ պետք է ուղեկցեն ֆրանսիացիներին մինչև Զերաբլուս<sup>257</sup>:

Թուրքական կողմը սկզբունքորեն համաձայնվում է այս պայմաններին, և նույն օրը նախնական զինադադար է կընքվում, որը հաստատվում է ապրիլի 9-ին՝ Ալի Սաիրի և Օժեի հանդիպման ժամանակ:

Հաջորդ օրը՝ ապրիլի 10-ին, ֆրանսիական զորքերը նահանջում են քաղաքից դեպի Տել-Աբիադի իրենց բանակատեղին, սակայն ճանապարհին, Ուրֆայից ընդամենը 10 կմ. հեռավորության վրա ծուղակն են ընկնում, հարձակման ենթարկվում իրենց ժամանելուն սպասող քրդական աշիրեթների և շրջակա գյուղերի զինված շեթների կողմից: Անհավասար և անսպասելի կռիվում ֆրանսիական ջոկատը զլխովին ոչնչանում է: Մոտ 500 հոգուց փրկվում է ընդամենը մեկ սպա և մի բանի զինվոր<sup>258</sup>:

Ինչ վերաբերում է Ուրֆայի հայ ազգաբնակչության հետագա ճակատագրին, ապա, ֆրանսիական զորքերի հեռանալուց հետո, որոշ ժամանակ, տեղական իշխանությունները նրանց հանդիստ էին թողել, սակայն 1921 թ. սկզբներից քաղաքականությունը փոխվում է. թուրքերը սկսում են հետապնդել հայերին, բռնություն գործադրել, նենգ սպանություններ կազմակերպել, ի վերջո դրդելով նրանց թողնել իրենց պապենական օջախները և հեռանալ հարազատ քաղաքից: 1923 թ. հունվար-մայիս ամիսների ընթացքում Ուրֆայի հայությունը մի բանի քարավաններով փոխադրվում է Հալեպ և

<sup>257</sup> *Alli Saib*, op. cit., p. 173—174.

<sup>258</sup> *E. Brémond*, op. cit., p. 43.

շրջանները<sup>259</sup>։ Հինավուրց Եղեասան վերջին անգամ դատարկվում է հայութունից։

Ի տարբերութուն Ուրֆայի, այլ վախճան ունեցավ ազատագրական պայքարը Այնթապում։ Այնթապ քաղաքը պատերազմից հետո մեկ տարի (1918 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1919 թ. նոյեմբերի 11-ը) անգլիական գրավման շրջան ապրեց։ Այս ժամանակամիջոցում մաս առ մաս իրենց հարազատ քաղաքը վերագարձան 1915 թ. Միջագետքի անապատներն աքսորված այնթապցի հայերի բեկորները, մոտ 10—12 հազար հոգի, ինչպես նաև մոտ 8 հազար հայ գաղթականներ, գլխավորապես Սեբաստիայից։ 1919 թ. վերջին Այնթապի ազգաբնակչության թիվը անցնում էր 40 հազարից<sup>260</sup>, որից մոտ 18 հազարը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր և մի քանի հարյուր քրդեր ու շերքեզներ<sup>261</sup>։

1919 թ. նոյեմբերի 5-ին ֆրանսիական մի սպա, մի քանի զինվորների գլուխն անցած, մտնում է Այնթապ, իսկ մի քանի օր հետո քաղաք է ժամանում 200 հոգուց բաղկացած ֆրանսիական ջոկատը։ Նոյեմբերի 11-ին անգլիական ուժերի հրամանատար հաղարապետ Միլզը քաղաքը հանձնում է գընդապետ Ֆլի Սենտ Մարիին<sup>262</sup>։ Նոյեմբերի 23-ին քաղաքի թուրք ազգաբնակչությունը ֆրանսիացիների դեմ ուղղված բողոքի ցույց է կազմակերպում, իսկ Մուստաֆա Քեմալի կողմից Այնթապի շրջանի ազգային ուժերի հրամանատար նշանակված Քըլըջ Ալի բեյը բողոքի հեռագիր է ուղարկում Ադանայում նստած ֆրանսիական վերին հրամանատարութայանը<sup>263</sup>։ Միաժամանակ Քըլըջ Ալին, որն աչքի էր ընկել Մարաշի կռիվները ղեկավարելիս, շրջում է մերձակա գյուղերը՝

259 Տե՛ս Արամ Սաֆակեան, նշվ. աշխ., էջ 1248։

260 Ֆրանսիական գնդապետ Աբադիի տվյալներով, քաղաքն այդ ժամանակ ուներ 55 հազար բնակիչ։ Տե՛ս Abadi, նշվ. աշխ., էջ 11։

261 Kevoork A. Sarafian, A Briefer History of Aintab, p. 11.

262 Ա. Կեսար, Այնթապի գոյամարտը, էջ 35—37։

263 Ahmet Bedevi Kuran, op. cit., p. 644—645.



շեթեններում մարդկանց հավաքագրելու համար: Տարբեր ճանապարհներով զենք էր ձեռք բերում և զինվում նաև Այնթապի թուրք ազգաբնակչությունը: Այնթապի հայերը, տեսնելով, որ պատերազմական այդ նախապատրաստությունները հավասարապես ուղղված են իրենց դեմ, սկսում են լուրջ մտահոգվել ինքնապաշտպանական միջոցների մասին: Վերահաս աղետին դիմակայելու նրանց վճռականությունը առավել հաստատուն դարձավ Մարաշի դեպքերից հետո, երբ «թուրքերը սկսած էին սպառնալ մեզ հայտնի և համարձակ պոլսոթով, զրպարտություններով, խուզարկություններով և ջարդի վախ ազդելու համար ցույցեր ընելով»<sup>264</sup>, 1920 թ. հունվարի վերջին ստեղծվում է ինքնապաշտպանության կենտրոնական մարմին՝ փորձված զինվորական Ատուր Լևոնյանի գլխավորությամբ: Հայկական քաղաքամասը բաժանվում է շրջանների, հրամանատարներ են նշանակվում, հաշվառման են առնվում հայ ազգաբնակչության մոտ եղած բոլոր զենքերը, դիրքեր ու պահակներ են կարգվում, ստեղծվում են Կարմիր հաշ, մատակարարման և այլ մարմիններ, ձեռնարկվում է ռումբերի պատրաստություն<sup>265</sup>: «Հայ կանայք ու երեխաները աշխատում էին տղամարդկանց հետ միասին, փոխադրում անհրաժեշտ շինանյութերը (քար, գերաններ և այլն)»<sup>266</sup>, — գրում է Աբադին:

Փետրվարի 21-ին Այնթապի թուրք երևելիները հավաքվում են կառավարչական շենքում, 25 հայերի էլ հրավիրում են մասնակցել, համերաշխություն են առաջարկում հետևյալ պայմաններով. «առաջին. հայերը որևէ դիմում ուղղակի թուրք կառավարութեան ընեն, նույնիսկ եթե հայ մը անարգվի կամ վիրավորվի թուրքի մը կողմեն. երկրորդ՝ շուկա պիտի իջնեն և իրենց տունները պիտի դառնան»:

264 Վ. Լ. Խուպչուրեան, նշվ. աշխ., էջ 208 (Ներսես քահանա Թովուզճյանի նամակը Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ին):

265 Ա. Կեսար, նշվ. աշխ., էջ 42—45:

266 Abadi, op. cit., p. 43.

Հայ ներկայացուցիչները, իրենց հերթին, հետևյալ առաջարկներով են հանդես գալիս. 1. Թուրքերը ղինյալ շախտի պատին. 2. Պոլսոյ վերցնեն<sup>267</sup>:

Առաջարկները երկուստեք ընդունվում են, սակայն տեղն ու տեղը խախտվում թուրքերի կողմից. Մարաշի հաջողութունից ոգևորված, նրանք արդեն շեն թաքցնում իրենց թըշնամանքը, սաստկացնում են բոյկոտը, ծեծում առաջին անգամ շուկա իշած մի հայի, մեկ ուրիշի սպանում քաղաքի մեջ: Մարտի սկզբներին սպանվում են Այնթապի շրջակայքում գտնվող 17 սասունցի ջրաղացպանները և այլն: «Այս բոլորը,— գրում էր Ներսես քահանա Թավուզճյանը,— կըլլային հայերը ահաբեկելու համար, որպեսզի ֆրանսիական պաշտպանութենեն ձեռնապահ ըլլան և թուրքերուն հետ միանան թուրք-ֆրանսիական ընդհարումի միջոցին: Թուրքերը այլևս համարձակորեն սկսան ըսել, թե պիտի կռիւն ֆրանսիացիին դեմ, պիտի վճարեն, և հայերն ալ պիտի ճգմեն ու բնաջնջեն, նկատելով, որ հայերը ֆրանսոֆիլ են»<sup>268</sup>:

Քաղաքի փոքրաթիւ ֆրանսիական կայազորը ուժեղացնելու համար 1920 թ. մարտի 26-ին Քիլիսից Այնթապ է ճանապարհւում գեներալ Անդրեայի գլխավորած զորամասը, բաղկացած 3 հետևակային գնդից և 200 հեծյալներից, իր կազմում ունենալով նաև 4 տանկ<sup>269</sup>, ճանապարհին կռիւներ մղելով թուրքական շեթենների հետ, Անդրեան մարտի 28-ին մտնում է Այնթապ<sup>270</sup>, սակայն մի քանի օր հետո թողնում է քաղաքը և շարժվում Քիլիսի ուղղությամբ՝ իր հետ վերցնելով Այնթապում գտնվող ֆրանսիական ուժերի մի մասին և ծանր թնդանոթները: Թուրքերը կարծես դրան էին սպասում: «Ապրիլ 1 առտու ժամը 8-ին,— գրում է Թավուզճյանը,— քաղաքին երկու կողմի (հյուսիս և հարավ-արևելյան) բոլոր-

267 Վ. Լ. Խուպէւէրեան, նշվ. աշխ., էջ 210:

268 Նույն տեղում, էջ 210—211:

269 S. Üzel, Ayntap savaşının iç yüzü, s. 14.

270 Նույն տեղում, էջ 18:



ներու վրային տրված ազգանշանով թուրքերը կազմակերպված ուլժով և ռազմական սխաթմամբ սկսան հարձակվիլ հայ թաղերու վրա»<sup>271</sup>: Դիրքերի վրա հակող հայ մարտիկներին, սակայն, հաջողվում է, շատ արագ կերպով փողոցների անցքերում պատնեշներ բարձրացնել և, այդպիսով, պաշտպանական ամուր գիծ ստեղծել:

«Այնթապի հայերուն վերաբերմունքը, ոգին, այս փորձանք օրերուն, վեր էր ամեն գովեստե,— գրում է դեպքերի ականատես, ամերիկյան Կոլեջի նախագահ Ջոն Մերիլը: Ապրիլ 1-ը նախորդող երեք ամիսներուն հայերը որոշակի տեսան, թե իրենց ապահովության հույսը կկայանար թուրքերու հետ հաշտարար կենցաղ մը պահելուն մեջ: Այս քաղաքականությունն ալ որդեգրվեցավ հայ ղեկավարներու կողմե, հակառակ անոր, որ վտանգի սաղմեր կպարունակեր. այնպես որ, երբ հանկարծական հարձակում տեղի ունեցավ, հայերն իրավացիորեն կրցան ըսել, թե իրենց վրա հարձակում գործված է առանց պատճառի և իրենց ըրածը միմիայն պարզ ինքնապաշտպանություն է, առանց վրեժխնդրական ոգիի»<sup>272</sup>: Հեղինակը միաժամանակ ընդգծում է այնթապցի հայերի դիմադրական կորովն ու կազմակերպվածությունը. «Իրենց պաշտպանության ընթացքում հայերը ցուցահանեցին մեծ կարողություններ, հնարամտություն, ինչպես նաև քաջասրտություն: Վառող շունեին, կերպերը գտան շինելու. ումբ շունեին, բայց ձուկեցին. փամփուշտ շունեին, բայց արտադրեցին: Նույնիսկ երկու թնդանոթ ձուկեցին»<sup>273</sup>:

Նրկու շաբաթ անընդհատ, մինչև ապրիլի 16—17-ը, հայերը միայնակ հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական շեթներին («Ֆրանսիացիք պատերազմի առաջին օրերուն պարզ հանդիսատեսի դեր կկատարեին»<sup>274</sup>,— գրում

271 Վ. Լ. Խուպէլեբեան, նշվ. աշխ., էջ 212—213:

272 Տե՛ս Ա. Կեսաբ, նշվ. աշխ., էջ 66—67:

273 Նույն տեղում, էջ 67:

274 Գլուբգ Ա. Սարաֆեան, Պատմութիւն Անթէպի հայոց, Բ. հատոր»

է Գևորգ Սարաֆյանը), որոնց այնպես էլ չհաջողվեց ճեղք բացել դիրքերում և ներխուժել հայկական թաղամասերը<sup>275</sup>: Ապրիլի 16—17-ին Այնթապի արևելյան ու արևմտյան կողմերում երևացին ֆրանսիական նոր ուժեր (գնդապետ Նորմանի հրամանատարութեամբ), որոնք պաշարեցին թուրքական թաղամասը և մյուսներիֆից պահանջեցին քաղաքից հեռացնել շեֆենբերը: Վերջինս մերժում է ֆրանսիական հրամանատարութեան այդ պահանջը: Մի քանի օր հետո, ապրիլի 28-ին, գնդապետ Նորմանի զորամասը հեռանում է քաղաքից դեպի Ջերաբլուս, երկրորդ անգամ հայկական թաղամասը թողնելով թուրքական ուժերի դեմ-հանդիման: Մյուս օրը՝ ապրիլի 29-ին, Քլլըջ Ալիին փոխարինած Արսլան-բեյը դիմում է հայերին սպառնալից մի նամակով, որտեղ ասված էր. «Դուք, օսմանյան հպատակներ, զենք կը քաշեք ձեր կառավարութեան դեմ. պետք է զիտնաք, որ ձեր այս արարքը անպատիժ պիտի շմնա»: Նամակում հայերից պահանջվում էր 24 ժամվա ընթացքում զենքերը հանձնել և հպատակութուն հայտնել, «հակառակ պարագային, — ասվում էր վերջում, — մենք պատասխանատու չենք թափվելիք անմեղ արյան համար»<sup>276</sup>: Թուրքական ղեկավարութունը նամակներ է ուղարկում նաև ֆրանսիացիներին ու ամերիկացիներին: Այս վերջիններն իրենց պատասխան նամակում մատնանշում են, որ «հայեր ձեզի հանդեպ թշնամութուն մը չունին. անոնց ըրածը պարզ ինքնապաշտպանութուն մըն է, որ նվիրական պարտականութուն մըն է»<sup>277</sup>:

Պետք է ասել, որ Այնթապի թուրք բնակիչների մեջ քիչ

275 Հարկ է նշել, որ սովետական որոշ թուրքագետներ, թուրք հեղինակների ազդեցության տակ, ապրիլի 1-ի հարձակումը փորձում են ներկայացնել, որպես բացառապես ֆրանսիացիների դեմ ուղղված մի ապստամբութուն՝ լուսթյան մատենելով նրա հակահայկական ուղղվածութունը: Տե՛ս А. М. Шамсутдинов, նշվ. աշխ., էջ 128—129., Н. З. Эфендиева, նշվ. աշխ., էջ 95—96:

276 Գևորգ Ա. Սարաֆյան, նշվ. աշխ., էջ 99:

277 Նույն տեղում, էջ 100:



չէին այնպիսիները, ովքեր սկսում էին գիտակցել, որ հայերը ստիպված են եղել ներքաշվել այդ պայքարի մեջ: Ականատեսներից մեկը պատմում է, որ թուրքական և հայկական թաղամասերը իրարից բաժանող պատնեշների վրա կարելի էր հետևյալ բովանդակության խոսակցություններ լսել.

— Քաղաքացի, անունդ ի՞նչ է.

— Հարություն, իսկ ձերը.

— Մուհամմեդ.

— Մուհամմեդ, ես քեզի բան մը ըսեմ. դուք, մանավանդ գյուղացիներդ, բնավ խելք չունիք. ձեր սպաները զեղխությամբ կուտեն, կխմեն, կգինովնան, իսկ ձեզի պես թշվառականները մեր դեմ կղրկեն, որպեսզի շան սատակ ըլլաք.

— Հիրավի, շատ ճիշտ կը խոսիք. մենք ի՞նչ վեճ ունեինք, ձեզի հետ եղբոր պես կապրեինք, անիծյալ ըլլա այն, որ մեզ այս փորձանքին մեջ ձգեց<sup>278</sup>:

Մենք այս երկխոսությունը մեջ բերեցինք նաև այն պատճառով, որ Այնթապի դեպքերին նվիրված իրենց հուշերում թուրք հեղինակները շրջանցում, լուսթյան են մատնում նման և սոցիալական երանգ ունեցող ուրիշ շատ փաստեր, այդ թվում թուրք ազգաբնակչության ստորին խավերի դժգոհությունը քաղաքի թուրք ունևորների ու հարուստների գրաված հարմարվողական դիրքից, ֆրանսիացիների դեմ պատերազմը դադարեցնելու, նրանց հետ համաձայնության գալու փորձերից, որոնք բացահայտորեն երևան եկան թուրքական թաղամասի պաշարման ծանր ամիսներին:

Ի դեպ, թուրք հեղինակները չեն թաքցնում, որ քեմալական գործիչները հաճախ լուրջ դժվարությունների էին հանդիպում գյուղացիական զանգվածներին շեթենների մեջ ներգրավելիս: Այսպես, Այնթապի կռիվների մասնակից Յուզելը իր հուշերում խոստովանում է, որ Քըլըջ Ալին երկար զրույցներ էր ունենում շրջակա գյուղերի բնակիչների հետ, համոզելով նրանց մասնակցել ազգայնական շարժմանը, հաճախ սպառ-

278 Գեորգ Ա. Սարաֆեան, նշվ. աշխ., էջ 113—114:

նում էր, խոստումներ տալիս և այլն<sup>279</sup>։ Իսկ թե ի՞նչ խոստումներ էին տրվում շեթեններում հավաքագրվողներին, այդ մասին հաճախ խոստովանում էին հենց իրենք, հայկական թաղամասը պաշարած շեթեականները, ասելով, թե իրենք եկել են «գյավուր ջարդելու, նրանց ինչքն ու պատիվը բռնաբարելու» նպատակով։ «Ազդիյամանեն, Մալաթիայեն, Պեհեսնիեն, Ուրֆայեն, Մարաշեն, Քիլիսեն և շրջականերեն թուրքեր, քրդեր, շերքեզներ, թյուրքմեններ և ամեն տեսակ աշիրեթներ եկեր էին, — գրում է ականատեսներից մեկը, — բայց ասոնք քանի մը օր սպասելի վերջ, տեսնելով, որ գյավուրը զիրենք զենքով կը հյուրընկալեր, կձգեին և կը փախչեին»<sup>280</sup>։

Հայերը, իրենց հերթին, Այնթապի կոիլիների ընթացքում եկան այն գիտակցության, որ Ֆրանսիայի, ինչպես և իմպերիալիստական ամեն մի տերության, քաղաքականությունը ըստ էության ուխտադրուժ ու նենգ քաղաքականություն է։ «Այնթապի հայերը սկսան ըմբռնել ֆրանսիացիին մտայնությունը, — գրում է դեպքերի մասնակիցը։ — Կրնամ ըսել, թե այս կոլիին ամենամեծ օգուտը եղավ Այնթապի հայության աչքը քանալուն։ Ամենքն ալ համոզվեցան, որ ոչ մեկ հիլոպացի իր մասին հոգ չէր ըներ, օտարը միշտ օտար էր, ամեն ազդ ինքնիրեն համար կաշխատեր, և իր անկախության համար ուրիշ ազգի մը վրա հույս դնել տխմարություն էր»<sup>281</sup>։

Առանձնապես մեծ հիասթափություն ու բարոյալքում առաջ բերեց այնթապցի հայերի (ինչպես և ողջ կիլիկիահայության) մեջ 1920 թ. մայիսի 30-ին կնքված ֆրանս-քեմալական 20-օրյա զինադադարը (որը ֆրանսիական հրամանատարությունը աշխատում էր գաղտնի պահել հայերից), որի համաձայն ֆրանսիական զորքերը պարպելու էին նաև Այնթապ քաղաքը։ Ծիշտ է, զինադադարի պայմանները չկատարվեցին ո՛չ ֆրանսիացիների, ոչ էլ քեմալականների կողմից,

<sup>279</sup> S. Üzel, op. cit., p. 20—22.

<sup>280</sup> Գէորգ Ա. Սարաֆյան, նշվ. աշխ., էջ 127։

<sup>281</sup> Նույն տեղում, էջ 124։



սակայն Այնթապի հայ բնակչութիւնը եկավ այն համոզման, որ ֆրանսիական զորքերը ցանկացած պահին կլքեն հայերին և կհեռանան Կիլիկիայից, հենց որ Ֆրանսիայի շահերին ձեռնտու պայմաններ առաջարկվեն թուրքական կողմից: Մայիսի 30-ի զինադադարը, ինչպես նախորդ զլխում ցույց տրվեց, նպաստեց ազգայնական ուժերի համախմբմանը և հետագա պայքարի հաջող կազմակերպմանը նրանց կողմից: Զինադադարի ընթացքում Այնթապի թուրք իշխանութիւնները նոր փորձեր արեցին սիրաշահել հայերին, նրանց ֆրանսիացիների դեմ դուրս բերելու նպատակով: Հունիսի 13-ին Այնթապի մյուսթեսարիֆը «հավաստիացնում» էր հայերին, որ «թուրքերն այս անգամ անկեղծ են, պետք է հավատալ իրենց և իբրև միևնույն հայրենիքի զավակներ՝ համագործակցութեամբ պաշտպանել հայրենիքը օտար թշնամիին դեմ»<sup>282</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Թուրք ազգայնական ղեկավարների նման կոչերը, սակայն, շատ հեռու էին անկեղծ լինելուց, դրանք պարզապես տակտիկական նկատառումներով արվող սին հայտարարութիւններ էին, որոնք նպատակ էին հետապնդում հայերին դուրս բերել զինված շեղբութեան վիճակից և դրդել միանալու իրենց՝ ընդդեմ ֆրանսիացիների: Իսկ իրականում, նույն մյուսթեսարիֆի ավելի ուշ արված հայտարարութիւնները վկայում էին այն մասին, որ քեմալական ազգայնական ղեկավարների վերաբերմունքը հանդեպ հայերը ըստ էութեան ոչնչով չէր տարբերվում երիտթուրքական ազգայնամուլների վարած գծից: Այսպես, գեներալ Անդրեային հասցեագրված սեպտեմբերի 24-ի թվակիր նամակում Այնթապի ազգայնական ուժերի ղեկավար Յողդեմիրը և մյուսթեսարիֆը ֆրանսիական կառավարողներին մեղադրում էին այն բանում, որ նրանք «կաշխատին Թուրքիան ենթարկել հայերու լուծին», որոնք «քուրֆերուն դաճիքը եղած են...»<sup>283</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

<sup>282</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>283</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 207:

Նման պայմաններում, հասկանալի է, հայ ազգաբնակչությունը չէր կարող վստահել թուրքական «հավաստիացուններին» և բացել իր դիրքերը ազգայնական ուժերի առաջ: Հուլիսի 28-ին, թուրք-ֆրանսիական կռիվների վերսկսման նախօրյակին, Այնթապի հայության ներկայացուցիչների ժողովը թուրքական կողմին հանձնում է մի խոստումնագիր, որտեղ ասված էր. «Մենք չեզոք ենք. եթե մեր վրա հարձակում չգործվի ու առիթ չտրվի, մենք երբեք չպիտի կրակենք թուրքերու վրա և երբեք չպիտի միանանք ֆրանսիացիներու հետ: Եթե պատերազմը վերսկսի, հյուսիսային ու հարավային պողոտաները (Սու Պուրճա, Ագեուլ և Փաշա Սոգաղը) բաց կը ձգենք, դինվորական փոխադրութեանց համար, իսկ կեղրոնական ճամբան (Պալըզը էպլահան) բաց կը մնա միմիայն անդեններու համար»<sup>284</sup>:

1920 թ. հունիսին Այնթապի ու Ադանայի ճակատի հրամանատար նշանակված իթթիհատական նախկին գործիչ, գլխավոր շտաբի գնդապետ Սալյահադդին Ադիլ բեյը հուլիսի 26-ին գալիս է Այնթապ ֆրանսիական ուժերի դեմ հարձակում նախապատրաստելու համար<sup>285</sup>: Հուլիսի 29-ին թուրքական զորքերը թնդանոթային առաջին հարվածն են արձակում ֆրանսիական դիրքերի վրա: Կռիվը վերսկսվում է: Նույն օրը Այնթապի ուղղությամբ սկսում է շարժվել Անդրեայի հինգ հազարանոց զորասյունը<sup>286</sup>, որը օգոստոսի 9-ին ժամանում և պաշարման մեջ է վերցնում թուրքական քաղաքամասը, կտրելով այն շրջակայքում տեղաբաշխված ջոկատներից: Ֆրանսիական այս ուժերին թուրքերը հակադրել էին, բացի ազգային ուժերից, 1500 հոգուց բաղկացած մի ջոկատ, ինչպես նշում է Զեբեսոյը, «5-րդ և 9-րդ տկար դիվիզիաների մնացորդները»<sup>287</sup>: Այս փոխադարձ ոմբակոծության ժամանակ քաղաքի հայությունը մնացել էր երկու կրակի միջև: Եվ

<sup>284</sup> Ա. Կեսար, նշվ. աշխ., էջ 148:

<sup>285</sup> Ahmet Bedevi Kuran, op. cit., p. 645.

<sup>286</sup> Paul du Védou, op. cit., p. 265—266.

<sup>287</sup> Ali Fuat Cebesoy, Millî mücadele hatıraları, s. 419.



նրանց մի մասը, մոտ 5 հազար մարդ, հիմնականում ոչ-այն-  
թապցի հայերը, ստիպված են լինում գաղթել «ձանճրացած  
կոփվներեն և քաղաքական ու տնտեսական անապահովու-  
թեանն»<sup>288</sup>,

1920 թ. նոյեմբերի 20-ին ֆրանսիական ուժերը նոր  
համալրում են ստանում. Ադանայից Այնթապ է հասնում  
զնդապետ Գուրոյի զորամասը՝ 13 հետևակային գումարտակ,  
11 մարտկոց, մեկ և կես հեծելազորային գունդ, սավառնակ-  
ների մի էսկադրիլիա, ունենալով իր հետ անթել հեռախոսի  
բաղմամբիլ ապարատներ<sup>289</sup>: Թուրքական թաղամասերի պա-  
շարումն ավելի է սաստկանում. պաշարվածներին այլևս ոչ  
մի օգնություն դրսից չի հաջողվում ստանալ: Սկսվում է ահա-  
վոր սով: 1921 թ. հունվարի 7-ին Սալյահադդին Ադիլ բեյին  
ուղղված մի գրության մեջ ասված էր. «Յուրաքանչյուր շնչին  
50 դիրհեմ<sup>290</sup>, զինվորներին՝ 300 գրամ հաց է տրվում: Եթե  
այսպես շարունակվի, ընդամենը 5 օրվա պարենամթերք է  
մնում»<sup>291</sup>: Վերջինիս հասցեագրված մի այլ նամակում  
(1921 թ. հունվարի 20-ի թվակիր) ազգայնական ուժերի հրա-  
մանատար Յոզդեմիրը զգուշացնում էր, որ եթե ամենակարճ  
ժամանակում օգնություն չհասցվի, ինքը ստիպված կլինի իր  
կովոդներով ճեղքել պաշարումը և փախչել, որովհետև սովը  
կատարյալ է. պարենամթերք բոլորովին չկա, «եղած բոլոր  
կենդանիներին՝ ուղտեր, շուն, կատու, կերել են արդեն, բնա-  
կիչները մահանում են քաղցից»<sup>292</sup>:

Թուրքերի կողմից ակնկալվող օգնությունը չհասավ, և  
ազգայնական մի քանի փոքրամթիվ ջոկատներ, Յոզդեմիրի  
զլխավորությամբ, ճեղքելով շղթան փախչում են պաշարված  
քաղաքից: 1921 թ. փետրվարի 8-ին Այնթապի թուրք ազ-  
գաբնակչության անունից Անդրեային ներկայացած զույգ բա-

288 Ա. Կեսար, նշվ. աշխ., էջ 167:

289 Paul du Vélou, op. cit., p. 279.

290 Մեկ դիրհեմը հավասար է 3,06 գրամի:

291 Ahmet Bedevi Kuran, op. cit., p. 646.

292 Paul du Vélou, op. cit., p. 281.

նախոսները դիմում են նրան անձնատրուիթյան առաջարկով, խնդրելով միաժամանակ, որ պայմանների մասին իրենց հնարավորութիւն տրվի տեղյակ պահելու թուրք ազգաբնակչութիւնը: Նույն օրը՝ փետրվարի 8-ին, Անդրեան ընդունում է անձնատրուիթյան պայմաններին ծանոթանալու համար լիազորված թուրքական 6 պատգամավորներին, որոնց անունից դոկտոր Մեջիթը հայտարարում է հետևյալը. «Թուրքական քաղաքամասում հեղաշրջում է տեղի ունեցել: Յոզգեմիլը փախել է, ճեղքելով ֆրանսիական գիծը և միացել Քենաանբեյին: Սպաներն այլևս հեղինակութիւն չունեն՝ բնակչութիւնը մնում է իր բախտի տերը և նրա պատվիրակներն են, որ ներկայացել են անձնատրուիթիւնը ստորագրելու»<sup>293</sup>: Հաջորդ օրը՝ 1921 թ. փետրվարի 9-ին թուրք պատվիրակները ստորագրում են քաղաքի անձնատրուիթյան պայմանները. ֆրանսիական մանդատի ճանաչում, միատեսակ պատվավոր պայմաններ անձնատուր եղած բոլոր կանոնավոր կուլովների համար, որոնք կհանձնեն իրենց զենքն ու դինամիտները. ամբողջութեան ղեկավարներին ոչնչացում. զինված հայերին արգելվում է մուտք գործել թուրքական քաղաքամասը, իսկ զինված թուրքերին՝ հայկական քաղաքամասը. ոչ մի տուգանք. ոչ մի ցեղի ներկայութիւն քաղաքում, ղեկավարների ներում, դավանանքի, անձի և սեփականութիւն հարգում»<sup>294</sup>:

Այսպիսով, ի տարբերութիւն Ուրֆայի, ֆրանսիական օկուպացիոն զորքերին Այնթապում հաջողվեց ժամանակավոր հաղթանակի հասնել և իրենց ձեռքում պահել քաղաքը: Հայ ազգաբնակչութիւնն փրկւեց, սակայն, չթեթևացավ դրանով: Մեկ ամիս հետո՝ 1921 թ. մարտի 9-ին լոնդոնում ստորագրվեց համաձայնագիր քեմալական կառավարութիւն արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի բեյի և Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Բրիանի միջև<sup>295</sup>, որը, ճիշտ է, չկիրառվեց

293 Paul du Véou, նշվ. աշխ., էջ 283:

294 Նույն տեղում:

295 Այդ մասին տես երկրորդ գլխում:



կյանքում, սակայն Այնթապի հայությանը վերջնականապես բերեց այն համոզման, որ շահագանց վտանգավոր է ինչ-որ հույսեր կապել ֆրանսիական քաղաքականության հետ: Մարտի 20-ին, երբ այդ համաձայնագրի բովանդակությունը հայտնի դարձավ այնթապցի հայերին, ծայր առան խուճապն ու անվստահությունը, որոնք հանգեցրին զանգվածային գաղթի: Այնթապի ֆրանսիական իշխանությունները փորձում էին քաղաքի հայ ազգաբնակչությանը հտ պահել այդ քայլից, ասելով, որ «ֆրանսիական հյուպատոս մը պիտի մնար Այնթապ և հայերին որևէ շարիք պիտի չընեին թուրքերը իրենց մեկնելեն վերջ»<sup>296</sup>, սակայն ասպարդյուն. այնթապցի հայերը զանգվածաբար լքում են իրենց հարազատ քաղաքը և մեկնում Հալեպ: Երբ 1921 թ. դեկտեմբերի 25-ին՝ Անկարայի պայմանագրի ստորագրումից երկու ամիս հետո, ֆրանսիական վերջին ղինվորները հեռանում էին Այնթապից, քաղաքում մնացել էին հազիվ 3500 հայեր<sup>297</sup>: Այնթապում վերահաստատված թուրքական իշխանությունները սկզբնական շրջանում չեն անհանգստացնում հայերին, սակայն 1922 թ. սկզբներից թուրքերը սկսում են ասպատակել հայկական թաղամասը, մասնակի սպանություններ և այլ ոճիրներ գործել, հայ երիտասարդներին աքսորել քաղաքից և այլն: 1922 թ. նոյեմբերի 9-ին «Գազի Անթեպ» թերթը տպագրում է հայերի դեմ ուղղված թունոտ մի խմբագրական՝ «Հեռու թող մնան» խորագրով, «առաջարկելով» հայ ազգաբնակչությանը թողնել հեռանալ քաղաքից: Եվ դրան հաջորդող երկու ամիսների ընթացքում Այնթապից փախչում-գնում են վերջին երեք հազար հայերը: 1923 թ. հունվարին քաղաքում ընդամենը 5—6 հայկական ընտանիք էր մնացել<sup>298</sup>:

Այսպիսով, ուրֆացիների նման, այնթապցի հայերին ևս հաջողվեց, շնորհիվ իրենց հերոսական զինված դիմադրու-

296 Գեորգ Ա. Սարաֆեան, նշվ. աշխ., էջ 268:

297 Ա. Լուրեր, նշվ. աշխ., էջ 173:

298 Նույն տեղում, էջ 175—176:

թյան, խուսափել ջարդից, սակայն նրանք ևս ստիպված եղան տեղի տալ բեմալական ազգայնամուլ քաղաքականության առջև և ընդամիշտ լքել իրենց հարադատ վայրերը:

\* \* \*

Ֆրանսիայի կառավարող շրջանների մերձավորարևելյան քաղաքականությունը աղետալի հետևանքներ ունեցավ նաև քաջարի զեյթունցիների համար: Հիրավի, ողբերգական ճակատագիր բաժին ընկավ զեյթունցիներին համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և դրանից հետո՝ Կիլիկիայի ֆրանսիական գրավման ժամանակաշրջանում: Երկար տասնամյակների ընթացքում հերոսական դիմադրություն ցույց տալով թուրքական արյունարբու փաշաներին, հանդես գալով, որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկներ, զեյթունցիները 1915 թ. առանց կովի ու դիմադրության անձնատուր եղան իրենց կործանումը տենչացող դաժան ոսոխին: Ունկնդրելով Սսի կաթողիկոս Սահակին, որը հորդորում էր հնազանդություն և խոհեմություն հանդես բերել, Ջեյթունի երևելիները կարծես կորցնելով իրենց երբեմնի զգոնությունն ու հեռատեսությունը, հենց սկզբից չկարողացան տրամադրել քաղաքի ու շրջակայքի ազգաբնակչությանը՝ դիմադրության պատրաստվելու թուրքական կանոնավոր զորքերի դեմ, որոնք պատերազմի առաջին իսկ օրերից, Ջեյթունը դարձնելով զորահավաքման կենտրոն, լցվեցին արծվաբույնը: 1915 թ. մարտի վերջերին թուրքերի թիվը զորանոցում հասնում է 5 հազարի<sup>299</sup>: Մարտի 24-ին Մարաշից Ջեյթուն է գալիս հայկական մի պատվիրակություն «բացատրելու կացություն փափկությունը», և «զեյթունցիները համակերպվեցան», — գրում է ականատեսը: 22 ըմբոստ կտրիճներ միայն, հաջորդ օրը փակվելով Ս. Աստվածածնա վան-

<sup>299</sup> Ջեյթունի պատմագիրք: Հրատ. Ջեյթունի Հայրենակցական Միության, Պուկնու-Այրես, 1960, էջ 917:



քում, օրհասական կոիվ են մղում խուրշիդ փաշայի 3-հազարանոց զորքի դեմ, կորուստներ պատճառում նրան, իսկ գիշերը քաշվում լեռները: Թուրքերը նոր հարձակման են անցնում, գրավում և հրդեհում վանքը, իսկ ապրիլի 9-ին, Զեյթունի երևելիներին կանչելով զորանոց, աքսորում են անորոշ ուղղություններով: Այնուհետև թուրքական իշխանությունները առավել զգուշ և խորամանկ քայլեր են անում՝ քաղաքի աղ-գաբնակչությունը ապակողմնորոշելու և նրա ուժերը ջլատելու համար: Այսպես, նշված դեպքերից 7—8 օր հետո նրանք աքսորում են ամբողջ վանքի թաղը, իսկ հետո, երկու շաբաթվա ընթացքում, հանդարտություն պահպանելով քաղաքում, մեկիկ-մեկիկ տարագրության են քշում Զեյթունի շրջակա գյուղերի բնակչությանը՝ նախապես կտրելով հաղորդակցութայն բոլոր ձամփաները, որպեսզի քաղաքում այդ մասին չիմանան: Այնուհետև վերսկսվում է քաղաքի բնակչության տարագրությունը: Սկզբում աքսորում են 400 ընտանիք, երկու օր հետո՝ 500 ընտանիք և այլն: Նման խարդախ եղանակով ապրիլ-մայիս ամիսներին տարագրվում է Զեյթունի ամբողջ հայությունը՝ 30 հազարից ավելի մարդ<sup>300</sup>:

Քաղաքի ղեկավարների մեծ մասը ոչնչացավ ահավոր եղեռնի տարիներին՝ մոտ 8 հազար հոգի մնացին բռնագաղթի ձանապարհներին, զոհ գնալով սովին ու համաճարակներին Սուլթանիեում, Կարա-Պոնարում և այլուր, շուրջ 19 հազար հոգի էլ կոտորվեցին Տեր-Ջորի անապատում՝ 1916 թ. զարհուրելի սպանդի ժամանակ<sup>301</sup>: Պատերազմի ավարտից հետո վերապրող ղեկավարները Հալեպից և զանազան տեղերից գալիս-հավաքվում են Մարաշում, որն այդ ժամանակ գրավված էր անգլիական զորքերի կողմից, իսկ 1919 թ. մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում մեկնում իրենց հարազատ

300 Նազարէք Ղ. Զեյթունցեան, Զեյթունի վերջին դեպքերը, էջ 159: Վարդ-Մեխակի տվյալներով, Զեյթունի և շրջակա գյուղերի բնակչության թիվը 1914 թ. հասնում էր 50 հազարի: Տես Վարդ-Մեխակ, Զեյթունի նահանջը, Կ. Պոլիս, 1922, էջ 10:

301 Զեյթունի պատմագիրք, էջ 918:

Զեյթունը, որն ամբողջովին քարուքանդ էր արվել թուրքերի կողմից: «Երբեմնի շեն ու ազատ Զեյթունի ավերակներուն մեջ,— գրում է Զեյթունի վերջին կռիվների մասնակից Նազարեթ Զեյթունցյանը,— քաղաքի արևելյան և արևմտյան սահմաններուն վրա, կիսախարխուղ քանի մը տուներ և կիսաքանդ զորանոցն զատ մեզի բան չէր թողուցած մեր թշնամին»<sup>302</sup>: Ահա այդ փլատակների վրա է, որ մի բուռ խիզախ զեյթունցիներ սկսում են կառուցել իրենց նոր կյանքը: Ստեղծվում է Ազգային խորհուրդ՝ Զեյթունի քաջամարտիկ Արամ Զուլազյանի գլխավորությամբ: Առաջին խնդիրը զենք հայթայթելն էր: Ժողովուրդը շուտափույթ զինվում է հնարավոր բոլոր միջոցներով: 1920 թ. հունվարին Ֆոնուզի շրջանում տեղի ունեցած դեպքերը հաստատեցին զեյթունցիների այդ քայլի հույժ կարևորությունը: Հունվարի 26-ին Կուչեղ հայաբնակ գյուղը պաշարվում է շրջակա թուրքական գյուղերի շեթենների կողմից, որոնց կազմակերպել էին քեմալական գործակալները: Անակնկալ այդ հարձակմանը զոհ են գնում 69 հոգի՝ մեծ մասամբ մանուկներ և կանայք: Զեյթունից օգնության հասած 12 կտրիճների, սակայն, հաջողվում է արժանի հակահարված տալ ջարդարարներին և փրկել գյուղում մնացած 120 հայերի՝ նրանց տեղափոխելով Զեյթուն<sup>303</sup>: 1920 թ. վերջին Զեյթունում հավաքվածների ընդհանուր թիվը կազմում էր 1058 մարդ<sup>304</sup>: Սրանք բոլորը կենտրոնացել էին զորանոցի շենքում:

1920 թ. հունվարի 30-ին զեյթունցիները 9 հոգուց բաղկացած մի պատվիրակություն են ուղարկում Մարաշ՝ Ֆրանսիացիներին օգնություն խնդրելու համար: Պատվիրակությունը Ֆրանսիական ընդհանուր հրամանատարությունից խնդրում է ռզիմլորական ուժի ներկայություն Զեյթունում, իսկ անկարելիության դեպքում պետք եղածին շափ զենք տալ

302 Նազարեթ Ղ. Զեյթունցեան, նշվ. աշխ., էջ 14:

303 Նույն տեղում, էջ 37—39:

304 Նույն տեղում, էջ 133. Վարդ—Մեխակ, նշվ. աշխ., էջ 108:



ինքնապաշտպանութիւնն համար», սակայն Մարաշի ֆրանսիական ուժերի հրամանատար գեներալ Քերեթը մերժում է ղեկավարութեան խնդրանքը, թեև ճիշտ այդ ժամանակ Մարաշում վեց հազարից ավելի ղեներ կային թուրք իշխանութիւններից հրավժած մթերանոցում<sup>305</sup>։

Ֆրանսիական զորքերի նահանջը Մարաշից 1920 թ. փետրովարին համարձակութիւնն ներշնչեց Զեյթունի շրջակա գյուղերի շեփեներին, որոնք շտապեցին պաշարման մեջ վերցնել արծվարույնը։ Սակայն հարձակման անցնել ղեկավարութեան դեմ նրանք տակավին չէին համարձակվում։ Ընդհանրապես պետք է ասել, որ Զեյթունի շրջակա գյուղերի բնակչութիւնը վաղուց ի վեր բարեկամական հարաբերութիւններ էր հաստատել ղեկավարութեան հետ։ «Թուրքեր գյուղերում մեջ,— գրում է Ն. Զեյթունցյանը,— պատիվեն զատ բան չեն կրնար ընել, եթե կառավարութիւնը մատ շունենա և զանոնք չդրդե։ Շատ անգամներ կառավարութիւնը հրաման տված ալ ըլլա անոնց վնասելու համար, թուրքեր չեն համարձակեր բան մը ընելու»<sup>306</sup>։ Ինչ վերաբերում է Զեյթունի մերձակա մի քանի գյուղերում բնակվող շեփեներին, ապա նրանք պաշարման շրջանում զգալի օգնութիւն էին ցույց տալիս ղեկավարութեանը՝ պարեն հայթայթելով վերջիններիս համար, աղ հասցնելով և այլն<sup>307</sup>։ 1920 թ. մարտի սկզբից մինչև օգոստոս ամիսը ղեկավարութեանը, պաշարված թշնամու կողմից և լրիվ կտրված արտաքին աշխարհից, լծվում են տնտեսական աշխատանքների, մշակում իրենց տարագրութիւնից հետո տարիների ընթացքում անմշակ թողնված այգիները։ Իսկ այդ նույն ժամանակ Մարաշում վերահաստատված թուրքական իշխանութիւնները «հանդուգն» ղեկավարութեանը ծնկի բերե-

305 «Արևիկան մամուլ», 11 փետրվարի 1920 թ.։

306 Նազարէք Ղ. Զեյթունցեան, նշվ. աշխ., էջ 111։

307 Վարդ—Մեխակ, նշվ. աշխ., էջ 14։ 1921 թ. դարնանը քեմալական իշխանութիւնները հատուկ հրահանգով խիստ պատիժ են սահմանում ղեկավարութեանը օգնելու համար։ Տե՛ս նույն տեղում, էջ 25։

լու միջոցներ էին որոնում: 1921 թ. սկզբին նրանք մի «հանձնաժողով» են ուղարկում Զեյթուն՝ հայերից պահանջելով անհապաղ հանձնել բոլոր զենքերը և հնազանդություն հայտնել: Զեյթունցիք կտրականապես մերժում են այդ պահանջը, հրաժարվում զրկվել ինքնապաշտպանության վերջին միջոցից և «բանակցություններն», այդպիսով, ավարտվում են<sup>308</sup>: Մի քանի ամիս հետո, 1921 թ. հունիսի 17-ին, ի պատասխան զեյթունցիների խնդրանքի՝ խառը պատվիրակություն ուղարկել, Զեյթուն է գալիս Մարաշի պատերազմական ատյանի քարտուղար էդիպ-բեյը, իր հետ բերելով թուրքական իշխանությունների «հրավերը», «առանց ժամանակ կորսցնելու լիազոր պատվիրակություն մը ղրկել Մարաշ»: Ազգային միությունը, երկար խորհրդակցելուց հետո, թուրք պատվիրակին պատասխանում է, որ նման մի պատվիրակություն կուղարկվի Մարաշ: Հունիսի 20-ին զեյթունցիների երեք ներկայացուցիչներից բաղկացած պատվիրակությունը ճամբա է ընկնում, և հաջորդ օրը հասնելով Մարաշ, անմիջապես կալանքի տակ վերցվում թուրք ոստիկանների կողմից: Չորս օր հետո՝ հունիսի 25-ին, Զեյթունի պատվիրակները ետ են ուղարկվում երկու վաշտ զինվորների ու թնդանոթների ուղեկցությամբ: Նրանց հետ Մարաշի թուրքական հրամանատարությունը մասնավոր պաշտոնով Զեյթուն էր ուղարկել Ռաֆայել Խուլազյանին՝ «զեյթունցիներուն համոզելու համար, որ վստահ ըլլանք հրամանատարի խոսքերուն, որովհետև ան հայասեր և բարի մեկն էր, իր խոստումը հարգող անձնավորություն»<sup>309</sup>: Միաժամանակ, թուրքական զինվորական իշխանությունները այս վերջինի հետ Զեյթունի ժողովրդին ուղղված մի վերջնագիր էին ուղարկել, պահանջելով անվերապահորեն ենթարկվել, հանձնել զենքերը և պարպել զորանոցը, «հակառակ պարագային՝ կեսօրին կրակ պիտի բացվի զորանոցի վրա»: Հունիսի 27-ին, տրված պայմանաժամը տակավին չլրացած,

308 Նույն տեղում, էջ 16—17:

309 Նազարէք Ղ. Զեյթունցեան, նշվ. աշխ., էջ 115—117:



Թուրք զինվորները առաջ են շարժվում և շատ մոտիկից պաշարում զորանոցը: Ազգային խորհուրդը հայտնում է ժողովրդդին, «Թե անոնք, որ անձնատուր ըլլալ կուզեն, ազատ են»: Որբերը, այրի կանայք, ինչպես և ընտանիք ունեցողների զգալի մասը, մոտ 600 հոգի, փրկության հույսով անձնատուր են լինում Թուրքերին, իսկ մյուսները քաշվում են խրամատները՝ պատրաստվելով օրհասական կովի: Դժվար էր, սակայն պաշտպանվել Թնդանոթային կրակի դեմ, և երեք օրվա ինքնամոռաց դիմադրությունից հետո որոշվում է ճեղքել թշնամու շղթան և քաշվել լեռները: 1921 թ. հունիսի 30-ի գիշերը քաշակորով զեյթունցիների խումբը՝ թվով 318 հոգի, որոնցից 72-ը կանայք, աղջիկներ և պատանիներ, հարձակվում է Թուրքական զորքերի վրա և դուրս գալիս շրջապատում<sup>310</sup>: Առավոտյան քեմալական զինվորները առանց հրացանաձգության գրավում են զորանոցը և անխնա սրի քաշում այնտեղ մնացած կանանց, ծերերին ու մանուկներին, թվով 110 հոգի, որոնք ի վիճակի չէին եղել հեռանալու Զեյթունից:

Ինչ վերաբերում է հունիսի 27-ին քեմալական զինվորների ողորմածությանը ապավինած 600 զեյթունցիներին, ապա սրանց տեղափոխում են Մարաշ, փակում Ս. Ստեփաննոս եկեղեցում, իսկ օգոստոսի 23-ին, երեք խմբի բաժանելով, աքսորում տարբեր ուղղություններով: Սրանց հետագա ճակատագրի մասին ստույգ տեղեկություններ չկան: Հայտնի է միայն, որ ճանապարհին 17 հոգի մահանում է, իսկ 200 այրերից մի քանիսը փախչում հասնում են Հալեպ, 8 հոգի էլ՝ Այնթապ: Մյուս խումբն աքսորվում է Բեհեսնի ու Ադիյաման, իսկ երրորդ խումբը՝ Տիգրանակերտ<sup>311</sup>: Ֆրանսիական հայտնի «Ժուռնալ դե Դեբա» թերթը «Զեյթունի հայերի տարագրությունը» խորագիրը կրող հոդվածում մատնանշում էր, որ քեմալական կառավարության կողմից ձեռնարկված 600 զեյթունցիների աքսորը ոչնչով չէր տարբերվում 1915 թ. տա-

310 Նույն տեղում, էջ 133:

311 Վարդ—Մեխակ, էջ 105—106:

րագրությունից: «Տարագրվեցին բոլորը՝ ծերունիները, երեխաները, կանայք, և գեթ մի կառք շտրամադրվեց նրանց,— պատմում էր ականատեսը: — Ամերիկյան «Near East Relief»-ի ներկայացուցիչները ցանկանում էին նրանց մթերքներ տալ ճանապարհի համար: Սկզբում շթույլատրեցին, իսկ այնուհետև, համառ պահանջներից հետո, համաձայնվեցին յուրաքանչյուրին բաժանելու 50 գրամ հաց»<sup>312</sup>: «Ճամփորդության առաջին իսկ օրը,— ասվում էր այնուհետև,— 11 հոգի զոհվեցին: Մի երիտասարդ կին ժանդարմների կողմից հանձնվեց մի շերքեզի, մեկ ուրիշը իր երկու մանկիկների հետ անհայտացավ: Մի պառավ կին, որն ի վիճակի չէր հասնելու քարավանի ետևից, մեռավ ժանդարմների հարվածներից: Մարավից պապակվող մի ծերունի մեռավ ջուր աղաչելով, որը նրան մերժեցին: Այս դժբախտ տարագրյալներին հաց և ջուր տալը խստիվ արգելված էր...»<sup>313</sup>: Քեմալական իշխանությունների կողմից ցիր ու ցան արված խաղաղ այս զեյթունցիներին հետագա ճակատագիրն անհայտ մնաց: Որոշ հեղինակներ գտնում են, որ նրանք բոլորն էլ ոչնչացան բռնագաղթի ճամփաներին<sup>314</sup>:

Ինչ վերաբերում է հունիսի 30-ի գիշերը թշնամու օղակումից դուրս եկած 318 զեյթունցիներին, սրանք շարժվում են հարավ-արևմուտք՝ Ֆոնուզի ուղղությամբ, նպատակ ունենալով հասնել մինչև Զիհան՝ ֆրանսիական գրավման դոտին: Շուտով խումբը համոզվում է, որ այդ բանն անկարելի է. քեմալական կանոնավոր զորքերը, թնդանոթներով ու զնդացիրներով զինված, փակել էին զեյթունցիների Լահանջի ճանապարհը: Որոշվում է ետ դառնալ Զեյթունի լեռները: Բաժանվում են երեք ոչ-մեծ խմբերի, որոնցից մեկը՝ 32 հոգուց բաղկացած, փորձում է առաջանալ Զիհան—Օսմանիեի ուղղությամբ, սակայն ճանապարհին մղված անհա-

<sup>312</sup> „Journal des Débats“, 21.9. 1921.

<sup>313</sup> Նույն տեղում:

<sup>314</sup> Տե՛ս վարդ-Մեխակ, էջվ. աշխ., էջ 108:



վասար կոիվներում նրանց մեծ մասը զոհվում է, միայն 4 հոգու է հաջողվում հասնել Օսմանիե՝ 1921 թ. հուլիսի 20-ին<sup>315</sup>։ Մյուս երկու խմբերը տարբեր ճանապարհներով 9 օր հետո գալիս հասնում են Զեյթունի անառիկ լեռները։ Այստեղ, շարունակական կոիվներից հոգնած և ուժասպառ եղած կանայք ու պատանիները, մոտ 50 հոգի, խնդրում են իրենց հասցնել Մարաշ՝ թուրքական իշխանություններին անձնատուր լինելու և, այդպիսով, Մարաշ գերեվարված իրենց հարազատներին միանալու։ Սրանք մեկնում են, հասնում մինչև Զիհանի կամուրջը, սակայն հայտնի չէ, հաջողվե՞ց նրանց հասնել Մարաշ, թե՞ ճանապարհին զոհ գնացին շեթեներին։

Վերջին մեծ խումբը, 153 հոգուց բաղկացած (որոնցից 134-ը կովոդ երիտասարդներ), մարտեր մղելով հետապնդող թշնամու դեմ, շուրջ երկու ամիս դեգերում է լեռներում, իսկ 1921 թ. օգոստոսի 23—28-ին մղված կոիվներում ճեղքելով գիծը, շարժվում է Զիհանի ուղղությամբ և սեպտեմբերի 3-ին հասնում Քիլիս՝ ֆրանսիական զրավման գոտին<sup>316</sup>։ Քիլիս հասնող զեյթունցիների ընդհանուր թիվը կազմում էր 118 մարդ<sup>317</sup>։ Բացի դրանից, խմբից անջատված 11 կովոդներ առանձին-առանձին հասել էին Օսմանիե։ Այսպիսով, կոիվներում զոհվել էին 24 հոգի, այդ թվում զեյթունցիների ազատագրական պայքարի վերջին մոհիկաններ, Զեյթունի Ազգային միության ատենապետ Արամ Չոլագյանը և փոխ-ատենապետ Հովհաննես Սիմոնյանը։

Ահա այսպիսի վախճան ունեցավ հերոս Զեյթունի դարավոր ազատագրական պայքարը։ Քեմալական կառավարողները, նոր պայմաններում կիրառելով իրենց նախորդների՝ երիտթուրքերի ազգայնամուլ ու ցեղասպան քաղաքականութունը, ի թիվս Կիլիկիայի մյուս հայաշատ վայրերի, արժավարույնը ևս իսպառ մաքրեցին հայ ազգաբնակչութունից։

315 Նագարեք Ղ. Այբուռնցեան, նշվ. աշխ., էջ 141։

316 Նույն տեղում, էջ 234—236։

317 Վարդ Մեխակ, նշվ. աշխ., էջ 84։

Ինչպիսի՞ դեր էին խաղում Կիլիկիայում ծավալվող իրադարձութիւններում այնտեղ գործող հայ ազգայնական կուսակցութիւններն ու Ազգային խորհուրդը:

Այս հարցի հանգամանալից լուսաբանումը և շարադրանքը դուրս է ներկա հետազոտութեան շրջանակներից, ուստի մենք այստեղ հարցին կանդրադառնանք ֆրանս-քեմալական հարաբերութիւնների առնչութեամբ:

Պետք է ասել, որ 1919 թ. սկզբից Ադանայում հաստատված և գործող հայ ազգայնական բոլոր կուսակցութիւններն էլ՝ հնչակյան, ռամկավար ազատական, դաշնակցական, վերակազմյալ հնչակյան, բացահայտորեն թերազնահատում էին քեմալական շարժման ուժը, թուրքերի պոտենցիալ հնարավորութիւնները: Նրանք անտեսում էին այն հանգամանքը, որ օսմանյան թուրքերը երկար դարերի ընթացքում օտարերկրյա գրավում չէին տեսել և հազիվ թե հեշտութեամբ հանդուրժեին օտարի լուծը: Միաժամանակ նրանք անհիմն կերպով գերազնահատում էին դաշնակից տերութիւնների հնարավորութիւնները, աչք փակում այն իրողութեան վրա, որ վերջիններիս զորքերը Կիլիկիայում էին գտնվում, որպէս ռազմական օկուպանտներ, չէին ուզում հասկանալ, որ ֆրանսիական զորքերը քրիստոնյա ազգաբնակչութիւնը պաշտպանելու նպատակով չէր, որ եկել էին Կիլիկիա, այլ Ֆրանսիայի իմպերիալիստական շրջանների մերձավորարեւելյան ծրագրերն իրականացնելու: Հայ տաղանդավոր գրող և հայրենանվեր գործիչ Զապել Նսայանը Կիլիկիայի վիճակին նվիրված իր ղեկուցագրում իրավացիորեն մատնանշում է, որ «մեր բոլոր քննադատութեանց և դժգոհութեանց հիմքը այն է, որ լրջորեն կը կարծենք, թե ֆրանսիացիք Կիլիկիա եկած են մեզ համար, թե մեզ շնորհակալ պետք է ըլլան մեզ համար եկած ըլլալուն և հետեւաբար պարտավոր են մեզ ծառայել մեր հասկցած և մեր դատած եղանակովը»<sup>318</sup>: Դ՞ն ալիքին.

318 ԳԱԹ, Զապել Նսայանի ֆոնդ, № 289, թ. 20.



բանն այնտեղ էր հասնում, որ հայ ազգայնական գործիչները ամենայն լրջությամբ սկսում էին Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչներին «բացատրել» նրանց շահը Կիլիկիայում: Բաղմաթիվ օրինակներից խիստ հատկանշական է հնչակյան գործիչ Սեդրակ Շահենի զրույցը Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ գնդապետ Բրեմոնի հետ 1920 թ. օգոստոսի սկզբին.

«Մենք պատրաստ ենք գործակցել ձեզի թրքական կործանարար ձեռքը հեռացնելու և Ֆրանսիայի հովանավորությամբ Կիլիկիո անկախությունը հաստատելու: Դուք հավանություն հայտնեցեք, մենք հաճեմ կառնենք զոհողության մեծագույն բաժինը և վստան եղեմք, թե այդ ֆայլին մեջ հարույրյուն պիտի առնե Ֆրանսիայի ավանդական երազը: Տեսեսական հիանալի շուկա մը, բամբակի հարուստ շահաստան մը պիտի ազատագրվի թշնամիին ձեռքեն»<sup>319</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.): Նույն մտայնության մի այլ տարբերակն էր իրենից ներկայացնում Կիլիկիայի հայոց կաթողիկոս Սահակ Խաչատրյանի դիմումը Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Ա. Միլերանին 1920 թ. մարտի 31-ին. «Հայը երբեք խտիր դրած է և չպիտի ալ դնե ֆրանսացիին և հայուն միջև: Հայը միակ տարրն է, որու կենսական շահերը կը նույնանան Ֆրանսայի կենսական շահերու հետ...»<sup>320</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Նույն ոգով դիմումներ էին անում հնչակյան գործիչները: «Մենք ձեզմե շատ բան կսպասենք,— ասում էր Բրեմոնին «Տավրոս» թերթի խմբագիր Անդրանիկ Կենճյանը,— որովհետև, ինչպես մենք զմեզ կը նկատենք ֆրանսիացիներ՝ հա-

319 Անդրանիկ Կենճյան, Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը և կիլիկեան ինքնավարութեան աքթը. Պեյրուս, 1958, էջ 145—146: Նման պարտավորեցնող և միամիտ խոսքերով դիմելով ֆրանսիական ներկայացուցչին, Ս. Շահենը ստացել էր արժանի պատասխանը. «Գիտցեք, թե առանց Ֆրանսայի կամքին, ֆրանսացին դժվար կը հավանի ձեր առաջարկին»: Տես նույն տեղում, էջ 146:

320 Տե՛ս Խուպէսէրեան, նշվ. աշխ., էջ 142:

յերեն խոսող, ձեզ ալ կը նկատենք հայ՝ ֆրանսերեն խոսող»<sup>321</sup> (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Հնչակյան մի ուրիշ գործիչ՝ Փիրուզ Խանզադյանը, Հընչակյան կուսակցութեան Ամերիկայի շրջանի գործադիր մարմնին և Ս. Սապահ-Գուլյանին հասցեագրված նամակում ղեկավարութեանը մեղադրում էր Ֆրանսիայի ղեկավար գործիչների «անկեղծ առաջարկներին» չարձազանքելու մեջ, մի հանգամանք, որը, նրա կարծիքով, ֆրանսիական կառավարողներին մղեց քեմալականների կողմը, հանգեցնելով ֆրանս-թուրքական մերձեցմանը: Անհրաժեշտ է լրիվ մեջբերել նամակի այդ մասը.

«Զինադադարի սկզբի շրջանին կիլիկյան հողի վրա ոտք դնող ֆրանսական պետական պատասխանատու անձնավորութիւններ միշտ հայտարարած էին, թե այս հողը հայկական երկիր է և թե իրենք հոս եկած են իբր բարեկամ ուժ կազմակերպելու համար հայերը: Այս հայտարարութիւնները անկեղծ բնույթ ունեին և սակայն մեր ժամանակի վարիչները և պատգամավոր պատվիրակութիւնը ըսված ողորմելիները, շուգիւ լրջորեն անդրադառնալ մեր իրականութեան և մեր ընկիւղներուն, խնդիրները ձգեցին դեպքերու ճակատագրական ընթացքին և ժամանակի ընթացքին ֆրանսական կապիտալիստական կառավարութիւնները, հուսահատ հայերու անշեղ և ապիկար գործունեութեան, ընտրեցին գործելու տարբեր մի ճանապարհ, որը զիրենք առաջնորդեց դեպի թուրքը և մենք նկատվեցանք անվստահելի տարր մը Կիլիկիո մեջ յայս ֆրանսական իշխանութեանց:

Ասկի վերջ իրերու բնական ընթացքով Ֆրանսան ավելի լայնորեն մշակեց ֆրանս-թրքական քաղաքականութեան հող և քեմալի հետ մտալ մեզ և իրեն համար աղետաբեր բանակցութիւններու»<sup>322</sup> (ընդգծումներն իմն են — Ռ. Ս.):

321 Ա. Կենեան, նշվ. աշխ., էջ 182:

322 ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 139, նամակի լրիվ տեքստը տե՛ս նույն տեղում, թ. 1—3:



Ղեկավարվելով նման խաբեպատիր մտայնությամբ, հայ ազգայնական ղեկավարները, Կիլիկիայում Հայ Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանը, Սահակ կաթողիկոսն հապայանը, Աղանայի Ազգային խորհուրդը և այլն, լուրջ հույսեր էին կապում «ասպետական Ֆրանսիայի» ռազմական ու նյութական օգնության հետ անգամ այն բանից հետո, երբ Կիլիկիայի ճակատագիրն ըստ էության վճռվել էր դաշնակից տերությունների կողմից Ֆրանսիայի համաձայնությամբ և նրա անմիջական մասնակցությամբ՝ Սան-Ռեմոյի կոնֆերանսում և Սևրի պայմանագրում:

Նրանք հրապուրվում էին ֆրանսիական ղեկավար շրջանների սին հայտարարություններով, խուսափելով այդ հայտարարությունները նրանց իրական, ամենօրյա քաղաքականության հետ համագրելուց:

«Մենք, հայերս, չկրցանք կազմակերպվիլ, զենքի փարիլ... հայերը կուրորեն վստահեցան ֆրանսիացիներու խոստումներուն»<sup>323</sup>, — գրում է իր հուշերում Կիլիկիայի ինքնապաշտպանական կռիւնների գործուն մասնակից Գրիգոր Թաթուլյանը, թեև, ինչպես նա իրավացիորեն նշում է, 1919 թվականի դեկտեմբերին կայացած Մ. Քեմալ—Ժորժ Պիկո տեսակցությունից հետո որշակի էր, որ «Ֆրանսայի կողմն հայերուն շուսյված բոլոր խոստումները՝ թե Կիլիկիան հայերուն է ու Ֆրանսան իրենց պաշտպանը՝ կեղծավորություն և խեղկատակություն էր»<sup>324</sup>:

Հիրավի, տակավին 1919 թ. դեկտեմբերին, Լլոյդ Ջորջի հետ ունեցած զրույցի ժամանակ, «հայերի բարեկամ» հորջորջվող Կլեմանսոն արտահայտվել էր հետևյալ կերպ. «Հայերը վտանգավոր ժողովուրդ են, և շարժե նրանց հետ գործունենալ: Նրանք մեծ քանակությամբ փող են պահանջում, իսկ

323 Դրիգոր Թաթուլեան, նշվ. աշխ., էջ 245:

324 Նույն տեղում, էջ 235:

տալիս են շատ փոքր հատուցում... Ֆրանսիան տրամադիր չէ  
այլևս որևէ գումար ծախսելու Հայաստանի վրա»<sup>325</sup>։

Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ, ժամանակին  
«հայասեր» համարվող Բրեմոնը ավելի ղգույշ էր հայտնում  
ֆրանսիական կառավարող շրջանների մտադրությունները,  
իսկ նրան փոխարինած հազարապետ Հասլերը, ընդհակառա-  
կը, չէր փորձում թաքցնել, որ «Ֆրանսսան Կիլիկիան գրաված  
է իր սեփական շահը միայն ի նկատի ունենալով»<sup>326</sup>։

Եվ ընդհակառակը, բազմաթիվ հայտարարություններով,  
որոնցից մի քանիսը բերվեցին նախորդ գլխում, ֆրանսիական  
կառավարության պատասխանատու անձինք «հավաստիաց-  
նում էին», որ ֆրանսիական զորքերը Կիլիկիայում են գտնը-  
վում «քրիստոնյա ազգաբնակչությանը և, առաջին հերթին,  
հայերին» պաշտպանելու, այդ երկրամասը «նրանց հանձնե-  
լու» նպատակով։

Պարզ է, որ նրանց կողմից կիրառվող քաղաքականու-  
թյան վերլուծությունը միայն կարող էր վերհանել ճշմարտու-  
թյունը, նրանց ձեռնարկած քայլերի «չարն ու բարին»։ Ար-  
վճում էր այդ վերլուծությունը կիլիկիահայության բախտի  
տնօրինումը ստանձնած հայ գործիչների կողմից։ Ո՛չ, չէր ար-  
վում։ Միակողմանիորեն գերազնահատելով Կիլիկիայի տըն-  
տեսական նշանակությունը Ֆրանսիայի համար, նրանք  
չէին կարողանում ըմբռնել, որ ֆրանսիական շահերը Կիլի-  
կիայում ածանցյալ են, երկրորդական՝ ամբողջ Թուրքիայում  
Ֆրանսիայի տնտեսական ու քաղաքական շահերի համեմա-  
տությամբ, և որ ֆրանսիական իմպերիալիստական շրջաննե-  
րը ցանկացած պահին պատրաստ են զոհաբերել Կիլիկիան էլ,  
նրա հայությունն էլ, եթե Քեմալի կառավարությունը թեկուզ  
նվազագույն չափով ճանաչեր այդ շահերը, համաձայնվեր  
վճարելու ֆրանսիական դրամատերերին հասանելիք միլիոն-  
ների մի մասն անգամ։ Նրանք չէին հասկանում, որ Միլերա-

<sup>325</sup> „Documents on British Foreign Policy“, First series, vol. II, p. 734.

<sup>326</sup> տե՛ս Մ. Յ. Տեփոյան, Միհրան Տամատեան, Գահիրէ, 1956, էջ 237։



նի, Լեյզի, Բրիանի և մյուսների համար «կարևոր էր ոչ թե ազատագրել հայ ժողովուրդը, այլ մի ավելորդ շնորհ տալ կղերա-կապիտալիստական իմպերիալիզմին»<sup>327</sup>:

Եվ այսպես, դեկավարվելով Հայկական Կիլիկիան անկախ տեսնելու անիրականալի ձգտումներով, հայ ազգային մարմինները հռչակեցին հանրապետություն՝ «Ֆրանսիայի հովանավորության ներքո», շատահոգվելով անգամ այն մասին, թե արդյո՞ք Ֆրանսիան համաձայն է այդ հովանավորությունն իր վրա վերցնելու:

«Ռուբինյան հանրապետություն» հռչակած դաշնակցական Մինաս Վերածինը 1920 թ. օգոստոսի 2-ին հրապարակ հանած իր հայտարարության մեջ գրում էր.

«Կիլիկիո հայություն.

Այսօր, 1920 օգոստոս 2-ին, հանուն ինքնավար հայ ազգային ուժերու, հռչակեցի Ճիհուն և Սիհուն Միջագետքի ինքնավարությունը մինչև ծով:

Թշնամին, որուն հետ շփման մեջ ենք, կը նահանջե, կրակի տալով գյուղեր:

Պատմական ժամեր են ասոնք...

Մեր նպատակն է այս երկիրը օժտել հայկական ինքնավար ուժիմով մը Ֆրանսայի հովանավորության տակ...»<sup>328</sup>:

Եվ ապա, հայկական նոր պետություն ստեղծելու առաջնության դափնեպսակը հենց իրեն շնորհելու համար, «Ինքնավար հայկական Կիլիկիո Միջագետքի [գոյություն չունեցող] ազգային ուժերու պետը» անհապաղ տեղեկացնում էր «պատմական» այդ քայլի մասին.

«Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության Ատանայի վարչության.

Այսօր, օգոստոս 2, մեր ուժերու ներկայության հռչակեցի ինքնավար երկիր (Սիհուն և Ճիհուն գետերուն միջագետքը մինչև ծով) ֆրանսիական հովանավորության տակ...

<sup>327</sup> „L'Humanité“, 10.3 1920.

<sup>328</sup> ՏԵՄ Ա. ԿԵՆԵՄԵՆ, նշվ. աշխ., էջ 159—160:

Շփման մեջ ենք թշնամի ուժերու հետ և եթե Եվրոպան չլսե մեզ՝ պիտի շարունակենք կռիւլը քեմալականներու դեմ մեր բոլոր ուժերով...»<sup>329</sup> (ընդգծումներն իմն են — Ռ. Ս.):

Գոնքիշոտական այս հայտարարութիւնը թեև որոշ չափով կանխեց, սակայն շխանգարեց հնչակյան կուսակցութեանը իրականացնելու վաղուց նախապատրաստվող «աքթը»՝ ամբողջ Կիլիկիան «ինքնավար հանրապետութիւն» հռչակելու արարողութիւնը, որը և տեղի ունեցավ 1920 թ. օգոստոսի 4-ին: Այդ օրը Հայ ազգային միութեան անդամները, երեք հարանվանութիւններ չառաջնորդները, շորս կուսակցութիւններ չներկայացուցիչները, ինչպես նաև Ադանայի քրիստոնյա այլ համայնքների ղեկավարները՝ Միհրան Տամատյանի գլխավորութեամբ այցելեցին Ֆրանսիական կառավարիչ Բրեմոնին և նրան հանձնեցին Ֆրանսիայի գերիշխանութեան ներքին Կիլիկիայի քրիստոնեական, «անկախ» հանրապետութեան հռչակման վերաբերյալ իրենց հայտարարութիւնը, որն ազդարարում էր.

«Այսօր, 4 օգոստոս կեսօրին, Ամբողջական հայկական պատվիրակութեան պարոն ներկայացուցիչը, Հայ Ազգային միութիւնը, հայ երեք հարանվանութեանց պետերը, հուլն, ասորի, քաղղեացի, սուրիացի հասարակութեանց կրօնական և աշխարհական պատվիրակները, միասնաբար ներկայանալով Կիլիկիո վարչական հակազդի պետ Գոլոնել Պրեմոնին, հանդիսավորապես հանձնեցին Կիլիկիո թրքական պետութեան անջատվիլը և Ֆրանսական հոգաւարութեան տակ տեղական քրիստոնյա վարչութեամբ մը օժտումը հռչակող պաշտոնաթուղթ մը, ստորագրված վերոգրեալներեն»<sup>330</sup> (ընդգծումն իմն է — Ռ. Ս.):

Գնդապետ Բրեմոնը, ընդունելով «պաշտոնաթուղթը», պարտավորվում է այդ մասին տեղյակ պահել իր կառավարութեանը, միաժամանակ կոչ անում հանգստութիւն պահ-

329 Նույն տեղում, էջ 160:

330 Նույն տեղում, էջ 162:



պանել<sup>331</sup>։ Մ. Տամատյանը, սակայն, չի բավարարվում հանրապետության հռչակումով, նա ստեղծում է «կառավարութիւն» հետեւյալ կազմով. ինքը՝ վարչապետ, Վահան Ժամկոչյան (հնչակյան)՝ պատերազմական և ոստիկանական նախարար, Կարապետ Նալբանդյան (հնչակյան)՝ պարենավորման և երկրագործական նախարար, Անդրանիկ Կենճյան (հնչակյան)՝ ելեմտից նախարար, դոկտ. Մնացականյան (դաշնակցական)՝ արտաքին գործոց նախարար, դոկտ. Պեգիրճյան (ոսմկավար)՝ ներքին գործոց նախարար և Լիենթ Ժան (առորի)՝ կրթական նախարար<sup>332</sup>։ Օգոստոսի 5-ի առավոտյան, Միհրան Տամատյանի գլխավորած «կառավարութիւնը», Ադանայի բնակչության, այդ թվում շուրջ 100 հազարանոց հայկական թաղամասի կատարյալ անտարբերութեան պայմաններում ներկայանում է կառավարչատուն՝ Ադանայի թուրք նահանգապետի (վալիի) նստավայրը, գրավում այդ պահին թափուր նրա աթոռը և հեռախոսով հայտնում վերջինիս, որ նա այլևս իշխանութեան տերը չէ։ Տեղեկանալով կատարվածի մասին, Բրեմոնը հեռախոսով կարգադրում է վերջ դնել կատակերգութեանը և ցրվել, սակայն, հանդիպելով Տամատյանի «վճռական» առարկութեանը, անձամբ, մի քանի զինվորների գլուխն անցած, գալիս է կառավարչատուն և քշում նախարարական նոր և հին պաշտոնների շուրջ բանավիճող «կառավարութեան» անդամներին<sup>333</sup>։ Այսպես ավարտեց իր մեկժամյա գործունեությունը Միհրան Տամատյանի «կառավարութիւնը»։

Օգոստոսի 4—5-ի դեպքերը ոչ մի օգուտ չբերեցին կիլիկիահայերին, սակայն դրանք հարմար առիթ ծառայեցին Ֆրանսիական վարչութեան ու զինվորականութեան ձեռքին՝ իսպառ վերացնելու հայերի աննշան ընդվզումներն իսկ։ Գընդապետ Բրեմոնն անմիջապես հայտարարեց, որ խզում է ամեն տեսակի հարաբերությունները Հայկական ազգային

<sup>331</sup> E. Brémond, op. cit., p. 62.

<sup>332</sup> Ա. Կեֆեաե, նշվ. աշխ., էջ 167։

<sup>333</sup> E. Brémond, op. cit., p. 62.

պատվիրակութեան լիազոր ներկայացուցչի հետ, իսկ սեպտեմբերին Բեյրութից Ադանա ժամանած գեներալ Գուրոն հրամայեց անհապաղ ցրել Հայկական լեգեոնը, զինաթափ անել Հաճընին օգնութեան փութացող կամավորական խումբը, ինչպես նաև Կիլիկիայից արտաքսել հարյուրավոր «հրահրող» գործիչների ու տարրերի:

Մի քանի ամիս հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 9-ին այդ նույն Գուրոն Ֆրասիայի Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի նիստում հայտարարում էր, որ «պետք է փոփոխել Սևրի դաշնագիրը թուրքերին ընդունելի ձևով», որովհետև «թուրքերը երկար ժամանակ մեր բարեկամներն էին, իսկ այնուհետև՝ մեք փաշարի և լոյալ թշնամիները» (ընդգծումն իմն է— Ռ. Ս.)<sup>334</sup>:

Այնուհետև, շուրջ մեկ տարի, համեմատական անդորր հաստատվեց Կիլիկիայում. տազնապի մատնված կիլիկիահայուցյունը կարծես սպասում էր «թուրքերի համար ընդունելի» պայմանագրին, որը և ստորագրվեց 1921 թ. հոկտեմբերի 20-ին՝ Ֆրանկլեն-Բուլոնի և Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալ բեյի միջև:

Այսպիսով, ինչպես տեսանք, Կիլիկիայում 1919—1921 թթ. ծավալված իրադարձությունների ընթացքում իրենց դրսևորումը գտան Ֆրանսիայի իմպերիալիստական շրջանների քաղաքականությունը՝ թելադրված նրանց տնտեսական ու դրամական շահերով Թուրքիայում, Անկարայի զիվանագիտության հաջողությունները և, միաժամանակ, քեմալական ազգային քաղաքականության սկզբունքները, ինչպես նաև հայ ազգայնական կուսակցությունների ու գործիչների որդեգրած վարքագիծը:

---

334 «Le Temps», 10. 12. 1920. Հետաքրքիր է ավելացնել, որ նույն գեներալ Գուրոն 1915 թ. հունիսի 3-ին արձակած իր հրամանում Արևելքի էքսպեդիցիոն կորպուսի զինվորներին «հիշեցնում» էր, որ թուրքերը եղել են իրենց բարեկամները, և Գերմանիան է, որ նրանց դուրս է բերել Ֆրանսիացիների դեմ: *St' u Emile Edwards, Journal d'un habitant de Constantinople (1914—1915), Paris, 1915, էջ 252.*



1. Քննարկվող տարիներին ֆրանսիական իշխանութունների կողմից Կիլիկիայում կիրառվող գաղութատիրական քաղաքականութունը աղետալի հետևանքներ ունեցավ երկրամասի բազմազգ բնակչության համար ընդհանրապես, և այդ բնակչության մեկ երրորդը կազմող հայերի համար՝ մասնավորապես:

Կիլիկյան հողը օգտագործելու համար բանվորական հմուտ և էժան ձեռք ունենալու նպատակով խաբեպատիր խոստումներով, «պարտավորութուններով» խրախուսելով հայերի վերադարձը, ֆրանսիական իմպերիալիստները չէին զաղարում «ելզու գտնել» թուրքերի հետ, թեկուզ հայերին ու մյուս ճնշված ազգերին Կիլիկիայից արտաքսելու պայմանով: Անջատ համաձայնության հասնելու բազմաթիվ փորձերով նրանք ըստ էության խրախուսեցին քեմալականներին՝ ազգային պատերազմը Կիլիկիայի ճակատից սկսելու:

2. Քեմալականների գլխավորած պայքարը Կիլիկիայում, որքան որ արդարացի էր երկրամասը գրաված ֆրանսիական օկուպացիոն զորքերի դեմ, նույնքան անարդարացի, ազգայնամուլ ու ջարդարարական էր՝ քրիստոնյա, հիմնականում հայ ազգաբնակչության նկատմամբ, այն միաժամանակ նպատակ էր հետապնդում խանգարել կիլիկիահայերին հաստատվելու իրենց հարազատ վայրերում, մի բան, որ ապագայում կարող էր վտանգել Կիլիկիայի պահպանումը թուրքիայի կազմում: Այսպիսով, առաջին անգամ Կիլիկիայում դրսևորվեց քեմալական շարժման հակասական բնույթը՝ այդ շարժման հակաիմպերիալիստական և ազգայնամուլ, ջարդարարական կողմերով:

3. Կիլիկիայում գործող հայ Եզգայնական կուսակցություններն ու ազգային մարմինները իրենց անհեռատես ու անշրջահայաց քաղաքականությամբ, հաճախ անպատասխանատու, արկածախնդիր ձեռնարկումներով առավել բարդացրեցին կիլիկիահայության տազնապալից վիճակը:

Իրենց սոցիալ-դասակարգային դիրքորոշման հետևանքով անկարող լինելով ըմբռնել Ֆրանսիայի թուրքասիրական

քաղաքականութիւնն տնտեսական դրդապատճառները, նրանք կուրորեն վստահեցին ֆրանսիական իմպերիալիստների խոստումներին ու «պարտավորութիւններին», միաժամանակ թերագնահատելով քեմալական շարժման ուժը: Նրանք ժամանակին չհասկացան, որ քեմալականները գալիս էին նոր պայմաններում շարունակելու ազգային հարցում երիտասարդ թուրքերի վարած ցեղապաշտ ու ազգայնամոլ քաղաքականութիւնը, թեև 1919 թ. հուլիս-սեպտեմբերին կայացած էրզրումի ու Սըվասի համաժողովների որոշումներից միանգամայն պարզ էր, որ քեմալականները շեն ճանաչում այլազգի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և նրանց ոչ մի թիզ հող չեն զիջի, առավել ևս հայերին՝ Կիլիկիայում:

Այդ բոլորի հետևանքով, կիլիկիահայերի ճակատագրի տնօրինութիւնը ստանձնած հայ մարմիններն ու ազգայնական ղեկավարները փաստորեն ապակողմնորոշեցին հայ ազգաբնակչութեանը՝ նրա անվտանգութեան երաշխիքները կապելով ոչ թե նրա ղինման ու ինքնապաշտպանական կորովի ուժեղացման, այլ ֆրանսիական իշխանութիւնների ու սակավաթիվ օկուպացիոն զորքերի օգնութեան հետ:



## 1921 թ. ԱՆԿԱՐԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ինչպես վերը նշվեց, 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսում ստորագրված ֆրանս-թուրքական համաձայնագիրը չվավերացվեց Անկարայի Ազգային մեծ ժողովի կողմից: Այդ համաձայնագրը, սակայն, ամենևին չէր նշանակում, թե քեմալական կառավարությունը չի ցանկանում անջատ համաձայնության գալ Ֆրանսիայի հետ և ճեղքել այդպիսով Անտանտի առաջատար զույգ տերությունների արտաքուստ դաշնակցային համարվող միասնությունը: Ընդհակառակը, նույն թվականի ամռան սկզբներից ձեռնարկված հունական նոր խոշոր առաջխաղացումը և, ընդհանրապես, Անկարայի կառավարության դիվանագիտական մեկուսացումը Եվրոպայում նրան մղում էին դեպի այդ քայլը:

Ֆրանսիական դիվանագիտությունը, իր հերթին, ձգտում էր Թուրքիայի հետ անջատ համաձայնության գալով ամրապնդել իր դիրքերը Մերձավոր Արևելքում և դիվանագիտական հաջողության հասնել իր մրցակցի՝ Անգլիայի նկատմամբ: Այդ համաձայնությանը, սակայն, ֆրանսիական դիվանագիտությունը նպատակադրվել էր հասնել 1921 թ. մարտի 9-ի համաձայնագրի ոչ մեծ փոփոխությունների գնով միայն: «...Եթե Անգորան անկեղծորեն ուզում է համաձայնության գալ մեզ հետ,— գրում էր արտաքին գործերի մինիստրության պաշտոնաթերթ «Տան»-ը,— ապա դժվար չի

լինի հանգեւ որոշ փոփոխութիւնները և, այդպիսով, վավերացնել ֆրանս-թուրքական հաշտութիւնը»<sup>1</sup>: «Թող Մուստաֆա Քեմալը ընտրութիւն կատարի մեր բարեկամութեան և իր երկրի մեկուսացման միջև, մեկուսացում, որը Թուրքիան կհանձնի անհայտ թշնամիները և նրա բռնակալ հարևանների ձեռքը»<sup>2</sup>, — նախազգուշացնում էր թերթը:

Ահա նման քաղաքական ծրագրով, այն է՝ Լոնդոնի համաձայնագրի ոչ-էական վերանայման և քեմալականների հակասովետական ձգտումները սրելու նպատակադրումով էլ, 1921 թ. հունիսի 4-ին, «անպաշտոն» կերպով Անկարա գործող վեց ֆրանսիական սենատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ֆրանկլեն-Բուլոնը, որը հունիսի 9-ին ժամանելով Անկարա, նույն օրն իսկ բանակցութիւնների մեջ մտաւ անձամբ Մուստաֆա Քեմալի հետ<sup>3</sup>: Թուրքական կողմից բանակցութիւններին մասնակցում էին արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալ-բեյը և զինված ուժերի զլխավոր շտաբի պետ Յեվլի-փաշան: Հենց սկզբից Քեմալը պահանջում է, որպէս բանակցութիւնների հիմք ընդունել «Ազգային ուխտը»: Ֆրանսիական դիվանագետը մերժելով այդ սկզբունքը, պատճառաբանում է այն փաստով, որ Անկարայի կառավարութեան պատվիրակները Լոնդոնի կոնֆերանսում ոչինչ չեն հայտնել այդ փաստաթղթի գոյութեան մասին և վերջինիս իմաստն ու բնութիւնը հայտնի չեն Եվրոպային: Ուստի հարկ է բանակցութիւնների հիմքում դնել Սևրի դաշնագիրը, որպէս «կատարված փաստ»<sup>4</sup>: Քեմալը պատասխանում է, որ Բեքիր Սամի-բեյը շեղվել է իր լիազորութիւններից, եթէ նա Լոնդոնում թաքցրել է «Ազգային ուխտի» գոյութիւնը<sup>5</sup>: Վճռական առարկութեան հանդիպելով, Ֆրանկլեն-

<sup>1</sup> „Le Temps“, 4.6. 1921.

<sup>2</sup> նույն տեղում:

<sup>3</sup> *Atatürk*, Commission nationale turque pour l'UNESCO, Ankara, 1963, p. 117.

<sup>4</sup> նույն տեղում:

<sup>5</sup> М. Кемаль, Путь новой Турции, т. IV, стр. 43.



Բուլոնը խնդրում է որոշ ժամանակով ընդհատել բանակցությունները, «Ազգային ուխտի» բովանդակությունն ուսումնասիրելու համար: Բանակցությունները վերսկսելուց հետո հիմնական տարածայնությունը կապիտուլյացիաների վերացման և Թուրքիայի կատարյալ անկախության ճանաչման շուրջն էր: Մ. Քեմալը հայտարարում է, որ Թուրքիայի լիակատար անկախության ճանաչումը ամենաէական սկզբունքն է, որն իր մեջ պարունակում է երկրի լրիվ ազատությունը քաղաքական, տնտեսական, դրամական, իրավական, ռազմական և մշակութային ասպարեզներում, մինչդեռ կապիտուլյացիաներից յուրաքանչյուրը զրկում է ժողովրդին այդ իրավունքից<sup>6</sup>: Երկու շաբաթ տևող բանակցությունների ընթացքում կողմերը այս հարցում համաձայնության շին գալիս, թեև, ինչպես ասված է Թուրքիայի պաշտոնական պատմության մեջ՝ «Թարիհում», «Պարոն Ֆրանկլեն-Բուլոնը ըմբռնեց թուրք ազգի ձգտումները...»<sup>7</sup>:

Ինչպես նշվեց, ֆրանսիական դիվանագետի առաքելության հիմնական նպատակներից մեկը քեմալականների հակասովետական մտադրությունների բորբոքումն ու խթանումն էր: Բանակցությունների ընթացքում Ֆրանկլեն-Բուլոնը թուրքերին առաջարկում է Ֆրանսիայի աջակցությունը «Անդրկովկասի նախկին կառավարությունների վերականգնման գործում»<sup>8</sup>, սակայն, այս հարցում ևս նա հաջողության չի հասնում, թեև այդ շրջանում Անդրկովկասի սովետական հանրապետությունների հետ պայմանագիր կնքելու հարցում Անկարայի կառավարության գրաված դիրքի պատճառով սովետաթուրքական հարաբերությունները բավականին լարված վիճակում էին գտնվում<sup>9</sup>: Այնուամենայնիվ, ֆրանսիական կա-

<sup>6</sup> *Atatürk*, op. cit., p. 118; *Ցե'ս նակ Ատեմուր Կիլե*, Turkey and the World, էջ 41:

<sup>7</sup> *Tarih*, cilt IV, s. 105.

<sup>8</sup> ЦГАОРСС Азерб. ССР, ф. 28, оп. 1, ед. хр. 68, л. 21.

<sup>9</sup> Այդ մասին մանրամասն տես Ռ. Գ. Մաճակյան, *Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսարանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ*, էջ 30—34:

ուավարութեան ներկայացուցչի և Մուստաֆա Քեմալի միջև հունիսի 20-ին ստորագրվում է «ժամանակավոր համաձայնագիր» թշնամական գործողութիւնները հարավում անհապաղ դադարեցնելու մասին<sup>10</sup>։

Այսպիսով, Յրանկլեն-Բուլոնի առաջին ուղևորութիւնը Թուրքիա և նրա բանակցութիւնները Անկարայի կառավարութեան հետ դրական արդյունքի շահագեցրին, թեև դրանք, ինչ խոսք, մոտեցրին ապագայում կայանալիք համաձայնութիւնը։ Գնահատելով այդ բանակցութիւնների արդյունքները, Յուսուֆ Քեմալ-բեյը Ազգային Մեծ ժողովի հունիսի 27-ի նիստում, Յրանկլեն-Բուլոնի ներկայութեամբ հայտարարում է, որ «Յրանսիան ցանկանում է ամեն գնով հաշտութիւն կնքել մեզ հետ»<sup>11</sup>։

Երբ Յուսուֆ Քեմալը նման հայտարարութիւն էր անում, այդ նույն ժամանակ նրա նախորդը՝ արտաքին գործերի նախկին մինիստր Բեքիր Սամի-բեյը Ազգային Մեծ ժողովի հանձնարարութեամբ շրջագայում էր Եվրոպայում, ամեն առիթով ընդգծելով, որ Թուրքիան ևս ձգտում է համաձայնութեան հասնել Անտանտի տերութիւնների և, առաջին հերթին, Յրանսիայի հետ։ «Անկարայի կառավարութիւնը և Ազգային ժողովը կրթոտ կերպով ցանկանում են ամենակարճ ժամանակում բարեկամութիւն հաստատել Յրանսիայի հետ», — հայտարարեց նա «էկլեր» թերթի թղթակցին Փարիզ ժամանելու առաջին իսկ րոպեներին։ Միաժամանակ նա հավաստիացնում է, որ Կիլիկիայի վերաբերյալ 1921 թ. մարտի 9-ին Ղոնդոնում ստորագրված Ֆրանս-թուրքական համաձայնագիրը չի մերժվել Ազգային Մեծ ժողովի կողմից, այլ միայն մասնակի փոփոխութիւնների կարիք ունի՝ տնտեսական մի քանի հարցերի կապակցութեամբ<sup>12</sup>։ Հունիսի 27-ին Յրանսիայի արտաքին գործերի մինիստրութեան պաշտոնաթերթ

<sup>10</sup> „La guerre de l'indépendance turque“, p. 60.

<sup>11</sup> *Sh'ou Paul du Véou*, №24. աշխ., էջ 304.

<sup>12</sup> «Бюллетень НКВД», 1921, № 90, стр. 57.



«Տան»-ը դետեղել էր Բեքիր Սամի-բեյի մի այլ հայտարարութիւնը. «Փարիզ ճամփորդելու նպատակն է լուծել Կիլիկիայի հարցը, որն ինձ միանգամայն իրագործելի է թվում»<sup>13</sup>:

Անդրադառնալով Բեքիր Սամիի առաքելութեան շարժառիթներին, Կ. Պուսի «Թեվհիդի էֆբյար» թերթը գրում էր, որ «Անկարայի նպատակն է թուրքական ազգային ժրագիրը համաձայնեցնել Արևելքում Անտանտի ապագա քաղաքականութեան հետ»<sup>14</sup>:

Բեքիր Սամի բեյի դիվանագիտական այս առաքելութիւնը Անտանտի տերութիւնների մայրաքաղաքները՝ Լոնոն, Փարիզ և Լոնդոն, թեև հաջողութեամբ չպսակվեց, սակայն զգալի շահով մոտեցրեց ֆրանս-թուրքական մերձեցման եզրերը: Ֆրանսիայի հետ վերջնական համաձայնութեան գալ չհաջողվեց գլխավորապես այն պատճառով, որ Ֆրանսիան շարունակում էր կախման մեջ մնալ Անգլիայից՝ եվրոպական գործերում, ուստի և ստիպված էր դիվանագիտական իր քայլերը ինչ-որ շահով համաձայնեցնել վերջինիս հետ: Իսկ Անգլիան այդ շրջանում մեծ հույսեր էր կապում 1921 թ. հունիսին ձեռնարկված հունական նոր, աննախընթաց հարձակման հետ, որը թվում էր, այսակվելու է քեմալական նստավայրի՝ Անկարայի գրավումով. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում հունական զորքերին հաջողվել էր գրավել Աֆյոն-Կարահիսար, Քյութահյա, Ենիշեհիր, էսկիշեհիր և մի քանի այլ քաղաքներ, կանգ առնելով Անկարայից ընդամենը 60 կմ հեռավորութեան վրա՝ Սակարյա գետի ձախ ափին: Սակայն 1921 թ. օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 13-ը հիշյալ գետի մոտ տեղի ունեցած կատաղի ճակատամարտում քեմալական զորքերը կարողացան ոչ միայն կասեցնել հույների հետագա առաջխաղացումը, այլև վճռական հաղթանակ տանել նրանց դեմ: Սեպտեմբերի սկզբին, երբ Սակարյայի ճակատամարտը տակավին շարունակվում էր, Ֆրանկլին-Բուլոնը վերստին այցելեց Անկարա և

<sup>13</sup> „Le Temps“, 27.6. 1921.

<sup>14</sup> Տէս ԸԾՍԸ ՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 103, ք. 41:

անմիջական բանակցութիւնների մեջ մտալ Մուստաֆա Քեմալի և արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալ բեյի հետ: Այս անգամ բանակցութիւնները, որոնք տեւեցին 37 օր<sup>15</sup>, հանգեցրին համաձայնութեան կողմերի միջև, ըստ որում, Ֆրանսիայի որոշման վրա մեծապէս ազդեց թուրքերի ձեռք բերած հաղթանակը: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրվեց ֆրանս-թուրքական պայմանագիրը<sup>16</sup> հետևյալ բովանդակութեամբ.

Հոդված 1.— Պայմանավորվող կողմերը հայտարարում են, որ ներկա համաձայնագրի ստորագրման պահից սկսած պատերազմական վիճակը նրանց միջև դադարեցվում է. բանակները, քաղաքացիական իշխանութիւնները և բնակչութիւնը անհապաղ տեղյակ կպահվեն այդ մասին:

Հոդված 2.— Ներկա համաձայնագրի ստորագրման պահից սկսած պատերազմող կողմերի ռազմագերիները, ինչպես և ֆրանսիացի կամ թուրք բոլոր բանտարկյալները, ազատ կարձակվեն և համապատասխանաբար կուղեկցվեն ամենամոտ հեռավորութեան վրա գտնվող այն քաղաքները, որոնք կմատնանշվեն այդ նպատակի համար: Հիշյալ հոդվածի արտոնութիւնները տարածվում են երկու կողմերի բոլոր կալանավորների վրա՝ անկախ այն բանից, թե նրանք երբ և որտեղ են կալանքի տակ վերցվել, դատապարտվել կամ գերի ընկել:

Հոդված 3.— Ներկա համաձայնագրի ստորագրութիւնից առավելագույնը երկու ամիս հետո թուրքական զորքերը կքաշվեն 8-րդ հոդվածում նշված գծից հյուսիս, իսկ ֆրանսիական զորքերը՝ հարավ:

Հոդված 4.— Էվակուացիան և տերիտորիայի ընդունումը, որոնք տեղի կունենան 3-րդ հոդվածով նախատեսվող ժամանակամիջոցում, կիրականացվեն երկու կողմերի զինվո-

---

<sup>15</sup> Prof. Dr. Yavuz Abadan, *Inkilâp tarihine giriş*. Ankara, 1960, s. 60.

<sup>16</sup> Գրականութեան մեջ հայտնի է Անկարայի պայմանագիր կամ Ֆրանկլեն-Բելոնի պայմանագիր անուններով:



րական հրամանատարութեան կողմից նշանակված խառը հանձնաժողովի սահմանած պայմանների համաձայն:

Հոդված 5.— Պայմանավորվող կողմերը լիակատար ներում կշնորհեն էվակուացիայի ենթարկված շրջաններում՝ դրանք մյուս կողմին անցնելուց անմիջապես հետո:

Հոդված 6.— Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութունը հայտարարում է, որ փոքրամասնութիւնների իրավունքները, որոնք հանդիսավոր կերպով ճանաչվել են «Ազգային ուխտում», իր կողմից ևս կհաստատվեն այն հիմքի վրա, ինչ որ այդ առթիվ սահմանվել է Անտանտի տերութիւնների և նրա մի քանի դաշնակիցների միջև կնքված համաձայնագրերում:

Հոդված 7.— Ալեքսանդրետի շրջանի համար կսահմանվի հատուկ վարչական ռեժիմ: Այս շրջանի թուրքական ցեղին պատկանող բնակիչները կօգտվեն բոլոր անհրաժեշտ արտոնութիւններից իրենց մշակույթը զարգացնելու համար: Լեզուն այնտեղ պաշտոնական բնույթ կունենայ:

Հոդված 8.— 3-րդ հոդվածում հիշատակված գիծը սահմանված և ճշգրտված է հետևյալ կերպ.

Սահմանային գիծը կանցնի Պայասից անմիջապես հարավ և նկատելիորեն կուղղվի դեպի Մեյդան—էկբեզ (երկաթուղային կայարանը և բնակավայրը թողնելով Սիրիային):

Այդտեղից գիծը կթեքվի դեպի հարավ-արևելք, այն հաշվով, որ Սիրիային թողնվի Մարսովա բնակավայրը, իսկ Թուրքիային՝ Կարնաբան, ինչպես նաև Քիլիս քաղաքը, և կմիանա երկաթուղազծին՝ Չոբան-բեյ կայարանի մոտ: Այնուհետև գիծը կանցնի Բաղդադի երկաթուղով, որի կառամատուցը, մինչև Նուսեյբին, կմնա թուրքական տերիտորիայում: Այնտեղից նա կանցնի Նուսեյբինի ու Զեզիրե իբն Օմարի միջև ընկած հին ճանապարհով, մինչև Տիգրիս գետին միանալու: Նուսեյբին և Զեզիրե իբն Օմար բնակավայրերը, ինչպես և ճանապարհը, կմնան Թուրքիային, սակայն երկու երկրները հավասար իրավունքներ կունենան այդ ճանապարհից օգտվելու մեջ:

Չորան-բեյի և Նուսեյբի միջև ընկած տեղամասի կայարանները կպատկանեն Թուրքիային, որպես երկաթուղու կառամատույցի մասեր:

Ներկա համաձայնագրի ստորագրումից հետո, մեկ ամսվա ընթացքում, կստեղծվի երկու կողմերի պատվիրակներից բաղկացած մի հանձնաժողով՝ վերը հիշատակված գիծն անցկացնելու համար: Այդ հանձնաժողովը գործի կանցնի այդ նույն ժամանակամիջոցում:

Հոդված 9.— Սուլեյման Շահի՝ օսմանյան դինաստիայի հիմնադիր սուլթան Օսմանի պապի գերեզմանը (գերեզմանը ճանաչված է Թուրք Մեզարի անվան տակ), որը գտնվում է Զաբեր-Կալիսիում, իր սպասատների հետ միասին, կմնա որպես Թուրքիայի սեփականություն, որն այնտեղ կկարողանա պահակներ կարգել և թուրքական դրոշ բարձրացնել:

Հոդված 10.— Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը համաձայնվում է Բաղդադի երկաթուղու մի հատվածում, Բոզանթիի և Նուսեյբի միջև, ինչպես նաև Ադանայի վիլայեթի այլ հատվածներում կոնցեսիա տրամադրել ֆրանսիական կառավարության կողմից նշանակված ֆրանսիական մի խմբի, կոնցեսիաներին տրվող բոլոր իրավունքներով ու արտոնություններով հանդերձ, մասնավորապես այն բոլորը, ինչ որ կապված է դրանց շահագործման ու հաղորդակցության հետ:

Թուրքիան իրավունք կունենա իր ռազմական փոխադրումներն իրականացնել Մեյդան—էկբեզից Չորան-բեյ գնացող երկաթուղագծով, սիրիական շրջանում, իսկ Սիրիան իրավունք կունենա իր ռազմական փոխադրումներն իրականացնել Չորան-բեյից Նուսեյբին գնացող երկաթուղագծով՝ թուրքական տերիտորիայում:

Այս հատվածում և նրա ճյուղավորումներում սկզբունքորեն ոչ մի դիֆերենցիալ սակագին չի կարող հաստատվել: Սակայն երկու կառավարություններն էլ իրենց իրավունք են վերապահում հարկ եղած դեպքում ընդհանուր համաձայնությամբ ուսումնասիրելու բոլոր շեղումները, որոնք անհրաժեշտ կլինեն:



Համաձայնության շահասնելու դեպքում, յուրաքանչյուր կողմը գործողութիւններ չազատութիւն կունենա:

Հոդված 11.— Ներկա համաձայնագրի վավերացումից հետո կատեղծվի խառը հանձնաժողով՝ Թուրքիայի ու Սիրիայի միջև մաքսային կոնվենցիա կնքելու համար: Այդ կոնվենցիայի պայմաններն ու տևողութիւնը կորոշվեն հիշյալ հանձնաժողովի կողմից: Մինչև վերոհիշյալ կոնվենցիայի կնքումը երկու երկրները կպահպանեն իրենց գործողութիւններն ազատութիւնը:

Հոդված 12.— Կոնվերթի ջրերը կբաշխվեն Հալիպ քաղաքի և հյուսիսում Թուրքիային մնացած շրջանի միջև այն հաշվով, որ արդարացի կերպով բավարարութիւն տան երկու կողմերին էլ:

Հալիպ քաղաքը հավասարապես կարող է իր հաշվին Եփրատի, Թուրքական տերիտորիայում ընկած, ջրերն օգտագործել շրջանի կարիքները հոգալու համար:

Հոդված 13.— Նստակյաց բնակիչները կամ կիսաքոչվորները, որոնք ունեն արտաավայրեր կամ սեփականութիւն Ծ-րդ հողվածով սահմանված գծից այս կամ այն կողմում, կշարունակեն, ինչպես անցյալում, օգտվել իրենց իրավունքներից: Նրանք կարող են, իրենց իրավունքներն օգտագործելու անհրաժեշտութիւնից ելնելով, ազատ կերպով, առանց մաքսատուրք, արտաավայրերի տուրք կամ որևէ այլ տուրք վճարելու, այդ գծից այս կամ այն կողմը տեղափոխել իրենց անասուններին աճոնի հետ միասին, իրենց գործիքները, ցանքերը և գյուղատնտեսական արտադրանքը, նկատի ունենալով, որ նրանք համապատասխանորեն վճարել են դրանց համար սահմանված հարկերը այն երկրում, որտեղ նրանք բնակվում են<sup>17</sup>:

Ֆրանս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո, նույն օրը, Անկարայի կառավարութիւնն արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալ-բեյը դիմեց Ֆրանկլեն Բուլոնին

<sup>17</sup> „L'Europe nouvelle“, № 45, 5 novembre 1921, p. 1437. նույնը տե՛ս M. Pallarès, նշվ. աշխ., էջ 359—362:

պաշտոնական մի նամակով, որն, ըստ էութեան, լրացնում էր պայմանագրի առանձին հոդվածները: Հիշյալ նամակում ասված էր.

«Ձերդ Գերագանցութուն.

ինձ հաճելի է հույս հայտնել, որ Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարութեան և Ֆրանսիական հանրապետութեան կառավարութեան միջև կնքված համաձայնագիրը, որի նպատակն է վերջնական ու տևական խաղաղութիւն հաստատել, կհանգեցնի այն սերտ հարաբերութիւնների վերականգնմանն ու ամրապնդմանը, որոնք գոյութիւն ունեին անցյալում երկու ազգերի միջև, և Ֆրանսիական հանրապետութեան կառավարութիւնը կաշխատի անկեղծ համաձայնութեան ոգով կարգավորել Թուրքիայի անկախութեան ու սուվերենութեան հետ կապված բոլոր հարցերը:

Մեծ ժողովի կառավարութիւնը, մյուս կողմից, ցանկութիւն ունենալով նպաստել նյութական շահերի զարգացմանը երկու երկրների միջև, հանձնարարել է ինձ ձեռք հայտնելու, որ նա հակված է Խուրշիդի հովտում 99 տարով երկաթի, բրոմի և արծաթի կոնցեսիա տրամադրելու Ֆրանսիական որևէ խումբի, որը ներկա պայմանագրի ստորագրումից սկսած հինգ տարվա ժամանակամիջոցում կձեռնարկի այդ կոնցեսիայի շահագործմանը մի ընկերութեան միջոցով, որը կստեղծվի Թուրքական օրենքներին համապատասխան, մինչև 50 տոկոսը հասնող Թուրքական կապիտալի մասնակցութեամբ:

Բացի դրանից, Թուրքական կառավարութիւնը պատրաստ է մեծագույն բարյացակամութեամբ քննելու հանքերի, երկաթուղիների, նավահանգիստների և զետեքի շահագործման կոնցեսիաների մասին Ֆրանսիական խմբերի կողմից ներկայացվելիք դիմումները, պայմանով, որ այդ առաջարկները համապատասխանեն փոխադարձաբար Թուրքիայի և Ֆրանսիայի շահերին:

Մյուս կողմից, Թուրքիան ցանկանում է օգտվել Ֆրանսիացի մասնագետ դասախոսների համագործակցութիւնից իր պրոֆեսիոնալ դպրոցներում: Այդ առթիվ նա, ավելի ուշ,



իր կարիքների մասին տեղյակ կպահի ֆրանսիական կառավարութեանը:

Վերջապես, Թուրքիան հույս է տածում, որ պայմանագրի կնքումից սկսած ֆրանսիական կառավարութունը կբարեհաճի թուլատրելու ֆրանսիական կապիտալիստներին տնտեսական և ֆինանսական հարաբերութունների մեջ մտնելու Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութեան հետ»<sup>18</sup>:

Ինչպես երևում է Անկարայի պայմանագրի բովանդակութիւնից, Թուրքիայի և Ֆրանսիայի համար սկզբունքային նշանակութուն ունեին 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածները, մյուսները վերաբերում էին նվազ կարևոր հարցերի:

1-ին հոդվածը՝ պատերազմական գործողութիւնների անհապաղ դադարեցման մասին, և 3-րդ ու 4-րդ հոդվածները ֆրանսիական զորքերի հեռացման մասին, ըստ էութեան ազդարարում էին քեմալական Թուրքիայի ռազմական հաղթանակը և, ինչ խոսք, առավել մեծ նշանակութիւն ունեին վերջինիս համար՝ հնարավորութիւն ընձեռելով Կիլիկիայում առկա ուժերը փոխադրել Արևմտյան ճակատ՝ հույների դեմ պայքարելու Բացի դրանից, Կիլիկիայի հզոր տնտեսական պոտենցիալն այսուհետև ամբողջովին կարող էր օգտագործվել Անկարայի կառավարութեան կողմից պատերազմական նպատակների համար: Այսպիսով, Կիլիկիայի ճակատի հաշվին անհամեմատ ուժեղանում էր Արևմտյան ճակատը:

1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Թուրքիա այցելած սովետական ականավոր զորավար ու պետական գործիչ Մ. Վ. Ֆրունզեն նշում էր, որ ամիսյն ֆրանս-թուրքական պայմանագիրն է, որ Անատոլիական Թուրքիային թույլ է տալիս հենվելու նվազ տուժած շրջանների վրա, և հնարավոր դարձնում պայքարի շարունակումը՝ հաջողութեան հասնելու շանսերով»<sup>19</sup>:

<sup>18</sup> „L'Europe nouvelle“, № 45, 5 novembre 1921, p. 1436.1

<sup>19</sup> М. В. Фрунзе, Доклад о поездке в Ангору на объединенном заседании Совнаркома и ЦИКа Украины. Собр. соч., т. 1, М.—Л., 1929, стр. 359.

Հետագա իրադարձութիւնները ցույց տվեցին, որ Կիլիկիայի հտգրավումը Ֆրանսիացիներից էական նշանակութիւն ունեցավ հուլիների դեմ 1922 թ. քեմալական զորքերի ձեռք բերած հաղթանակներում:

6-րդ հոգւածը՝ Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնութիւնների «պաշտպանութիւն» մասին Անկարայի կառավարութիւնի բացահայտ հաղթանակն էր նշանավորում՝ փոքրամասնութիւնների իրավունքների կոնկրետ ճանաչման փոխարեն հարցը կապելով «Ազգային ուխտում» տեղ գտած «հանդիսավոր» և ոչինչ չպարտավորեցնող ձևակերպման հետ: Այս հարցում Ֆրանսիայի կատարած զիջումը խորանում էր այն բանով, որ, ի տարբերութիւն 1921 թ. մարտի 9-ի ֆրանս-քեմալական համաձայնագրի, որով թուրքական կառավարութիւնը պարտավորվում էր զինաթափ անել զենք ունեցող ազգաբնակչութիւնը, Անկարայի պայմանագրում նման կետն իսպառ բացակայում էր: Դա նշանակում էր, որ Կիլիկիայի ոտքից գլուխ զինված թուրքական շեփեները, քրիստոնյաների կողոպուտի ու սպանութիւնների նպատակով կազմակերպված բազմաթիվ ավազակախմբերն ու կասկածելի ալլ խմբերը շարունակելու էին ազատ գործել՝ ի սարսափ հիմնականում անզեն քրիստոնյա ազգաբնակչութիւն:

Պայմանագրի 7-րդ հոգւածը՝ Ալեքսանդրետի սունջակի «վարչական հատուկ ունեցում» մասին, ըստ էութիւնի նույնպէս խոշոր մի զիջում էր, որ Ֆրանսիան անում էր Թուրքիային՝ ի հաշիվ սիրիական ժողովրդի: Հիշյալ հոգւածը հետագայում առիթ ծառայեց Անկարայի կառավարող շրջանների համար՝ Ալեքսանդրետի հարցը միջազգային դիվանագիտութիւնի թատերաբեմ հանելու և իմպերիալիստական գործարքի ճանապարհով այն ապօրինի կերպով Թուրքիային միացնելու<sup>20</sup>:

---

<sup>20</sup> Հատկանշական է, որ Անկարայի պայմանագրի ստորագրումից ընդամենը մեկ տարի հետո թուրքական մամուլը բացեփրաց գրում էր այն մասին, որ Ալեքսանդրետը պետք է «ետ վերադարձնել տիրոջը»: Ավելին, նման պահանջով Ազգային մեծ ժողովում 1922 թ. նոյեմբերի 3-ին



Ինչ վերաբերում է Անկարայի պայմանագրի 10-րդ հոդվածին՝ ֆրանսիական կապիտալիստներին կոնցեսիաներ տրամադրելու վերաբերյալ, դրանով քեմալական կառավարութունը սկզբունքորեն շեղվում էր իր նախկին դիրքից և, անկասկած, դիջում անում իմպերիալիստներին, սակայն այդ դիջումը, ինչ խոսք, նվազ կարևոր էր՝ պայմանագրով ձեռք բերած հաջողութունների համեմատ: Վերը բերված Յուսուֆ ֆեմալ-բեյի նամակից երևում է, թե ինչպիսի պայմանների կատարմամբ պիտի ուղեկցվեր կոնցեսիաների շնորհումը: Անկարայի կառավարութունը ցանկացած պահին կարող էր հայտարարել, որ տվյալ կոնցեսիան հակասում է Թուրքիայի ազգային շահերին: Ինչպես տեսնում ենք, 10-րդ հոդվածով Ֆրանսիան առանձնապես մեծ շահ չէր ստանալու, ինչպես կարող էր թվալ առաջին հայացքից:

Կար սակայն մի հանգամանք, որը, թեև պայմանագրի մեջ չէր արտացոլվում, բայց Ֆրանսիան դրանից շահում էր. դա ֆրանսիական ուժերի կենտրոնացումն էր «հիմնական» պատառում՝ Սիրիայի տերիտորիայում և այս վերջինի սահմանների ամրապնդումը:

Մյուս հանգամանքը, որը նույնպես իր արտացոլումը չէր կարող գտնել բուն պայմանագրում, և որը, սակայն, խիստ կարևոր էր գաղութատիրական Ֆրանսիայի ապագա քաղաքականության տեսակետից, դա քեմալականների հետ համաձայնության գալու և նրանց դեմ պայքարելուց հրաժարվելու փաստն էր, որը մեծ գոհունակությամբ ընդունվեց միջամեդական աշխարհում, այդ թվում և Ֆրանսիայի գաղութային տիրույթներում: «Վերջապես,— գրում էր «L'Europe Nouvelle» շաբաթաթերթը,— մի նոր փայլ է ավելանում Ֆրանսիայի ան-

---

հանդես եկավ Բիթլիսի պատգամավոր Յուսուֆ Զիյա-բեյը, ասելով հետևյալը. «Ալեքսանդրիտի շրջանը Սիրիային անցավ ֆրանս-թուրքական պայմանագրով, մեր ծանր դրության հետևանքով: Ներկայումս այդ ծանր վիճակը վերացված է, և մենք ինչ էլ որ լինի պետք է այն վերադարձնենք մեզ»: Sésu ЦГАВМФ, ф. Р. 1, оп. 3, д. 1589, л. 153.

վանը ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև մահմեդական բոլոր երկրներում, որտեղ շնայած Թուրքիայի սխալներին ու անհաշոդություններին, մշտապես իշխում է խալիֆաթի հեղինակութունը: «Այս արձանագրության (Անկարայի պայմանագրի— Ռ. Ս.) շնորհիվ,— գոհունակությամբ ավելացնում էր թերթը,— մենք կարող ենք հույս տածել մահմեդական աշխարհի աչքում վերստին գրավելու օրինական այն տեղը, որ մենք, ավաղ, կորցրեցինք պատերազմից մի քանի տարի առաջ՝ մասամբ գերմանացիների ինտրիզների, մասամբ էլ մեր սեփական անհոգության պատճառով...»<sup>21</sup>:

Վերջապես Անկարայի պայմանագիրը, հրապարակված տեքստից բացի ուներ նաև գաղտնի, կամ ինչպես ասել էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի փոխ-նախագահ Ջելալդղին Արիֆ-բեյը, «բերանացի» պայմաններ<sup>22</sup>: Ըստ այդ պայմանների, Ֆրանսիան համաձայնվում էր 200 միլիոն ֆրանկի արժողությամբ զենք և ռազմամթերք վաճառել Թուրքիային. այդ թվում 10 հազար զինվորի լրիվ հանդերձանք, 8 հազար մաուզեր տիպի հրացան իրենց ռազմանյութերով, 5 հազար ձի (ֆրանսիական հեծելազորից և Բնդանոթաբարձ ձիեր), 12 օդանավ<sup>23</sup>, ինչպես նաև «Creusot» տիպի Բնդանոթներ<sup>24</sup>:

Անկարայի պայմանագրի գաղտնի այս հոդվածները, ինչպես նաև այդ պայմանագիրն ամբողջությամբ, Ֆրանսիայի կողմից ուղղված էր իր հզոր ախոյանի՝ Անգլիայի դեմ, Մերձավոր Արևելքում նրա դիրքերը խարխլելու, նաև տնտեսական ասպարեզում Ֆրանսիայի նախապատերազմյան շահերը վերականգնելու նպատակին պիտի ծառայեր: Ուստի զարմանալի չէր, որ ֆրանս-թուրքական համաձայնագրի ստորագրումը Անգլիայի վրա ունեցի պայթյունի տպավորություն թողեց, թեև անգլիական դիվանագիտությունը Ֆրանկլին-Քուլոնի Թուրքիա կատարած զույգ ուղևորություն-

<sup>21</sup> „L'Europe nouvelle“, № 44, 29 octobre 1921.

<sup>22</sup> Տե՛ս ՆՄՍԶ ՆՄՍԸ ԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 86, ք. 137.

<sup>23</sup> „Journal des Débats“, 24.1. 1922.

<sup>24</sup> Lord Kinross, op. cit., p. 285.



ներից ժամանակին կռահել էր, որ իր «դաշնակիցը» քեմալականներին հետ անջատ համաձայնություն հասնելու նոր փորձեր է անում<sup>25</sup>։

Հիմնական մեղադրանքը, որ անգլիական մամուլը ներկայացնում էր ֆրանսիական դիվանագիտությանը, դա դաշնակցային պարտավորությունների խախտումն էր, Ֆրանսիայի կողմից տվյալ քայլով հանդես բերած «ուխտադրությունը»։ «Ֆրանսիան մարտահրավեր նետեց դաշնակիցներին, — գրում էր «Դեյլի ֆրոնտիկլ» թերթը։ Երկուսից մեկը. կամ մենք դաշնակիցներ ենք, կամ այդպիսին չենք։ Անկարայի պայմանագիրը ցույց է տալիս, որ մենք դաշնակիցներ չենք»<sup>26</sup>։

«Ֆրանս-անգորական պայմանագիրը, — ավելացնում էր «Օբսերվեր» թերթի դիվանագիտական թղթակիցը, — ոչ միայն ծաղր է միջդաշնակցային համերաշխության նկատմամբ, այլև, պայմանագրի բուն էությունը արմատապես խախտում է դաշնակիցների մի քանի հիմնական սկզբունքները։ Այսպես, օրինակ, Անկարայի կառավարությունը վերջնականապես ճանաչվել է Ֆրանսիայի կողմից, որպես Թուրքիայի միակ գործադիր իշխանություն...»<sup>27</sup>։ Իսկ հայտնի քաղաքական մեկնաբան Զորջ Գլեսզոուն գտնում էր, որ Անկարայի պայմանագրի լավ և վատ կողմերից առավել կարևոր է այն հարցը, թե Անտանտը շարունակո՞ւմ է գոյություն ունենալ, թե՞ այլևս լուծարքի է ենթարկվել Ֆրանսիայի միակողմանի քայլերով։ «Եթե Ֆրանսիան մերժում է համագործակցության ոգին և գործում միայնակ, — գրում էր հեղինակը, — արդյոք Մեծ Բրիտանիան պե՞տք է հետևի նրա օրինակին, և եթե այո, ապա ի՞նչ կմնա Անտանտից...»<sup>28</sup>։

---

<sup>25</sup> Թուրքիային քաջածանոթ անգլիական դիվորական Հարոլդ Արմստրոնգը գրում էր, որ այս շրջանում «ֆրանսիան գաղտնի բանբերներ էր ուղարկել Անգորա՝ օգնություն տրամադրելու խոստումներով»։ Տե՛ս H. C. Armstrong, Grey Wolf. Mustafa Kemal. An intimate study of dictator. London, 1938, p. 143—144.

<sup>26</sup> Տե՛ս «Արձագանք Փարիզի», 10 նոյեմբերի 1921 թ., թիվ 15։

<sup>27</sup> ЦГАОПСС СССР, ф. 391, оп. 2, ед. хр. 76, л. 440.

<sup>28</sup> „L'Europe nouvelle“, № 48, 26 novembre 1921, p. 1523.

Միայն պահպանողական «Թայմս» թերթն էր, որ հակադրովելուով մյուսներին, ցավով խոստովանում էր, որ «Ֆրանսիացիներն առաջինը ճիշտ ըմբռնեցին Փոքր Ասիայում սահղծված դրուժյունը», և միաժամանակ զղջում, որ Ֆրանս-քեմալական համաձայնագրի հետ մեկտեղ ընդհանուր հաշտություն չկնքվեց<sup>29</sup>:

Անգլիական մամուլի «անսպաշտոն» բողոքներին ու քննադատությանը հետևեցին «Ֆորին օֆիս»-ի դիվանագիտական ելույթները, որոնք դժվարությամբ էին քողարկում Ֆրանսիայի դաշնակցի դժգոհությունը:

Անկարայի պայմանագիրը, որն անգլիական որոշ հեղինակներ համարում են սոսկ «Ֆրանսիական ինտրիգների արդասիր»<sup>30</sup>, «ղարմանքի ու վախի զգացում ներշնչեց լորդ Քերզոնին, որին Ռամբորդը (անգլիական դեսպանը Կ. Պոլսում — Տ. Ս.) գրում էր, որ Ֆրանսիայի այդ անազնիվ քայլը վտանգի ենթարկեց դաշնակիցների դիրքերն ամբողջությամբ»<sup>31</sup>:

1921 թ. նոյեմբերի 5-ին լորդ Քերզոնը իր մոտ է կանչում ֆրանսիական դեսպան Սենտ-Օլեբրին և նրան հանձնում անգլիական կառավարության հուշագիրը, որտեղ կետ առ կետ շարադրված էին Անկարայի պայմանագրի դեմ Անգլիայի բոլոր առարկությունները: Դրանք բաժանված էին երկու մասի:

## Ա ո ա ջ ի ն մ ա ս

1. Անկարայի համաձայնագիրը անջատ հաշտություն է, այն հակասում է 1915 թ. նոյեմբերին կնքված պակ-

<sup>29</sup> ИГАОРСС, ф. 391, оп. 2, ед. хр. 76, л. 441.

<sup>30</sup> J. A. R. Marriott, The Eastern Question. An historical study in European diplomacy. Oxford, 1951, p. 530. Անգլիական որոշ հեղինակներ, սակայն, գտնում են, որ Ֆրանսիայի այդ անօգուտ քայլը կարելի է արդարացնել այն բանով, որ վերջինս զգում էր իր ռազմական ու քաղաքական թուլությունը Սիրիայում, համոզված էր, որ պետք է հրաժարվել հույների անխոհեմ քաղաքականությունից, և հավատացած էր, որ Մեծ Բրիտանիան կլքի իրեն եվրոպական գործերում: *Sh' u M. N. Medlicot*, British Policy since Versailles 1919—1963, London, 1968, էջ 39:

<sup>31</sup> Lord Kinross, op. cit., p. 286.



տին, որը դաշնակիցներին արգելում է անշատ պայմանագրեր կնքել.

2. Անշատ այդ համաձայնագրերն անհամատեղելի են միութեան (Անտանտի) գործունեության հետ.

3. Անկարայի համաձայնագիրը թուլացնում է Ֆրանսիայի հեղինակությունը Արևելքի հարցերը դաշնակիցների կողմից համատեղ կարգավորելու գործում:

### Ն Ր Կ Ե Ռ Ե Ղ Մ Ա Ս

1. Փոքրամասնությունները, հակառակ Ֆրանսիային տրված մանդատի, դադարում են հովանավորություն ստանալուց.

2. 3-րդ հոդվածում հիշատակված ֆրանսիական ղորքերի նահանջը՝ երկու ամսվա ընթացքում, հակասում է եռյակ համաձայնագրին<sup>32</sup>.

3. Հոկտեմբերի 20-ի պայմանագրի համաձայն երկաթգիծն անցնում է թուրքական տերիտորիայով և կորցնում է այն ապահովությունը, որ նա ներկայացնում էր, երբ ամբողջովին ընկած էր ֆրանսիական գոտում.

4. Տնտեսական կոնցեսիաները հակասում են եռյակ համաձայնագրին.

5. Յուսուֆ Քեմալ-բեյի նամակը պատասխան է պահանջում<sup>33</sup>,

Քերզոնի հուշագիրը հանձնելուց մի քանի օր հետո Փարիզի բրիտանական դեսպանությունը ֆրանսիական թերթերում հրապարակելու համար հետևյալ նոր հուշագիրը ներկայացրեց.

«Վերջին շաբաթվա ընթացքում ֆրանսիական մամուլը ազատ հայտարարում էր, որ

ա) Ֆրանկլեն Բուլոնի կողմից Անկարայում կնքված պայմանագիրը շատ աննշան չափով, կամ նույնիսկ ոչնչով չի

<sup>32</sup> 1920 թ. օգոստոսի 18-ին Փարիզում Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի միջև կնքված:

<sup>33</sup> „L'Asie française“, Novembre 1921, p. 439.

տարբերվում այն համաձայնագրից, որ Բրիտանն ու Բեքիր Սամի-բեյը ստորագրեցին Լոնդոնում մարտ ամսին.

բ) Նորին մեծություն Բրիտանական կառավարությունը երբեք առարկութիւն չի ունեցել այդ համաձայնագրի դեմ, բացառութեամբ զուտ բանավոր առարկութիւնների, որոնք ոչ մի գրավոր հետք չեն թողել:

Կրկնվող այս պնդումների առկայութեան պայմաններում, Նորին մեծութեան դեսպանութիւնը հարկ է համարում ներկայացնել փաստերն այնպես, ինչպես որ դրանք կան իրականում:

Ֆրանկլեն Բուլոնի պայմանագիրը պարունակում է հետևյալ նոր դրույթները.

1. Պատերազմական վիճակի դադարեցում, համաձայն առաջին հոդվածի, որը հավանաբար ենթադրում է հաշտութեան կնքումը Ֆրանսիայի և Անգորայի կառավարութեան միջև և վերջինիս ճանաչումը Ֆրանսիայի կողմից, որպես Թուրքիայի օրինական իշխանութեան.

2. Ֆրանսիայի համաձայնութիւնը, 6-րդ հոդվածով, ազգայնականների պահանջին՝ ազգային փոքրամասնութիւնների շահերի ընդհանուր պաշտպանութեան վերաբերյալ, զգալիորեն տարբերվում է Սևրի դաշնագրով նախատեսված պայմաններից.

3. Նիսիբիսի և Տիգրիսի միջև ընկած սահմանի փոփոխութիւն՝ 8-րդ հոդվածով.

4. Թուրքերին իրավունք է տրվում Բաղդադի երկաթուղին օգտագործել Սիրիայի տերիտորիայում ռազմական փոխադրումներն ապահովելու նպատակով.

5. Ֆրանկլեն Բուլոնին ուղղված Յոսուֆ Քեմալ բեյի նամակը, որտեղ Թուրքիայի անկախութեան ու ինքնուրույնութեան հարցում Ֆրանսիայի կողմից նրան ցույց տրվելիք աջակցութիւնը կապվում է զանազան կոնցեսիաներ տրամադրելու խոստումների հետ, շատ ավելի հեռուն է գնում այն պայմանների համեմատ, որոնք նախատեսված էին Բեքիր Սամի բեյի հետ կնքված Ֆրանսիական համաձայնագրում:



«Ինչ վերաբերում է երկրորդ (բ) կետին,— ասվում էր հուշագրի վերջում,— ապա միանգամայն սխալ է հայտարարել, թե Նորին մեծության կառավարութունը երբեք առարկութուն չի ունեցել Բեքիր Սամի բեյի համաձայնագրի դեմ»<sup>34</sup>, ի ապացույց այս վերջին առարկության, անգլիական հուշագրում բերված էին Լոնդոնի պայմանագրի կնքումից հետո ֆրանսիական կառավարությանը ուղղված մի շարք պաշտոնական բողոքները<sup>35</sup>:

Ինչպես տեսնում ենք, անգլիական կառավարության ներկայացված պաշտոնական առարկություններում ևս հիմնական շեշտը դրվում էր Ֆրանսիայի կողմից իր դաշնակցային ու պայմանագրային պարտավորությունները խախտելու վրա: Մինչդեռ իրականում, առաձգական ու արտաքուստ զուստ անգլիական այդ փաստաթղթերի տակ թաքնված էր ծովերի երբեմնի թագուհու լուրջ անհանգստությունը Մերձավոր Արև-վելքի խաղաղեցման հարցում իրեն կանխելու փաստից և, այդպիսով, մահմեդական աշխարհում ի հաշիվ իր հեղինակության անկման Ֆրանսիայի ազդեցության ուժեղացումից:

«Եթե ֆրանս-թուրքական համաձայնությունն այնքան մտահոգություն է պատճառել Անգլիային,— գրում էր Ս. Կասյանը,— դրդել Լլոյդ-Ջորջի կառավարությանը ներկայացնելու Բրիանին երկու վճռական նոտա, առիթ տվել անգլիական մամուլին աղմուկ բարձրացնել, ապա դրա պատճառն այն չէ միայն, որ նրա նյութական շահերը թուրքական տերիտորիայի վրա տուժում են, այլև այն, որ կորցնելով իր «բարոյական» ազդեցությունը Թուրքիայում՝ կարող է կորցնել այն, նաև իր մյուս մահմեդական գաղութներում...»<sup>36</sup>:

Թուրքիայի ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցը ևս, որին այնքան «սուր» տեսք էին տալիս անգլիական դիվանագիտությունն ու մամուլը, նրանց կողմից

<sup>34</sup> „L'Asie française“, Novembre 1921, p. 439.

<sup>35</sup> Տե՛ս M. Paillarès, նշվ. աշխ., էջ 404—405:

<sup>36</sup> Սարգս Կասյան, Հնտիր երկեր, էջ 154:

առաջ էր քաշված ոչ թե քրիստոնյաներին հովանավորելու, այլ Ֆրանսիային վարկաբեկելու, նրա քաղաքականության անկայունությունն ու «ուխտադրժությունը» մերկացնելու նպատակով:

Ի՞նչ պատասխան հակադրեց անգլիական այս բողոքներին ու մեղադրանքներին Ֆրանսիայի դիվանագիտությունը:

Պետք է ասել, որ «Քե դ' Օրսեն», ինչպես և Լոնդոնի ֆրանսիական դեսպանությունը, որոշ ժամանակ կատարյալ լուռություն էին պահպանում, պաշտոնական ոչ մի հայտարարություն մը հանդես չեկան, ֆրանսիական մամուլին թողնելով Անկարայի պայմանագրի անհրաժեշտությունը «հիմնավորելու», այն հարձակումներից պաշտպանելու խնդիրը: Իսկ ֆրանսիական մամուլի գերակշռող մասը, (բացառությամբ «Եռուռնալ դե սեբա» և «Էլ էկլեր» թերթերի) ծավալահարուստություններով դիմավորեց Ֆրանկլեն-Բուլոնի պայմանագիրը, մեծաբուռ էր Բրիտանիա «դիվանագիտական այդ հիանալի հաջողության համար»: Արտաքին գործերի մինիստրության պաշտոնաթերթ «Տան»-ը այն որակեց, որպես «մի բարեբարություն ամբողջ աշխարհի համար»<sup>37</sup>: «Նա (ֆրանսիական մամուլը— Ռ. Ս.) մոռացել էր երիտթուրքերի աննախընթաց շարագործությունները,— գրում էր «Բոսֆոր» թերթի խմբագիր Պայառեսը,— նա մոռացել էր Մարաշը, Ուրֆան, Այնթապը, Սիսը, Հաճընը, մոռացել էր հայերի մատուցած ծառայությունները, նա մոռացել էր մեր կողմից ստանձնած ազնիվ պարտավորությունը՝ ազատագրել այդ մշտական կեղեքվածներին. նա ամեն ինչ մոռացել էր՝ հիշելու համար միայն և միայն «ավանդական այն կապերը, որոնք միացնում են Ֆրանսիան թուրքիայի հետ»<sup>38</sup>:

Ֆրանսիական առանձին լրագրողների հայանպաստելույթները, սակայն, որոնք նույնպես իրենց աստառն ունեին, կորչում էին ընդհանուր հավանության ու գովասանքի թանձր աղմուկի մեջ:

<sup>37</sup> M. Paillarès, op. cit., p. 364.

<sup>38</sup> Նույն տեղում:



Անկարայի պայմանագրի «պաշտպանութունը», սակայն, միակողմանի չէր ընթանում ֆրանսիական մամուլում: Թերթերի մի մասը դերադասում էր Ֆրանսիայի դաշնակցի դժգոհությունն ու զայրույթը մեղմացնել, պայմանագրին զուտ «լուկալ», մասնավոր մի քայլի բնույթ տալով: «Խոսքը ոչ թե քաղաքական լայն նշանակություն ունեցող պայմանագրի մասին է, — գրում էին թերթերը, — պայմանագրի, որը լուծում է դաշնակիցների ու Օսմանյան կայսրության միջև գոյություն ունեցող բոլոր վիճելի հարցերը, այլ միայն հատուկ մի համաձայնագրի, որը նպատակ ունի վերջնական և իսկական խաղաղություն հաստատել Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև և սիրալիորեն կարգավորել վիճելի այն հարցերը, որոնք ծագում են Փոքր Ասիայում նրանց հարևանության փաստից<sup>39</sup>, «Տան» թերթը, ժխտելով անգլիական այն առարկությունը, թե Անտանտի քաղաքականությունը կանխագծված է Սևրի պայմանագրով, ուստի Ֆրանսիան իրավասու չէր միակողմանիորեն իր զորքերը դուրս բերելու Կիլիկիայից, մատնանշում էր իտալիայի օրինակը, որն իր զորքերը դուրս էր բերել Կոնիայի նահանգից, սակայն Անգլիան դրա դեմ չէր բողոքել»<sup>40</sup>:

Եթե «Քե դ'Օրսե»ի պաշտոնաթերթը զուսպ և անուղղակի փաստարկներով էր պաշտպանում ֆրանսիական դիվանագիտության անջատ քայլը, ապա «L'Europe nouvelle» շաբաթաթերթը անսքող կերպով ընդգծում էր պայմանագրի «հիմնական» նշանակությունը՝ Ֆրանսիայի հեղինակության բարձրացումը իսլամի աշխարհում: «Անգորայի հարցը և մահմեդական հասարակական կարծիքը» խորագիրը կրող հոդվածում արդեն հիշատակված Պոլ Բրյուզոնը բանավիճելով անգլիական լրագրողների հետ, կտրականորեն հայտարարում էր, որ միայն Ֆրանսիան ինքն է իրավասու որոշելու, թե որևէ քայլ ձեռնադրվի է արդյոք իր շահերին, թե ոչ, և եզրակացնում, որ Անկարայի պայմանագիրը ձեռնադրվել է նրան, որովհետև

<sup>39</sup> Տե՛ս «Бюллетень НКВД», № 103, էջ 22:

<sup>40</sup> „Le Temps“, 8.11. 1921.

«Ֆրանսիան մահմեդական մի մեծ տերութիւնն է»<sup>41</sup>: Ասլա հիմնավորում իր պնդումը փաստերով. «Գարեսի ծոցից մինչև Ռաբատի ծովափերը պայմանագրի ստորագրման երջանիկ լուրը թեթև շնչելու առիթ տվեց... Կարելի է ասել, միանգամից վերջ դրեց այն երկընտրանքին, որը հանգիստ չէր տալիս 15 միլիոն մարդկանց խղճին: Կոշմարը վերանում է, — հայտարարում էր աֆրիկական Ֆրանսիան իր սուրբ մինարենների խավարում. Անատոլիայի մեր եղբայրները, դավանակից մեր եղբայրները, ցեղակից մեր եղբայրները, Աստծո շնորհիվ հասկացան, թե որտեղ էր նրանց համար ճշմարտութիւնն ու ապագան...»<sup>42</sup>: Այնուհետև, ցույց տալու համար Ալժիրի, Թունիսի, Մարոկկոյի և Ֆրանսիայի այլ գաղութների տեղը վերջինիս թուրքասիրական քաղաքականութեան մեջ, հեղինակը մեջ էր բերում Ալժիրի «Իկդամ» թերթում տպագրված Ահմեդ Բալլուլի հոդվածը, որը, մեր կարծիքով, հիրավի խիստ հատկանշական է.

«Որպես ալժիրցի մահմեդական, — նշում էր հոդվածագիրը, — մենք երջանիկ ենք հաստատելու հույն-թուրքական կոնֆլիկտում Ֆրանսիայի գրաված դիրքը, և մենք կարող ենք ասել, որ Քե դ'Օրսեի քաղաքականութեանը նախանձախնդրութեամբ են հետևում Ֆրանսիայի կողմից սղատագրված բոլոր մահմեդականները: Բազմաթիվ նշանները ցույց են տալիս, որ գաղութային տեսակետից մեր ներկա արտաքին քաղաքականութիւնը լավ արդյունքներ է տալիս: Այն ժամանակ երբ Անգլիան պայքարում է ավելի ու ավելի մեծ դժվարութիւններով դեմ, երբ նրա ջահը բռնկվում է մերթ այստեղ, մերթ այնտեղ, մեզ մոտ ոչ մի անհանգստութիւն չկա: Սիրիայի խաղաղեցումն ընթանում է նորմալ, Մարոկկոյում ռիֆերն իրենք ճանաչում են Ֆրանսիայի ուժը, և գուցե դրանով իրենցը մատուցելով նրա իսլամասիրական քաղաքականութեանը, ձեռնպահ են մնում ամեն մի ներխուժումից մեր տերիտորիա:

<sup>41</sup> „L'Europe nouvelle“, № 49, 3 décembre 1921, p, 1558.

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 1559:



Ալժիրում, Թունիսում, Մադագասկարում հուզումների նշույլ անգամ չկա և բողոքները, որ գոյություն ունեն, սոսկ ներքին կարգի են. նրանք ոչ միայն ուղղված են այդ գաղութները Ֆրանսիայից հեռացնելուն, այլ, ընդհակառակը, նպաստում են նրանց առավել մերձեցմանը մետրոպոլիայի կյանքին...»<sup>43</sup>:

Սակայն Անկարայի պայմանագիրը ոգևորությամբ ընդունվեց Ֆրանսիայի ոչ միայն հյուսիս-աֆրիկյան գաղութներում, այլև արաբական թերակղզու նրա տիրույթներում՝ Սիրիա—լիբանանում: «Տան» թերթը, օրինակ, չէր թաքցնում իր գոհունակութունը այն բանի առթիվ, որ թուրք-ֆրանսիական պայմանագիրը բավարարվածությամբ ընդունվեց Բեյրութի և ներքին շրջանների մահմեդականների կողմից: Թերթը նշում էր նաև, որ «մահմեդականները երջանիկ են այն ծառայությունից, որ Ֆրանսիան մատուցեց Իսլամին՝ խալիֆաթը թողնելով Կոստանդնուպոլսում և պահպանելով նրա ողջ հեղինակությունը»<sup>44</sup>:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի պաշտոնական շրջանների վերաբերմունքին, ապա, նախքան բրիտանական նոտաներին պատասխանելը, հարցը քննության առնվեց ֆրանսիական սենատում պայմանագրի ստորագրումից մեկ շաբաթ հետո, 1921 թ. հոկտեմբերի 27-ին: Հանդես գալով «բացատրություններով», մինիստրների խորհրդի նախագահ Բրիանը ընդգծում էր թուրքերի հետ Կիլիկիայում համաձայնության գալու և նրանց հետ «լուկալ» պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը «այն բանից հետո, երբ ականերև դարձավ, որ Արևելքում ընդհանուր խաղաղություն հաստատելն անհնարին է»<sup>45</sup>:

«Մենք թուրքիայում Ֆրանսիայի հանդեպ ջերմ համակ-

<sup>43</sup> „L'Europe nouvelle“, № 49, 3 décembre 1921, p. 1559.

<sup>44</sup> „Le Temps“, 16.11. 1921.

<sup>45</sup> „L'Asie française“, décembre 1921, № 197, p. 482.

րանքի հանդիպեցինք,— գոհունակությամբ նշում էր Ֆրանսիական կառավարության ղեկավարը. հանդիպեցինք բուռն ցանկության՝ ուղղելու սխալը և վերադառնալու վաղեմի ավանդույթներին»<sup>46</sup>:

Սենատի մի քանի անդամներ հանդես եկան առարկություններով, կառավարությանը մեղադրելով 1921 թ. մարտի 9-ի Լոնդոնի համաձայնագրից զգալիորեն շեղվելու մեջ, մասնավորապես, փոքրամասնությունների պաշտպանության հարցում: Սենատորներ Մուտեն, Լամարգելը և Ֆլանդենը խիստ քննադատության ենթարկեցին Անկարայի պայմանագիրն այն բանի համար, որ նրանում քրիստոնյաների իրավունքները ապահովված չեն ամենևին: Վերջինս վկայակոչեց «պատերազմի տարիներին հայերի նահատակությունը», ինչպես և դաշնակիցների գործին նրանց մատուցած ծառայությունը, «նրանց, ովքեր համախմբված էին Ֆրանսիական դրոշի ներքո կամ կովում էին ուսական բանակներում...»<sup>47</sup>: Սենատին հիշեցնելով Ֆրանսիայի պրեզիդենտ Պուանկարեի խոստումները ընդամենը երկու տարի առաջ, 1919 թ. փետրվարին, այն է՝ «պատասխանել այն վստահությունը, որ հայերը հանդես բերեցին Ֆրանսիայի նկատմամբ», Ֆլանդենը քննադատում էր Բրիտանիան այն բանի համար, որ Ֆրանսիայի կողմից հայերին տրված խոստումներից և ո՛չ մեկը տեղ չէր գտել Անկարայի պայմանագրում, դրանք փոխարինված էին քեմալական կառավարության սովորական խոստումներով՝ հաստատել «Ազգային ուխտով» ճանաչված փոքրամասնությունների իրավունքները: «Նման պայմաններում,— եզրակացնում էր նա,— առաձգական այդ դատարկաբանությունը չի կարող հանգստացնել Կիլիկիայի ազգաբնակչությանը»<sup>48</sup>:

«Իր ստեղծագործության այդ քննադատություններին,— գրում է Ա. Մանդելշտամը,— պ. Արիստիդ Բրիանը հակադրեց

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> „L'Asie française“, février 1921, № 199, p. 71—73.

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 74:



պետական շահերը», այն է՝ թշնամանքին վերջ դնելու անհրաժեշտությունը և Կիլիկիայում մնալու համար այնտեղ 100 հազարանոց ֆրանսիական բանակ պահելու անհնարինությունը<sup>49</sup>։ Սա ասված էր ի միջի այլոց։ Իսկ հիմնական շարժառիթների մասին, որոնք դրդել էին ֆրանսիական վարչապետին արագացնելու քեմալականների հետ պայմանագրի ստորագրումը, վերջինս խոստովանում էր իր պատասխանի երկրորդ մասում. «Մյուս կողմից, Անկարայի համաձայնագիրը Ֆրանսիային թույլ էր տալիս խաղաղ իրականացնելու իր մանդատը Սիրիայում և ապահովում բարոյական շահ՝ համայն մահմեդական աշխարհում»<sup>50</sup>։

Ինչպես տեսնում ենք, Բրիտանը պառլամենտում կրկնում էր այն, ինչ ֆրանսիական մամուլը շեշտել էր Անկարայի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո, այսինքն՝ քեմալականների հետ համաձայնությունից զալու երկու առավել կարևոր դրդապատճառները, երկուսն էլ դադութատիրական բնույթի. 1. ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել Սիրիայի վրա՝ կայունացնելու համար Ֆրանսիայի դիրքերն այդ երկրում, 2. վերականգնել Ֆրանսիայի հեղինակությունն ու բարոյա-քաղաքական դիրքերը նրա մահմեդական տիրապետություններում։

Հասկանալի է, որ Անտանտի հիմնական երկու ախոյանների, իսկ ձևականորեն՝ դաշնակիցների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութային շահերը բացահայտորեն չէին կարող արտահայտություն գտնել նրանց պաշտոնական փաստաթղթերում։ Եվ զարմանալի չէր, որ 1921 թ. նոյեմբերի 5-ի բրիտանական հուշագրին 1921 թ. նոյեմբերի 17-ին տրված ֆրանսիական պատասխանը չէր պարունակում վերը նշված հանգամանքները, նրանում շեշտը դրված էր երկու այլ ազդեցական կողմերի վրա. 1. Անկարայի համաձայնագիրը հետագայում կազմելու է Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի ընդհա-

<sup>49</sup> A. Mandelstam, op. cit., p. 223.

<sup>50</sup> „L'Asie française“, février 1921, № 199, p. 74.

Նուր բաղկացուցիչ մասը և 2. Այդ պայմանագիրն այնուամենայնիվ ապահովում է ազգային փոքրամասնությունների իրավունքները:

«Ֆրանսիական կառավարությունը հասկացնել էր տալիս, — գրում էր այդ կապակցությունամբ «Մտամբուլ» թերթը, — որ ինքը փոքրամասնությունների համար երաշխիքներ է ձեռք բերել, մինչդեռ դաշնակիցները առ այսօր և ոչ մի երաշխիքի չեն հասել...»<sup>51</sup>:

Անկարայի պայմանագրի արձագանքները Ֆրանսիայում հարկ է ավարտել այդ պայմանագրի «հեղինակի»՝ Ֆրանկլեն-Բուլյոնի հայտարարությամբ, որը տպագրվել է «Մատեն» թերթում 1922 թ. փետրվարին: Այն հատկանշական է նրանով, որ «Անգորայի հերոսը» (ինչպես նրան անվանում էին թերթերը) ի մի էր բերում բոլոր այն ակնկալություններն ու օգուտները, որ Ֆրանսիան քաղել էր, կամ ապագայում պիտի ստանար այդ պայմանագրից: Վերստին ընդգծելով, որ Անկարայի պայմանագիրը հնարավորություն է ընձեռում Ֆրանսիային վերականգնելու խաղաղությունը Սիրիայի սահմաններին և իր ավանդական քաղաքականությունը՝ Թուրքիայում, նա ավելացնում էր, որ այդ պայմանագրով «Ֆրանսիան իր բոլոր դաշնակիցներին մատուցում է մի այնպիսի ծառայություն, որի արժեքը երևան կգա ամեն օր»<sup>52</sup>: Իսկ այդ «ծառայությունը» կայանում էր նրանում, որ Ֆրանսիան Ֆրանկլեն-Բուլյոնի բերանով հայտարարում էր, որ ինքը կարող է ստանձնել միջնորդի դեր «իր անկախությունն ապահովելու համար ամեն տեսակի ղոհաբերությունների պատրաստ Թուրքիայի և Անգլիայի միջև»:

«Ֆրանսիան կատարում է լոյալ դաշնակցի իր պարտականությունը՝ իր մասնավոր շահերի արդարացի կարգավորմամբ ձգտելով նախապատրաստել ընդհանուր այն համաձայնությունը, որից բոլորը հավասարապես կշահեն վաղը...»<sup>53</sup>:

<sup>51</sup> „Stamboul“, 19.11. 1921, № 275.

<sup>52</sup> „Le Réveil“, 12.2. 1922, № 61.

<sup>53</sup> Նույն տեղում:



Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս ընդունվեց Անկարայի պայ-  
մանագիրը թուրքական շրջանակներում:

Թուրքական մամուլը, ինչպես քեմալական, այնպես էլ  
Կ. Պոլսի թերթերը, «մեծ գոհունակությամբ և ակներև ցնծու-  
թյամբ» ողջունեցին այն: Տարբեր ուղղության պատկանող  
թերթերի գերակշռող մասը ֆրանս-թուրքական պայմանագի-  
րը գնահատեց որպես Անկարայի կառավարության կողմից  
ձեռք բերված քաղաքական խոշոր հաղթանակ: Կ. Պոլսում  
լույս տեսնող «Թեվհիդի էֆքյար» ազդեցիկ թերթը գրում էր,  
որ «այս հաջողությունը իրավամբ արժանի է նկատվելու դի-  
վանագիտական կատարյալ հաղթանակ մը, որ դեռ 3—4 շա-  
բաթ առաջ Սակարիո եզերքներուն վրա հելլեններուն դեմ մեր  
տարած հաղթանակեն ավելի կարևոր է»<sup>54</sup>: Հայտնի լրագրող  
Յունուս Նադին, Անկարայի «Ենի գյուն» թերթի առաջնորդո-  
ղում (1921 թ. նոյեմբերի 29-ին) ընդգծում էր այն հանգա-  
մանքը, որ թուրք-ֆրանսիական համաձայնագիրն իրարան-  
ցում է առաջ բերել Անգլիայի ղեկավար շրջաններում՝ ինքնին  
հաստատելով այն փաստը, որ Թուրքիան ճիշտ է վարվել՝  
հաշտություն կնքելով Ֆրանսիայի հետ: «Ֆրանսիան ներկա-  
յումս աղատում է նախկինում գրաված մեր հողերը և, այդ-  
պիսով, օգնում մեզ բարձրացնելու մեր դիմադրողականությու-  
նը», եզրակացնում էր հեղինակը: Նույն թերթը նոյեմբերի  
27-ի համարում վերլուծելով պայմանագրի բովանդակությու-  
նը, մեծ գոհունակությամբ նշում էր նրա մի շարք հողվածնե-  
րի կարևորությունը Թուրքիայի համար, մասնավորապես այն,  
որ 7-րդ հողվածով վերացվում էր Սևրի դաշնագրի այն կետը,  
որի համաձայն «Ալեքսանդրետը բաժանվում էր իր անբաժան  
մորից՝ մնացած Թուրքիայից և հանձնվում օտարի ձեռքը»:  
«Այժմ մեր կառավարությունը կարողացավ ձեռք բերել հա-  
տուկ իրավիճակ Ալեքսանդրետի և 27 գյուղերից բաղկացած  
նրա շրջանի համար, ուր պաշտոնական լեզուն ճանաչվելու է  
թուրքերենը»:

54 Տե՛ս «Ժողովուրդի ձայն», N 927, 13/26 հոկտեմբերի 1921 թ.:

Առավել հանգամանորեն թուրքական մամուլը քննարկում էր պայմանագրի 5-րդ հոդվածը՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ: Այս հարցի շուրջ թուրք լրագրողների ու քաղաքական մեկնաբանների բարձրաձայն խորհրդածությունները հնչում էին որպես նախազուշացում երկրում բնակվող այլազգիներին, հասկացնել տալիս նրանց, որ ոչ մի «զիջում» չինել չի կարող. շարունակվելու է նախկին կառավարողների ազգային քաղաքականությունը: «Փոքրամասնությունների իրավունքների հարց գոյություն չունի»<sup>55</sup>, — ազդարարում էր «Վաքըթ» թերթը: «Անատոլիայում գոյություն ունի միայն մեկ ազգ՝ թուրք ազգը»<sup>56</sup>, — գրում էր քեմալականների պաշտոնաթերթը՝ «Հաքիմիյեթի միլլիեն» 1921 թ. նոյեմբերի 8-ի համարում: Իսկ «Իլերի» թերթը (1921 թ. նոյեմբերի 11-ի համարում) բացատրում էր, թե ինչու ոչ մի «զիջում» չի կարող արվել ազգային փոքրամասնություններին. «Անկարայի պայմանագիրը... հսկայական մի ժառանգություն է Արևելքում քրիստոնյա փոքրամասնության շահերի ապահովման գործում»<sup>57</sup>: Քեմալական կառավարությունն այլևս անելիք չունի, նա իր վերաբերմունքն արտահայտել է պայմանագրի բուն տեքստում. «հա՛, ըստ էության քեմալական լսափողի կարծիքը, որն առավել ընդգծված և «նոր» հանգամանքներով լրացված երևան եկավ մի փոքր ավելի ուշ: Նույն թերթը նոյեմբերի 28-ի համարում գրում էր հետևյալը. «Մենք հակված ենք հարգելու մեր երկրի ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները և մոռա՜նալու ընդհանուր պատերազմի և Անատոլիայի ներկա ռազմական գործողությունների ընթացքում կատարված հանցագործությունները: Թուրքերը վրիժառու ազգ չեն»<sup>58</sup> (ընդգծումն իմն է — Ռ. Ս.): Այսպես, ուրեմն, կոչ էր արվում մոռանալ ոչ թե հայերի, ասորիների, հույների, քրիստոնյա-սիրիացիների,

<sup>55</sup> Տե՛ս „Le Réveil“, 21.11. 1921, № 48.

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Տե՛ս ЦГАОРСС Азерб. ССР, ф. 6, оп. 1, д. 230, л. 191.

<sup>58</sup> Տե՛ս E. Nicol, Les Alliés et la crise orientale, էջ 71:



նդիդինների, քաղդեացիների և մյուսների նկատմամբ պատե-  
րազմի տարիներին և քեմալական շարժման արշալույսին  
գործադրված բռնությունները, զանգվածային ջարդերն ու տե-  
ղահանությունները, այլ վերջիններիս «հանցագործություննե-  
րը»: Եվ պատմական իրականության նման աղավաղումից  
հետո այդ նույն թերթերը կոչ էին անում Կիլիկիայի քրիստոնե-  
յա ազգաբնակչությանը մնալ տեղում, չլքել իրենց վայրերը:  
Սակայն այդ մասին հետո: Այժմ բերենք թուրք դեկավար մի  
քանի գործիչների կարծիքը, ինչպես և թուրք պաշտոնական  
պատմագրության գնահատականը:

Մուստաֆա Քեմալը, որն առաջին օրերին անձամբ վա-  
րում էր բանակցությունները Ֆրանկլեն-Բուլոնի հետ, Անկա-  
րայի պայմանագրի կարևորագույն նշանակությունը Թուր-  
քիայի համար ամենից առաջ տեսնում էր նրանում, որ Թուր-  
քիայի «ազգային ձգտումներն առաջին անգամ ճանաչվում ու  
ձևակերպվում էին արևմտյան տերության հետ կնքված պայ-  
մանագրում»<sup>59</sup>: Մյուս կարևոր նվաճումը, նրա կարծիքով, այն  
էր, որ «մեր հայրենիքի շահագանց կարևոր շրջաններն ազա-  
տագրվում էին գրավումից՝ առանց որևէ ձևով զոհաբերելու մեր  
քաղաքական, տնտեսական, ռազմական կամ որևէ այլ ան-  
կախությունը»<sup>60</sup>: Այս գնահատականը, գրեթե առանց փոփո-  
խության, կրկնվում էր Թուրքիայի պաշտոնական պատմու-  
թյան՝ «Թարիհի» էջերում<sup>61</sup>, իսկ Աթաթյուրքի պաշտոնական  
կենսագրության մեջ, (որը լույս տեսավ 1963 թվականին, նրա  
մահվան 25-ամյակի կապակցությամբ) շեշտվում էր, որ «Ան-  
կարայի համաձայնագիրը մեծագույն մի հաղթանակ էր, որ

<sup>59</sup> Ավելի ուշ՝ 1922 թվականին, Կովկասի մահմեդականներին ուղղված  
մի կոչում Մ. Քեմալը ավելի պարզորոշ էր արտահայտվել. «Սկսած այն  
ժամանակներից, երբ թուրքական հզորությունը կոտրվեց Վիեննայի դար-  
պասների առջև, դա (Անկարայի պայմանագիրը—Ռ. Ս.) առաջին հաշտու-  
թյունն էր, որի պայմանները թելադրված էին Թուրքիայի կողմից»: Տե՛ս  
E. Nicol, *Angora et la France*, էջ 33:

<sup>60</sup> M. Кемаль, *Путь новой Турции*, т. IV, стр. 46.

<sup>61</sup> „Tarih“, cilt IV, s. 105—105. Տե՛ս նաև Prof. F. Armaoglu,  
Ֆշվ. աշխ., էջ 643:

Գազի Մուստաֆա Քեմալը ձեռք բերեց քաղաքական ոլորտում»<sup>62</sup>:

Քեմալի այս ընդհանուր գնահատականը կրկնելով հանդերձ, թուրք քաղաքական գործիչները մեծ ջանքեր էին գործադրում ազգային փոքրամասնությունների իրավունքներին նրվիրված 5-րդ հոդվածը, որպես «մեծահոգի» քայլ ներկայացնելու, այդ հոդվածի դեմ ուղղված հասարակական կարծիքը մեղմացնելու և լռեցնելու ուղղությամբ: Նախկին իթթիհատական, ապա քեմալական գործիչ, Անկարայի Ազգային մեծ ժողովի անդամ Ահմեդ Ռուստեմ-բեյը պայմանագրի ստորագրումից շատ շանցած հանդես եկավ «Արևելքի խաղաղությունը և ֆրանս-թուրքական համաձայնագիրը» խորագրով մի ընդարձակ հոդվածով՝ Փարիզում նոր լույս տեսած «Orient et Occident» հանդեսի առաջին համարում: «5-րդ հոդվածը, — մեկնաբանում էր հեղինակը, — նպատակ ունի ասելու, որ կայսրության ոչ-մահմեդական համայնքներն արդեն օժտված են քաղաքական և քաղաքացիական հավասարությանը, մի բան, որ Անտանտը այնքան համառությամբ փորձում է նրանց ապահովել»<sup>63</sup> (ընդգծումն իմն է — Ռ. Ս.): «Ուրեմն ամբողջ հարցը նրանց իրավունքները «հաստատելու» մասին է, այն հիմքի վրա, ինչ որ վերապահված է այլ երկրների փոքրամասնություններին»<sup>64</sup>, եզրակացնում էր հեղինակը: Կարճ ասած՝ սուլթանական հին երգի կրկնություն՝ այլազգի ժողովուրդները կատարյալ ապահովության մեջ են, ուստի խոսք լինել չի կարող նրանց անվտանգության երաշխիքներ տալու մասին:

Քեմալական գործիչ այս միտքը առավել հակիրճ արտահայտեց օսմանյան պառլամենտի նախկին անդամ էբուզիադե Վելիֆ-բեյը «Թեվհիդի էֆթյար» թերթում 1922 թ. փետրվարի 24-ին. «Անատոլիայի փոքրամասնությունների իրավունքները երաշխիքի հարցը ամենից ավելի քիչ է մտահոգում մեղ»<sup>65</sup>:

<sup>62</sup> Atatürk, op. cit., p. 118.

<sup>63</sup> „Orient et Occident“, tome premier, Paris, 1922, p. 58.

<sup>64</sup> Նույն տեղում:

<sup>65</sup> *St'e* E. Nicol, Les Alliés et la crise orientale, էջ 75.



Թուրքական մամուլի և գործիչների վերը բերված հայտարարությունների ու ելույթների լույսի տակ առավել դյուրին է պատկերացնել տազնապի, երկյուղի ու հուսալքության այն մթնոլորտը, որն ստեղծվեց Անկարայի պայմանագրի կնքումից անմիջապես հետո Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում: Պայմանագիրը «վշտի մեջ խորասուզեց երկու հարյուր հազար կիլիկեցիների», — գրում էր Մ. Պայառեսը: Սիրիայի բարձր կոմիսարության և Քե դ'Օրսեի գրասենյակները ամեն ըուզե հուզիչ բողոքներ էին ստանում...»<sup>66</sup>:

«Պետք չէ հայ ժողովուրդին ծածկել այն դառն իրողությունը, որ մենք լքված ենք Ֆրանսային, հակառակ 1917 թ. Ազգային պատվիրակությանը տրված խոստումներին, և երկու ամիսեն պիտի հանձնվինք մեր ահավոր դահիճներուն», — գրում էր «Արձագանք Փարիզի» շաբաթաթերթը: Կիլիկիո հայերուն համար կա հետևյալ երկրնորանքը՝ գաղթ կամ ջարդ, ինչպես կը հասկացնեն նույնիսկ ֆրանսացի թղթակիցները»<sup>67</sup>:

Թուրքական նոր բռնությունների ու ջարդի երկյուղը համակեց Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությանը, իսկ ամենից առավել՝ հայերին և հույներին: Նրանց «հանգստացնելու» և ահավոր խուճապի առաջն առնելու նպատակով ֆրանսիական բարձր կոմիսար գեներալ Գուրոն Բեյրութից և Ֆրանկլեն-Բույոնը՝ Ադանայից կոչեր էին ուղղում բնակչությանը, քեմալականների անունից «հավաստիացումներ» անում, կատարյալ անվտանգություն խոստանում: 1921 թ. նոյեմբերի 8-ին Գուրոն դիմեց Կիլիկիայի ազգաբնակչությանը հետևյալ կոչով.

«Կատարյալ ներում է հայտարարված: Փոքրամասնությունների իրավունքները հաստատված են նույն հիմքի վրա, ինչ որ Մեծ պատերազմի վերջին Եվրոպայում կնքված նույն բնույթի համաձայնագրերում: Առավել հիմնականն այն է, որ Անգորայի կառավարությունը պարտավորվում է բոլոր բնակիչներին, առանց նրանց ծագումը, ազգությունը, լեզուն կամ

<sup>66</sup> M. Paillarès, op. cit., p. 366—367.

<sup>67</sup> «Արձագանք Փարիզի», 10 նոյեմբերի 1921 թ., թիվ 15, էջ 4:

դավանանքը հաշվի առնելու, ապահովել նրանց կյանքի ազատությունն և ունեցվածքի պաշտպանությունն:

Մնացե՛ք, ուրեմն, ձեր օջախներում, ձեր դաշտերում, ձեր աշխատանքում, ապրեցե՛ք միասնաբար օսմանյան կառավարության ներքո, որն իր վրա հանդիսավոր պարտականություն է վերցնում հովանավորելու ձեզ և վստահ եղեք, որ դուք միշտ ապահովված կլինեք լրիվ հոգատարությունը Ֆրանսիայի կողմից: Մեկնել, նշանակում է դիմել քայքայիչ արկածախնդրության՝ անորոշ ու կասկածելի ելքով: Մնալ, նշանակում է պահպանել ձեր նախնիների աշխատանքի պտուղները և խաղաղ պայմաններում բարգավաճման հասցնել Կիլիկիան, Քիլիսիս ու Այնթապը»<sup>68</sup>:

1921 թ. նոյեմբերի 28-ին Կիլիկիայի ազգաբնակչությանն ուղղված համատեղ կողով հանդես եկան Ֆրանկեն-Յույոնը և Անկարայի կառավարության ներքին գործերի մինիստրության փոխ-քարտուղար Համիդ-բեյը:

«Կիլիկիայի քրիստոնյաներ,

Ձեզ ասում են, որ ներումն անհետևանք կմնա: Դա սխալ է: Համընդհանուր և անհապաղ ներում է լինելու: Անցյալը մեռած է կամ մոռացված, ո՛չ մեկը, բացարձակապես ո՛չ մեկը թող շանհանգստանա:

Պայմանագիրն ապահովում է ձեր անձի կատարյալ ազատություն, ինչպես և ձեր ունեցվածքի անձեռնմխելիություն:

Ձեզ ասում են, որ օրենքի համաձայն բռնագրավելու է ձեր ունեցվածքի 40 տոկոսը: Դա ճիշտ չէ: Գույքի բռնագրավման մասին օրենքը, որը կիրառվում էր Սակարյայի ճակատամարտի շրջանում, այժմ չեղյալ է հայտարարված: Այն գոյություն չունի այլևս...»<sup>69</sup> (ընդգծումներն իմն են — Ռ. Ս.):

Նման սին հավաստիացումները, ինչ խոսք, չէին կարող վստահություն ներշնչել Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությանը: «1915 թ. ջարդերի սարսափելի հիշողությունը տակավին շատ թարմ էր հայ դժբախտ բնակչության մեջ, որ-

<sup>68</sup> „L'Asie française“, Décembre 1921, № 197, p. 482.

<sup>69</sup> „L'Asie française“, Février 1922, № 199, p. 60—61.



պեսզի նրան թույլ տար հավատալու այդ բոլոր կոչերին»<sup>70</sup>, — գրում էր Ա. Մանդելշտամը: Եվ առավել թարմ էին կիլիկիահայերի հիշողության մեջ քեմալական զորքերի ու շեթենների շարագործությունները Մարաշում ու Օսմանիիում, Հասանբեյլիում ու Հաճընում: Նրանց միաժամանակ հայտնի էր, որ Ադանայում ստեղծվել էր «Ազգային վրիժառուության» («İntikami Milli») գաղտնի ընկերություն, որի նպատակը ավելի քան պարզ էր<sup>71</sup>: Վերջապես, նախազգուշության էր մղում նաև այն փաստը, որ նույնիսկ Ադանայի թուրքերի կողմից լիազորված պատգամավորները իրենց բողոքն էին հայտնել քաղաքի քեմալական գրավման դեմ: 1921 թ. նոյեմբերի սկզբներին վերջիններս դիմել էին գեներալ Դյուֆրոյին մի նամակով, որտեղ ասված էր. «Մենք Մուստաֆա Քեմալին ու արյունոտ շեթեններին ճանաչում ենք ավելի լավ, քան դուք, և գիտենք, որ այսուհետև նրանք կատարելու են նույն հանցագործություններն ու նույն գազանությունները»<sup>72</sup>:

«Նույնիսկ հին կուսակցությանը պատկանող թուրքերը, — գրում էր Զոզեֆ Բերթը, — նրանք, ովքեր կասկածանքով էին նայում քեմալականների մտադրություններին, նախազգուշացնում էին հայերին՝ չվստահել Անկարայի կառավարության խոստումներին»<sup>73</sup>: Եվ իրավացի էր բազմավաստակ պատմաբան Լեոն գրելով, որ «հայերը մի անգամ իմաստություն ունեցան չհավատալու միջազգային սրիկաներին՝ խրատված անշուշտ, այն հանգամանքից, որ նույն այդ քեմալականները 20 հազար հայ կոտորեցին կիլիկիայում և շարունակում էին այդ գործը թե կովկասյան և թե հունսկան ճակատներում»<sup>74</sup>:

1921 թ. նոյեմբերի 14-ին Կ. Պոլսի պատրիարքը, կաթոլիկ և բողոքական համայնքների առաջնորդները Կ. Պոլսում

<sup>70</sup> A. Mandelstam, op. cit., p. 219.

<sup>71</sup> *St' u M. Paillarès*, նշվ. աշխ., էջ 367:

<sup>72</sup> *St' u նույն տեղում*, էջ 369:

<sup>73</sup> Joseph Burt, The People of Ararat, London, 1926, p. 86 - 87

<sup>74</sup> Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ., Փարիզ, 1935, էջ 232:

Ֆրանսիական հանրապետության բարձր կոմիսարին հանձնեցին հետևյալ դիմումը.

«Պարոն բարձր կոմիսար.

Որպես Թուրքիայի երեք հայ հարանվանությունների առաջնորդներ, մենք հրամայական պարտավորություն ունենք Ձերդ գերազանցությանը ներկայացնելու հետևյալ հանդամանքները Ֆրանսիական ուժերի կողմից Կիլիկիայի էվակուացման առթիվ... Մենք նկատի ունենք հայ պատրիարքարանին նորին սրբություն Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ-ի հենց նոր ուղարկված հեռագիրը, որով հայտնվում է այդ շրջանում կենտրոնացված հայության վերջնական որոշումը՝ «վերստին գաղթելու՝ վերահաս ոչնչացումից խուսափելու համար: Մեր այդ հայրենակիցները վերջին մի կողում պահանջում են անվտանգ ապաստան և նավեր՝ հայրենիքը թողնելու համար...»:

«Այդ հայերը,— ասվում էր այնուհետև,— վերապրեցին 1915 թ. դեպքերը, որոնց տխուր հիշողությունը վերակենդանացավ նրանց մտքում այդ դեպքերին հաջորդած Մարաշի, Հաճընի, Ջեյթունի, Մերդիֆոնի և այլ ջարդերով... Նրանք գիտեն, որ իրենց ծառայությունը դաշնակիցների շարքում և, հատկապես, բոլորովին վերջերս՝ Ֆրանսիացիների կողմում, իրենց դեմ ուղղեց թուրքերի անխնա ատելությունը: Ուստի նրանք, ինքնապահպանման բնազդից մղված, ինքնաբերաբար որոշում ընդունեցին ևս մեկ անգամ զանգվածաբար գաղթել իրենց հայրենիքից, ուր նրանք վերստին ստեղծել էին գոյության հիմքեր՝ Ֆրանսիայի գերիշխանության ներքո...»<sup>75</sup>: «Դիմումի վերջում երեք հարանվանությունների պետերը խնդրում էին Ֆրանսիական կառավարությանը նյութական միջոցներ տրամադրել կիլիկիահայերի զանգվածային տեղահանությունը դործնականում իրականացնելու համար<sup>76</sup>: Ֆրանսիական դիվանագիտության ղեկավարները, սակայն, սկզբում փորձեցին խոչընդոտել քրիստոնյա ազգաբնակչու-

<sup>75</sup> Տե՛ս M. Paillarès, նշվ. աշխ., էջ 374—375:

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 376:



թյան գաղթը: Արտաքին գործերի մինիստրի պաշտոնակատար Պերետտի դը լա Ռոկկան կարգադրում է «ճնշել գաղթը շարժումը»:

«Ֆրանսիան թերևս իջավ փոքրագույն վերջին աւտի-ճանին՝ հրաժարվելով թույլատրել հայերին թողնելու Կիլիկիան, եթե Ամերիկան, Անգլիան և Հունաստանը նավեր չուղարկեին մարդկային այդ բեկորներին հավաքելու համար»<sup>77</sup>, — գրում էր Մ. Պայառեսը:

Միայն գեներալ Դյուֆիոյի հեռագրային եռանդուն բողոքներից հետո Բելյուսթի ֆրանսիական բարձր կոմիսարոսթյունը համաձայնվում է նավեր վարձել և ընդունել քրիստոնյա փախստականներին Սիրիայում: Միացյալ Նահանգները, Անգլիան ու Հունաստանը ևս փոխադրանավեր են տրամադրում<sup>78</sup>:

1921 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչության մեծ մասը հեռացավ իր հարազատ վայրերից, գաղթելով Կիպրոս և Մալթա կղզիները, Պաղեստին, Սիրիա և այլ երկրներ, ըստ որում առավել տանջալից վիճակ վերապրեց հիմնական զանգվածը՝ հայ ազգաբնակչուսթյունը<sup>79</sup>: Դեկտեմբերի 19-ին ֆրանսիական վերջին գումարտակը, «վերջին քրիստոնյայից հետո», — ինչպես գրում է դուսվեուն, — թողեց Ադանան, իսկ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 20-ին թուրքերը հաղթականորեն մտան քաղաք: Այնթապը պարավեց ֆրանսիացիների կողմից դեկտեմբերի 25-ին, իսկ Դորթ-Յուլը՝ դեկտեմբերի 31-ին: 1922 թ. հունվարի 4-ին Կիլիկիայի և նրա մերձակա շրջանների էվակուացիան ֆրանսիական զինվորական իշխանուսթյունների կողմից լրիվ ավարտված էր:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 387:

<sup>78</sup> Paul du Vélou, op. cit., p. 318—319.

<sup>79</sup> 1921 թ. նոյեմբեր ամսվա ընթացքում 25000 հայեր Ալեքսանդրիթի ու Մերսինի քարափներում մնացին՝ գիշերային ստոցնող անձրևների տակ: «Բազմաթիվ մանկիկներ, ծերունիներ, կիներ և աղջնակներ մահացան խնամքի և ուտելիքի պակասեն»: Ա. Արամասեան, նշվ. աշխ., էջ 67:

1921 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1922 թ. հունվարի 4-ն ընկած ժամանակամիջոցում, համաձայն ֆրանսիական բարձր կոմիսարուիթյան և Լեանտի բանակի հետախուզական ծառայուիթյան տվյալների, գաղթած քրիստոնյա բնակիչների թիվը կազմում էր.

## 1. Կիլիկիայից

ա. Մերսինի նավահանգստից՝ 37.885, որոնցից քրիստոնյաներ 37.554 (հայեր՝ 30.305, հույներ՝ 6.392, սիրիացիներ՝ 1.129, եվրոպացիներ՝ 59):

բ. Ալեքսանդրետի կայարանից՝ 12.066, գերակշռող մեծամասնությունը՝ մոտ 10.000 հայեր:

## 2. Այնթապ—Քիլիսի շրջանից

Սիրիա գաղթած՝ 4.500 մարդ, գրեթե ամբողջովին հայեր:

Այդ նույն տվյալների համաձայն, առ 1-ը հունվարի 1922 թ. Կիլիկիայում մնացել էին 3.761 քրիստոնյաներ, որոնցից սիրիացիներ՝ 2.606, հայեր՝ 637, հույներ՝ 518: Այնթապ—Քիլիսի շրջանում՝ մոտ 5.500 հոգի<sup>80</sup>:

Բերված թվերը, սակայն, ստույգ և վերջնական չէին: Դրանք չէին ընդգրկում հազարավոր այն մարդկանց թիվը, ովքեր փախել էին Կիլիկիայից առանց «պաշտոնական» հաշվառման ենթարկվելու, գաղտնի ճանապարհներով, ինչպես նաև մինչև Անկարայի պայմանագրի կնքումը՝ 1920 թ. վերջերից սկսած Կիլիկիայից հեռացած քրիստոնյաների, հիմնականում հայերի, թիվը:

Վերը ցույց տրվեց, որ 1919 թ. վերջին ֆրանսիական գրավման գոտում (ամբողջ Կիլիկիան և Այնթապի ու Ուրֆայի շրջանները) հայերի թիվը անցնում էր 150 հազարից: Ուրեմն, եթե ի նկատի ունենանք 1920 թ. Մարաշի դեպքերի ժամանակ զոհված 12 հազար հայերին, Հաճընում սրի քաշված 6 հազար հաճընցիներին, Ուրֆայի, Այնթապի, Օսմանիեի, Ջելթունի,

<sup>80</sup> Paul du Véou, op. cit., p. 430.



Յընդհանրի և այլ կռիվներում ընկած մոտ 4 հազար հայերին, ինչպես նաև 1920—1921 թթ. ընթացքում իրենց հարազատ վայրերը լքած և արտասահման անցած մի քանի տասնյակ հազար հայերին, ապա կարելի է ստույգ համարել, որ ֆրանս-թուրքական հաշտության ստորագրման պահին կիլիկիայում մնացել էր 100 հազարից ավելի հայ ազգաբնակչություն, որը և, գրեթե ամբողջությամբ, վերստին բռնեց տարագրության ճամփան 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, իսկ մի աննշան մասը՝ 1922 թ. ընթացքում:

Ահա այսպիսի ողբերգական վախճան ունեցավ կիլիկիահայության ապավինումը «ասպետական» Ֆրանսիայի «հովանավորությանը»:

«Հայերին տրված բոլոր հանդիսավոր խոստումներն, այսպիսով, մոռացության տրվեցին»<sup>81</sup>, — խոստովանում է ժան Պիշոնը:

«Պատերազմի ընթացքում, — ավելացնում է Մ. Պայանեսը, — երբ մենք առավել փոքրերի կարիքն ունեինք, մենք խրախուսանքներ ու խոստումներ էինք շոայլում: Մենք պարտավորվում էինք ազատագրել բոլոր ճնշված ժողովուրդներին: Եվ այդ պարտավորությունը իր տեղն էր գտնում ոչ միայն մեր թերթերի բոլոր սյունակներում՝ «Տան»ի գլխավորությամբ, այլև մեր մինիստրների բոլոր ճառերում:

Սակայն այսօր ո՞վ է դրանք հիշում»<sup>82</sup>:

Ուշադրության արժանի է նաև Ֆրանսիայի թուրքանը-պաստ ու հայակործան քաղաքականության բնորոշումը ամերիկյան իրավագետ դոկտոր Հերբերտ Ադամս Գիրոնսի կողմից.

«Պատերազմի ընթացքում, — գրում էր Գիրոնսը 1921 թվականի հոկտեմբերին, — Գերմանիայի դեմ հարուցված ծանր մեղադրանքներից մեկը նրա բարեկամությունն ու դաշնակցությունն էր թուրքիայի հետ՝ հայկական կոտորածների ժամանակ: Գերմանիան պատասխանատու էր համարվում

<sup>81</sup> Jean Pichon, op. cit., p. 244.

<sup>82</sup> M. Paillarès, op. cit., p. 335.

շարդերում այն բանի հիման վրա, որ նա կարող էր վերջ դնել շարդերին՝ օգտագործելով դաշնակցի իր ազդեցությունը: Դա ճշմարիտ էր: Սակայն արդյո՞ք ճշմարիտ չէ նաև այն, որ ներկայումս Ֆրանսիան պետք է պարսավանքի արժանանա և որոշ շափով պատասխանատվություն կրի 1920—21 թթ. հաշերի ու հուլյների շարդերի համար: Ֆրանսիական զենեարալնիքը բանակցում էին ազգայնականների հետ Կիլիկիայում, առանց պայման դնելով վերջ տալ շարդերին: Ֆրանսիական դիվանագետները բանակցություններ էին վարում Քեմալ փաշայի գլխավորած Անկարայի կառավարության հետ՝ մատների արանքով նայելով հայերի ու հուլյների շարդերին:

Պատերազմի ընթացքում զերմանացիների միակ հոգսն էր՝ օգտագործել թուրքերին և որևէ ուսկի շղիմել նրանց վիրավորելով՝ բողոքելով շարդերի դեմ: Ըի՛շտ այդ բանն են անում ներկայումս ֆրանսիացիները»<sup>83</sup>:

\* \* \*

Այսպիսով, 1921 թ. մարտի 9-ի Լոնդոնի համաձայնագրից մինչև 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագիրն ընկած ժամանակաշրջանի թուրք-ֆրանսիական հարաբերությունների ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների:

1921 թ. մարտի 9-ին կնքված ֆրանս-քեմալական պայմանագիրը չէր բավարարում Անկարայի կառավարության կողմից առաջ քաշված սկզբունքները, մասնավորապես «Ազգային ուխտի» պահանջները, ուստի և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը 1921 թ. մայիսի 3-ին շեղյալ հայտարարեց այն:

Լոնդոնի կոնֆերանսից հետո թուրք-ֆրանսիական հարաբերությունները կարճատև սառնության մի շրջան ապրեցին, որը պայմանավորված էր նաև 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի կնքումով:

<sup>83</sup> Տե՛ս George Horton, The Blight of Asia, էջ 192: Տե՛ս նաև Laurence Evans, United States policy and Partition of Turkey, Baltimore, 1965, էջ 258—260:



1921 թ. հունիս-հուլիս ամիսներից սկսվում է թուրք-ֆրանսիական հարաբերությունների մի նոր շրջան՝ փոխադարձ այցելությունների և դիվանագիտական զոնդաժի շրջան, որը բնորոշ էր քեմալականների հետ անջատ համաձայնություն գալու և նրանց հակասովետական հակումները սրելու ձգտումով մի կողմից, և Սովետական Ռուսաստանի հետ կապերը խզելու զնով Անտանտի պետությունների ճակատը ճեղքելու, դաշնակիցներին պառակտելու քեմալական ձգտումով՝ մյուս կողմից:

Ֆրանսիական դիվանագիտությանը, սակայն, չհաջողվեց օգտագործել 1921 թ. հունիս-օգոստոս ամիսներին սովետա-թուրքական հարաբերություններում տեղ գտած լարվածությունը (որը առաջ եկավ Անդրկովկասի սովետական հանրապետություններին անջատ պայմանագրեր պարտադրելու և Անտանտի հետ գործարքի մեջ մտնելու քեմալական քաղաքականության հետևանքով), որովհետև Անկարայի կառավարությունը համոզվել էր, որ սովետական երկրից ստացած բարոյական ու նյութական օգնությունն անհամեմատ ավելի էր, քան այն, որ նա կարող էր ակնկալել Արևմուտքի իմպերիալիստական տերություններից:

Ուստի երկու կողմերը, իրենց շահերից ելնելով, հնարավոր գտան համաձայնություն գալու՝ առանց սովետա-թուրքական հարաբերությունների մեջ փոփոխություն մտցնելու նախապայմանի, ըստ որում այդ համաձայնությունն արագացավ 1921 թ. սեպտեմբերի 13-ին Սակարայի ավիին տարած թուրքական հաղթանակից և 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված սովետա-թուրքական պայմանագրից հետո:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական պայմանագիրը վերջ էր դնում պատերազմական գործողություններին քեմալական ու ֆրանսիական ուժերի միջև և վերջիններիս պարտավորեցնում երկու ամսվա ընթացքում հեռանալ Կիլիկիայից:

Անկարայի պայմանագիրը առավելություններ էր տալիս

կողմերից յուրաքանչյուրին, սակայն այդ պայմանագիրը առավել ձեռնտու էր քեմալական կառավարութեանը, բարձրացնում էր վերջինիս դիմադրողականութիւնը Անգլիային, հնարավորութիւն ընձեռնում ռազմական ուժերը Կիլիկիայից փոխադրելու Արևմտյան Ճակատ՝ հուլիսի դեմ, ինչպես և օգտագործելու հարուստ այդ երկրամասի տնտեսական ամբողջ պոտենցիալը: Անկարայի պայմանագրով Ֆրանսիան վերջնականապես լքում էր Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչութեանը (որի պաշտպանութիւնը նա ստանձնել էր պաշտոնապես), վերջինիս թողնելով քեմալական իշխանութիւնների ու արնածարավ շեթեների ողորմածութեանը:

Ֆրանսիական զորքերի անփառունակ նահանջը առանձնապես ծանր հետևանքներ ունեցավ Կիլիկիայի հայ ազգաբնակչութեան համար: Մեծ հղեունը վերապրած կիլիկիահայութիւնը, 20 հազարից ավելի նոր զոհեր թողնելով, անվերադարձ կերպով հեռացավ իր հարազատ Կիլիկիայից:

1919—1921 թթ. իրադարձութիւնները Կիլիկիայում վերհանեցին քեմալական կառավարող շրջանների ազգայնամոլ ու ջարդարարական վարքագիծը, տեղաբնիկ այլազգի ժողովուրդների օրինական իրավունքները ոտնահարելու, նրանց ձուլելու կամ ֆիզիկապես ոչնչացնելու այն ձգտումները, որոնք առավել լայն շափերով երևան եկան հետագայում՝ Թուրքիայի բոլոր ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ կիրառվող քեմալական քաղաքականութեան մեջ:



## Ե Ջ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի՝ 1919—1921 թթ. Թուրք-ֆրանսիական հարաբերությունները, ինչպես վերը ցույց տրվեց, ամփոփվեցին և իրենց ձևակերպումը գտան 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրում: Այդ պայմանագիրը առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած հակամարտ կողմերի՝ Թուրքիայի ու Ֆրանսիայի միջև կնքված հաշտության պայմանագիր չէր, այլ միայն Կիլիկիայում ուղմական գործողությունները դադարեցնելու և այնտեղից ֆրանսիական զորքերը դուրս բերելու վերաբերյալ Ֆրանսիայի կողմից ստորագրված անջատ մի համաձայնություն, որը անիրավասու քայլ դիտվեց և շճանաչվեց նրա դաշնակցի՝ Անգլիայի կողմից: Վերջնական հաշտության պայմանագիր Անտանտի տերությունների, այդ թվում և Ֆրանսիայի, միջև մի կողմից, և Թուրքիայի միջև, մյուս կողմից, ստորագրվեց Լոզանում 1923 թ. հուլիսի 24-ին:

Նախքան Լոզանի կոնֆերանսի հրավիրումը, ֆրանս-քեմալական դիվանագիտական կապերը իրենց հետագա զարգացումն ունեցան Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալ բեյի՝ 1922 թ. փետրվար-մարտին, Եվրոպա կատարած ուղևորության և ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ գնդապետ Մուժենի՝ նույն թվականի հունիսին Թուրքիա կատարած այցելության ժամանակ:

Յուսուֆ Քեմալ բեյը Ֆրանսիայում գտնվելու օրերին վերստին հաստատեց Անկարայի կառավարության վճռակա-

նությունը՝ ոչ մի քայլ չնահանջել «Ազգային ուխտում» հրո-  
շակված սկզբունքներից: Ճիշտ է, նրա ուղևորությունը Եվրո-  
պա այդ շրջանում «որևէ արդյունքի չհանգեցրեց, սակայն  
հնարավոր եղավ հաստատել, որ Անտանտի արտաքին գործե-  
րի մինիստրները շուտով հավաքվելու են կոնֆերանսի՝ Թուր-  
քիային հաշտության առաջարկներ անելու համար»<sup>1</sup>:

Նույն թվականի օգոստոսի 26—30-ը Աֆիոն—Կարահի-  
սարի և Դոմլուպընարի ճակատամարտերում հուլյների դեմ  
տարած վճռական հաղթանակները արագացրին գինադադարի  
ստորագրումը Մուդանիայում 1922 թ. հոկտեմբերի 11-ին,  
իսկ հոկտեմբերի 28-ին Թուրքիան Անտանտի տերությունների  
կողմից պաշտոնապես հրավիրվեց Լոզանի կոնֆերանս՝ վերջ-  
նական հաշտության պայմանագիր կնքելու համար:

Ինչ վերաբերում է Կիլիկիայի հարցի հետագա ընթացքին՝  
Անկարայի պայմանագրի ստորագրումից հետո, քեմալական  
դեկավար շրջանները վերստին դրսևորեցին իրենց հավատար-  
մությունը ազգայնամոլ քաղաքականության սկզբունքներին:  
1922 թ. մարտի 1-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ար-  
տասանած իր ճառում Մուստաֆա Քեմալը հայտարարում էր-

«Մենք ճանաչում ենք երկրագնդի վրա ապրող բոլոր ժո-  
ղովուրդների ինքնորոշման իրավունքը...»<sup>2</sup> (ընդգծումն իմն  
է— Ռ. Ս.), թեև, ինչպես արդեն ցույց տրվեց, քեմալական-  
ները վճռականորեն մերժեցին Թուրքիայի այլազգի ժողո-  
վուրդների ինքնորոշման իրավունքը:

Նույն գաղափարն էր պրոպագանդում արտաքին գործերի  
մինիստր Յուսուֆ Քեմալ բեյը Եվրոպա կատարած իր ուղևո-  
րության ընթացքում.

«Մենք պահանջում ենք մեր իրավունքների ճանաչում  
միայն այն հողերի նկատմամբ, որոնց բնակչությունը կամ  
զուտ թուրքական է, կամ մեծամասնությամբ թուրքական»<sup>3</sup>  
(ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

1 М. Кемаль, Путь новой Турции, г. 4, стр. 65.

2 Atatürk'ün söylev ve demeçleri, cilt I, s. 229.

3 Архив МИД СССР, ф. 132, оп. 7, п. 68, ед. хр. 86. л. 117.



Նման պնդումից հետո զարմանալի չէր Փարիզի լրագրող-ներին արված նրա այն հայտարարությունը, թե «Կիլիկիայում հայերի դրությունը հիանալի էր, իզուր հայերը գաղթեցին այնտեղից»<sup>4</sup>:

Թուրքահայաստակ ժողովուրդների օրինական իրավունքների նկատմամբ նույն անհանդուրժող վերաբերմունքը հանդես բերեց Յուսուֆ Քեմալ բեյին փոխարինած Իսմեթ փաշան՝ Լողանի կոնֆերանսում, որի մի քանի նիստերում քննության էր առնվում ազգային փոքրամասնությունների ճակատագրի հարցը:

1922 թ. դեկտեմբերի 13-ին կայացած տերիտորիալ-քաղաքական հանձնաժողովի 14-րդ նիստում, նա, զիտակցորեն լուծյան մատենելով արևմտահայերի ու կիլիկիահայերի բնաջնջումը և բռնի արտաքսումը իրենց հայրենիքից, հայտարարեց, որ «Թուրքիան ո՛չ իր արևելյան նահանգներում, ո՛չ էլ Կիլիկիայում չունի ոչ մի պատառ տերիտորիա, որը մեծամասնությամբ բնակեցված չլիներ թուրքերով, և որը ինչ-որ չափով կարելի լիներ անջատել մայր-հայրենիքից»<sup>5</sup>:

Հաջորդ նիստում լորդ Քերզոնի կողմից Իսմեթ փաշային (Ինոնյուին) տրված այն հարցին, թե ինչպե՞ս պատահեց, որ Թուրքիայում բնակվող 3 միլիոն հայերից մնաց ընդամենը 130 հազար հոգի, որոնցից 60—80 հազարը ֆրանսիական զորքերի հեռանալու հետ մեկտեղ փախան Կիլիկիայից, դատապարտելով իրենց թշվառ կյանքի և թողնելով այնտեղ իրենց օջախները, Քեմալի մերձավորագույն զինակիցը, իր նախորդների օրինակով, փորձեց հերքել փաստերը, իսկ հայերի գաղթը Կիլիկիայից ներկայացրեց որպես «քաղաքական նկատառումներով, իրենց կամքին հակառակ արված մի քայլ»<sup>6</sup>:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 118:

<sup>5</sup> «Армянский вопрос на Лозаннской конференции». Извлечения из протоколов. Тифлис, 1926, стр. 17—18.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 21—22:

Անկարայի կառավարության պատվիրակությունը բացարձակորեն և կտրականապես մերժեց որևէ բավարարություն տալ Թուրքիայում «հայկական օջախ» ստեղծելու, ինչպես նաև ասորա-քաղղեացիների և այլ փոքրամասնությունների իրավունքների ճանաչման հարցին: Երբ 1923 թ. հունվարի 7-ին փոքրամասնությունների գործերի ենթահանձնաժողովի նիստում նրա նախագահ Մոնտանյան հարց բարձրացրեց Թուրքիայի տերիտորիայում, սիրիական սահմանին մոտ կամ որևէ այլ վայրում թուրքական գերիշխանության ներքո առանձին մի գոտի ստեղծելու մասին, ուր կհավաքվեն աշխարհով մեկ ցրված հայերը՝ իրենց ազգությունը, լեզուն և մշակույթը պահպանելու համար, թուրքական պատվիրակության անդամ Ռիզա-Նուր բեյը դեմոնստրատիվ կերպով հեռացավ նիստից<sup>7</sup>:

Լոզանի կոնֆերանսում Թուրքիայի ազգային պահանջները ճանաչվեցին Արևմուտքի իմպերիալիստական տերությունների կողմից, որոնք միաժամանակ հեշտությամբ հրաժարվեցին փոքր ժողովուրդների օրինական իրավունքների պաշտպանության այն խոստումներից ու պարտավորություններից, որոնցով նրանք երկար տարիներ խաբում էին այդ ժողովուրդներին:

---

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 26—27: Մանրամասն տե՛ս Lausanne Conference on Near Eastern Affairs 1922—1923. Records of Proceedings and Draft Terms of Peace. London, 1923, էջ 190—202:



## ТУРЕЦКО-ФРАНЦУЗСКИЕ ОТНОШЕНИЯ и КИЛИКИЯ в 1919—1921 гг.

### Р е з ю м е

